This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,211,560

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·
THE UNIVERSITY OF MICHIGAN
ARTES · SCIENTIA · VERITAS
1817

# ԹԱՆԳԱՐԱՆ

## ԽՐԱՏՈՒ

# ԹԱՆԳԱՐԱՆ ԽՐԱՏՈՒ

*ՅՕՐԻՆԵԱԼ*

Ի ՊՕՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԷ ԱՆԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻՈՅ

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ

## ՀԱՏՈՐ Բ.

ՎԱՍՆ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

*Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



*ԵՐՈՒՍԱՂԷՄ*

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

-1870-

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որպէս բնական բնութիւնն ոչ կարէ պահել զէութիւն իւր և զգոյ, միայն զմասունս նիւթոյ որք համեմատ են և օգտակար գոյութեան իւրոյ, յինքն ձգելով կորզողական զօրութեամբ. այլ և զայնոսիկ մասունս որք ներհակ են և վնասակար ամբողջութեան իւրոյ, հարկի ՚ի բաց մերժել վանողական զօրութեամբ ։

Նոյնպէս և բանական բնութիւնն ոչ կարէ պահել զսահման մարդկութեան կիրառութեամբ առաքինութեանց, որք յարմար են և օգտակար գոլոյ նորա, և առնեն երջանիկ՝ եթէ ոչ խորշեսցի և ՚ի մոլութեանց որք ներհակ են և ապականիչ մարդկութեան, և առնեն զնա թշուառ ։

Զի ահա և օգտակար ինչ դեղ ոչ ընձեռէ զառողջութիւն, եթէ ոչ արգելցին վնասակար կերակուրք և ըմպելիք. և երկիր ոչ բարգաւաճի պտղովք, եթէ ոչ խլեսցին անպիտան փուշք և խոտք ։

Քանզի և մարդս որպէս պահպանի առաքինութեամբ, նոյնպէս և ապականի մոլութեամբ, ոչ միայն բարոյապէս՝ այլ և ֆիզիգապէս. որովհետև մոլութիւնք ոչ միայն են չար, զի հակառակին ուղիղ բանի և աստուածային օրինաց, այլ նաև են վնասակար, զի խանգարեն զխառնուածն և վաղվաղեն զմահ ։

Ոմին իրի և կրկին ազգ պատուիրանաց աւանդե-ցան յԱստուծոյ, յանձնառական՝ առ 'ի գործել զա-ռաքինութիւն որով պահպանի մարդս և լինի եր-ջանիկ, և հրաժարական՝ առ 'ի խորշել 'ի մոլութենէ որով ապականի և թշուառանայ։

Եւ որովհետեւ յառաջնում հատորի գրոցս խօ-սեցաք զառաքինութեանց ինչ որք կարեւորք են ա-մենայն հասակի, մանաւանդ հայրենի ազգին իմոյ՝ նկատմամբ վիճակին յորում գտանի այժմ, յաւէտ բնական բանիւ յորդորամիտս առնելով զնոսա ըղ-ձեալ կրթիլ առաքինութեանց, որք ոչ միայն առնեն զմարդն բարի և անեղծական վարձուց ժառանգորդ, այլ և անկարօտ, բարեհամբաւ և երկայնակեաց։

Ուստի յայսմ յերկրորդ հատորիս խօսեսցուք և զմոլութեանց յաճախելոց առ մեզ, որք ոչ միայն առնեն զմարդն չար և արժանի յաւիտենական դա-տապարտութեան, այլ և աղքատ, անարգ և վա-ղամեռիկ։

## Է. Խօլժն. 7.




Էն մարդոյ սիրտն որ իրան նորոգութենիցն ետև սկսեց մին-
ել յօժար կամօք մեղք գործել, և սատանային և մեղքին
թոյլ տուաւ որ կրանում իշխանութիւն անեն։

## ՕԳՏԱԿԱՐ

# ԽՐԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

## ԳԼՈՒԽ Ա.

### ՉԱՐՈՒԹԻՒՆ

Ա. ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՈՔ կարէ լինել անձին իւրոյ դատաւոր, զի ՚ի բարոյականս՝ ունի մատեան զօրէնս բնութեան, և ՚ի մասին ընկերութեան՝ զօրէնս քաղաքական. եթէ օրինացս այսոցիկ ոչ հնազանդի, լինի անիրաւ դատաւոր, և պարտ է երկնչիլ յայնմանէ։ Ո՛վ որ զօրէնս արհամարհէ, ոչ յումեքէ երկնչի, և ոչ թողու չար՝ յոր ոչ համարձակեսցի առնել, վասն որոյ ասած է, թէ որ ոչ երկնչի յԱստուծոյ, դու երկիր ՚ի նմանէ։ Աստի բարիք պարտին զգուշանալ ՚ի չարաց, զի չարք հային միշտ վնասել բարեաց։

Բ. Որ կամի վնասել այլոց, նախ ինքեան վնասէ. զի անհնար է առանց վնասու անձին՝ վնաս հասուցանել այլոց, քանզի չարն յաւէտ խորհողին է չար։

Գ. Չարագործք ատեն զյանդիմանիչս և սիրեն զնմանիս իւրեանց, և զայն որ անտես առնէ զյանցանս նոցա և ոչ նախատէ. ապա որ սիրելի է չարաց, կամ է չար, կամ ներող չարաց։

Դ. Չարք ոչ համարձակին երեւիլ առաջի բա-
րեաց, որպէս գիճակնադոյնք 'ի լոյս արեւու: Բայց
մինչ պակասին բարիք, հետզհետէ գլուխ ամբառ-
նան և չարք, նմանեալ խաւարասէր չղջիկանաց, որք
ելանեն 'ի բունոյ իւրեանց զկնի մտանելոյ արեգականն:

Ե. Թեթեւ բեռն է երկրի ծանրութիւն իւր զոր
կրէ, քան զայր չարագործ:

Զ. Ոչ երբէք կարեն միաբանիլ չարք ընդ բարիս. զի
զոր սիրեն չարք, բարիք զայն ատեն, և զոր սիրեն բարիք՝
զայն ատեն չարք. և երկաքանչիւր սոքա ջանան միշտ
զմիմեանս ընդոտնել. և եթէ ոչ անձնապահ լինին 'ի մի-
մեանց, սպառեալ էին արդեօք կամ չարք կամ բարիք:
Բայց այժմ չարք բազումք են և բարիք սակաւ. և
եթէ ոչ պահեալ էր Աստուծոյ զբարիս, չարք բառ-
նային զնոսա յաշխարհէ, քանզի միշտ յանդիմանին
'ի նոցանէ. Նա թէպէտ բարիք կրեն վիշտս 'ի չարաց,
բայց ոչ մնան առանց վարձուց, որպէս և ոչ չարք
առանց պատժոց: Բայց չէ պարտ զարմանալ, թէ ըն-
դէ՞ր սակաւաթիւ են առաքինիք քան զմոլիս. զի ահա
հող բազում է, այլ պատուական հանք կամ մե-
տաղք որ 'ի նմա՝ սակաւք:

Է. Ընդէ՞ր զայրանան մարդիկ՝ թէ չարք բազմա-
նան օր ըստ օրէ. քանզի այս օրէն է տղայոյ, ուսա-
նիլ զայն՝ զոր լսէ, և առնել զայն՝ զոր տեսանէ.
արդ՝ եթէ մարդիկ որք յառաջագոյն ծնան՝ լինէին
բարի, ապա և նոքա որք ծնան յետ նոցա՝ լինէին
բարի. Ուստի եթէ կամին մարդիկ՝ զի չարք եղիցին
սակաւ, առաջինքն լինիցին բարի, որպէս զի և յե-
տինքն ուսանիցին 'ի նոցանէ լինել բարի, ապա թէ
ոչ՝ տեսցեն յետոյ զամենեսին չար և առաւել չար:
Զի բնաւորեալ են մարդիկ մի քան զմի յառաջա-
դէմ գտանիլ յամենայնի, ապա և 'ի չարիս յաղթեա-
ցեն յետինք առաջնոց. և յայնժամ անուն առն բար-

ւոյ գտանիցի միայն 'ի գիրս, և ոչ մի ոք բարի մնա-
ցէ յաշխարհի ։

Ը. Որ երկնչի կորուսանել զպատիւ իւր, զոր ունի զանձն յանկարգութենէ. իսկ որ միանգամ կորուսանէ, սոսնայ համարձակութիւն անպատկառ գործել զամենայն չարիս ։

Թ. Չարք միշտ հակառակ են միմեանց և ոչ կամի մինն զիշխանութիւն միւսոյն, զի քաջ գիտելով զչարութիւն միմեանց, հնարին կործանել զիրեարս. Բայց մինչ բարիք հաստատեն յիշխանութիւն, չարք դիւրաւ համաձայնին, զի ակն ունին 'ի բարեաց գտանել զներումն անիրաւութեանց զոր արարին յառաջագոյն. Աւստի չիք ճշմարիտ սէր և միաբանութիւն 'ի մէջ չարագործաց. զի յորժամ ըմբռնի մինն 'ի նոցանէ, փաղփաղուկի մատնէ զխորհրդակիցն իւր, և նա զընկերն իւր. և միաբանութիւն նոցա լինի պատճառ կորստեան ամենեցուն նոցա ։

Ժ. Չարագործք մինչ անկանին 'ի վտանգս, ոչ առնուն 'ի միտ զյանցանս իւրեանց, այլ մեղադիր լինին Աստուծոյ՝ թէ 'ի զուր ած չարիքս 'ի վերայ մեր, վասն որոյ և կրկին պատժոյ են արժանի՝ մի՝ վասն ապիրատութեանցն զորս արարին, և միւս վասն անիրաւ դատապարտանացն զԱստուծոյ ։ Ոչ պարտ էր նոցա գիտել, թէ ոչ ոք պատժի յԱստուծոյ, եթէ չիցէ նախ մեղուցեալ առ Աստուած. զի Աստուած վասն անքաւ գթութեան իւրոյ սովոր է նուազ քան զարժանն պատժել զոք, թող թէ 'ի զուր ինչ տանջել ։

ԺԱ. Որք ժահահոտք թէ և ծածկեսցին ընդ հողով, տակաւին բուրեն զգարշահոտութիւն իւրեանց. բաղձանք չարաց որչափ և ծածկել ջանասցեն, անդէն յայտնի լինի բարեաց, զի սիրտք իւրեանց ապականեալք են ։ Նոյնքան յանդգնին չարք, մինչեւ

[illegible]րաձիգ լինել ամենայն բարեգործաց. բայց 'ի համբերել բարեաց՝ քարինք չարաց անկանին 'ի գլուխս իւրեանց։

ԺԲ. Զարաչար գնացք կենդանեաց անմահացուցանեն զյիշատակ արանց բարեաց որք մեռան, և յաւելուն զկսկիծ նոցա 'ի սիրտս մարդկան, զի կորուսին զբարիս և ունին զչարս։ Վասն որոյ 'ի մեռանիլ բարեաց՝ սգան առաքինիք, ոչ յայն սակս զի մեռան նոքա, այլ զի չարք մնացին յաշխարհի և բարիք պակասեցան. Կեան չարք՝ զի միշտ մեռցին. մեռանին բարիք՝ զի միշտ կեցցեն։

ԺԳ. Եթէ տերեւք ոչ պահպանէին զպտուղս ծառոց, գուցէ ծառք ոչ կրէին զնոսա 'ի յոստս իւրեանց. և եթէ չարք ոչ էին կրթիչ առաքինեաց, թերեւս ոչ տանէր երկիր զայն անպէտ բեռին։ Եւ արեգակն զլանայր արդեօք զլոյս իւր ծագել 'ի վերայ չարագործաց, եթէ չէր ազդեալ նմա յԱստուծոյ՝ ծագել 'ի վերայ բարեաց և չարաց։ Ի բառնիլ չարագործին ոչ միայն մարդիկ ազատին 'ի վնասուէ նորա, այլ և ինքն չարագործն զերծանի 'ի ծանրութենէ պատժոյ, որ յաւելու օր քան զօր 'ի վերայ իւր՝ ցորչափ մնայ կենդանի. ապա եթէ կեան չարք, այն է կամ 'ի պատիժ մարդկան, կամ ինքեան չարագործին։

ԺԴ. Չարք որչափ առաւել բարձրանան 'ի փառս, այնքան մերձ լինի անկումն նոցա. զի արդարութիւնն Աստուծոյ երբեւի համբերել մինչեւ լցցի չափ մեղաց նոցա, և կործանեսցէ խսպառ։ Բայց բազում անգամ խնայէ Աստուած տալ չարաց զանկն ընտրողական 'ի ճանաչել զառաքինի բարեկամս. զի չեն արժանի խրատու՝ որք կամին մերժել զխրատ։

ԺԵ. Մի ինչ գայթակղիր յորժամ տեսանես, թէ 'ի գործել ուրուք զմեծեղեռն չարիս՝ մնայ անպա-

ալիժ, իսկ 'ի մեղանչելն փոքու յանցանօք՝ պատժի չարաչար ։ Քանզի սովոր է Աստուած համբերել չարագործաց զի զղջասցին, բայց 'ի յամառիլ նոցա 'ի մեղս, պատճառաւ փոքու յանցանաց նոցա՝ ծանունըս պատուհասէ, որով հատուցանէ զպատիժ մեծամեծ չարեացն զոր արարեալ էր նոցա յառաջագոյն։

ԺԶ. Անօրէնն յորժամ անկանի յանդերձ վտանգս, յայնժամ ճանաչէ թէ արդար է Տէր, և խնդրէ վերէժս 'ի չարաց։ Զի նա որ 'ի յաջողութեան իւրում կափուցանէ զաչս իւր՝ զի մի տեսցէ զճշմարտութիւն, սպասէ ձախողութեան և վտանգի մահու. բռնանայ զաչս իւր 'ի ճանաչել զճշմարտութիւն և զիրաւունս Աստուծոյ, բայց վայրապար՝ զի ոչ կարէ յայնժամ գտանել զփրկութիւն.

ԺԷ. Ծուլք պատճառեն զտկարութիւն բնութեան իւրեանց 'ի գործել զառաքինութիւն, բայց զանձինս խաբեն. զի ոչ եթէ մոլութիւնն է բնական իմն, և առաքինութիւնն օտար 'ի բնութենէ, այլ բնութիւնն առաւել յարմար է 'ի գործել զառաքինութիւնս քան զմոլութիւնս, ապա թէ ոչ՝ անողորմ լինէր Աստուած առ մարդիկ, զոր և մտածելն է ամբարշտութիւն. Ապա մի ասիցէ ոք, թէ կամիմ գործել զբարիս՝ բայց ոչ կարեմ. այլ մանաւանդ ասասցէ, թէ կարեմ՝ բայց ոչ կամիմ.

ԺԸ. Որպէս մարմնական հիւանդութիւնք 'ի սուղ ժամանակի ախտացուցանեն զմարդ, բայց երկար տաժանմամբ հազիւ ապաքինին, այսպէս և մոլեկան խոթութիւնք հոգւոյ սակաւօրեայ ներգործութեամբ ունականան, բայց բազմաժամանակեայ ժուժկալութեամբ 'ի բաց մեկնին։

ԺԹ. Զի եթէ ոք ժրաջան աշխատ լինի, կարէ ուղղել զթիւր ունակութիւնս արհեստի. ապա և զմոլեկան սովորութիւն բարուց՝ որ վասն տկարու-

թեան բնութեան ունակացեալ է 'ի մարդս, կարէ ոք ուղղել՝ եթէ արիական ոգւով հանապազորդէ 'ի քանս :

Ի. Հիւանդութիւնք մարմնոյ եթէ ոչ բժշկեսցին դեղովք կամ պահեցողութեամբ, հուսկ ապա վախճան առնուն մահուամբ. Իսկ հիւանդութիւնք հոգւոյ եթէ ոչ ապաքինեսցին ուսմամբ և առաքինական կրթութեամբ, յաւերժական մահուամբ.

Չար է ախտ մարմնոյ, զի սպանանէ զմարմին. բայց չարաչար է ախտ հոգւոյ, զի զմարմին և զհոգի միանգամայն մահացուցանէ. Այպա յետսամիտ եմք և բիւր թամբասանաց արժանի, զի 'ի հիւանդութենէ մարմնոյ զարհուրիմք և դարման խնդրեմք. իսկ 'ի հիւանդութենէ հոգւոյ ոչ երկնչիմք ինչ, և ոչ առ բժշկութիւն փութամք.

ԻԱ. Են ոմանք այնքան չար և մոլի, զի առ 'ի մեծ-ծօղ ազատ յերկիւղէ գեհենին, և անխիղճ արշաւել յամենայն չարիս, ոչ կամին հաւատալ՝ թէ գոյ հատուցումն գործոց մարդկան. սակայն անհաւատութիւն նոցա ոչ կարէ խափանել զճշմարտութիւնն, որում և բան մարդոյ վկայէ. և խելագարութիւն է ընդդէմ ճանաչման իւրոյ մարտնչել, ըստ այնմ. «Մի թէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատան խափանէր. քաւ լիցի :» Հռովմ. Գ. 5.

ԻԲ. Որ հաստատեալ է 'ի միտս, թէ զոր գործէ 'ի ծածուկ՝ յայտնի լինելոց է մարդկան, կամ խորշէր իսպառ 'ի գործոց չարեաց, կամ՝ զկայ առնոյր :

ԻԳ. Մարդիկ 'ի սուղ ժամանակի ուսանին զբազում չարիս, և յերկար ժամանակս հազիւ զմի ինչ բարի. քանզի բարին է իբրեւ ակն պատուական, բայց չարն իբրեւ խիճ անարգ. վասն որոյ նա է դժուարագիւտ, և սա ամենայն ուրեք դիւրապատաս. և եւս՝ բարին է յամբողջութենէ ամենայն

մասանց, և չարն յինչ և իցէ պակասութենէ ։

ԻԴ. Բարիք և չարք միաբանին յաշխատանս, բայց տարբերին 'ի կամս. զի բարիք ոչ հաւանին ընդ բարին զոր գործեն, վասն որոյ ջանան առնել զեւս բարեգոյնս, և օր ըստ օրէ յառաջացեալ հասանեն 'ի գերակատար աստիճան բարեգործութեան ։ Իսկ չարք հաւանին ընդ չարն զոր գործեն, վասն որոյ զհետ կրթին այնմ, և օր քան զօր լինին առաւել եւս չար ։ Քանզի բարին վերջանայ՝ եթէ ոք հաւանեսցի նմին և զկայ առնուցու, և չարն վերջանայ՝ եթէ ոք ոչ հաւանեսցի նմին և դադարեսցի առնել ։

ԻԵ. Եթէ Աստուած լոկ միայն լինէր բանից բերանոյ մարդկան, ոչ զոք դատապարտէր. զի ամենեքին 'ի խօսիլ իւրեանց ցուցանին ատել զմոլութիւնն, բայց գործով հանապազ յաճախեն 'ի նոյն. սակայն Աստուած ոչ եթէ 'ի բանս հայի՝ այլ 'ի գործս, և ըստ այնմ տանէ դատաստան ։

ԻԶ. Ոչ է արժանի կելոյ, որ կեայ վնասուք կենաց անմեղաց. Տէր է նա կենաց այլոց, մինչ զոհէ զկեանս իւր վասն նոցա ։

ԻԷ. Մարդիկ եթէ քաջ ճանաչէին զողորմելի վիճակ մարմնոյ, երանէին զմեռեալս. զի մեռեալք անջատեալք 'ի մարմնոյ՝ զերծ են 'ի թշուառութենէ անտի, իսկ կենդանիք տակաւին 'ի մարմնի գոլով տառապին 'ի նմին ։ Բայց կենդանիք ոչ քաջ ճանաչեն այժմ զտգեղութիւն մեղաց և զսաստկութիւն պատժոց մեղաւորաց, վասն որոյ անզգուշաբար անկանին 'ի մեղս, և անկանին ընդ դատապարտութեամբ ։ Իսկ մեռեալք թէպէտ և ճանաչեն զամենայն ; բայց ոչ կարեն ապաշխարութեամբ քաւել զմեղսն՝ զոր գործեցին 'ի կեանս իւրեանց, վասն որոյ կան մնան ընդ դատապարտութեամբ ։ Ուստի պիտոյ է կենդանեաց զմիտս մեռելոց ունել, զի մի՛ մեղօք դատապարտեսցին ։

« Որպէս աղխ ատամանց վնասակար է՝ և ծուխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւնք որոց վարին նովաւ ։ » Առակ. Ժ. 26։

« Հասցեն 'ի մթերս մեղաց իւրեանց տագնապելով. և կշտամբեսցեն զնոսա յանդիման անօրէնութիւնք իւրեանց ։ » Իմաստ. Դ. 20։

## ԳԼՈՒԽ Բ.

### ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ա. ՃՇՄԱՐԻՏ փառքն և պատիւն բովանդակի 'ի վեհական մարդկութեան, և ոչ գտանի արտաքոյ նորա. իսկ որ բարձրամտեալ գեր 'ի վերոյ համարի զինքն քան զամենայն մարդիկ, և խնդրէ զփառս և զպատիւ յատուկ անձին իւրոյ 'ի վեր քան զամենայն, արտաքոյ ելանէ 'ի կարգէ մարդկութեան. վասն որոյ և այնպիսին չէ մարդ բանաւոր, զի ոչ ճանաչէ զպատիւ մարդկութեան, այլ գազան հրէշ և այլանդակ։

Բ. Ճշմարիտ փառաց և պատուոյ է արժանի՝, որ է մարդասէր և բարերար, և ճանաչէ զյարգ մարդկութեանս. և անարժան է փառաց, որ նախամեծար համարի զանձն քան զամենայն մարդիկ, և ցանկայ փառաւորիլ յամենեցունց. ապա կարի իրաւամբ արհամարհի յամենայնէ, որ արհամարհեաց զամենայն մարդ։

Գ. Հպարտ ոք և փառամոլ 'ի լսել իւրում զգովութիւն 'ի մարդելուզաց՝ փքացեալ գոռոզանայ, և յիմարաբար ցանկայ զի և այլք ամենեքին գովեսցեն զնա. և ոչ ճանաչէ թէ սուտ գոռոզութիւնք են այնք, զոր տան նմա մարդելոյզք վասն շահասիրութեան իւրեանց։ Գովութիւնն որ լինի առ երեսս՝ թէ և իցէ ճշմարիտ, է սնոտի և գրգռիչ սնապարծութեան։

Դ. Գոռոզք սովոր են լինել ապերախտք, զի մինչ տաղտկանան 'ի միոյ բարեկամաց իւրեանց, ոչ 'ի միտ ածեն զհաւատարմութիւն նորա և զերախտիս, այլ իսկոյն հերքեն զնա. զի կորուսանել զմտերիմ խորհրդակիցս և զերախտաւորս՝ ոչ ինչ ցաւ է նոցա. և որ միանգամ անհաճոյ թուեցաւ ինքեանց, ոչ երբէք կամին տեսակցիլ ընդ նմա։

Ե. Հպարտն նման է որջառաջիլ գաւազանի, որ մինչ բռնութեամբ թեքի, երկոքին ծայրքն խոնարհին և գան առ միմեանս, և մինչ թողու 'ի ձեռանէ, նոքին իսկ ծայրքն վաղվաղակի գլուխ ամբարձեալ՝ դառնան յոճն առաջին. այսպէս և հպարտք յորժամ 'ի նեղութիւնս անկանին, ակամայ կորանան և խոնարհին, այլ իբրեւ ազատին՝ միւսանգամ մեծամտին, վասն որոյ և ատելի են Աստուծոյ և մարդկան։

Զ. Բազումք հասանին բարեբաղդութեան, բայց ոչ գիտելով բարւոք վարել, կորուսանեն փութով. Որպէս իշխան հպարտ թէպէտ և գիտիցէ զտկարութիւն իւր և զզօրութիւն թշնամւոյն, բայց վասն ամբարտաւանութեան իւրոյ ոչ կամի խոնարհիլ 'ի պայման հաշտութեան, զի մի՛ նուաստացեալ երեւեսցի, որով և կորուսանէ իսպառ զպատիւ իւր և զիշխանութիւն.

Է. Անմտութիւն է անկայուն յաջողութեամբ բարձրամտիլ, և կորուսանել զփառս և զհամբաւ. յաջողուածք են պատրողականք, զի ցուցանեն լինել մշտնջենաւոր և անկորուստ, բայց են փոփոխական և հոսանուտ։

Ը. Հպարտ մոլեք՝ լինին յանդուգն 'ի յաջողուածս, և երկչոտ 'ի ձախողակս. զի որք փոքր մի յառաջ ուռուցեալ էին ամբարտաւանութեամբ, 'ի կորուսանել զբարեբաղդութիւն իւրեանց՝ վաղվաղա-

քի կորանան և ընկճին, և 'ի միում վայրկենի անցանեն 'ի ներհական ծայր։

Թ. Սէրն սնափառութեան երբեմն դրդուեալ յամբարհաւաճութենէ՝ այնքան կատաղի, մինչև յերկիր կործանել զմեծատունսն. ապա յայտ է՝ թէ ոչ ամենեքին պահեն զկարգ մեծութեանն զոր ունին, այլ մանաւանդ բաղումք յանարգութիւն անձանց իւրեանց դարձուցանեն զնա, զի ոչ գիտեն թէ որպէս արժան է վարել զմեծութիւն։

Ժ. Ցանկութիւն առելորդաց 'ի պատճառս սնոտի փառամոլութեան առաւել տանջէ զմարդիկ՝ քան զպահանջս հարկաւորաց 'ի պէտս կենաց. զի թէ ոք կամի կարեւորօքն շատանալ, դիւրաւ կարէ զնոսա 'ի ձեռս բերել և կեալ երջանկաբար։

ԺԱ. Ազնուականք յաճախակի լինին փառամոլք, քանզի պատրեալք յանուանէս ազնուականի, յամենայն ուրեք խնդրեն ունել զփառս և զպատիւ. այո՛ անմեղադրելի իմն է ըստ արժանեաց խնդրել զփառս, բայց կորուսեալ զչափաւորութիւն՝ լինի չար և մոլեկան, մինչ զի տայ կորուսանել կամ զանձն և կամ զպատիւ։

ԺԲ. Հոգի ազնուականութեան է մեծագործութիւն, իմաստութիւն և առաքինութիւն, ապա թէ ոչ՝ մեռեալ համարի ազնուականութիւնն. Ուրեմն մի՛ պանծասցին ազնուականք 'ի պայծառութիւն տոհմի իւրեանց, եթէ ոչ ունին գործ արժանի ազնուատոհմութեան. զի որպէս 'ի պակասել իւղոյ՝ շիջանի ճրագն, նոյնպէս և 'ի պակասել մեծագործութեան իմաստութեան և առաքինութեան, բառնի յարգ տոհմականութեան նոցա։

ԺԳ. Բաղձանքն փառասիրութեան բաղում անգամ չափազանց տայ խօսել զգործոց զորս արար, կամ զիրաց որք պատահեցան նմա, կարծիս իմն ե-

դնել 'ի մահ. թէ այնու մեծագունի եւս պատուոյ արժանի գտանիցի , բայց խաբի . զի պատուին զոր ունի՝ զայն եւս կորուսանէ ։ Նոյն պայման է զճշմարտութիւն իւրայն խօսել չափաւորութեամբ խիստ և ոչ ատապապայման , զի մի՛ երեւեսցի 'ի նոսա նշան մտաց պարծանաց , որպէս զի և բարեք իմիքեին յաղդորեսցին գովել և պատուել ։

ԺԴ. Որ տուաւել քան զկար իւր 'ի բարձրագոյնս ձկտի , 'ի վախճանի ամօթապարտ եղեալ խոնարհի . և որ ջանայ կատարել մեծ զկամս իւր , անհանգիստ առնէ զանձն իւր ։

ԺԵ. Օրէ է զի այք խոհականք երբեմն ոչ տեսանեն զդայանի վտանգս և 'ի նոսա խարդաւանին , իսկ պարզամիտք տեսանեն և զգուշանան . և զհետ-ագէտք ստանան զմեծութիւն , և հանճարեղք առդաւրս նոցա ղեգերին ։ Բանզի խոհականք և հանճարեղք բաղում անգամ ապաստանելին յանձինս և ոչ 'ի յԱստուած , վասն որոյ և Աստուած թոյլ տայ նոցա առ ժամանակ մի հեծել և յօգուտ եղանել , զի ծանիցեն զտկարութիւն բնութեան իւրեանց , որք կարծէին թէ 'ի ձեռս մարդոյ է երջանկաբար կեալ . իսկ պարզամիտք և տգէտք ապաւինեալ 'ի յԱստուած՝ զերծ մնան 'ի վտանգէ , և գտանեն զյաջողուածս բարեաց ։

ԺԶ. Ամենք 'ի մարդկանէ մինչ տեսանեն զոք յաղթահարեալ երբեմն 'ի կրից հոգւոյ , անդրանեն զնա մինչեւ բացառ , և հպարտացեալ յանձինս իւրեանց ասեն ապանծանօք . զի՞նչ արգեօք իցեն կիրք , բայց եթէ տրգանեակք կանանց , որք եթէ ընդունայիցին երբէք , դիւրին իմն է նուաճել զնոսա անդրէն 'ի հնազանդութիւն . այլա՛ որպէս 'ի մարդկան համարի արժան է ունել զայն , որ վստահար մեղկութեամբ յաղթի 'ի կրից ։ Նայց մինչ պայքարի մեծագունք՝ ոչ պակաս

քան զայլսն յաղթահարելն 'ի կռիւս անձնասիրութեան կամ այլոյ, զինքեանս խոստովանելով զտկարութիւն մարդկեղէն բնութեան, և ուսանին լինել կարեկից և ներողք:

ԺԷ. Այր հպարտ և ամբարտաւան ատելի է ամենեցուն. զի որպէս նա անդոսնէ զամենայն մարդիկ, արժան է զի և այլք ամենեքին անդոսնեսցեն զնա: Այս ախտ հպարտութեան առաւել տիրէ 'ի վերայ որդւոց մեծատանց. զի մեծատունք զորդիս իւրեանց դրեն յանդստին յօրօրոցէ՝ ամբարտաւանութեամբ քան կաթամբ սնուցանեն, անթերի կատարելով զհաճոյս կամաց նոցա: Յորս նախ քան զհաստատիլ անդամոց՝ հաստատի ախտն ամբարտաւանութեն, ուստի և համարին զանձինս դիւցազինս, և արհամարհեն զամենեսին, գուցէ և զծնողս իւրեանց:

Զի որպէս մինչ էին մանուկ՝ կատարէին զհաճոյս նոցա, նոյնպէս և 'ի մեծանալ իւրեանց կամին զի կատարեսցեն զկամս իւրեանց, վասն որոյ և լինին կամապաշտ. ոչ այնու միայն զի ինքեանք պաշտեն զկամս իւրեանց, այլ և այնու զի կամին թէ այլք ամենեքին պաշտեսցեն. և եթէ ոք հակառակեսցի իւիք կամ ոչ կատարեսցէ, վաղվաղակի զայրանային անշիջանելի բարկութեամբ: Նոցա պատճառական դատին ծնողք, եթէ պատճառս տան կամապաշտութեան որդւոց իւրեանց:

ԺԸ. Հպարտն ոչ կամի հնազանդիլ ումեք 'ի մարդկանէ՝ բայց միայն դիւաց, զի ոչ կամի ճանաչել զոք գերագոյն քան զինքն՝ բայց եթէ զդեւս որոց կայ միշտ հնազանդ. և եթէ ոչ էր տուեալ զանձն 'ի ծառայութիւն դիւաց, թերեւս հնազանդէր մարդկան: Ապաքէն ծառայ նա է, որ միայն տեառն իւրում հնազանդի, և ոչ այլոյ ումեք. իսկ հպարտն՝ վասն զի է ծառայ դիւաց, նմա միայնոյ հնազանդի և ոչ բնաւ այլոյ:

ԺԹ. Մեծափառք թէեւ երբեմն գործեն զբարին, ոչ առնեն այնու մտօք՝ թէ վասն զի է բարի եւ հաճելի Աստուծոյ եւ մարդկան, այլ զի արբեցուսցեն ամբարտաւանութեան խորհրդոց, զի նոյն է առ նոսա բարին եւ չարն. ապա գործեն զբարին՝ զի երեւեսցին բարեգործ յաչս մարդկան.

Ի. Ակնկալուք ՚ի մարդկանէ զբարին զոր գործեն, ոչ վերաբերելով առ Աստուած՝ այլ ՚ի գովութիւն անձանց խորհրդոց. եւ զի մոռանան նորա զպարգեւս Աստուծոյ, որով կարողացան գործել զբարիս, վասն որոյ եւ ոչ տայ Աստուած զվարձս նոցա։ Այն է ճշմարիտ բարեգործութիւն, որ լինի ՚ի սէր եւ ՚ի պատիւ Աստուծոյ, եւ առ Աստուած վերաբերի իբրեւ առ աղբիւր եւ տուիչ ամենայն բարեաց. զի նա է որ տայ եւ ընդունի եւ վարձատրէ.

ԻԱ. Որ սովոր է պանծալ բանիւ, անպիտան է գործով. զի այր գործունեայ՝ գործով քան բանիւ խօսի. Պարտ է ամփոփել զձեռս, յորժամ լեզուն ամբարտաւան խոստանայ տալ.

ԻԲ. Չիք ինչ յաշխարհի ամբարտակ շինուած զոր ոչ եղծանիցէ հնութիւն ժամանակին, եւ ոչ իշխանութիւն հզօր զոր ոչ կործանեսցէ մշտնջենին, եւ ոչ արհեստաւոր ճարտար զորով ոչ գերազանցիցեն այլք։ Նա մի ոք հպարտասցի ընդ կարողութիւն իւր, թէ ոչ ոք կարէ հաւասարել ՚ի չափ իւր, զի գուցէ այլք լաւագոյն եւս կարիցեն գիտել եւ գործել։

ԻԳ. Զարմանք մի մեծ այս են, զի բազումք են ՚ի մարդկանէ հպարտք, բայց ոչ ճանաչեն թէ իցեն. եւ վասն զի հպարտութիւնն է սէր յատուկ գերազանցութեան, ոչ թողու ճանաչել զանկարութիւն անձին։ Այս իսկ պատճառ ամբարտաւանն եւ բարեգործքն, զի կամ զբարին զոր ունին՝ կարծեն զօրութեամբ իւրեանց ստացեալ, եւ կամ վասն արժանաւորութեան

խուրեանց տուեալ նոցա յԱստուծոյ ։

ԻԴ. Ամենայն հպարտ կամ է տգէտ, կամ յանդուգն. տգէտ այնու, զի զարդիւն զոր չունի՝ կարծէ թէ ունիցի, քանզի յատուկ է հպարտից կուրանալ մտօք. յանդուգն այնու, զի սակաւ բարեօքն զոր ունի՝ կամի առաւել երեւիլ ՚ի մէջ ընկերաց իւրոց, առ որով և արհամարհէ զայլս իբրեւ զուրկս ՚ի բարեաց ։ Եւ որովհետեւ առաւել չար և դժնդակ է այս ախտ, ապա առաւել զգուշութեան պէտս ունիք առ ՚ի չախտանալ նովաւ ։

ԻԵ. Ո՛չ բարիս աշխարհի և զմեծութիւն այնպէս պարտ է քեզ ունել, որպէս թէ ունիցիս զնոսա յե- րաւէ. զի յորժամ ստուգիւ ունիլ կարծես, անդէն առ ժամայն լինին անհետ. դու հաւատաս՝ թէ ՚ի ձեռին քո են, բայց ոչ են, զի զփախուստ նոցա ՚ի քէն ոչ կարես արգելուլ ։ Այս անմիտ է որ ընչիւք և մեծութեամբ առօրեայ կենցաղոյս մեծամտի և հպարտանայ ։

ԻԶ. Բազումք ՚ի մարդկանէ դիւրաւ ամբարհա- ւանին՝ և ելանեն ըստ կարգ բանաւորութեան, ե- թէ ունիցին զհարստութիւն ընկերակից և ձեռն- տու ճիգեանց. վասն որոյ յոլովակի թոյլ տայ նոցա աստուածային տեսչութիւնն անկանիլ ՚ի կարիս աղ- քատութեան, զի մի իսպառ խելագարեսցին ։

Քանզի կերպ մարդկան է իբրեւ զգազան, որ ե- թէ գտցէ բազում դարման, այսինքն ճոխութիւն ընչից, լինի ամեհի յոյժ՝ մինչեւ դժուարին լինել նմա ածել ՚ի շղթայս, և հպատակ կալ բանաւոր հրամանի կամաց. իսկ եթէ նուազ գտցէ զկեր, տը- կարանայ և նուաճի. զի աղքատութիւնն է շղթայ ամբարհաւան յանդգնութեան կրից, որ խոնարհեցու- ցանէ զնա հնազանդիլ ակնածութեան կամաց ա- ռաջնորդելոյ՝ ՚ի յուղիղ բանէ ։

ԻԷ. Հպարտն նման է հրոյ, զի որպէս հուրն ուր և գտանիցի, զգացեալ լինի 'ի բնական յատկութենէն. զի է սաստիկ ջերմ և այրեցող. այսպէս և հպարտն յորում վայրի և գտանիցի, ճանաչի 'ի յանդգնութենէ իւրմէ, զի է արհամարհող և նախատող այլոց, քանզի զանձն միայն գովէ, և կամի ընդունել զգովութիւն յամենեցունց:

Վասն որոյ և բազում անգամ անկանի 'ի նախատելի պատկառութիւնս, զի գտանէ խոնարհեցուցի. կամ 'ի ձախորդութիւնս, զի ծանիցէ թէ և ինքն է մարդ սխալական, ապա թէ թէ ոչ՝ աստուած իսկ համարէր զանձն իւր: Յաղագս որոյ յամենայն ժամանակ նախատակիծ և առաւել նշաւակի եղեն հպարտք, և լինին միշտ, և լինիցին առ յապայն ըստ արդար դատողութեանն Աստուծոյ, որոյ փորձն ոչ պակասի՝ եւթէ կարասցեն առնուլ 'ի միտ, թէ զինչ էր և զինչ եղեւ մեծութիւն և փառքն ամբարտաւանից:

ԻԸ. Որ ամբարտաւան է, եթէ ըստ դիպաց իմն բարւոյ իմիք լինիցի պատճառ, այնքան մեծամիտ և պարծի, մինչեւ կորուսանել զյարգ բարւոյն զոր արար, և զվարձսն զոր ունէր ժառանգել, և իբրև հաւ կարկաչան 'ի վերայ միոյ ձուոյ զսեղխս խլացուցանէ:

Վասն զի ոչ գիտէ կշռել զգործն ըստ չափու ճշմարտութեան, այլ ըստ կրից իւրոց. ուստի եւս քան զեւս բարձրանայ միտք և հպարտանայ. և զոր ինչ պատիւ ունի ստացեալ, անբաւական համարի զայնս, և համապազ նորագունին ըղձանայ; մինչեւ զանատուածականն ունել զպատիւ, և նմանող լինել բարձրելոյն փառաց: Եւ որովհետեւ զայս ախտ ամենեւին չար ընկալան հպարտք 'ի բելիարայ, ապա ընդունին ընդ նմին և զպատիժ պատուհասի նորա եթէ միացեն անդեղ:

ԻԹ. Հպարտն ոչ ումեք կամի խոնարհիլ. բայց քանզի է՛ պատուասէր, բազում անգամ խոնարհի մարդահաճել առ 'ի ստանալ զյարգանս. Ո՞վ է որ յումեքէ մեծարիլ ցանկայ, 'ի հարկէ նմա հաճոյանալ ջանայ, որոյ առաւելագոյն աւանդի 'ի միտս, թէ որպէս մարթասցի հաճոյ լինել. ուստի մեծարէ զայնս որք չեն արժանի մեծարանաց, որպէս զի զխոնարհութիւն ցուցցէ 'ի նոցանէ ըղձանօք. Վասնզի պարագայք ուսեալ են զմիմեանս 'ի պատիւ երկնել կեղծիւք և 'ի շողոքորթս 'ի սնուցանել զհպարտութիւն, և ոչ եթէ 'ի փառս Աստուծոյ և 'ի սէր եղբայրութեան՝ որպէս օրէնքն հրամայեն.

Իսկ եթէ փոքր մի վշտասցի յեղզօրէ խորմէ, և յայն պատուոյ անհետասցի 'ի միջոյ, առս յայնժամ թէ որպիսի նախատական նետս ձգէ առ նա. Ո՛վ որ յառաջագոյն գովութեամբ հռչակէր, այժմ աւ նադանօք վատահամբաւ է. և որ նախ յարգական անուամբ յիշատակէր, այնուհետեւ նախատական անուամբ ծանակէ, և որ 'ի սեռանելն ծիծաղաղէտ զինուքս փարէր, այժմ խոժոռահայեաց աչօքանօք երեսս դարձուցանէ. Այս խոնարհութիւն ամբարտաւանից՝ է առ երեւոյթ և ոչ ճշմարիտ.

Լ. Ծառայանք են, զի ամենայն որ 'ուր ուրեք և դատանիցի. պատասէ զհպարտութիւն իբրեւ չար և վնասակար, և գովէ զխոնարհութիւն իբրեւ բարի և օգտակար. այլս զի՞ է՝ զի միշտ և ամենայն ուրեք հպարտ բազում գտանին, և խոնարհք սակաւ, թերեւս ոչ ունին ուրս զճանաչումն բարւոյ և չարի. քանզի մեծ նախատինք է մտաւոր բնութեան ճանաչել զբարի և զչար, և թողեալ զբարին՝ առնել զչար. Այլ դժուարեն իմն թուի կարծել, թէ սակաւին ոչ կարասցեն մարդիկ ճանաչել զնոյն անթիւ օրինակաց և փորձոյ աստուածեղէն զգաց և կա-

տուող խնամոնաց, որք միայրան ուսուցանեն՝ թէ չար է հպարտութիւնն, և բարի՝ խոնարհութիւնն.

Պատճառս այս ուրեմն է, թէ մարդիկ կամ առ այլ կարօտութեան բնութեանն, կամ ՚ի բնութեան կրից հոգւոյ, կամ ՚ի գիտութենէ բանաւորականին, անկանին ՚ի հպարտութիւն, և կամ դաւել յանձնութ և զանազան ներգործականաց խոնարհութեան խորհրդոց, զի մի՛ նուաստ երեւեսցին.

Իսկ արդ՝ վասն ախտաւորութեան բնութեան, առաջնեկ արդարութ որ խոնարհեցաւ բան հպարտաց. առաքինի աներ զայն, որ ոչ կարէ կրել զկար անձին, և ոչ բարեկարգութեանց վարել ընթերցողութիւնս մտաց և հանդերձ, զայս և զդորութիւնն մարթից, զիշխանութիւնն և զիմաստութիւնն. բանագէտ հնար է՝ թէ այլք պատուել ամենայն զայս ամենայն բարիս բնութեան և բարիս բանիւք. բան զոր ինչն ունի. Իսկ նա որ դիտէ թէ այլք բարեաց զերազանցեն բան զինքն, անդէն անկանի խոնարհելով ՚ի հպարտութենէ իւրմէ. զի խոնարհութիւնն է յոյժ դժեմ յառաջ ճանաչման խորհրդոյ յանձն զինքն.

Վասնորոյ՝ ոչ է պարտ անձնախնամ ամենայն զգուշութեան կրել. զի կորոյս աստուածային բարեգործութեան բանաւորական միտս զայս բանին, թէպէտ զուտ զմտաւորութեան կանոնաց, և այսն մտածման զանձին առաքինութեանն. Նա՝ որ բարիք բնական կամ առաքինական պատճառէն երբեմն զհպարտութիւն. Իսկ նոքա ետեն պատճառեալ առ[illegible] ...

[illegible]

[illegible]

[illegible]

րութիւնս, և զգուշանալ ՚ի հպարտութենէ ։ Զի
այս ախտ զխորագոյն ՚ի ներքս ՚ի հոգիս մտանէ, և ուր
մտաւ տարաւ բնակեցաւ, և ՚ի բազմաց առաքինութեանց զերծանի.
Եւ որ այլ մոլութիւնք մերձաւորք առաքինութեանց, զհպարտն վասն
նորա զգեստաւորեն զնա. խոնարհագոյն մտօք ՚ի սկզբան ու-
թեան այլոց ոչ կամի յանձնառնուլ ՚ի մեծութիւն պատու-
ոյն. զի ՚ի բազմաց մեծագոյնս ինքնահաւանութեան զայրացեալ
զոր ունի որք, մեծ և չքնաղ և սաստել քան զայլոց
երեւեցուցանէ զանձն՝ այնպէս հպարտանայ, այսպիսի՝ անհնար
համբերել այլոց բարիս, և զնոյն միայն սիրել, և ընդ
այն հասանել։

Պարծենալ՝ պարտի ճանաչել և գիտել ումեք ըստ
բարձրութիւն պատուոյ և փառաց սահմանաւ խոնարհ
հութեան, և ոչ վասն նորա կերպարանաց խոնար-
հայ՝ իւրեւ պարծանօք ինչ անձնանուէր և տալ զնա
նախախնամութեան նորա. զի ձեռակերտ խոնարհ
հին առաւել մարդոց թուախնդրութ և անդիմանու, բայց
առաւել առաքինեաց և փառաւորութ և մեծութիւնս։

Զի ի ճշմարիտ փառք և խոնարհութիւն մարդոյ՝ է
ճանաչել զվայելչութիւն և զօգտակարն, և զայն ստանալ.
և զինչ վայելուչ և օգտակար մարդոյ՝ քան գիտել զիւ-
րեւ զանձնեցուն, և կեալ ուղղափառաբար. և առհաս խոն-
արհն սիրելի է ամենայն բարեաց, և վարէ զկեանս
խաղաղ և ուրախ. Զայս որ ունի զանձն խոր, և կա-
մի գիտել յարգի և պատուական առաջի Աստուծոյ
և մարդկան, լինի խոնարհագոյն.

ԼԲ. Զի մեծագոյն մեղք քան զհպարտութիւ-
նըն. զի ընդ նմին շղթայեալ ունի զամենայն մե-
ծամեծ մոլութիւնս. Բանզի հպարտն ոչ կամի թէ
այլ որք քան զինքն զեր ՚ի վերոյ գտանիցի. և յայս
մանէ լինի նախանձոտ. և ոչ տանելով յանձնառութեան
այլոց՝ վառի ՚ի բարկութիւն. և ոչ կարացեալ ապրե-
լով զյանձնառութիւնս՝ չքանի, և անկանի ՚ի ծու-

լութիւն. և որք [illegible] ոչ [illegible] չինէին՝ և նոքա [illegible]
աղանդ. և ամբարշտութեանն [illegible] [illegible] գրոց
[illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]. և 'ի
[illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]
կամեցեալ, և [illegible] [illegible].

Սոյն համբերութիւն է մայր և դայեակ ամենայն
գլխաւոր մոլութեանց, յորմէ յառաջ գան ամենայն
[illegible] ծնունդք մեղաց. յորոց մինն բարկութիւն է ա-
ծել զանձն 'ի կորուստ. [illegible] [illegible] [illegible]
փախչել 'ի համբերութենէ բան 'ի [illegible] թուլոց.

ԼԲ. Համբերութեան [illegible] [illegible] յամենայնի, բայց
[illegible] յամենեցունց. որ ոչ [illegible] է [illegible],
ամենեցուն է [illegible]. բանզի համբերութեան կամի՝ թէ ա-
մենայն որ [illegible] [illegible]. և ոչ որ կարէ [illegible]
[illegible] [illegible], [illegible] [illegible] ամենեքին [illegible] [illegible].

ԼԳ. Համբերութիւն [illegible] [illegible] [illegible] և [illegible]
զի ոչ ձանձրանայ [illegible] անձին [illegible] [illegible] և
[illegible] [illegible]. բայց այս [illegible] է 'ի միջի. զի [illegible]
[illegible] ոչ [illegible] է [illegible], այլ և [illegible]-
թեան [illegible]. և [illegible] թէ [illegible] և [illegible]
ցէ. զի ոչ [illegible] ձանձրանալ [illegible]. բայց [illegible]
[illegible] [illegible] նեղութեան, զի ոչ [illegible] [illegible]
թեանն՝ այլ [illegible] թեանն գործէ. Իսկ համբերութեան
որ կատարեալ [illegible] և [illegible], և [illegible]
ւանն մինչ ոչ կարէ ձանձրանալ [illegible] անձին. [illegible]
[illegible] է, և [illegible] [illegible].

ԼԴ. Համբերութեան որ և առաքինութեանն կատարման
'ի բնաւից [illegible]՝ որք՝ [illegible], յարաժամապէս [illegible]
[illegible] յամենայն կոյս [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
բան օրինակի [illegible] [illegible] [illegible] որ [illegible].
Եղիցի [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible]-
բոյն. Արդ [illegible] և [illegible] համբերութեան է [illegible].

զի որ կարօղ իցէ 'ի բարերարութեանց անբաւից, մանր խորամանկել:

Նա զի այս տեսանէ զմտօքն՝ անդրհասական է մտաց, զի մտացն զգալոյ անմիութեան և հոգեւորին, 'ի նոյն Թագաւորացս միշտ առաջարկեալ ձեւով. և թեւաբեր հոգւովն բանականն 'ի նոյն Թագաւորական մարմնոյ բնակի, զի է գոյացականն անեւական նորին, բայց միշտ բաղձալի գերազանց լինել զնովաւ:

Նա՝ ուրեք երբէք այնքան յանդգնին հպարտք, մինչեւ կարծել զանձինս 'ի վերոյ քան զմարդ. զայս վարդու եւս ախտացեալ առաջարկել, մինչ եւ նաեւ զինքն զգայութիւն անմարմնոյ և խոնարհական: Սակայն մարթ է հպարտաց գերազանց քան զամենեսեան լինել, և 'ի բարձրագոյն պատուի վերածեալ պատճառք ճշմարտութեան, այսինքն՝ խոնարհութեամբ: Զի այս է ճշմարտութիւն, յորժամ ճանաչէ ոք զինքն որպէս և էն. իբր զի է սաեղծուած, մահկանացու, տկար, լոկ ինքեան անբաւական գոյոյն իւրոյ, և որ ինչ կարեւորք են առ գոյն իւր՝ ունի յայլմէ:

Հպարտն զայս ամենայն ածեալ զմտաւ՝ ճանաչէ զինքն, ճանաչէ նաեւ զԱստուած. և որ ճանաչէ զԱստուած, ձգտի սիրել զնա, զի սէրն 'ի ծանօթութենէ ծնանի ճանաչելոյ ծնանի. և որ սիրէ զԱստուած, միաբանեալ ընդ նմա, զի սէրն է միաւորիչ սիրողին ընդ սիրելւոյն. և որ միաբանեալ ընդ Աստուծոյ, 'ի գերագոյն պատուի վերածեալ: Նա ահա որ բարձրագոյն լինել 'ի վեր քան զմարդ, և քան զնիւթական գոյացութիւնս, խոնարհութեամբ օգնոյ հասանի փառաւորականաց իւրոց, և լինի որպէս զհրեշտակ Աստուծոյ: Հպարտն հըպարտացեալն փոխանակեցին զկարծիս իւրեանց, և լինիցին խոնարհք. սիրեսցեն զԱստուած, և փառաւորեսցին 'ի նմանէ, այսպէս թէ ոչ՝ հանդերձեալ են կրել զպատիժ պատուահասիկ հեղինակին իւրեանց սատանայեկի 'ի գժոխս:

Դ. ԻԵ. Հպարտն ցանկանալով առաւել գիտաս և

զգուշութիւն յամենայնի, մինչ զայրս ինչ առնէ յա-
ջորդս համբերութեան, ջանայ առ ամենեսեան հաշտ-
կել. և յորժամ ամենեքեան պղտորեալ հայցեն 'ի նմա
և զայրանան, և նա քաղցրութեան արութեամբ միշտ յօժա-
րակամ գտցի, որպէս զի առ ամենեսեան հաւասարեսցի
համբերութեան, և ինքն ու ուղղեալ մեծամեծասցի: Իսկ
մինչ մարդիկ ըմբռնեցուցանեն զերդումս խռովութեան 'ի գա-
լութենէ, անդէն լքեալ թուլանայ 'ի գործոց. զի
խնդրան քաղցրութեան նորա է զգօնութիւնն 'ի մտադը-
կանէ. ուստի և 'ի դժուարին գործութեան դժնդակին և
ինքն, վասն որոյ ասէ [illegible] Սատանայ.

ԼԴ. Համբերութիւնն դժուար [illegible] ա-
տելի է Սատանայի, և մարդկան այնքան է դժուարելի,
մինչ զի նորին իսկ համբերող ոչ յանձն առնուն խոնար-
հութեամբ, թէ կոյսն համբերեն. Իսկ ընդդէմ համբերու-
թեան, յայտ է թէ ոչ [illegible],
զի կայր են մարդ. քանզի եթէ ոչ կէսն կեցցէ մարդ, ոչ
կարէին համբերականաց կամաց; զի [illegible] է զօրու-
կամաց, այնու զի բաղձայ դէր 'ի վերոյ երկրի. [illegible]
[illegible] խեր. [illegible]
[illegible]
միայն է կայր, և ոչ [illegible]
[illegible], [illegible] յամենայն [illegible] 'ի [illegible]
[illegible] զի ոչ կարէ ընտրել զարժանն: [illegible]
է հողեղէն [illegible]
տիս; զի կարասցեն ճանաչել զմեծութիւն [illegible],
և խորշեսցին 'ի հպարտութենէ, այլ թէ ոչ որ ըստ
օրէ զօրանայ ախտն՝ մինչև հասանել կորնչել նոցա.
զի այս օրէն է Համբերութեան ոչ ինչ [illegible]
նել զպատիւն զոր ունին, և ցանկալ առնել զոր ոչ
ունին, ըստ այնմ. «Համբերութեանն ձերով
[illegible] վերասցի հանապազ: Դ. Թագ. ՀԳ. 23.

ԼԵ. Համբերութիւնն է ախտ ինչ մահաբեր, առ

որ գրեթէ բնաբոյս բերմամբ ախտաւորականք և մար-
թանք ունին զդիւրութիւն ։ Բայց զարմանք են ,
թէ ընդէր արդեօք նոքա և աղքատք և նուաստք ան-
ձնարկուք արտաքնական նոյնն ․ Միտամարդն անկանն հա-
յեցեալ ի ապերջութիւն ուստի իւրոյ խանդարձի ի
փքացմանէն ․ իսկ սա զդողով մնաւոր՝ անմիտ քան
զանքրանն գանձի , զի զոր հանապազ առաւելով զաղ-
քատութիւն իւր , սակաւիկն հայարամնայ և պարծ-
ամնօք ; որով իբրև հրէշ իմն ծիծաղելի ծանակի
յամենայնէ ․

ԼԸ․ Հապատան եթէ ենթադրէր մտօք՝ թէ Աս-
տուած միայն և ինքն միայն իցէ յաշխարհի և ոչ այլ
ոք , և զաշխարհ և որ ի նմա են ամենայն՝ միայն վա-
սն իւր արարեալ իցէ Աստուած , և զինքենէ միայն
հոգայ , և զամենայն խորհուրդս և զգործս իւր քըն-
նէ , ոչ բնաւ մեծամտէր ։ Զի յայնժամ յոյր վերայ
զերամբարձիկ կացէր , եթէ ոչ՝ ի վերայ Աստուծոյ ․
զի չէր այլ ոք ի վերայ երկրի , զորովք գերազանցել
կարծէր ․

Բայց անհնար է ստեղծուածոյ որ ունիցի միտս՝
այնչափ խելագարիլ , մինչև զանձն դնէր ի վերոյ քան
զԱստուած համարիլ ։ Եւ այսու օրինակաւ ոչ միայն
ի հպարտութենէ , այլ և յամենայն մոլութեանց և
ի մեղաց հեռի դառնէր ․ ոչ ումեք զիջանէր , և ոչ
զումեքէ տրտնջէր , զի ոչ ոք բաց ի յԱստուծոյ ճա-
նաչէր զոք յաշխարհի ․

---

« Ամբարտաւանութեան սկիզբն՝ հեռանալ ի Տեառնէ ․ զի յԱրար-չէն խոտորեցաւ սիրտ նորա ։» Սիրաք ․ Ժ ․ 14 ․

« Զի՞նչ շահ եղև մեզ հպարտութիւնն , և զի՞նչ մեծութիւն ամ-բարտաւանութեանն իցէ մեզ նպաստաւոր ։» Իմաստ ․ Ե ․ 8 ․

« Ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի ։» Ղուկ ․ ԺԸ ․ 14 ․

# ԳԼՈՒԽ Գ.

## ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Ա. ՃՇՄԱՐԻՏ փարթամութիւնն կայանայ 'ի բաւականութեան հարկաւորաց՝ 'ի սնունդ և 'ի ծածկոյթ մարմնոյ։ Այն բաղձանք որք ոչ շատացեալ կարեւորօք՝ վատնեն զինչս իւրեանց 'ի չքնաղութիւն մեծամեծ ապարանից, և յաւելորդ զարդս ընտանեաց և կարասեաց. և սպառելով զգանձս իւրեանց յանպիտան վայելչութիւնս, կորուսանեն և զպիտանիսն զոր ունէին 'ի դարման կենաց, և անկանին 'ի յետին չքաւորութիւն և յանարգութիւն։

Բ. Մարդիկ յայնժամ ձանձրեն զաւելորդսն, յորժամ կարեւորքն շատանան, զի աւելորդքն ոչ առնեն զոք փարթամ, այլ անառակ և չռայլ. Իսկ այր խնայողն հարկաւոր ախորժելեօքն. բնութեան սակաւ է շատանալ. փոխանակ յաւելորդաց զոր հնարեաց անսահմանութիւն մարդկան, կայ միշտ խաղաղ և անվրդով, և չունի կասկած 'ի թշնամեաց։

Գ. Օտարազգին և աւելորդ զարդք զգեստուց և կարասեաց, և բազմատեսակ հանդերձանք կերակրոց և ըմպելեաց կործանեն զտունս մեծատանց, և պատճառեն զանթիւ չարիս հասարակաց։ Վասն զի միջակայքն ցանկան և գուն գործեն նմանող լինել մեծատանցն չքեղութեան, և նուաստք միջակայնոց. Այսպէս տեսեալ մեծատանց՝ սկսանին յաւելուլ և ևս զվայելչութիւնս իւրեանց, և անկանին 'ի չափազանց ծախս, որպէս զի գեր 'ի վերոյ երեւեսցին քան զնոսա։ Այս միջակայքն բուռն առնեն նմանել նոցա, ոմանք յախտէ սնափառութեան շարժեալ, և կէսք յանարգ ամօթոյ, և նուաստք խելագարեալք ջանան հետեւիլ ընթացից նոցա։

Եւ այսպէս մեծատունք յառաւելուլ անդ զշքեղութիւնս, պակասեցուցանեն զհարստութիւնս իւրեանց. Միջակք յանձնախեն տնանկանալ, և նուաստք չբաւորին խոպառ, և անկանին 'ի յուսահատութիւն։ Եւ առ հասարակ ամենեքին սկսանին անարժան միջոցաւ ճոխել զպէտս իւրեանց. անփութին, զորդիս, զտունս, խաբեն և գործեն զայլ բազում չարիս 'ի վնաս անձանց և ընկերացն. Եւ աղբիւր այս ամենայն չարեաց և վնասու է բաղձանքն սնոտի փառասիրութեան։

Եւ ազգասէրք ոմանք յիմաստնոց և յառաքինեաց հաշին և մաշին զօրհանապազ 'ի սպանել զայս ամենայն, և կամին բառնալ զմեծածախ աւելորդութիւնս նոցա, սահմանելով զօրէնս բարիս 'ի պահել իւրաքանչիւր անդամս հասարակութեան 'ի չափու իւրում։ Բայց ոչ համարձակին, զի ընդդէմ է մեծեկան սովորութեան՝ որ 'ի բազում ժամանակաց հետէ արմատացեալ է 'ի նոսա. զի ամենեքին ընդ որիմն բերմամբ ցանկան սաստիկ ջերմամբ՝ 'ի լինել զվայրավարին ճախս սնափառութեան, և ոչ այլ ինչ խորհին՝ քան թէ հարստանալ և՛ փառաւոր քան զայլս երեւիլ։

Եւ այս ախտ այնչափ արմատացեալ է 'ի նոսա, մինչ զի և նոքա որք զուրկ են 'ի կարեւորաց, ջան գործեն երեւիլ փառաւորք. և 'ի փոխ առեալ զարծաթ՝ ծախեն յաւելորդ զարդս և 'ի կերակուրս։ Եւ որ ջանայ ու զգել և չափաւորել յաւելորդ զարդուց և 'ի ծախուց բարեկարգ կենցաղավարութեամբ իւրով, արհամարհի յամենեցունց իբրեւ չքաւոր կամ կծծի։ Այլ առ 'ի բժշկել զայս մահաբեր ժանտ ախտ վարուց հասարակաց, պարտ է 'ի խորհուրդ լինել և գտանել զկառավարիչ որ իմաստուն և հայրենասէր, որ խոհական խրատիւք և բարեկարգ կանոնա-

դրութեանցն և օրինակաց կենցաղավարութեան խո-րոց կարդայցէ ուղղել և բարեկարգել ։

Դ. Կրթութիւն է յաղթել չար սովորութեան՝ որ տարածեցեալ է փոխան՝ սովորութեան բնութեան , բայց չէ խափան անյաղթելի , զի կարէ որ յաղթել և ՚ի բնոյ տարագրել՝ եթէ անձայ խրատու խնամո-նոց , և արգելական ուշ ... հանդարտաբերեսցէ ՚ի ջանս ։

Ե. Մեծատուն այս՝ եթէ ունիցի պատշաճս որ կա-րեւորք են ՚ի դաստիարակն և ՚ի դիտողութիւն կենաց , բայց եթէ ոչ գիտիցէ վայելել ՚ի նոսա բարեկարգութեամբ , այն ամենայն բարիք պատճառին շռայլութեամբ , և ինքն լինի դարշելի և թշուառ . զի զինչ օգուտ է նմա ճոխութիւն , եթէ ոչ գիտիցէ ՚ի կիր առնուլ ըստ արժանւոյն ։

Զ. Փառք և մեծութիւն իշխանին է օգուտն զոր առնէ հասարակաց . բայց են անձինք որ կարծեն թէ հաստատեալ իցէ այն ՚ի մեծաշուք հանդերձանաւ համեղահամ կերակրոց , և այլ և այլ ըմպելեաց . և ոչ եւս զգան , թէ այնու ոչ միայն դիւրապատրաստանս զտանելին նոցա անկանիլ ՚ի մեղս , այլ և կորուսանեն զոյժ և զառողջութիւն մարմնոյ , և փութացուցանեն զմահ ։ Սեղանն բազմախորտիկ չարամայրն է հիւանդութեանց և թունաւորիչ կենաց ։ Սեղանն պարզ և չափաւոր առնէ համեղ զկերակուրս , զօրացուցանէ զմարմինս և ընդարձակէ զկեանս ։

Է. Որ կարէ չափաւոր աշխատութեամբ ստանալ ՚ի գաւառի իւրում զհարկաւոր պէտսն , անմիտ տանջանք են նմա ճանապարհս հատանել ընդ հեռաւոր աշխարհս ՚ի սաստկութիւն ուղևորութեանց , և կրել վիշ-տս յօտարութեան ։

Ը. Մարդն առաւել յաւէտ ՚ի կրից իւրոց և ՚ի ցանկութեանց՝ քան ՚ի տառապանս պատահարաց քաղցնին ցան-կացեալ միոյ իրի՝ անհանգիստ տառապի մինչև գտա-

՚ի ձեռս թերեւս։ Այսպէս աշխարհիկ փառաց ցանկութիւն նո-
րա առ ստուգութեան ազգս իւր. եւ մինչ հասանել այնմ,
սխալանս ցանկալիս, աղաւաղեալ եւ անդադրական փափուկս յօ-
ժարութիւն մարդոյ, եւ ցանկալով նորա լինի. եւ այս-
պէս աստանօր ՚ի կեանս իւրոց։

ԺԸ. Ճշմարիտ փառքն եւ մեծութիւնն կայանան յա-
ռաքինութեան եւ ՚ի բարեգործութեան, այսպէս արժան
է մեծամեծաց փափագել ՚ի ճշմարտագոյն շնորհութեան,
եւ ընդ իւր միայն զառաքինութիւն եւ զբարեգործութիւն,
զիւրաքանչիւր առաքինական ներգործութիւնս եւ զօգուտ բա-
րերարութիւնս են ճշմարիտ զարդք եւ փառք իշխա-
նաւորին եւ տան եւ տոհմի նորա, զոր անուանեալ հա-
սարակութեան զհետ կոչեն քինել նմանող։

ԺԹ. Որ կամի կառուցանել զտունն մեծապայծառ, կայ-
նեալ զհիմունս ՚ի վերայ. զի որոյ հիմունքն է քաղն, անձամբ
ընդհանրապէս լինի նման փլուցանելի. իսկ ներգործողին
փառք թողուն աշխարհս հաւատեն։

Ի. Մարդիկ որք յաջողեալք ՚ի փառաւորու-
թեան եւ ՚ի մեծութեան, ոչ ախորժեն լսել
զճշմարտ եւ զխրատախօսութիւն, սիրելին մեծամեծս.
զի կամեցեալ ծածկել զիւր ինչ պակասութիւն զոր ու-
նին, առաջին ՚ի բարձրութեան, եւ գործեն զանուղղայս ՚ի
մնալ անձանց իւրեանց եւ առհասարակաց։

ԻԱ. Ճշմարտութիւնն բառնալով արտաքոյ քննէր
նոցին շողոմաց, թէ եւ ոչ փառս աշխարհիկ տուեալ ընդ
նոքա նոցա զմարդիկ Աստուածոց կամս ՚ի մարդկային. զի
յաւուր միում ՚ի հարկէ պակասութիւն զանձն նոցա, եւ
ցանկալիք տուփուրն շողոմութեան, եւ քննեսցին հեզ եւ
թշուառ, եւ պատուական մեծ հայրի կարգաւորեալ։

ԻԲ. Ճշմարիտ որքան առաւել փառաւորել զմարդ,
այնքան առաւել պատուէր յառաջոց. բայց ՚ի այսպ
աւուր զբարեխօսն անձինն շնորհաց պատուիրն, եւ անձնական
յանդարդութիւն։

ծ. ր. Հաւատարմութիւնն է [illegible] առութեանց, և պատմանեաց [illegible] [illegible] և [illegible] [illegible] որ [illegible] [illegible] հարկաւորքն [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] յաւելորդ ծախս ՚ի կատարել զմոլեկան [illegible] խելք [illegible] որոյ [illegible] [illegible] [illegible] և [illegible]

Ուստի չև եւս ոչ միայն թշնամի է անձին, այլ [illegible] նէ յուսահատ զմտաւանդութիւնս և զանազանութեան ծրա խելք, և անկանի յաղքատութիւն՝ այլ և [illegible] նամի է այլոց. զի խարդախութեամբ խէ և [illegible] ՚ի [illegible] զինչս և զգրամս, և ծախսելով [illegible] չկարէ անդրէն հատուցանել, և այսու [illegible] նաս մեծ հասարակութեան բաժանն : Իսկ մեծ [illegible] նէ հասարակութեան, որ չափաւորէ և [illegible] լըն, կամ տարագիր առնէ յընկերութենէ մարդկան:

* Որպէս զի չէ շնութիւն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ժԲ. 51. 32. 55:

* Դիտեմ զի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մեծա- մեծս չինեցից. և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Ղուկ. ժԶ. 18.

## ԳԼՈՒԽ Դ.

### [illegible]

Որպէս [illegible] յառաջ [illegible] [illegible] յա- [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] զօրութեան բարեաց առն առաքինւոյ : Ընդ որ կա-

մի խորտակեսցէ զատամունս նախանձոտին, և զնա որո-
տամբ և մեկնաբանել տանել, փոյթ կալցի յայլ եւս
մեծամեծ առաքինութիւնս թեւակոխել, և համբաւ
բարի առ ամենեսին հռչակ հարկանել. զի համբաւ
բարի առաքինազարդ անձին է դաժան կենաց նա-
խանձոտին.

Բ. Նախանձոտք չարաչար խածատեն զազգայինս
և զերախտաւորս քան զօտարս. զի որք բարիք որք
յայլոց ազգաց գործութեամբ հռչակին, ՚ի նախանձո-
տաց ազգին իւրոյ՝ որոց արարեալ են զմեծամեծ բա-
րերարութիւնս, զուր տարապարտուց բամբասին և
թշնամանին.

Գ. Զի՞նչ մեծագործութիւն ինչ արարեալ յա-
ռաջ հասարակաց, որ կարասցէ զերծ մնալ ՚ի թու-
նաւոր նետից նախանձոտաց. Զի եթէ գործ իշխանին
լիցի մեծագոյն և օգտակար, յաչաղկոտն վատաբանէ
զգործողն տանելով. ասելով զի ոչ արար սա ՚ի փառս
Աստուծոյ, այլ զի՝ փառս որսասցի ՚ի մարդկանէ։
Իսկ եթէ գործն լիցի չափաւոր, անգոսնէ զգործն
տանելով. եղեւ կամս, որոյ անուն մեծ է քան զգործ
իւր. զի եթէ այլ ոք լինէր ՚ի տեղի նորա, մեծամե-
ծըս և օգտակարագոյնս քան զսոյս արարեալ էր ար-
դեօք։

Իսկ եթէ ՚ի տարապարտէ արկածից ժամանակին՝
կամ ՚ի թելադրութենէ թշնամեաց վտանգ ինչ ըն-
հեռ[illegible], ո՞ր անձն կարասցէ նուաճել զապա-
րասան լեզու նորա. զի զոչ պատճառն առեալ ՚ի
տեղի պատճառի, զամենայն զնաս կուտէ ՚ի գլուխ
նորա, և ասէ. այս ամենայն չարեաց սկիզբն և պատ-
ճառ սա եղեւ։

Դ. Որ ունի զբարիս բնութեան՝ զգեղեցկու-
թիւն, զիմաստնութիւն, զճարտարախօսութիւն,
կամ զբարիս բաղդի՝ զիշխանութիւն, զփարթամու-

թիւն և պճնամբաւ, ոչ երբէք կարէ զերծանել զանձն 'ի հարուածոց նախանձոտին, և մանաւանդ մանել 'ի թունաւոր ժանեաց նորա. Բայց հնար է կապել զձեռս նորա՝ առնելով նմա զբարերարութիւն, և փշրել զատամունս նորա՝ յաւելմամբ 'ի վերայ բարեաց բնութեան և բարեաց բաղդի՝ նա և զմեծամեծ բարիս բարոյական առաքինութեանց.

Այլ թէպէտ այսու ամենայնիւ կաշկանդին ձեռք նորա և փշրին ատամունք, բայց դեռ արձակ կայ լեզուն, որով ոչ դադարի 'ի լեզուագարելոյ, դուցէ առաւել քան զառաջինն. և զի չունի ատամունս խածատելոյ, առ զայրոյթ սրտին խօսի զչարիս և վատահամբաւէ.

Բայց այն ամենայն 'ի վախճանի դառնան 'ի պատիժ անձին իւրոյ. զի հուր նախանձուն կիզու զերիկամունս նորա և զսիրտ, և կարծի 'ի կենաց, և հուրն յաւիտենից այրեսցէ զհոգի նորա և զմարմին անվախճան կենօք. Այլ ահա այս է արժանի հատուցումն ջանից և գործոց նախանձոտին. զի որով մեղանչէ ոք, նովիմբ և պատժի.

Ե. Նախանձոտն բազում անգամ յայտ առնէ զանմտութիւն յոռութեան հաստատէ, մինչեւ խափանել զհաստատակաց բարւոյն փառս ատելութեանն զոր ունի առ բարեգործն. Այլ թէպէտ դիւրութիւն իւր ոչ է խափանել զհաստատակաց բարիս, այլ միայն զհամբաւ բարերարին, բայց քանզի որ բառնայ զպատուանդան բառնայ և զգործն, ապա և նախանձոտն կամելով խափանել զփառս և զհամբաւ բարերարին՝ խափանէ և զգործն բարի, 'ի դէպ եկեալ բանից Տեառն, թէ «Դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք.» Ղուկ. ԺԱ. 52.

Զ. Ո՛չինչ քան զարեգակն լուսաւորիչ, բայց ոչ պակասին ամպք 'ի մթագնել զլոյս նորա. զի՞նչ քան

զարտաքինն մեծարանի, բայց ոչ պակասեն յաշխարհութք 'ի նմա ամէլ զայրոյթ նորա :

Արդէն զնմանն չունելով զանձինն՝ հոլովի. աղդրդալով. պարտէս և Նախանձոտն չունելով զխելս՝ ամբաստանէ միշտ զաւրիս այլոց :

Է. Որ դժկամակի ընդ յաջողուածս այլոց, երեւի զոլ չարաբարոյ և կարօտ : Եւ որովհետեւ Նախանձոտն ոչ կամի զի ունիցի ոք բարի ինչ, երաւելիք են զի և ինքն գտցի կարօտ և զուրկ յամենայն բարեաց :

Ը. Նախանձոտն տանջի առանց տանջողի, զորչափ ընդ գայջողուածս այլոց : Հուրն թէ և երբեմն ծածկեսցի մոխրով, տակաւին ոչ դադարէ 'ի լինելոյ հուր, այլ 'ի յուզելն արծարծէ զիւր կայծակունս . Նախանձոտն թէ և ուրեք երբեք քողարկեսցէ զժանտութիւն իւր պատրուակաւ բարեպաշտութեան, տակաւին պահէ 'ի ներքս 'ի հոգին զայն Նախանձուն . քանզի 'ի լսել իւրում՝ կամ 'ի տեսանել զյաջողուածս ուրուք, դրդուեալ անդէն շանթահար լինի մախանօք, և վառեալ տոչորի անշիջանելի հրով :

Թ. Նախանձոտն զուցէ ոչ գիտէ՝ թէ քանի՛ չար է տրամելն իւր ընդ բարեբաստութիւնս այլոց, և ուրախանալ ընդ դժբաղդութիւնս նոցա : Բայց յորժամ այլ ոք Նախանձոտ զնոյն առնէ ինքեան՝ զոր ինքն առնէ այլոց, յայնժամ ճանաչէ զդառնութիւն չարեաց զոր սովոր էր առնել . զի զոր ինչ առնէ ոք, զնոյն և կրեսցէ .

Ժ. Նախանձոտն մինչ ուրախանայ ընդ ձախորդութիւնս քո, դու մի՛ տրտմեսջիր . զի եկեսցէ ժամանակն յորում դու ուրախասցիս, և նա տրտմեսցի զի որով չափով չափէ ոք, նովին չափեսցի նմա :

ԺԱ. Որ անման է 'ի բարեաց, զերծ է 'ի Նախանձատաց . իսկ որ վաստակի 'ի բարիս, պարտ է համ

բերել յաջողանաց նոցին ։ զի եթէ չկամիցի ոք ձեռ-
նել նախանձուս, անդորր լիցի 'ի բարեաց ։ Այլ
ընտրելի է լինել բարի՝ և ունել նախանձ, քան
լինել զուրկ 'ի բարեաց՝ և ազատ 'ի նախանձուցս.

---

« Խիստ իբրև զդժոխս նախանձ ։ Թափիչք նորա իբրև զթափիչս բոցոյ հրոյ ։ » Երգ. Ը. 6 ։

« Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ ։ » Իմաստ. Բ. 24 ։

« Զինչ չար քան զայն որ նախանձի ընդ անձն իւր, և 'ի մախանձանի յայտնեսցի չարութիւն նորա ։ » Սիրաք. ԺԴ. Զ ։

---

## ԳԼՈՒԽ Ե.

### ԱԳԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

Ա. ԱԳԵՐԱԽՏՈՒԹԻՒՆՆ է այլանդակ դագանութիւն ինչ՝ որ առ ոտն կոխէ զբարերարութիւնս Աստուծոյ և մարդկան . և զի ոչ ճանաչէ զընկալեալ խնամսն, ոչ կարէ գտանել զնոսա յուշմէքէ ։

Բ. Այլ թէ ոք 'ի վտանգէ ներդութեան ազատեալ ոչ ծանիցէ զփրկութիւն իւր 'ի բարերարութենէն Աստուծոյ, և ոչ երախտագէտ մնոց գոհանալի լինիցի, այլ միայն անձին զօրութեանն ընծայէ զփրկութիւնն, անշուշտ կրէ զպատիժ ապերախտութեան իւրոյ ։ Այլ թէպէտ Աստուած երբեմն թողլ տայ այսպիսեաց զերծանել 'ի պատուհասէ, բայց մի համարեսցի նոցա այն 'ի բարի ։ զի ծանր եւս վրիժխնդրութիւն պահի նոցա, զոր կրեսցեն յայլում նուագի ։

Գ. Որչափ մեծ է երախտիքն, այնչափ առաւել ապաշնորհ է երախտամոռացն . զի ըստ չափու երախտեացն կշռի յանցաւորութիւն ապերախտին ։

Դ. Որ կարող է երախտահատոյց լինել բարերա-

րին՝ և զանձայ առնել, անարժան է գթութեան. զի որ ոչ հատուցանէ զպարտս իւր յորժամ կարէ, արժանի է պատժոյ՝ յորժամ կամեսցի հատուցանել, բայց չկարիցէ ։

Ե. Որ ոչ գիտէ թէ զինչ է բարերարութի, ոչ կարէ լինել երախտահատոյց. և որ ոչ փարէ յօգուտ իւր զբարերարութիւնն, կայէ դժնեայ բարերարին ։

Զ. Ո՞չ ինչ քան զայս մեծ ապերախտութիւն, եթէ որ զամս բազումս ընկալցի յումեքէ զպարգևս բարիս և զբումն հաճոյից կամաց իւրոց, և 'ի խընդրել նորա դոյզն մի ծառայութիւն, տրտնջեսցէ և չկամեսցի յանձն առնուլ յօժարութեամբ ։

Այսպիսիք ոմանք են նոքա, որք 'ի մանկութենէ իւրեանց վայելեն 'ի պարգևս Աստուծոյ. ընկալեալ ունին յաննախանձ բարերարութենէ նորա զպիտանիսն՝ միանգամայն և զվայելչականս 'ի պէտս կենաց և հաճոյից. բայց մինչ թոյլ տայ Աստուած սակաւ մի փորձութեան գալ առ նոսա, գանգատեն զերկնից և զաստերաց, որպէս եթէ անգթութեամբ վարեալ իցեն առ նոսա, և ոչ կամին համբերել և տանիլ յօժարութեամբ. ցանկան վայելել միշտ 'ի բազմապատիկ շնորհս առատ իւրեանց, և ոչ մերձենան գնել առ ժամանակ մի վշտանալ մինչ խրատէ զնոսա։

Է. Որքան 'ի բարձրագոյն արժանապատուութիւն հասանիցէ ոք, այնքան պարտաւորի երախտահատոյց լինել բարերարին իւրոյ Աստուծոյ. զի ըստ չափու պարգևացն պահանջէ տոկոսիս, ըստ այնմ. "Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ։ Ղուկ. ԺԲ. 48։

Նոյն պարտ է իւրաքանչիւր ումեք ըստ չափոյ և ըստ աստիճանի պատուոյ և մեծութեան իւրոյ զոր ընկալեալ ունի յԱստուծոյ, երախտապարտ մտօք հատուցանել Աստուծոյ զգործս բարեաց, կամ հրաժեշտ տալ 'ի պատուոյ անտի և 'ի մեծութենէ ։

« Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխա-նակ սիրոյ իմոյ։ » Սաղմ. ՃԸ. 5.

« Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի պակասեսցի։ » Առակ. ԺԷ. 13.

# ԳԼՈՒԽ Զ.

## ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա. ԱՂԲԻՒՐ ամենայն չարեաց զբարկութիւնն անուանել ոչ է անտեղի. զի չիք չարիք որ յառաջ ոչ գայցէ 'ի բարկութենէ, հայհոյութիւն, հարուած, սպանութիւն, գերութիւն, կորուստ ընչից, աւերումն քաղաքաց, բարձումն խաղաղութեան. և սիրոյ և ամենայն բարեաց. միով բանիւ ասացից. բարկութիւնն է ժանտատախտ ազգի մարդկան և դուռն դժոխոց։

Բ. Բարկութիւնն է կիրք հոգւոյ զայրացեալ յեռացմանէ արեան շուրջ զսրտիւն. և յանցանել ըստ չափ՝ գործին 'ի մարդն մեծամեծ վնասք, մինչև պայթիլ երակաց՝ և 'ի վերայ հասանել տարաժամ մահու. Զի ձայնս բարկ նշանակէ սաստիկ և աղդու, ուստի ասած է, Թէ բարկ քացախ իբր ամանոյն է գինւոյ։ Վասն որոյ պատուիրեն բժիշկք, զի 'ի սաստիկ բարկութենէ զգուշասցին մարդիկ. քանզի յայնմանէ առողջն հիւանդանայ և հիւանդն մեռանի, և երբեմն եւս ոչ թողու տեղի և ժամանակ հիւանդանալոյ, այլ անդէն առ նմին իբրեւ անողորմ դահիճ 'ի կենաց զրկէ։

Գ. Բարկացողն ոչ միայն անձին վնասէ, այլ և ընկերին որում բարկանայ. զի խախուտ որմոյ է նման, որ 'ի կործանիլն իւրում ոչ միայն փշրի ինքն, այլ և խորտակէ և փշրէ զայնոսիկ յորոց վերայ անկ-

կամս ։ Ո՞չ բազում անգամ այնքան խելագարի բարկացողն, մինչեւ յառնել 'ի վերայ իւր եւ կորուսանել զանձն ։

Գ. Օտարութիւն մոլեկան բարկութեան քան զձանաչել նա որ 'ի նմին ժամանակի նշմարեսցէ զդէմս իւր 'ի հայելւոջ, եւ կամ զկերպարանս սաստիկ բարկացելոց առաջի արասցէ մտաց իւրոց, եւ յայնժամ գիտասցէ թէ քանի՜ տգեղ եւ զազրելի է ախտն բարկութեան, զգուշանայ տեղի տալ նմին. Լաւ համարի [illegible] հեզութեամբ՝ քան ուղղել բարկութեամբ։ [illegible] փիլիսոփայութիւն [illegible] զօրութիւն գիտութեան կրթութեամբ [illegible] մարդոյ, մինչեւ [illegible] բարկացողին թէ զինչ է զոր խօսի. կամ [illegible] զինչ [illegible] ոչ [illegible] յուսմէ, ոչ [illegible] 'ի [illegible] է. արկանէ զանձն 'ի հուր եւ 'ի [illegible] զմարմին եւ զհոգի միանգամայն։

Դ. Բարկացողն բարուք ոչ ինչ ընդհատ երեւի 'ի [illegible] զի որպէս նա թողեալ զբարածիցն [illegible] քան զնոյն [illegible] եւ խածանէ, այսպէս եւ սա [illegible] հաչէ, զայրանայ, եւ ընդ ամենայնի կռուի. որովհետեւ [illegible] եւ արհամարհ յաչս ամենեցուն զանձին։ Ոչ ինչ մեծ նախատինք են մարդոյ յաղթահարել 'ի կրից իւրոց՝ քան 'ի խուլ [illegible]. Եւ մեծ [illegible] են յաղթել անդրան բարկութեան՝ քան [illegible] 'ի զօրութիւն [illegible]։ Չիք ոք ազատ քան զայն՝ [illegible] է 'ի մոլեկան կրից, եւ ոչ յաղթող՝ որ յաղթէ [illegible]. զի այնպիսին [illegible] վարէ 'ի [illegible] գլխաւոր խաղաղ եւ անվրդով։

Ե. Բարկութիւնն թէպէտ է չար եւ դժնդակ, այլ յանձն բժշկանան որ է առնուլ չար եւ դժնդակ [illegible]. զի սովորական ոք բարկացեալ՝ յաւէտ փութայ [illegible] քան [illegible], իսկ իմաստունն բարկացեալ՝ առնէ մեծամեծ [illegible] ամենեքեան։ Այս պարտ է

և արժան իշխանաւորաց չտալ տեղի բարկութեան, կամ վաղվաղակի զիջանիլ 'ի հեզութիւն ։

Ը. Բարկութիւնն է ախտ չար և զգուշալի, զի ոչ միայն զտկարամիտս և զդժանդաբարոյս ախտացուցանէ, այլ և զարս խոհականս և զգաստս՝ որք ի ցեղ ծանրաբարոյք ըստ հարկաւորութեան կրթեալ, կամ սովոր են 'ի կիր առնուլ զդեղլունջ, կամ զմուրճս կամ զծխապանակս, և ուսկանին ոչ են 'ի գործ ածեալ ։

Ուստի պարտիմք ամենեքեան կրթել զանձինս 'ի հեզութիւն ; զի մի բարկացեալք սաստապատժեսցեն կամ վասն փոքու յանցանաց ուրուք ։ Քանզի պակասութիւն ինչ որ է ըստ ինքեան թեթև, կամ անգիտութեամբ գործեալ, դիւրաւ ուղղի ողջ բանիւք խրատու՝ քան սաստիկ բարկութեամբ ։

Թ. Բարկութիւնն 'ի սրտի բարկացողին երբեմն ծածկի ստանկարութեամբ որպէս հուր ընդ մոխրով, որպէս զի 'ի դէպ ժամանակի հանցէ զվրէժ քինախնդրոյ ։ Ոմն են ոմանք որք առ օրին յայտնեն զբարկութիւն իւրեանց, և իբրեւ զծով 'ի դոյզն մի հողմոյ շարժեալ՝ զմեծամեծ ալիս յարուցանեն, խռովին ինքեանք և խռովեն զայլս, որպիսի են յիմարք կամակորք՝ թեթեւամիտք և արիւնայինք ։

Բայց են և ոմանք որք 'ի ժամանակս ձիգս անմեռ պահեն զբարկութիւնն 'ի սրտի ; և ըստ այնմ են ոխակալք, յորոց բազումք մինչև իցեն ծախեալ հրով բարկութեան զաստելիս իւրեանց, ինքեանք բոցակէզ եղեալ այրին որպէս դժնիկ ։

Ժ. Բարկութիւնն վրդովէ զբանականութիւնն ։ տայ գործել որ ինչ ոչ է արժան, և չթողու գործել որ ինչ է արժան ։ Այսպ որ կամի զբարկացեալ ոք համոզել 'ի հեզութիւն, թողուցու փոքր մի մինչև թուլասցի 'ի սաստիկ զայրացմանէն, կամ համաձայնեսցի ընդ նմա զատաջինն, և խրատունս տացէ բար-

կութեանն, և տայս տակաւ առ տակաւ համոզեսցէ զնա և զիջուսցէ։ Այսպէս թշնամիք դիւրաւ յաղթահարին բանիւք ողոքանաց՝ քան մեծամեծ գնդակօք ռմբաձգորդաց։

ԺԱ. Ահուրն վառօդով լցեալ որք չիջուցանել, որ[illegible] գ. ն գործէ քաղցրութեամբ զիջուցանել.

ԺԲ. Ոչ որ բարկացող կարէ լինել իմաստուն, զի բարկութիւնն ընդ իմաստութեան ոչ բնակէ։ Իսկ բարկութիւնն Աստուծոյ ոչ միայն է արդար վրէժխնդրութիւն անիրաւաց, այլ և պատճառ բարեաց նոցա. զի տանջելովն բազում անգամ առնէ զչարսն բարի, և զանպիտանսն պիտանի։

ԺԳ. Բարկութիւնն յաճախ տեսանի 'ի ծերս և 'ի հիւանդս, որք ստէպ տրտունջան զազատահարկութենէ ընտանեաց և պաշտօնէից, և բարկանան 'ի վերայ նոցա, և կարծեն թէ և այլք տան իրաւունս բարկանալոյ. Բայց սխալին յոյժ, զի ամենեքին որք շուրջ կան զնոքօք, ներելով տկարութեան նոցա՝ ցուցանեն ունել իրաւունս, զի մի գուցէ ծերն հիւանդասցի, կամ հիւանդն մեռանիցի։

Ապաքէն ծերն կորուսեալ զառոյգ հասակ և ըզկայտառութիւն մարմնոյ, իբրեւ ոչ կարէ վայելել 'ի հաճոյս զոր տեսանէ, տառապի 'ի ներքս 'ի սրտի. վասն որոյ զոր ինչ առնեն ինքեան՝ թուի նմա անախորժ, տրտունջէ և զայրանայ։ Իսկ հիւանդն վշտացեալ 'ի ցաւոյն, վշտացուցանէ զայնոսիկ որք տքնին վասն առողջութեան նորա տարապարտ բարկութեամբն։ Բայց պարտ էր նոցա առաւել բարկանալ բնութեան իւրեանց, թէ ընդէր անկաւ 'ի ծերութիւն կամ 'ի հիւանդութիւն, քան թէ ընտանեաց և սպասաւորաց։ Սակայն ոչ սակաւ ինչ վարձս ունին առնուլ յԱստուծոյ՝ որք համբերութեամբ դարմանեն զծե-

ըղին և զհիւանդն. զի համարին նոքա որպէս մանուկ՝ որոց տկար են միտք, և չեն բաւական ճանաչել զբա-րախառն առն և գոհանալ զնմանէ:

ԺԴ. Եթէ ոք կամի զերծ մնալ յախտէ բարկութեան, մի՛ պաշտեսցէ զյատուկ կամս իւր. զի բարկութիւնն յաւէտ պատճառի ՚ի կամապաշտութենէ՝ քան ՚ի յանցաւորութենէ պաշտօնէից:

ԺԵ. Բարկացողն անտանելի վիշտ է ընկերակցաց իւրոց, զի զոր այլք խօսին կամ առնեն՝ անարգանս թուի նմա. զի որպէս ցուլք կատաղին ՚ի կարմիր գունոյ, գազանք խռովին ՚ի սուսերաց իւրեանց, և գրաստք խրտնուն ՚ի դիոց անկելոց ՚ի ճանապարհի, այնպէս բարկացեալն յուռնայն և ՚ի սնոտի պատճառաց վրդովի, և յարուցանէ զաղմուկ:

ԺԶ. Բարկութիւն է մշտնջենաւոր տանջանք անձին բարկացելոյ. զի եթէ իցէ նաւաստի՝ կռուէ ընդ հողմ, եթէ ջորեպան՝ ընդ գրաստս, եթէ երկրագործ՝ ընդ եզինս, եթէ պայտառ՝ ընդ ձիս և ընդ էշս, և բազում անգամ նախատէ զնոսա և հայհոյէ:

Արդարև պարտ էր նոցա զանբանս և զանզգայս առնել բանական, կամ լինել ինքեանց անբան և անզգայ, որպէս զի համաբանք և համաբանոց եղեալ նոցուն, խաղաղութեամբ վարէին ընդ միմեանս.

Այլ յիրաւի ոչ ինչ օտար են բարկացողք ՚ի բնութենէ անբանից՝ կամ անզգայ գոյացութեանց, ա-րովհետև կամին զի անբանք և անզգայք իբրև զբանաւորս հնազանդեսցին ամենայն հաճոյից և ան-նարկութեան իւրեանց:

Այլ են ոմանք որք անբանագոյն քան զանբանս և առաւել անզգայ քան զանզգայս գտանին, զի կռուին ընդ դրօշակս հանդերձի իւրեանց՝ թէ արգել պատան ընթացից, և ընդ քարն՝ թէ խոչընդոտ եղև: Այս է սուրբք՝ զի իբրև խնլացնոք խօսին ընդ

...րեանս, նախատեն զանձինս և հայհոյեն, և եթէ ...անիցին 'ի հեղութիւն, թուցէ մատնեն զանձինս 'ի հարուածս և 'ի մահ :

ՃԻ. Նիւրապատրաստ դեղ ախտին բարկութեան է ճանաչել զտկարութիւն բնութեան մարդոյ, որ անկանի 'ի մանկութեան, 'ի կանայս, յերկչոտս և 'ի թեթեւամիտս. և ներել սխալանաց տղայոտաց, որք գործին ակամայ վասն անգիտութեան կամ տըկարութեան նոցին. զի թէ և կամեսցին անթերի լինել զպարտաւորութիւն իւրեանց, բայց անհնարին մարթ է նոցա պահպանել յինչ ինչ իրս :

Այս պարտ է տանուտէրանց ներողամիտ լինել և համբերող, և ոչ եթէ որպէս պղատօն բռնակալել ..., զի մի գուցէ յուսահատեալ կորուսցեն զհաւատարմութիւն իւրեանց, և խորհեսցին չարիս հատուցանել նմա :

ՃԻԱ. Իշխանաւոր բարկացող վասն փոքու պակասութեան ստորատրին մեծապէս զայրանալով, և անմտել քան զարժանն խօսելով կամ հայհոյելով զնոյնս պաշտօնեայն առնէ յանդուգն, և զհաւատարիմն անհաւատարիմ. իսկ հեզաբարոյ իշխան քաղցր խրատիւք և բանաւոր յանդիմանութեամբ զանհրկութն ածէ 'ի զգօնութիւն, և զանզգուշն 'ի հլութիւն; զօտարն որպէս զհարազատ դարձնէ, և զնախկին պաշտօնեայն որպէս արծաթագին ծառայ կամակար առնէ :

ՃԻԲ. Մարդ՝ որ իրաւամբ բարկանայ, սակայն ոչ զեղայ առեալ 'ի չափու՝ հեռացեալ սատանայացուցանէ զարտներութիւն իւր և զգուշութ, մինչև ժամանել 'ի փախչելն սուր բարկութեան : Ուստի յամնամ լոյս քանեին խաւարեալ 'ի միգամածս ծխոյ անբանականից դահավէժ կործանի յանհնարին վտանգս հոգւոյ և մարմնոյ, կորուսանէ զիրաւունս իւր և

անկանիլ ընդ միապաղաղանս ...

Առաջնորդ է ... 'ի ներքուստ անդ մերձաւորէն, երբեմն և չարաչափութիւն զգուշացողին ... յանձն թէ ... կոչի բարեկամութեան, որ զի ըստ է բարեկամաց, ... դժուարին և ... մտաւոր ... հաճոյական, ... առանձին, որպէսն է բարեկամութեանց նախագիծ մտաւորաց,

Ժ. Բարեկամութիւնն է կիրք կամաւոր բնաւորեալ 'ի բնութեան մարդոյ, և է արգասաւոր քաղցրանալոյ վայելչ[illegible] խնդալից լինելոյ անձինս մարդոյ, զոր ասեմ: «Բարկանայք՝ և մի մեղանչէք»: Իսկ չարաւոր բարկութիւնն, զոր ասեն՝ զատ անձին և զատ այլ անձանց պատճառ այլ է զարդարութիւն, և մանէ ... նկատմամբ իսկ յարձակել իրրեւ զգոյն վնասակար և ... անդրադարձեալ ... ասացեալ է, ... գինի ... և արդարութեան, յայտնեալ է ... չար և անիրաւ՝ որ կոչի բարկացողութիւն: Այսպէս թէ ցրուանաց ... ոչ ընդդիմանայ, ... նկատառութեան, և ոչ գինի վրէժխնդիր չարեաց, յայտնի ժամ է անզգայութիւն:

Նոյա գործ է դատանելոյ միջնաւորդման կեանս ընկերութեան 'ի մէջ երկուց մարդկան ծայրից, այսինքն՝ բռնաւորական բարեկամութեան և ցրուանացոյց անհաւատարութեան, և այն իսկ է հեզութիւնն, որ է առաքինութիւն կայացեալ 'ի միջասահմանութեան երկուց այսոցիկ ծայրայեղ մոլութեանց:

Սոսկ բարեկամաց այնմ որ ընդդիմանայ Շողոքորթեյ, ասի բարի նախանձ կամ նախանձաւորութիւն: Բարեկամաց այնմ որ ընդդիմանայ ուղիղ բանի, ասի սրտմտութիւն կամ զայրացումն: Բարեկամաց այնմ որ ընդդիմանայ իւրոյ [illegible]եան, ասի ատելութիւն կամ վրէժխնդրութիւն:

ԺԱ. Առաքինութիւնն բնաւորական՝ որ մանաւանդ առ անձնաւորն կոչի արտմտութիւն, է գործ [illegible]

և է զէն առ ևալ մարդոյ ՚ի բնութենէ՝ արիանալ նոքօք ՚ի պաշտպանութեան զանձն ՚ի վնասուց, և փախել զհիւանդութեան իւրոյ ․ Բայց յարմար պարտաւոր [illegible] անձն ․ հոգի անկանի բարկութիւն կամ բար-կացութիւն ․ և փոփոխման պահպանութեան արկանէ զանձն ՚ի վտանգ ․ ոչ կարէ երբեք ընտանական խոր-հել ․ խօսել և գործել ․ այլ զամենայն ինչ առնէ ան-կարգապաշտ ՚ի վնաս անձին իւրոյ և ընկերին ։

ԽԲ․ Շուտն հասանէ ընդ բարկութեան դիւրաւ, ոչ զգուշա-նալ զգուշացելոյ՝ թէ ընտանի իցէ կամ օտար ․ բարկա-ցողն փոխանակ ամենայնի զայրանալոյ, ոչ ճանաչելով զօգ-տակարն կամ զվնասակարն ․ Բայց առաւել առաւել բարկութեամբն առաւել անձին վնասէ՝ քան այլում և պատճառ զղջման զայլս խայթելով՝ ինքն մեռանի ։

ԽԳ․ Բարկացողն անարգագոյն քան զխելագարս և զհիւանդս գտանի, զի նոքա երբեք ակամայ կա-մեն ․ իսկ սա կամաւ բերի յանարգութիւն ։ Նոքա բազում անգամ երկուցեալ զգուշանան, իսկ սա ոչ երկնչի բնաւ ․ այլ նոքա կարեկցութեան են ար-ժանի, իսկ սա վրիժուց և պատժոց ։

ԽԴ․ Մայրենի գազանք որչափ և կատաղեսցին, առ ծնունդս իւրեանց ոչ բերեն ՚ի վնաս ․ իսկ բար-կացողն ոչ ևս խնայէ յորդիս իւր և յընտանիս ․ ա-պա վատթարագոյն է քան զգազանս կատաղիս ։

ԽԵ․ Բարկութիւնն յաւէտ տեսանի ՚ի հպարտս՝ քան յայլս և իցէ մոլիս ․ զի հպարտն կամի թէ ա-մենայն որք հետևեսցի կամաց իւրոց ։ Ուստի յոր-ժամ առնէ ոք զեր ինչ ընդդէմ կամաց իւրոց, կամ խօսի ինչ որ անհաճոյ է ինքեան, իսկոյն ՚ի բարկու-թիւն բերի, և ոչ ինչ փոյթ է նմա՝ թէ բարի իցէ կամ չար, բայց միայն զի ինքն ոչ հաճանի ։ Ձոր և թէ ոչ կարասցէ խափանել՝ տանջի ՚ի կրից իւրոց, մինչև մեռանիլ ևս ․ զի բարկութիւնն է ծնունդ

ժանտ, որ ապականէ զծնողն իւր։

Իսկ խնձորն կենաց հանդերձեալ և երկարակեցութեան. զի եթէ բարի է զոր այլք խօսին կամ գործեն, համ-ձեալ հաւանի նոցին. իսկ եթէ չարք են, ... բարկութեամբն ... այլ ՚ի բաց խորշի։

ՒՋ. Ամենայն բարկացող է փոքրոգի. զի ընդ այն բարկանայ որ՝ որում չէ բաւական տոկալ. և յայն ժամ կիրքն ցասմնական վառեալ բորբոքէ զարիւնն զսրտիւ, վասն որոյ բարկացեալն բաժանի և հանդարտ չէ, և խնդրէ ջուր ցուրտ առ ՚ի զովացուցանել ընդ-տապ սրտին։ Յորմէ և ջերմաջերմ գոլորշիք կերբեալ ՚ի տասնակ հնայէ ընդ ջիղս և ընդ նեարդս եկեալ մինչև յուղեղն, մթագնեն զլոյս բանին, և առնեն խը-րեալ անբան. բազում անգամ պատճառեն զպէսպէս ախտս, և երբեմն զմահ։ Յայն սակս որոց լայն են անգունք՝ շուտով զխիլանի նա ՚ի բարկութենէ, զի ծը-խամած գոլորշիք արեան ընդ լայնանիստ խողովակս անգաց դիւրաւ վերանին արտաքս յուղղոյ։ Իսկ ո-րոց փոքր և սուր են անգունք՝ դժուարաւ ածօքի ՚ի հեզութիւն. զի գոլորշիքն չունելով զելս յաջողակ, անազան ուրեմն վտարին յուղղոյ։

Իսկ արիւնն որ վառեալ էր զսրտիւ, ՚ի թափոյ կրից բարկութեան յուզեալ ձաղագի ընդ երակս, և ջեռուցանէ զմարմինն ողջոյն. վասն որոյ երեսք բարկա-ցելոյն ներկանի ՚ի գոյն արեան, և կայծակնաքն հրոյ թօթափին յաչաց նորա։ Եւ ոսկրոտն ՚ի պակասելն արեան՝ պաղի և ՚ի բնական ջերմութենէ լքանի և սկսանի դողալ. վասն որոյ և յանխորհրդաբար ընդդէմ ուղ՝ բարկանալն կոչի ..., այսինքն է՝ ... յորմէ պատճառի և դողդոջումն ձեռաց և ոտից և բոլորի մարմնոյն։

Նոյն պատճառ բարկութեան ուրուք է ... փոքրոգի. զի թէ լինէր մեծահոգի, չթողոյր ցասմնա-

կան կրից ապստամբելոց ՚ի բանէն. քանզի բարկա-
ցեալն յաղթեալ անգամ բռն կալեալ բանականու-
թեան. Միտ ոչ յաղթէ ՚ի բարկութենէ, թէպէտ
և մեծատարուն ոչ իցէ, սակայն քան զէ մեծահոգի, այլ
մանաւանդ է ոխակալ և փոխարկու: Գերազանցեն բարկու-
թիւնն է բարկանալ ՚ի վերայ բարկութեան իւրոյ:

---

¹ Այր բարկացող յարուցանէ կռիւս. իսկ երկայնամիտն և զհանդերձեալ դադարեցուցանէ: Առակ. ԺԵ. 18.

² Մի լինիր ընկեր առն բարկացողի, և ընդ բարեկամի զայրացողի մի բնակիր: Առակ. ԻԲ. 24.

³ Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լինի դատաստանի: Մատթ. Ե. 22.

⁴ Եղիցի ամենայն մարդ արագ առ ՚ի լսել և ծանր առ ՚ի խօսել. և դանդաղ առ ՚ի բարկանալ. զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ: Յակ. Ա. 19. 20.

---

## ԳԼՈՒԽ Է.

### ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Ա. Ագահութիւնն է անկարգ բաղձանք արծաթոյ և ընչից. յայն սակս ապաւէնք յամենայն ՚ի կեանս խորհրդոց այլոյն սանձահարեալ, զի միջոց տառապանս ՚ի մեծութիւն զգայականս և մտաւանդն ցաւօք, զի թողուն աղքատաց և երկաթեն յանդգնաբար ի գլխն: Որդեք ագահաց յաղագս կինն շուայտ, և զոր նոքա ժողովեցին ընդ ոսկի բազմաւն կամ յիմաւն, անդր վատնեն ընդ նոյնչափ սաւարս:

Բ. Ընկարգ բաղձանք ընչասիրութեան ունի ընդ իւր զզօրութիւն դառնաձանութիւն, և երբեմն զդաւա-ճանս զերկանս. և զի բարուց հազիւ կարեն լինել մը-

նաստուք իւրեանց զանեղի փառս միոյ զղկանաց . որ-
պէս ագահ բռնաւորն 'ի կեղեքել զմի որ յինչսա-
ւորաց, կեղեքէ և նա զաստուածաբերակն, և նոքա զայն
մինչ ցյետին չքաւորս . ապա բազմանքն ընչաւէ-
րութեան է բազմանք վնասելոյ բազմաց ։

Գ. Ինչք 'ի պէտս կենաց է ստացեալք, և առ 'ի պա-
հել զկեանս՝ պարտ է կորուսանել զինչս . ապա քանի՞
անմիտ են ագահք, որք 'ի ստանալ կամ 'ի պահել
զինչս՝ դնեն 'ի վտանգի կորստեան զկեանս իւրեանց ։

Դ. Վաճառք խնայելով 'ի սակաւ դրամն՝ կորու-
սանեն զմեծ պատիւ իւրեանց, մինչ արժան էր նոցա
զամենայնն տալ և պահել զպատիւ՝ որ առաւել ար-
ժէ քան զամենայն գանձս ։

Ե. Որ ոչ ունի զարծաթ առ 'ի տալ 'ի կաշառս,
մի խնդրեսցէ իրաւունս 'ի կաշառակեր դատաւո-
րէ, զի նա ոչ հայի յիրաւունս օրինաց, այլ միայն
'ի տուրս կաշառաց ։

Ուստի յառեալ կաշառառուք դատաւորի անմե-
ղութիւնն աղքատաց պարտաւորի, և յանցաւորու-
թիւնն փարթամաց արդարանայ . զի կաշառն փոխէ
զյանցաւորութիւնն 'ի յանմեղութիւն և զանմե-
ղութիւնն 'ի յանցաւորութիւն ։

Զ. Ագահն եթէ չունի զգանձս 'ի սրտի, զգանձ-
քըն կալեալ ունին յինքեանս զսիրտ ագահին . ապա
եթէ կորնչին գանձք, կորնչի և սիրտ նորա, և մնայ
անկենդան . զի կեանք ագահաց են գանձք նոցա ։

Է. Ագահք և ընչաքաղցք որ բանդագուշել առնեն
զդրամս, հայեսցին գոնէ 'ի ձեւ նոցուն, և ծանի-
ցեն զնորա ։ Քանզի ձեւն բոլորշի՝ որ ընաւորեալ
է անդադար շրջան առնուլ, յինքեանս տպաւորեալ
ունին դրամք, յայտ արարեալ՝ թէ պարտ է նոցա
անդուլ հոլովիլ 'ի միոյ առ այլ, և զամենեցուն լի-
նել զկարիս ։

Ը. Դժգոհութիւն ոսկւոյ Թերեւս պատճառեալ է 'ի նմա յերկիւղէ մարդկան, որք զհետ պնդեալ են ըմբռնել, և փոխանակել ընդ անարգ հաճոյից, կամ ագահական բարոյիւք ամրափակել 'ի բանտի, վասն որոյ ահիւ պակուցեալ շրջի Թաքթաքուր, և հնարի փախչիլ: Զի եԹէ վասն օգտակար և համեստ վախճանի խնդրէին զնա մարդիկ, անշուշտ ուրեմն շրջէր նա յայտնի, ընտանենայր ընդ ամենեսին և ոչ բնաւ յօժարէր խուսել. վասն որոյ և անաշխատ գտանէին զնա 'ի դէպ ժամանակի մինչ պիտոյանայր ինքեանց, և ոչ տառապէին անընդհատ:

Թ. Ընչաքաղցն ամենայն ուրեք և յամենայն ժամանակի սխալի և վնասի, բայց յայնժամ առաւել՝ յորժամ առնու յամուսնութիւն զկին հարուստ այլ անզգամ, որ կարէ լինել բաւական պատիժ ագահութեան իւրոյ. զի կորուսանէ զհանգիստ և զդիւրութիւն, և զգանձն զոր ստացաւ, գուցէ և զկեանս իւր՝ որ կապեալ է ընդ գանձուց:

Ժ. Վաճառական ագահ արժանի է խստագոյն պատժոյ. զի առ 'ի լնուլ զանյագ բաղձանս անձին՝ ձկտի անդր քան զկարողութիւն իւր, ժողովէ յայլոց ապառիկ դուշամբ զբազում վաճառս, և առաքէ ընդ ծով և ընդ ցամաք յաշխարհս հեռաւորս. և իբրեւ ձախողութեամբ ինչ կորուսանէ զինչսն, ապաստան լինի 'ի սնանկութիւն, և հատուցանէ և ոչ ինչ, զի ոչ ունի ինչ: Զայս ախտ վնասակար ախտանան և այլք ուսեալք 'ի նմանէ, զի առեալ վատնեն զինչս օտարաց, և կործանեն զտունս բազմաց.

ԺԱ. Ագահ զրկողք ոչ ճանաչեն զիրաւունս, զի իրաւունք անիրաւ զրկողաց՝ են զէնք իւրեանց: Ապա ընդ անիրաւս կամ զինուք հարկաւորի վարիլ, կամ ինքնօրէն իրաւանց նոցա հնազանդիլ. ապա Թէ ոչ կարէ ոք վարիլ զինուք, պարտ է հնազանդիլ ա-

մէնայն անհարկութեանց նոցա, և տալ զամենայն զոր ունի. զի լաւ է զրկել յընչից՝ քան զրկել 'ի կենաց։

ԺԲ. Եթէ բարձցի ագահութիւն 'ի սրտից իշխանաց, աղէտք տարակուսանաց տարագրին 'ի քաղաքաց, և եղկութիւնք 'ի գիւղից. զի ընչաքաղց բաղձանք գլխաւորաց է՝ որ տառապեցուցանէ զաշխատաւոր հասարակութիւնն 'ի քաղց, 'ի մերկութիւն, 'ի կապանս և յօտարութիւն, որոց աղաղակ ցանկ յերկինս ելանէ իջուցանել զարդար ցասումն աստուածային։

ԺԳ. Ախտ ագահութեան կարճէ զկեանս. զի ագահն տանջի 'ի միտս, թէ որպէս ստասցի զոր չունի, և որպէս պահպանեսցէ զոր ունի, որով միշտ հիւծեալ մաշի։ Զի արծաթոյ ստանալն է աշխատանօք, պահելն երկիւղիւ և կորուսանելն ցաւօք։

ԺԴ. Զցանկութիւն տոկոսեաց բազում անգամ և զմայր դրամոյն կորուսանէ։

ԺԵ. Ագահն մի համարեսցի զանձն աղքատ, քանզի կապեալ կայ ոսկի շղթայիւք։ Եւ արդարեւ կարի անմտութիւն է կապիլ յայն, որ 'ի կենդանութեան տուբերէ զերկիւղ և 'ի մահու ըզցաւ։

ԺԶ. Ագահն ոչ ցանկայ ելանել յերկրէս, զի գիտէ թէ չիք անդ ոսկի. սակայն ցանկայ իջանել 'ի սանդարամետս, զի 'ի կարծիս է՝ թէ գուցէ գտանի անդ ոսկի։

ԺԷ. Չէ պարտ զարմանալ՝ թէ զիարդ համարձակին գողք զինչս ագահաց գողանալ՝ մինչ տեսանեն կախեալ զգողս. զի կամին նոքա փութանակի կելանել 'ի կախաղան, և երթալ 'ի դժոխս, ուր ագահք բազումք են, թերեւս անդ մարթասցին գողանալ զինչս նոցա։

ԺԸ. Հարստութիւնն ոչ է 'ի բազմութեան ընչից՝ այլ 'ի բաղձանս. զի է՝ որ սակաւուք շատացեալ՝ ոչ

ցանկայ բազմաց , և համարի հարուստ . և է՛ որ ու-
նի բազումս , բայց վասն անյագ բաղձանացն առաւ
[illegible] ստանալ և եւս , համարի չքաւոր . զի
ցանկանալն ծնանի 'ի կարօտութենէ այնր զոր ոչ ունի ։

Այլ որովհետեւ ագահն ոչ հերիք դատի զոր ունի ըստ բաւականին , այլ միշտ ցանկայ ստանալ զայլ եւս [illegible] զոչ ունող , թուի չքաւոր և կարօտ ։

Թ. Ագահն ոչինչ պահէ զինչս աշխարհիս զոր ստացաւ յընթացս կենաց , զի անթերի հատուցանել կարասցէ աշխարհի յաւուր յորում պահանջեսցէ [illegible] ։

Ժ. Ագահն ոչ ճանաչելով զտկարութիւն մարդկե-
ղէն բնութեան , թէ զամս բազումս չկարէ մնալ
կենդանի , մթերէ կուտէ զգանձս ամաց բազմաց ։
Եւ թէպէտ գանձքն կարեն կալ ընդ երկար ժամա-
նակս , զի վայելեսցին 'ի մարդկանէ , բայց բնութիւ-
նըն չէ դաշնաւոր ընդ գանձուց , զի թոյլ տացէ ըս-
տացողին վայելել ցորչափ և համեսցի . զի մինչդեռ
գանձք անփոփոխ պահին յարկեղս , ստացողն երթայ
[illegible] ամփոփիլ 'ի գերեզմանի ։ Այս մի՛ խնդասցէ
ագահն՝ թէ ունի զինչս բազումս , զի մնայ միայն ին-
[illegible] երկկանգուն կտաւ 'ի պատանս ։

Աւասիկ որ ճանաչէ զտկարութիւն բնութեան իւ-
րոյ , այնչափ ինչ պահեսցէ 'ի գանձուց՝ որչափ պի-
տոյն է ինքեան , և զաւելորդսն ջամբեսցէ կարօտե-
լոց 'ի պաշար յաւիտենական . քանզի թողլոց է յաշ-
խարհի զամենայն , և երթալոց մերկ 'ի գերեզման ։
Որ սիրով ժողովէ զոսկին 'ի կենդանութեան , առանց
ցաւոց ոչ կարէ թողուլ 'ի ժամու մահուան ։

«Դժոխք և կորուստ՝ անյագ են . նոյնպէս և աչք՝ ագահ մարդկան ։» Առակ. ԻԷ. 20 ։

«Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ականս հատանեն և գողանան ։» Մատթ. Զ. 19 ։

# ԳԼՈՒԽ Ը.

## ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. Զի՞նչ առաւել անզգայ թմբրութիւն՝ քան լինել 'ի տանջանս և համարել զանձն երջանիկ ։ Եւ ահա այսպիսի ոմանք են դատարկաշրջիկք, զի ձանձրացեալ յամենայնէ՝ շրջին գտանել և զհանդիստ բաղձանաց իւրեանց . և իբրև ոչ գտանեն ուրեք, տանջին չարաչար և ոչ իմանան ։ Սոքա ծնանին իբրև զմարդ՝ և վատթար քան զանասունս մեռանին . զի անբանք ոչ գիտեն զդատարկութիւնն, բայց սոքա գիտեն՝ որպէս և պարտ իսկ է նոցա գիտել, այլ անզգայեալ մտօք տակաւին 'ի նոյն հանապազորդեն .

Ո՛վ ոք կարծիցէ՝ թէ անասունն կամ գրաստն անգործ կայցեալ կայ յախոռի, զի գործ նորա է միայն հնազանդիլ կամաց տեառն իւրոյ, եթէ գործով և եթէ անգործութեամբ . Ո՛վ ոք և զերկվայրիս անգործ համարեսցի, զի գործ նոցա է ճարակիլ 'ի լնուլ զքաղց իւրեանց, և հանապազօր կեան հանգիստ, զի պատրաստեն 'ի գործս որ յատկացեալ է նոցա 'ի բնութենէ ։

Իսկ մարդ դատարկաշրջիկ որ ոչ ջանայ կատարել զպարտաւորութիւն իւր՝ աշխատիլ մտօք կամ մարմնով, վատթարագոյն է քան զանասուն . տանջի 'ի ձանձրութենէ, և ոչ բնաւ գտանէ զհանգիստ ։

Բ. Ո՞վ ոք արդեօք անմտագոյն քան զդատարկաշրջիկն

կցէ, որ ոչ գիտէ թէ յո՛ ընթանայ, փոխի 'ի տեղւոջէ 'ի տեղի, զի օրն տարամերժեսցի, և ձանձրացեալ հառաչէ՝ թէ արեգակն ոչ 'ի մուտս խոնարհի. տառապի ներգործութեամբ զցայգ և զցերեկ, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ: Բնութիւնն որ փախչի 'ի դատարկութենէ, դրդէ զնա 'ի ներքուստ՝ պատաղել զգործով իւիք, ուստի և նա սկսանի խաղալ ըննարտ կամ զթուղթ: Ոչ գիտէ ողորմելին՝ թէ դեղ փարատիչ ներգործութեան է զբաղնուլ յօգտակար գործս, և հանգիստ սրտի՝ աշխատութիւնն չափաւոր, և ոչ եթէ անպիտան կամ վնասակար խաղ նարտի կամ թղթի:

Եւ այս դեղ օգտակար ոչ դժուարին ինչ է նմա գտանել, զի ամենայն ուրեք 'ի պատրաստի կայ նմա. Բայց ոչ խնդրէ առնուլ, զի ոչ գիտէ թէ յոր վիճակ թշուառութեան անկեալ կայ, որ չար եւս է քան զանկանիլն 'ի նոյն:

Գ. Է մարդ՝ որում ժամանակն պակասի, և է մարդ՝ որում ժամանակն յաւելանայ. Բանկլի ժրաջանք ցանկան երկարութեան ժամանակին, զի աշխատ լինիցին յօգտակար իրողութիւնս և 'ի գործս բարիս, և ոչ կամին կորուսանել գոնէ զփոքր ինչ վայրկեան, զի գիտեն եթէ անգին է ժամանակն, և զոր միանգամ կորուսանէ ոք, ոչ կարէ անդրէն 'ի ձեռս բերել.

Իսկ դատարկակեացք ցանկան զի կարճեսցի ժամանակն, և տրտնջան եթէ երկարեցաւ օրն. և ոչ գիտեն թէ զի՛արդ անցուսցեն, զի ժամանակն աւելորդ իմն թուի նոցա և առիթ ձանձրութեան:

Դ. Չիք մեծագոյն բաղձանք 'ի մարդ՝ քան զբաղձանս երկար ապրելոյ, զի կարասցեն առնել զբազում գործս բարիս. վասն որոյ և արք բարիք ջանան ոչ ընդ վայր կորուսանել զժամանակն, և ոչ այլ իրաց կորուստ այնքան ցաւ է նոցա՝ որքան կորուստ

ժամանակի. ապա քանի՞ աւաղելի են դատարկակեացք, որք յումպէտս կորուսանեն զնա, և չորք՝ որք զբարի ժամանակն ծախեն 'ի չարիս։

Ե. Եթէ զանգործութիւնն աղբիւր ամենայն չարեաց կոչեսցէ ոք, ոչ սխալէ. զի չիք մոլութիւն ինչ՝ որ 'ի դատարկութենէ ոչ գայցէ՝ յառաջ։ Հանգչելն յաշխատութենէ դեւք, և ոչ եւս յորդորեն զմարդիկ 'ի մեղս, մինչ բազում են դատարկաշրջիկք, զի նոքա առաւել քան զդեւս բազումս նորանոր չարեաց լինին պատճառք։

Փախուստն յաշխատանաց բազմացոյց 'ի լերինս զաւազակս՝ հեղուլ զարիւն անմեղ ճանապարհորդաց, որոց և արիւն հուսկ յետոյ հեղանի 'ի կախաղանի։ Կախաղանք անպիտան լինէին վասն աւազակաց, եթէ պիտանի լինէր նոցա աշխատանք արդար վաստակոց։

Զ. Անհնար է մնալ մարդոյ կալ անգործ և դատարկ. վասն որոյ դատարկաշրջիկն նեղուի է, և ջանայ էրն հանգիստ. և արժանի է նեղութեան, զի ոչ խնդրէ զհանգիստ՝ որ միայն գտանի յաշխատութիւնս օգտակարաց։ Սուտի և անգործն որ ոչ զբաղնու յօգտակար իրողութիւնս, 'ի հարկէ պատաղի 'ի վնասակարս՝ որ չար եւս է։

Է. Կեղեւ կարծր անմխաս պահէ զպտուղս 'ի թռչնոց. ժրաջան աշխատութիւն անմերձենալի առնէ զմիտս մարդոյ 'ի դիւաց, զի դեւք ոչ կարեն ժամ պարապոյ գտանել 'ի չարիս հրապուրել զաշխատաւորն։

Ը. Մարդիկ որք զուրուկս վարեն 'ի քաղաքէ՝ զի մի՛ և զառողջան վարակեսցեն, բարւոք առնէին՝ եթէ և զդատարկաշրջիկս 'ի բաց հանէին, զի մի՛ և զաշխատաւորս յախտս ծուլութեան ձգեսցեն։ Զազիր գործէք ապականեն զօդն, և վատթար ծուլութիւնք զբարս մարդկան։

ԺԹ. Աստուած տարբաշխագործեաց զտիեզերս ՚ի ծա-ռայութիւն մարդոյ, զի և մարդս ծառայեսցէ Աս-տուծոյ. իսկ ծոյլն ոչ ծառայէ Աստուծոյ, վասն ո-րոյ անարժանութեամբ վայելէ զտիեզերս, և զամե-նայն բարիս որ ՚ի նմա:

Ի. Ծոյլն թշնամի է հասարակաց, զի անաշխատ կամի վայելել զբարիս հասարակաց. բայց օրէնք են անշուշտ, եթէ ձեռն որ ոչ գործիցէ, կերիցէ մի:

ԻԱ. Եթէ ոք միշտ շրջի դատարկ, ՚ի բաց վա-րեսցի ՚ի միջոյ մարդկան իբրեւ անպիտան և անարգ, զի մի իբրեւ իշամեղու զվաստակս այլոց կերիցէ, և այլոց բազմաց օրինակ չարեաց լինիցի:

ԻԲ. Ոչ ոք թշնամի այնքան զօրաւոր է ՚ի կոր-ծանել զազգ մի ողջոյն, որքան դատարկութիւն և ծուլութիւն: Զպարիսպ ամուր՝ զոր քաջութիւնք թշնամեաց չկարեն քակել, դատարկութիւնն բնակ-չաց հեշտեաւ կործանէ:

ԻԳ. Չար է ումեք պակասիլ ՚ի վախճանէ՝ առ որ կարգեալ է ՚ի բնէ. իսկ մարդս ծնեալ է վասն օգտակար աշխատութեան. ապա եթէ իցէ անաշ-խատ և դատարկակեաց, պակասի ՚ի վախճանէ իւր-մէ. և այս չար՝ մեծ քան զամենայն չարիս է:

ԻԴ. Մարդ որ սիրէ զԱստուած, և առնէ բա-րիս հասարակաց, է հրեշտակ երկնային: Որ հանէ ՚ի սրտէ զսէրն Աստուծոյ և չարիս հասուցանէ այ-լոց, է դեւ դժոխային. որ միայն զմարմին իւր պա-րարէ և զցանկութիւն նորա կատարէ, է անբան երկրային:

Իսկ որոյ արդեօք նմանիցի անգործն և ծոյլն, թուի թէ և ոչ միոյ ուրուք ՚ի սոցանէ, զի արտա-քոյ գտանի յամենայն կարգէ մարդկային սեռի: Քանզի այլ մարդիկ առնեն ինչ բարի կամ չար, ո-րովք թերեւս ցուցանին լինիլ կենդանի. իսկ ծոյլք

իբրեւ արձան անզգայ զօրն ողջոյն կան դատարկ և անպտուղ, ոչ գիտեն թէ իցեն մարդիկ, և ոչ ճանաչեն թէ զինչ է պարտաւորութիւն մարդոյ, վասն որոյ և անարգ են քան զամենեսին։

ԺԵ. Չէ ինչ տարադէպ կարծել, եթէ դեւք արկին 'ի միտս մարդկան կառուցանել 'ի քաղաքս զտեսարան զբօսանաց, որպէս զի մարդիկ 'ի զուարճանս սթափութեան մարմնոյ գնասցեն անդր, ուսանիցին զանգործութիւն և զծուլութիւն, և ինքեանք անաշխատ ունիցին զնոսա 'ի դուռս իւրեանց. քանզի և դեւք ոչ ինչ աշխատ լինին որսալ զդատարկակեաց անձինս, որովհետեւ ինքնին անկեալ են նոքին 'ի ծուղակս կորստեան նոցա։

ԺԶ. Հանգչիլ 'ի կարեւոր աշխատութեանց, և սթափիլ և զուարճանալ 'ի զբօսանս 'ի դիւրութիւն մարմնոյ, պարտ է լինել որպէս գործածութիւն դեղոյ սակաւ և ցանցառ. զի զոր օրինակ յաճախ կիրառութիւն դեղոյ վնասէ առաւել քան թէ օգտէ, նոյնպէս հանգչիլ ընդ երկար՝ տկարացուցանէ զմարմինն քան թէ կազդուրէ։

ԺԷ. Չէ արժան մարդոյ ուրախանալ՝ թէ առաւելցաւ զամս բազումս, այլ թէ զիա՛րդ ապրեցաւ, բարեաւ եթէ չարեաւ. զի ըստ առաւելութեան և ըստ նուազութեան ամուրց կենաց որ տուեալ եղեն նմա, խնդրի հաշիւ գործոց եթէ բարի և եթէ չար։

ԺԸ. Բողոք բառնայ ժամանակն 'ի յերկինս, և խնդրէ իրաւունս մինչ տեսանէ զի մարդիկ զմեծամեծ չարիս դիւրաւ կարեն գործել 'ի սուղ ժամանակի, իսկ զփոքր բարիս մեծաւ դժուարութեամբ 'ի ձիգ ժամանակս։

ԺԹ. Մարդիկ ոչ եթէ զժամանակն, այլ զգործածութիւն ժամանակին ունին 'ի ձեռին. ապա որ-

գիտէ զժամանակն բարուօք 'ի կիր առնուլ, դիւրաւ գտանէ զբազում բարիս 'ի ծոց իւր ։ Բարուօք ասաց որ ասացն՝ թէ չիք ապահովութիւն վայելուչ, բայց միայն ժամանակին ։

Ի. Եթէ բնութիւնն և ժամանակն խորհրդակից իւրեանց արարեալ էին զմարդիկ, ամենայն ինչ յաջողէր ըստ կամաց մարդկան ։

ԻԱ. Մարդս է ճանապարհորդ 'ի մէջ երկուց գերեզմանաց . զի ելանէ 'ի գերեզմանէ երթալ մտանել 'ի գերեզման . այսինքն՝ ծնանի յարգանդէ մօր, և երթայ թաղել 'ի յարգանդ հողոյ ։

Ապա անմիտ է նա՝ եթէ զճանապարհն ընդ որ ճեպով անցանէ, կարծիցէ տեղի մշտնջենաւոր բնակութեան, և թողուցու ընդ վայր անցանել զդիպողութիւն ժամանակին ։

ԻԲ. Բազումք 'ի մարդկանէ այնքան անմիտք են, մինչ զի ոչ գիտեն որոշել 'ի մէջ մահու և կենաց, և ըստ պահանջման երկաքանչիւր վիճակի զգործս իւրեանց անօրինել ։ Զի մինչ կենդանի են, զգործ մեռելոյ առնեն, և յորժամ 'ի մահ մօտին, զգործ կենդանեաց ջանան ցուցանել ։

Քանզի 'ի տիս երիտասարդութեան անհոգացեալ զհոգեւոր և զմարմնաւոր պիտոյից՝ դատարկաշրջիկ լինին, և ոչ աշխատին 'ի ստացումն կարեւորաց . մանաւանդ թէ և զորս ունին 'ի հայրենի ժառանգութենէ, շռայլութեամբ վատնեն յումպէտս, որպէս թէ հասեալ իսկ իցէ օրհաս մահու նոցա, և հանդերձեալ իցեն թողուլ զաշխարհ և զամենայն զոր 'ի նոսա, և երթալ մերկ և կողոպուտ ։

Իսկ յորժամ մերձենան 'ի մահ, և անհրաժեշտ վճռով ստիպին մեկնիլ յաշխարհէ, սկսանին հոգալ զկարեւորաց հոգւոյ և մարմնոյ, որպէս թէ իցեն յերիտասարդական առոյգ հասակի և յանցաւ-

ուղղութեան, և կարող և ձեռնհաս 'ի պատրաստել զամենայն :

Բայց աւա՜ղ տարապարտ տառապանաց նոցա, զի սուտեր մինչու փաղփաղուկի անկեալ զքրօք նոցա. ոչ թողու գործել ինչ յօգուտ անձանց իւրեանց :

ԻԳ. Հանգչել ասի՝ յորժամ ոք դադարի 'ի գործողութենէ յիմեքէ. իսկ որ ոչ գործով իւիք յերկս աշխատութեան վաստակի, ոչ գիտէ նա թէ զինչ է հանգչիլն. այլ որ կամի զքաղցրութիւն հանգստեան վայելել, աշխատեսցի մարմնով :

ԻԴ. Պատարկութիւն և ծուլութիւն ապականեն զընութիւնն, և առնէ զնա որպէս երկիր փշալից. իսկ չափաւոր աշխատութիւնն զօրացուցանէ, և առնէ զնա որպէս երկիր պտղալից :

Քանասամահ է հոգւոյ մանկանց յետ տասնամեայ հասակի մնալ առանց ուսման և առանց արհեստի, և շրջիլ դատարկ :

ԻԵ. Աստուած՝ որ անպարտական բարերարութեամբ իւրով ստեղծ զմարդ, ետ նմա և ձրի ողորմութեամբ իւրով զկարի կարեւորան կենաց մարդոյ՝ զօդն և զլոյս արեգականն և զջուր անձրեւոյ. բայց եթող մարդոյ կեալ աշխատութեամբ իւրով, այսինքն գործել զերկիր՝ զի բուսուսցէ զցորեան 'ի կերակուր :

Զի եթէ Աստուած առանց աշխատութեան մարդոյ ձրիաբար բուսուցեալ էր յերկրէ զցորեան բաւական, մարդն մնայր դատարկ և ծոյլ, և ունէր կրել զբազում վտանգս կենաց, որք պատճառին 'ի ծուլութենէ. զի ծուլութիւնն է թշնամի կենաց մարդոյ : Իսկ զերկրագործութիւնն այնպէս սահմանեաց Աստուած, զի կարասցէ որ և իցէ մարդ 'ի գործ դնել, և չունիցի պէտս ճարտարութեան մտաց և հանճարոյ :

Այս ծոյլք չունին պատճառս՝ դատարկաշրջիկ լինելոյ. ահա ՚ի պատրաստի կայ երկիր ընդ ոտիւք իւրեանց. գործեսցեն զայն և կերիցեն զհաց ցորենոյ. և արբցեն ձրի զջուր ցուրտ։ Եւ վայելեսցեն ՚ի լոյս արեգական ; և տացեն զփառս Արարչին. ապա թէ ոչ՝ չեն արժանի ուտել զհաց, և տեսանել զարեւ, և վայելել ՚ի պարգեւսն Աստուծոյ։

ԻԶ. Մի՛ կարծեր թէ դատարկութիւնն է հանգիստ մարմնոյ, զի այն առաւել տանջանք է նմա. զի սակաւ առ սակաւ ախտացուցանէ զմարմինն՝ մինչեւ անբժշկելի ցաւս արկանել զնա։

ԻԷ. Դատարկանձունք զժամանակն որպէս զբեռն կրեն ՚ի վերայ իւրեանց, կամ համարին զանձինս ծառայ ժամանակին։ Այսպիսի ինքեանք են անտանելի բեռն ժամանակին, զոր իբրեւ ծառայ յանարժան գործս վարեն։ Բայց եկեսցեն աւուրք՝ զի ժամանակըն ազատեսցի ՚ի ձեռաց նոցա, և յայնժամ ծանիցեն զյարգ նորա.

Որքա՛ն նմանին յագեցեալ որովայնի, որ զմեղր արհամարհէ. բայց յորժամ քաղցնու, աշտուճ հացի փափագի, այլ ոչ գտանէ։

ԻԸ. Բնութիւնն ոչ է ժլատ՝ մատակարարել ամենեցուն զժամանակն, այլ ծոյլք շռայլաբար վատնեալ զնա՝ ոչ ինչ օգտին. սակայն երջանկութիւն մարդոյ հաստատեալ է ՚ի բարւոք կիրառութեան ժամանակի, և թշուառութիւնն՝ ՚ի կորուսանելն զնա ընդ վայր և կամ ՚ի չարիս։

ԻԹ. Բազումք վասն կիրառութեան ժամանակին բարւոք խօսին, այլ սակաւք բարւոք ՚ի կիր առնուն։ Որք ոչ գիտեն զյարգ ժամանակին ՚ի կենդանութեան իւրեանց, ՚ի զուր խոստանան գիտել ՚ի մահու իւրեանց. զի մինչդեռ կենդանի են, տրտնջեն թէ ո՞րպէս անցուսցեն զժամանակն. և մինչ մահն գայ,

գանգատին թէ բառնի ժամանակն ։

Որդ եթէ յարգի և պիտանի է ժամանակն, ընդէ՞ր անգործ վատնեսցես իբրեւ զաւելորդ. իսկ եթէ անպիտան ինչ է, ընդէ՞ր աւաղես ընդ բառնիլ նորա։ Որ ոչ յօժարի գիտել զայդ բարւոյն, յորժամ առ իւր ունի, 'ի զուր է գիտել յորժամ բառնի 'ի նմանէ։

Լ. Աշխարհս է դպրատուն, ուր միայն պարգևին մարդիկ ուսանել զբարւոք գործածութիւնն ժամանակի։ Որ զկեանս իւր անգործ անցուցանէ, կեանք նորա դառնայ նմա 'ի պատիժ։

ԼԱ. Ժամանակն իբրեւ սրընթաց գետ անդուլ հոսի, ընդ իւր և զկեանս մեր առեալ տանի. և այդ միանգամ գնայ, այլ ոչ եւս դառնայ. այլ մեք որպէս դանդաչեալս քնով գնամք և ոչ իմանամք, և կարծեմք՝ թէ տակաւին եմք 'ի նոյն տեղի։

ԼԲ. Զամենայն յարգ և զանկշռելի արժողութիւն ժամանակին մեռեալք քաջ ճանաչեն, որք եթէ զվայրկեան մի կարէին վերստին 'ի ձեռս բերել, անգին գանձ համարէին, և զբազում օգուտս ստանային նովաւ 'ի փրկութիւն հոգւոյ. բայց աւա՜ղ զի այժմ կենդանիք զբազում ժամանակս տարապարտուց ծախեն 'ի վնաս հոգւոյ. և թէպէտ ծանիցեն զկնի մահուան զխաղանս իւրեանց, այլ յանօգուտ, զի ժամանակն որպէս նետ ելեալ յաղեղանէ, ոչ եւս դառնայ յետս։

---

«Մինչեւ յե՞րբ յորսայսեալ կաս ծոյլ ծառայ. կամ ե՞րբ 'ի քնոյ զարթիցես։ Փոքր մի ննջիցես. փոքր մի նստիցիս. փոքր մի նիրհիցես. Ապա հասանիցէ 'ի վերայ քո իբրեւ չար ուղեւոր տնանկութիւն. և կարօտութիւն իբրեւ զձիր սուրհանդակ։ Ապա թէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ իբրեւ զաղբիւր ածումն քո, և կարօտութիւն իբրեւ այր մի չար ինքնահալած։» Առակ. Զ. 9—11։

# ԳԼՈՒԽ Թ.

## ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Ա. Ամենայն հաճութիւնք բաղձանաց մարդոյ կայանան 'ի բարեխառնութեան. և մինչ բառնի բարեխառնութիւնն, բառնի և հաճութիւնն, և փոխի 'ի պատիժ բնութեան։ Զանզի զինչ ախորժելի քաղցրելոյն՝ քան զյապուրդ ուտելեացն, և զինչ վշտագնիչ յաւէտ եթէ անցանիցէ ըստ չափ։ Կամ զինչ փափագելի պապակելոյն՝ քան զարբումն ցուրտ ջրոյ. և զինչ քան զայն տանջողական, մինչ պարպատեսցի որովայնն յաւաւելութենէ ջրոց։

Նոյն պարտ է լինել բարեխառն և ժուժկալ 'ի վայելել զըմպական հաճելիսն, այլ թէ ոչ՝ դառնան 'ի պատիժ բնութեան, և վաղվաղէն զմահ։

Բ. Բազմատեսակ հիւանդութիւնք որով կարօտին մարդիկ բազմազան դեղորէից, յայն սակս յաճախին, զի մարդիկ ոչ գիտեն զեղանակ կենցաղավարութեան։ Վասն զի խառնակեցիկ վարք 'ի թոյն մահու փոխարկէ զկերակուրն, որ սահմանեալ է 'ի պահպանել զկեանս. և բազմախորտիկ սեղան կարճէ զկեանս, զոր դեղք ոչ կարեն երկարել։

Գ. Աղքատք սակաւ երբէք հիւանդանան քան զփարթամս, զի ոչ կարեն գտանել զզանազան կերակուրս. իսկ փարթամք մոլեալք զհետ ազգի ազգի համադամ խորտկաց, թունաւորեն զանձինս՝ քան թէ բուծանեն։ Նա և նոյն իսկ դեղորայք՝ ճշմարիտ թոյնք են, և խանգարեն զբնութիւնն, և պիտանան 'ի գործ ածել միայն 'ի ստիպել հարկին և ոչ անխտիր։

Իսկ մեծ և անվնաս դեղ մարդկան՝ է ժուժկալութիւնն և բարեկարգութիւնն 'ի հեշտութիւնս

մարմնոյ 'ի կերակուրս և յըմպելիս, և հանդարտութիւն մտաց և չափաւոր աշխատութիւն մարմնոյ, որով քաղցրացեալ արեանն՝ վտարէ զվնասակար և զաւելորդ հիւթս. Ուստի ամօթ մեծ է մարդկային սեռի ունիլ զայսքան հիւանդութիւնս. զի եթէ բարեկարգ կենցաղավարեալ էին, լինէին առողջ և անկարօտ դեղոց:

Դ. Են և ոմանք 'ի մարդկանէ, որք այնպիսի մեծաջան խնամով սպաս հարկանեն մարմնոյ՝ զօրհանապազ սնուցանելով զնա և դարմանելով, որպէս զի դարձուցեն անդրէն յերիտասարդական առոյգ հասակ, կամ գոնէ չթողուցուն խոնարհիլ 'ի ծերութիւն տկարութեան: Բայց մարմինն ծիծաղի զանմտութեամբ նոցա, զի անդադար դիմէ 'ի ծերութիւն, և յամենայն քայլափոխս թափի 'ի զօրութենէ, և մօտի 'ի մահ և յապականութիւն:

Իսկ ընդէ՞ր ոչ զգան, թէ մարմին ինչ բաղադրեալ 'ի ներհակական տարերաց՝ հանապազօր 'ի շարժման և 'ի փոխադարձ առնելութեան ծնանի, և ապականի ըստ անփոփոխ և հարկաւոր օրինաց բնութեան իւրոյ, և ոչ եթէ ըստ հաճոյից մարդկան:

Իմա զմարմին մարդոյ որպէս զերիվար պիտանի անձին իւրոյ, որում եթէ չափով տացէ ոք զկեր, բառնայ զվերելեակն, և տանի կորովութեամբ 'ի դէմ եդեալ տեղին. բայց եթէ աւելի քան զչափն մատուսցէ ոք զդարման, կիցս արձակէ կատաղաբար, և 'ի վայր զհեծեալն արկանէ և վնասէ:

Ե. Չիք ինչ 'ի մարդում առաւել մեծարեալ քան զորկորն, բայց չիք ապերախտ քան զնա. զի որչափ պատուեսցի, այնչափ անշնորհակալ գտանի, և զառաւելն յանդգնի խնդրել զմեծարանս. և այնքան անագորուն է, որ զսիրողն իւր առնէ ինքեան մշտնջենաւոր գերի:

Զ. Հովիւ եթէ պշուն իւր հանապազ մտով խաշանց կերակրէ, փոխարկէ զնա 'ի գայլ. և որ զմարմին իւր առատաբար պարարտ կերակրով սնուցանէ, դարձուցանէ զնա 'ի գազան, մինչ զի ապստամբեալ ոչ եւս հնազանդի հոգւոյն կամաց, այլ զկամսն բռնադատէ ծառայել հաճոյից իւրոց.

Է. Որկորամէտք ազգի ազգի քաղցրաճաշակ կերակրովք թմբրեցուցանեն զընական ախորժակս իւրեանց. բայց քաղցն մնոյ արթուն, և կարօտի կերակրոյ. Այլ վասն զի տաղտկացեալ է յամենայն ազգ կերակրոց, հնարէ զնորատեսակս. և յայնցանէ յափրացեալ 'ի խնդիր լինի այլում, և հանապազօր տանջի գտանել զնորս. Իսկ գրեթէ որկորամէտք եղեն պատճառք բազմատեսակ լինելոյ կերակրոց, յորոց յառաջ գան բազմօրինակ հիւանդութիւնք 'ի փութացուցանել զմահ.

Նոյն թէ ոք կամի ախորժանօք ուտել, կերիցէ կերակուր պարզ, և այն՝ չափաւոր կամ սակաւ, և ոչ թէ ապահարար կամ անասնօրէն. Իսկ եթէ կամի կեալ առողջ, մերթ ընդ մերթ կացցէ ծոմապահ կամ նօթի, զի մարսեսցին մնացուածք կերակրոց 'ի ստամոքսայ. քանզի նօթութիւնն է դեղ և պահապան առողջութեան եթէ 'ի դէպ ժամանակի 'ի կիր արկանիցի, որպէս և յայտ է փորձիւ.

Ը. Են մարդիկ որ ուրախանան ընդ տրտմականս և տրտմին ընդ ուրախականս. և թէպէտ այս երկոքին կիրք, ուրախութիւն և տրտմութիւն, բնաւորեալ են շարժիլ 'ի հոգւոջ յառարկայէ իւրեանց, իբր զի՝ եթէ առարկայն իցէ ցաւալի, հարկաւ պատճառի տրտմութիւն.

Բայց ոմանք ոչ ուղիղ դատեալ զառարկայն՝ զհեշտալին համարին ցաւալի, և զցաւալին՝ հեշտալի, վասն որոյ և ներհակական կիրք շարժին. Վասն զի ընդ-

մարմնական զեղխութիւնն՝ զգաստութիւնն . և զարբեցութիւնն կարծեն լինել առարկայ հեշտալի , և 'ի գործել զայնս ուրախանան , ընդ որ պարտ էր ամաչիլ . և զհոգեւոր ճգանս՝ զպահս և զժուժկալութիւն վարկանեն առարկայ ցաւալի , և 'ի գործել զայնս տրտմին , ընդ որ արժան էր ուրախանալ ։

Թ. Ոչ է հնար դիւրութեամբ անձին և յղփութեամբ որկորոյ շահել զհոգի , զի 'ի փափկութեան մարմնոյ ոչ գտանի հանգիստ հոգւոյ ։ Յղփութիւն պարարտ կերակրոց ոչ այնքան վնասակար է մարմնոյ՝ որքան հոգւոյ , զի զզգայական կիրս արթնացուցանէ 'ի բանէն , և առնէ զաղախինն իբրև զտիկին ։ Ոչ բարւոք կեայ՝ որ զգիրգանօք յածի ։

Ժ. Վայ այնմ որ ծառայէ՝ և անխափան երկնէ ։ բայց վայ 'ի վերայ վայի՝ որ 'ի ծառայելն առաւելի ։ որպիսին է ծառայն մարմնոյ և որկորի ։ Որ ոչ ջանայ 'ի բերան արկանել երկիւղարին , ոչ ինչ հոգայ թէ զանհամեծ գը- նիցի . և որ ոչ նուաճէ ժուժկալութեամբ զմարմինն , անփոյթ է զգլորելանէ խոյսէ ։

---

« Մարդք՝ որ վասն պորտոյն աղետի և որկորոյն չարաշուքեան յոժարեցին անցին ընդ օրէնս նախնեացն , երբէք նոքա չկրօ արքայութեան արքայութեան միասնութեամբ ոչ կարեն ։ » Գ. Մակ. Է. 7 ։

« Որ փափկասուն լինի 'ի մանկութենէ , 'ի ծառայութիւն մատնեսցի . և յետոյ տրտմեսցի յանձն իւր ։ » Առակ. ԻԹ. 21 .

---

## ԳԼՈՒԽ Ժ.

### ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ

Ա. Արբեցութիւնն է թիւն ապականիչ բանական կենդանութեան մարդոյ . զի թէ և ոչ սպանանէ զմարդն՝ միայն սպանանէ զլոյս մտաց , և փոխէ զմարդն յանասուն

անբան կամ ՚ի գազան այլանդակ ։

Բ. Տեսակք որով կացուցանէին տեսականապէս ՚ի բնութեան իրաց, նովին սարքերին եւ յայլոց. եւ վասն զի բնութիւն մարդոյ տեսականապէս կացուցանէ բանականութեամբ, ապա նովին սարքերի յայլ ամենայն էակաց ։

Եւ զիարդ ասիցի մարդ արբեցողն՝ որ զուրկ է ՚ի բանականութենէ. զի է՝ որ ցնորի իբրեւ զխելագար, եւ է՝ որ մոլեգնի իբրեւ զդիւահար. է՝ որ դժնէանայ իբրեւ զգազան, եւ է՝ որ անզգայի իբրեւ զմեռեալ ։

Ուստի՝ զի որպէս կուրացու ոչ կարէ տեսանել զբարեկամն եւ զթշնամին, եւ որպէս զխուլ ոչ կարէ լսել զբանս խրատու. վասն այնորիկ այս օրէնք առ ամենայն ազգս պահանջեալ, ոչ խրատել զարբեցողն՝ մինչչեւ սթափեսցի ՚ի գինւոյ ։

Գ. Գինին թէպէտ չէ ըստ ինքեան չար, բայց չափազանց գործածութիւն նորա պատճառ է զանազան չարեաց, զխռովութիւն, զծուլութիւն, զհիւանդութիւն, եւ զայլ բազում անկարգութիւնս ։ Յայնսակս պարտ է իշխանին հեռի պահել զժողովուրդ իւր յարբեցութենէ գինւոյ, զի մի պատահեսցին չարիքս ։

Դ. Մարդիկ չարաչար ՚ի կիր արկեալ զպարգեւսն Աստուծոյ, բարկացուցանեն զանբարկանալի բնութիւնն՝ ոչ եւս տալ զպարգեւս բարիս, կամ զրկել զնոքեանս ՚ի վայելմանէ յառաջագոյն տուեցելոց ։

Գինին առնէ ընկերական սիրոյ եւ փարատիչ տրտմութեան տուեալ եղեւ, իսկ արբեցողք աւարեն զայն նիւթ կռուոյ եւ տրտմութեան ։ Նախնիք յօժարեցան տալ զայն ուժաթափ հիւանդաց՝ իբրեւ դեղ զօրացուցիչ եւ առողջարար. արբեցողք ՚ի վեր այլովքն կորուսանեն նովաւ զառողջութիւն իւրեանց, եւ տանին ցաւս անբժշկելի ։ Որք չափաւոր կիրառութեամբ զգենուն զզօրութիւն առողջութեան,

երիտասարդք անկարգաբար վարեցեալ, նոքա՝ փութացուցանեն զծերութիւն ակարութեան, և բազում անգամ լինին վաղամեռիկ։ Որ ոչ պահէ զառողջութիւն իւր առանց գինւոյ, գինեաւ կորուսցէ զնա։

Ե. Բարի են ամենայն արարածք Աստուծոյ, բայց որք չարաչար վարին նոքօք՝ փոխին նոցա ՚ի վնասակարս. որպէս արբեցողք ոչ բարւոք ՚ի կեր արկեալ զգինին, արժանի են զի տանջեսցին ՚ի նմին.

Զ. Արբեցութիւնն վնասակար է յոյժ. զի առնէ զմարդն անխել, շռայլ և անարգ. զի արբեցողն կորուսեալ զխելս իւր, կորուսանէ զինչս և զպատիւ. Է՝ որ ՚ի խնձոյս ուրախութեան զոր ինչ ունի ՚ի ձեռցի՝ շռայլաբար պարգեւէ անարժանից. և է՝ որ զգաղտնիս սրտի իւրոյ հրատարակէ ՚ի մէջ և յայնարդանս անձին իւրոյ. Է՝ որ ննջէ, և է՝ որ կաքաւէ. է՝ որ լայ, և է՝ որ ծիծաղի. է՝ որ պապանձի և անզգայի, և է՝ որ շաղփաղփէ յանձախ, և հակառակի և կռուի. և չիք անկարգութիւն, ինչ՝ զոր արբեցողն ոչ համարձակեսցի առնել, որով լինի անարգ և նախատելի քան զամենայն մարդիկ։

Է. Ամենայն մոլութիւնք թէպէտ են չար և վնասակար, բայց զմիտս միայն թիւրեն, այլ ոչ կորուսանեն։ Որպէս գողն բառնայ հանճար ՚ի գործ. ջանէտա ՚ի գողանալ զինչս, և չանկանիլ ՚ի ձեռս։ Իսկ ջանացողն պէսպէս հնարիւք վարի՝ զի մի խայտառակեսցի։ Իսկ ստախօսն յամենայն պատճառս գտանէ դուծէ գտանել՝ զի մի ստութիւն իւր յայտնեսցի։

Բայց սոցուն սակի և այլ չարագործք ունին զմիտս ամբողջ՝ այլ ոչ առողջ. գործեն բանաւորապէս՝ այլ ոչ բարեպէս։ Իսկ արբեցութիւնն կորուսանէ զմիտս մարդոյ, և ՚ի բաց հանէ ՚ի մարդկանութենէ. զի մարդս մտօք է մարդ։

Եւ զի՞նչ արդեօք իցէ արբեցողն. ոչ է անզգայ

գայթակղութիւն, զի նոքա ըստ յաւիտենական օրի-
նացն Աստուծոյ շարժին անդադար յօդուս աստեղե-
րաց. որպէս չորեքին տարերք՝ և որ 'ի նոցանէ են
անդգայ արարածք. իսկ արբեցողն չարաչար փոխէ
անձին և ընկերին։ Ոչ է անասուն, զի նոքա հլու-
հպատակութեամբ ծառայեն անխափան 'ի կարեւոր
պէտս մարդկան, իսկ արբեցողն և ոչ խնդք է պիտա-
նացու։ Ոչ է գազան, զի նոքա ոչ բնաւ մեղանչեն
այնմ, ընդ որ իցեն ընդելացեալ. իսկ արբեցողն ոչ
ճանաչէ զբարեկամս և զընտանիս՝ զտէր և զբարե-
րարս, զամենեսին հայհոյէ, ամենեցուն սպառնայ,
ընդ ամենեսին կռուի, զի կորուսեալ է զմիտս իւր,
նմանեցեալ է հրէշ իմն այլանդակ։ Բայց երանի էր,
եթէ ընդ կորնչիլ մտացն՝ կորնչէր և լեզն. զի որ ուն-
կն տոկայ լսել անկարգ խօսից նորա. որ աչք ժու-
ժկալ տեսանել զանվայել շարժմունս նորա. որ ունչ
ոչ զզուի 'ի գարշահոտութենէ բերանոյ նորա։

Նա արծաթն զոր ունէր 'ի քսակի՝ սպառեցաւ,
և ինքն որպէս աղբ անպիտան 'ի գինետանէն արտաքս
ընկեցաւ. գլուխն բաց, գօտին արձակ, ագանելիքն
ոտից 'ի փողոցս անկեալ. և որպէս կոյր առ խարխափ
դեգերեալ, որմ զօրմոյն հարկանելով, տղմաշաղախ
իբրև խոզ՝ անագան ուրեմն գայ առ դուրս տան։

Անդ է տեսանել հին հարսանեաց նոր հարսնա-
ծուք. զի անդէն դեւք կոչեալ են, յորժամ այր և
կին զերեարս խածատեն. Տունն է խաւարին, զի
ոչ իւղ գոյ և ոչ մոմ. մանկունքն նօթի լան և տր-
տմուտեն, զի ոչ հաց կայ և ոչ պանիր. կինն խռո-
վեալ կամ դանակոծեալ՝ առ կսկծանաց արտօսր հար-
կանէ զզաւակս իւր, և վայիւք և ճչով լնու զտունն։
Դժնեմայն իսկ զարզ վերաւոր՝ 'ի վերայ կնոջ և զաւա-
կաց յարձակի հայհոյանօք, և գլորեալ անկանի։

Դրացիքն տեսեալ զթշուառութիւնն՝ ցաւակցին

և երլուկ կարդան, և ոմանք ևս ձանձրացեալ յան-
տանելի հայհոյութեանց և յանդադար խռովութե-
նէն՝ փախչին ընդ առաւօտն գիշերն 'ի պատրիար-
գարանն քաղաքէ բարձեալ: Եւ փոխանորդ պատրիար-
գին տայ ածել անդր զգինեմոլն, և միանգամ և եր-
կիցս խրատէ և յանդիմանէ, և առաքէ 'ի գործ. և
իբրև տեսանէ թէ այնու ոչ զգաստանայ, գան
հարեալ արկանէ 'ի բանտ:

Եւ զի՞նչ այնուհետեւ. ոչ հացագործն տայ ըն-
հաց, և ոչ նպարավաճառն զբրինձ, իւղ և մոմ.
մանաւանդ զի ենկեալ նեղէ զկինն, և պահանջէ ըն-
դարձան առաւօտն. իսկ նա ոչ ունի դրամ և ոչ մի:
Պաճոյճն զոր եբեր կինն 'ի տանէ հօր իւրոյ, կանխաւ
սպառեցաւ, և անօթք պղնձի հետզհետէ պակասե-
ցան 'ի տանէն: Այս արբեցութիւնն է ախտ չար,
յորմէ իբրև յականէ հոսին ամենայն թշուառու-
թիւնք և եղկութիւնք:

---

« Անառակ է գինի և թշնամանող արբեցութիւն. և ամենայն որ խառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն:» Առակ. Ի. 1.

« Ո՞ւմ է վայ. ո՞ւմ խռովութիւնք. ո՞ւմ են դատաստանք. ո՞ւմ դըժընդակութիւնք և վարանք . . . ո՞չ ապաքէն այնոցիկ որ յամենն 'ի գինւոջ, և դիտեն ուր գինեխմութք լինիցին:» Առակ. ԻԳ. 29. 30.

---

# ԳԼՈՒԽ ԺԱ.

## ԲՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ

Ա. ԱԽՏԱՒՈՐ ցանկութիւնն է հուր կիզանող ա-
մենայն հասակի. զի որպէս հուրն ոչ միայն բոցա-
կէզ առնէ զփայտ չոր և զխոտ, այլ և զփայտ դա-
լար զոր 'ի նոսա գտանէ, այսպէս և ցանկութիւնն

ոչ միայն զանփորձ երիտասարդս գիտէ պարել, այլ և զկատարելագոյն հասակս. և մանր, եթէ առ պատճառն հոգւոյ զամենեցուն: Նա զոր օրինակ հուրն մինչ մնայ առ նիւթսն՝ որք չեն կիզանուտ, զոտնէ ջեռուցանէ զնոսա, նոյնպէս և ցանկութիւնն թէպէտ չկարիցէ կիզուլ զայս կատարեալս, այլ ոչ թողու զերծ 'ի ծխամած կրից. ապա պարտ է ամենայն հնարիւք փախչել 'ի պատճառէն, զի կարասցեն մնալ անխռով:

Որպէս բնական էակք են միշտ 'ի շարժման՝ զոր ունին 'ի յատկութենէ, 'ի բաղադրութենէ և 'ի զօրութենէ իւրեանց, և 'ի զօրութենէ էակացն՝ զորոց ընդունին զտպաւորութիւնս. զի եթէ դադարեսցեն վայրկեան մի 'ի շարժմանէ, դադարեսցեն առաքէն և լինելոյ էակ: Նոյնպէս կիրք ցանկութեան նկրտումն միշտ յամենեսին, և ոչ երբէք դադարէ, այլ յերիտասարդս է զօրաւոր, իսկ 'ի մանկունս և 'ի ծերս՝ անզօր և տկար. սակայն չէ իսպառ մեռեալ ցորչափ կենդանի է մարդ:

Զի եթէ 'ի մանկունս և 'ի ծերս ոչ պակասի գործողութիւն մտաց և կամաց, ապա ոչ պակասի և գործողութիւն կրից, զի անբաժան ընդդրոյք են երեքին սոքա: Սերեմն իւրաքանչիւրոք ողջաշացի անձին, զի մի յաղթեսցի 'ի կրից՝ մանաւանդ 'ի ցանկութենէ մարմնոյ:

Բ. Երիտասարդք առաւել պարտին առաջադրել ինքեանց զկրթութիւն առաքինութեան՝ քան զպատերազմական մկանանց, որովք կարասցեն ստանալ զփառս, և յաղթել քաջութեամբ ամենայն ձախողութեանց: Քաջութիւնն ոչ է միայն արհամարհել զմահ 'ի վտանգաւոր պատերազմի, այլ և առ ունհարկանել զմոլեկան հեշտութիւնս մարմնոյ:

Գ. Բորբոքեալքն մոլեկան սիրով լինին կոյր և խուլ, զի ոչ զգան և ոչ տեսանեն զայլս, բայց զայն

միայն զոր սիրեն չարաչար . հրաժարելն յամենայն բարեաց , զի մի՛ հրաժարեսցին 'ի նմանէ ։ Գերի են ստանակաց , և համարին զանձինս ազատ ։ զի առաւել յօժար են մեռանիլ՝ քան 'ի նմանէ արձակիլ ։

Չէ հնար յաղթել մոլեկան սիրոյ , բայց միայն փախստեամբ . որպէս հուր պակասեալ 'ի նիւթոյ՝ շիջանի , նոյնպէս և ցանկութիւնն հեռացեալ 'ի պատճառէն՝ յաղթահարի ։ Զի սէրն ախտաւոր՝ մեծ քան զամենայն չարիս է , և ոչ այնքան երկնչիլ պարտ է յամենայն ալեաց՝ որքան 'ի նմանէ ։

Դ . Նաւաբեկութիւն և մահ՝ սակաւ թշուառեն քան զհեշտութիւն մարմնոյ ։ Առաւել պարտ է երկնչիլ 'ի հեշտութենէ քան 'ի կարծր ժայռից ծովու ։ Զգոյշ լիցին երիտասարդք 'ի քաղցր բանից հեշտալեաց՝ որք իբրեւ զօձ թիւնաւոր սողան 'ի ներքոյ գեղեցիկ ծաղկանց , զի մի՛ հարցին 'ի մահաբեր ժանեաց նոցա 'ի հարուածս անբժշկելիս ։ Սէր գարշ հեշտութեան՝ նենգաւոր է և դաւաճան , զի ընդ պատրուակաւ քաղցրութեան ծածկէ զդառնութիւն իւր ։

Ե . Երիտասարդ որ սիրէ երեւիլ պաճուճազարդ որպէս զկանայս , անարժան է պատուոյ և փառաց . զի փառքն է վարձք այնմ որ յաղթէ հեշտալի հաճութեանց ։

Զ . Մոլեկան ցանկութիւնն երբեմն այնքան կատաղի և տիրէ մարդոյ , մինչեւ չթողու ճանաչել զանձն իւր . կարծէ մոլեալն՝ թէ խնդրէ զհանգիստ և զդիւրութիւն , բայց յամենայնի ընդ առաջ ելանէ նմա տանջանք և մահ ։ Մարմնական հեշտութիւնըն առաւել մաշէ զկեանս մարդոյ՝ քան աշխատութիւն և ջանք ։

Է . Բազումք որք հռչակաւորք եղեն յաշխարհի յաղթութեամբ թշնամեաց , յաղթեցան 'ի կոյս սի-

բոյ ցանկութեան. և նկուն եղեն, նա է յաղթող ախո-յեան, որ յաղթէ սիրոյ հեշտութեան: Հեշտասէրք փութով լքանին, յորժամ 'ի վտանգ ինչ անկանին:

Ը. Ցանկութիւնն մարմնական միշտ մարտնչի ընդ խոհեմութեան, և մի քան զմի զուն գործէ նուաճել զմիտս մարդկան. և մարդիկ անդադար ձգին 'ի մէջ երկուց հակառակաց: Երանելի է նա, որ խոհեմութեամբ յաղթէ ցանկութեան մարմնոյ, և ոչ յաղթահարի:

Թ. Հաճութիւնն հեշտութեան երիտասարդական աշխոյժ հասակի՝ ոչ թողու նմա հաւատալ բանից խրատատուաց. այլ մինչ անկանի 'ի ձախողակ վտանգս, յայնժամ փորձիւ ճանաչէ զճշմարտութիւն բանից նոցա, և զղջացեալ՝ բայց վնասուք անձին իւրոյ:

Ժ. Երիտասարդ որ գեղեցիկ և զուարթամիտ՝ եթէ իցէ ևս աշխատասէր և բարեկարգ, գովութեան և սիրոյ է արժանի. իսկ որ 'ի մատաղ տիոց՝ դատարկութեան և հեշտութեան մարմնոյ ծառայէ, վատառողջ և վատանուն յաշխարհի լինի:

ԺԱ. Յիմարական բերկրութիւն երիտասարդաց յառաջ եկեալ 'ի հեշտութենէ, թէպէտև առժամն տայ զուարճութիւն զգայական բաղձանաց, այլ ըզսիրտն չարաչար խայթէ խղճիւ մտաց, և թողու վէրըս անբժշկելի: Իսկ բանաւոր բերկրութիւնն՝ որ ծնանի յուղղութենէ մտաց և 'ի բարեգործութենէ, ուրախ առնէ զհոգին, և թողու 'ի նմա զանմոռական իմն ցնծութիւն:

ԺԲ. Ոչ ինչ ախտ ցաւոց այնքան անողորմաբար տանջէ զերիտասարդական հասակն, որքան ախտն մոլեկան սիրոյ: Բազումք մեռանին ցանկական սիրով՝ քան երկաթի սրով: Մոլեկան ցանկութիւնն՝ ոչ միայն խանգարէ զմիտսն, այլ և մաշէ և նիհարեցու-

ցանէ զմարմինն ։ Բարձ զփայտ 'ի հրոյ, ոչ եւս մը-նայ հուր. բարձ 'ի մտաց զառարկայն ցանկութեան, ոչ եւս մնայ ցանկութիւն ։

ԾԳ. Խոզք փախչին 'ի քաղցր հոտոյ, և բղջա-խոհք 'ի համեստ վարուց ։ Որ ոչ ճանաչէ զկարգ ա-ռաքինութեան, անգոսնելի է նմա համեստութիւն ։

ԾԴ. Բժիշկք յարտաքին կերպարանաց գուշա-կեն զներքին ախտս մարմնոյ հիւանդին. իմաստունք 'ի զգեստուց և 'ի գնացից նշմարեն զմոլեկան կիրս հոգւոյ երիտասարդին ։ Ի լռել խստաշունչ հողմոյ՝ խաղաղին ալիք ծովու. 'ի դադարիլ ախտաւոր կրից՝ հանդարտին ամբոխմունք սրտի ։

ԾԵ. Չէ նա գովելի, որ ունի մարմին գեղեցիկ և հանդերձ մաքուր, այլ որ ունի սիրտ ազատ յախ-տաւոր ցանկութեանց. զի անձնագեղ մոլին նմանի դամբարանի, որ արտաքուստ երևի վայելուչ և 'ի ներքոյ լի է նեխութեամբ ։

ԾԶ. Ամաչեսցէ յանբանից որ վարի պղծութեամբ ընդդէմ օրինաց բնութեան. զի անբանք յօժար են մեռանիլ՝ քան զկարգ բնութեան եղծանել ։

ԾԷ. Բղջախոհն գուցէ ոչ զգայ զտանջանս դե-ւաց, զի առաւել չարչարի յիւրոց ախտաւոր կրից՝ քան 'ի դիւաց ։ Հուրն կամ ջրով շիջանի, կամ հո-ղով, կամ պակասութեամբ նիւթոյ. բղջախոհու-թիւնն կամ պահեցողութեամբ խափանի, կամ ծե-րութեամբ, կամ մահուամբ ։

ԾԸ. Ուր գտանի բղջախոհ, մի խնդրեսցի անդ կոյր կամ դիւահար, զի բղջախոհն և՛ կոյր է և դի-ւահար ։

ԾԹ. Դիւրաւ բժշկին խոցուածք երկաթոյ սրոյ, քան զվէրս ախտաւոր սիրոյ ։ Չէ պարտ հայել ա-յն, որում չէ արժան ցանկալ ։

Ի. Ախտաւոր ցանկութիւնն է իբրև վառօդ

ծանծկեալ յանօթս սրտի, որ երբեմն հայեցիւք կամ խոստովանութեամբ իբրեւ կայծիւ բորբոքեալ այնպէս հրդեհի, մինչ զի կործանէ զանձն երիտասարդին։ Եթէ որ կամի մնալ անվնաս, հեռասցի 'ի պատճառէն։

ԻԱ. Չէ արժան երիտասարդի բնակել անդ, ուր կասկածելի է մնալ անվնաս 'ի խայթոցէ ցանկութեան. զի թարթափիլ զփշովք եւ ոչ վիրաւորիլ, եթէ ոչ անհնարին, գէթ կարի հին է դժուարին։ Զի [illegible] յարտաքուստ շարժի յառաջիկայէ, եւ 'ի ներքուստ [illegible] 'ի բնաւորական կրից, դիւրաւ կործանի՝ թէ եւ հզօրաւոր ոք իցէ։

Ուստի որչափ հեռի ոք գտանի 'ի տեսութենէ յառաջիկայից՝ որք ամբոխեն զմիտս, եւ տան խորհել զանախորժելիս հոգւոյ, այնչափ առաւելու 'ի վայելս խաղաղութեան։

ԻԲ. Անրմնական հեշտութիւնն գիտէ զինքն անարժան սիրոյ մարդկան, վասն որոյ իբրեւ կին լըկտի բիւրազգի հնարիւք պճնի, զի ցանկալի երեւեսցի յաչս յիմարաց, որպէս անպարկեշտ կանայք՝ անխելք երիտասարդաց. քանզի թէ ստուգիւ լինէր արժանաւոր սիրոյ, սիրէին արդեօք զնա իմաստունք եւ առաքինիք։ Նմին իրի եթէ զոք յիմարաց յափշտակեալ ձգէ 'ի սէր իւր, ոչ կամի երբէք 'ի բաց թողուլ. եւ յաւէտ թաքուն շրջի եւ գաղտագողի, զի մի յանդիմանեսցի յիմաստնոց եւ յառաքինեաց։

ԻԳ. Ցանկութիւն մարմնոյ ծաղր առնէ զսիրողս իւր։ ըստ օրինակի լկտի կանանց. զի հազիւ սուղ ինչ հաճէ զմին սպառողական սիրով, անդէն հեռացեալ գնայ առ այլս. եւ որպէս խաբեաց զառաջինն, հնարէ զի նոյնպէս խաբեսցէ եւ զերկրորդն, նմանապէս եւ զայլս. եւ ինքն գոլով խաբուսիկ եւ անկայուն՝ հանապազ 'ի միոյ առ այլ փոխի. բայց եւ ոչ

զմին յաղեցուցանէ, այլ զամենեսեան ծանակէ և նենգէ. մանաւանդ զի մինչդեռ օրհնեալ լինի ; առաւել դառնացուցանէ՝ քան թէ հեշտացուցանէ. այս՝ յիմար է նա, որ մոլեգին սիրով զհեշտութիւն ունել կամի։

---

* Որ շնայն՝ առ պակասութեան մտաց, կորուստ անձին իւրում ըստանայ։ Ցաւս. և անարգանս կրէ. և նախատինք նորա ոչ քաւեսցին յաւիտեան։ Առակ. Զ. 32.

* Որդեակ՝ զհեշտութիւն ցանկութեան մի՛ բաշխեր անձին քո։ և ծանակք լիցիս թշնամեաց։ Սիրաք. ԺԸ. 31.

---

# ԳԼՈՒԽ ԺԲ.

## ԲԱՄԲԱՍԱՆՔ

Ա. Զինչ քան զմարդն ազնիւ և գերազանց յարարածս, որ ընդ հրեշտակս ունի զհոգեղէն կարողութիւն, ընդ կենդանիս՝ կենդանական, ընդ տնկականս՝ տնկական, և ընդ անզգայս անզգայական. զի պատկեր և նմանութիւն Աստուծոյ է, և լրումն ամենայն արարածոց։ Եւ թէպէտ հոգին առաւելու պատուով և գերազանցութեամբ քան ըզմարմինն, բայց և ոչ մարմինն խոտան գուրկ մնայ 'ի պատուոյ։

Զի ունի և զգործիս ինչ 'ի ծառայել կարողութեան և ներգործութեան հոգւոյն, այսինքն զհինգ զգայարանսն որք են տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք և շօշափականք. որովք հոգին իւր թագաւոր՝ հաւատարիմ պաշտօնէիւք և գործակալօք կառավարի և կառավարէ զքաղաք բնութեան մարդոյ։

Վասն 'ի նոսա լսելիք՝ որ է ունկն, և ճաշակելիք՝ որ է բերանն, առաւել կարեւոր են քան զայլս, որոց մինն՝ այսինքն ունկն իբր լուսեաւ արտաքուստ 'ի ներքս 'ի հոգին է ազդարար, զի զոր ինչ լսէ՝ անդանդաղ հասուցանէ 'ի միտս, և միւսն՝ այսինքն բերանն իբր ներքին խորհրդակից առ արտաքս ծանուցանէ զոր ինչ հոգին 'ի միտս խորհի և տրամադրէ ։

Զի եթէ չգոյր ունկն, ոչ ինչ իմանայր մարդ, որպէս յայտ է 'ի խլից. և եթէ չլինէր բերան, ոչ ինչ կարէր իմացուցանել այլոց ։ Այս մարդիկ իմանալով և իմացուցանելով հաղորդակիցն իւրերաց, և զբազմահնար արուեստս և իմաստս տեսական եւ գործնական յառաջ ածեն ։ Ուստի ունկն և բերանն 'ի մարդն են իբրեւ երկուս թեւս թռչնոց, որովք ուր ցանկան՝ թռչին, և որում բաղձան՝ հասանին ։

Իսկ արդ՝ սոքա որքան արժանայարգ և կարեւոր են 'ի մարդն՝ յուղիղ վարելն զպաշտօնս իւրեանց, այնքան անարգ և անպիտան գտանին յարտուղին իւրեանց ։

Ուղղութիւն ունկան է, զոր ինչ լսէ յայլոց՝ զայն աւանդէ մտաց. ուղղութիւն բերանոյ է, զոր ինչ ունի 'ի միտս՝ զայն խօսի այլոց ։ Իսկ եթէ ունկն՝ ընդունելով խօսսն, և բերանն՝ զբանն մտաց այլ ընդ այլոյ յեղաշրջէն, մին խաբէ զինքն և միւսն զայլս, որովք և բառնի ճշմարտութիւնն. և զինչ քան զայս չար յաշխարհի ։

Բ. Եթէ ունկն ոչ տանի 'ի ներքս զոր լսէ, բերանն ոչ կարէ հանել արտաքս 'ի խօսիլ. և այս հաւաստի է 'ի փորձոյ, զի ամենայն խուլ են և համր ։ Արդարեւ ոչ գտանէր համր, եթէ ոչ էր խուլ. որովհետեւ ոչ ինչ է 'ի միտս, որ չիցէ նախ 'ի զգայութիւնս ։

Նաեւ երանելի է ունկն որ լսէ, և երանազոյն՝ որ

զիարդ և լսէ՝ նոյն թուով և նոյն կերպարանօք հաս-
տուցանէ ՚ի միտս, և երանելագոյն եւս՝ որ միայն զբա-
րին լսէ, և առ չարն զդուռն իւր փակէ: Ունկն և
բանութիւն ընկալցի և բերանն՝ եթէ զուգիցի ընդ
զբարին խօսս միշտ:

Գ. Լսելիք արդարեւ են խցանելիք, որք առ աս-
տուածային պատուիրանն դժուարալուր և խափա-
նեալ են, և առ բամբասանս գլորալուր և ծա-
գաշարժ:

Դ. Բնութիւնն՝ որ ոչ ինչ գործէ ընդունայն,
ետ մարդոյ լսելիք երկու՝ և միշտ բաց, բերան մի՝
և յաճախ փակ. իբր զի ուսանիցի մարդ ՚ի բնութե-
նէ՝ լսել բազում, և խօսել սակաւ: Նա զի զայլ ըզ-
գայութիւնս արար շարժուն, իսկ զունկն անշարժ,
իբր զի զոր միանգամ լուիցէ, անմոռաց և անշարժ
ունիցի:

Զարտաքին դիրս և զխառոջս և զճանապարհն ընդ
որ ձայնն մուտ առնէ, կազմեաց դարուփոս և զոր-
ջապտոյտ, որպէս զի ոչ զամենայն ձայն զոր լսէ՝ ՚ի
ներքս թողուցու մտանել, այլ իբր ընդ մաղ անցու-
ցեալ՝ զբարին և զազնիւն ՚ի ներքս մատուսցէ, և
զանարգ թեփ բանին արտաքս վարեսցէ:

Ե. Ընդ բլթակ ունկան կանանց աւորեցան մար-
դիկ օղ կախել, որ ՚ի հին դարան նշան էր գերու-
բայց այժմ նշան զգաստութեան, որպէս զի ակնա-
ռու ունիցին կանայք փակել զականջս առ ՚ի չլսել
զխնասակարս, եւս և ճանաչել զանձինս հնազանդս ա-
րանց իւրեանց:

Յայս միտ և մանկունք երբեմն կրեն օղ յունկս.
որպէս զի և նոքա ըստ բերման մանկական տիոց չտա-
նելով զկատարելութիւն մտաց, գոնէ յարտաքին ի-
մին ազդարարէ խրատեսցին զգաստ լինել, և հպա-
տակ ծնողաց իւրեանց և դաստիարակաց:

Գ. Ոչ՝ յամենայնի անարգ է բամբասողն, այլ ոչ արժանաւոր քան զայն անարգ և արհամարհ է և լսողն բամբասանաց. իսկ ապա քանի՞ անարգ և վատթար իցէ այն, որ 'ի բաց թշնամեալ զգործ՝ այլն 'ի սուտ անե-ղիս ու ր յաճախ բնակին դատարկապորտ քաղաք և անա-ռակ վատաշուեղ լինել 'ի նոցանէ զբամբասանս զումբէ:

Մանկի և բերանն պարծիք քարեայ սուտն յՄ-բարչէն, որքա առնեն փնաս պաշտօնեայս չարեաց. զինչ չար քան զայն, մինչ ոչ յագի 'ի սուտ խօսելոյ և 'ի բամբասելոյ, և մինչ չասէ հեռիք յանձին դնելոյ:

Ե. Մարդիկ երբեմն առ 'ի չքմեղս առնել զանձինս յարատոյ բամբասողութեան, ասեն՝ զատոյգն խօսեցաք. որպէս թէ ոչ իցէ մեղք, յորժամ ոք զոր ինչ լուիցէ, և այլոց նոյն պատմեսցէ:

Ապաքէն է ինչ՝ զոր լսողն և ասացողն ոչ մեղան-չեն, և առ երկոցունց սոցա ընտրութեանն ոչ են ամենեքին բաւական: Ուրեմն լաւ եւս է ոչ ասել և ոչ լսել զայնս՝ զորոց ոչ կարես քաջ ճանաչել զօ-գուտն կամ զվնաս, զի մի դուցէ զվնասակարն ան-վնաս համարեալ, խօսեսցիս անզգոյշ լեզուաւ 'ի կոր-ծանումն լսողաց:

Ը. Եթէ ոչ կամիս 'ի մեղս բամբասանաց գլորիլ, մի դիւրահաւան լինիր այլոց խօսից, յորժամ զոք վատահամբաւեն. այլ կշռեա միտք՝ թէ ով և որպի-սի՞ ոք է որ պատմէ քեզ զերս այլոց. առաքինի՞ ոք է, եթէ մոլի. խոհեմ է արդեօք, թէ պարզամիտ. ատեցող է, թէ ճշմարտախօս. դատարկաշրջիկ է, թէ գործունեայ. թշնամի՞ է այնմ զորմէ խօսի, թէ բարեկամ. շահախնդիր է, թէ արդարամիտ, և այս-պէս բարւոք քննեալ՝ հնար է քեզ որոշել զճշմարիտն 'ի ստոյն:

[illegible] մոլին բամբասէ, զի ինքն բարի ոմն երե-ւեսցի. պարզամիտն բամբասէ, զի չէ խելահաս.

ստասայցն բամբասէ, որ այն է իւր սեպհական պաշտօն. դատարկակեացն բամբասէ, որ ժամավաճառ լինիցի. Թշնամին բամբասէ, զի վրէժս առնուցու. շահախնդիրն բամբասէ, զի շահեսցի ինչ.

Իսկ դու եթէ չես ախտացեալ նոյին մոլութեամբ, 'ի բաց կաց յայնպիսեաց, զի մի ապականեսցին ականջք քո, մի գայթակղեսցի սիրտ քո, և մի ընդ վայր դատելովդ՝ դատեսցիս և դու յԱստուծոյ և 'ի մարդկանէ.

Թ. Բամբասողն առաւել փոյթ է զազգս՝ զծանօթս՝ զմերձակայս և զհասարակս իւր բամբասել քան զօտարս. քանզի նոցին բանք և գործք յայտնագոյն են նմա, և կերպիւ իւիք առնու մերձաւորին վասն որոյ որպէս վրէժխնդիր և որպէս ուղղիչ համադիտանայ դատաստան առնել:

Բայց ոչ գիտէ ողորմելին՝ թէ այլ է գործ վրէժխնդրութեան, ուղղութեան և դատաստանի; և այլ բամբասանաց: Քանզի նոքա գործին կամ վասն արդարութեան օրինաց, կամ վասն սիրոյ ընկերին, և կամ վասն փառացն Աստուծոյ. իսկ սա, այսինքն բամբասանքն գործի վասն անիրաւութեան կամ ատելութեան կամ նախատանաց. Նոքա գործին հեզնականութեամբ իւիք, բայց սա յանդգնութեամբ. որ յանդգնութիւն է դատել զոք առանց հեղինակութեան իրաւանց: Վասն որոյ բամբասողք են յանդուգն և հակառակող ընդդէմ օրինաց արդարութեան, ատեցող ընկերութեան և արհամարհող փառացն Աստուծոյ:

Ժ. Իրաւացի բամբասանք այն է, յորժամ մեղանձամբ անձին զանձն բամբասէ, այսինքն զիւր ապականութիւնն քննէ, և զանձն մեղաւոր դատի. եթէ զայս առնէ, ահա նա է ճշմարտախօս, արդար և բարեմիտ: Իսկ եթէ զյանցանս իւր թողեալ՝ զայլոց

պակասութիւնն յառաջ ածէ և դատի, ստախօս է և անիրաւ, զի զվարս այլոց կամի ուղղել, և ոչ զիւրն։

Այն լեզուն որ զայլս բամբասէ, զմեղս այլոց լիզանէ. իսկ որ զիւրն բամբասէ, զիւր մեղաց խոցն սրբէ և բուժէ։

ԺԱ. Բազում անգամ անկանի մարդ 'ի բամբասանս անզգուշութեամբ, 'ի պատմել նորա զգործս ուրուք։ Եւ թէպէտ միտք առողջն ոչ հայի ուղղակի 'ի դատել զայլս, այլ միայն ասել պարզաբար զոր տեսեալ կամ լուեալ, սակայն յայն եղանակ չիջի բանն, մինչև լինել հետաքրքրութեամբ ձգէ զխօսողն 'ի բամբասանս։ Վասն զի պատահի բազմիցս, զի այլայլի բան գործողին և բան գործոյն. այսինքն դիտումն գործողին յայլ վախճան հայի, բայց ելք գործոյն յայլ վախճան եղերի. վասն որոյ կարի զգուշութեան պէտք են 'ի պատմել ինչ զումեքէ։

ԺԲ. Բազումք ևս իբր խղճահար՝ 'ի պատմել իւրեանց զպակասութիւն ուրուք, 'ի ներքոյ պատմանի խոստովանութեան արկանեն զայն, որպէս թէ խոստովանանք ասելով չիցէ բամբասանք, սակայն մեծապէս խաբին։ Քանզի սոյն բամբասող է, որ զպակասութիւն միոյն ծանուցանէ միւսոյն. եթէ խոստովանիլ պարտ իցէ՝ ոչ անկանի ումեք զայլոց մեղս խոստովանիլ, այլ զիւր յանցանս. ուստի այսպիսիք խղճիւ սկսեալ՝ անխիղճ բամբասեն։

ԺԳ. Ընդ այն խոժոռի ոք և բամբասէ և դատի, զորմէ լսէ զրոյց ինչ կամ գործ 'ի վնաս ինքեան ասացեալ, կամ արարեալ. Բայց դու, ո՛վ մարդ, մի՛ վաղվաղակի հաւատասցես և դատեսցիս, այլ քննեա և տես՝ թէ արդեօք բարեկամ է, թէ անծանօթ։

Եթէ բարեկամ, երթ առ նա սիրով, հարց տեղեկացիր՝ թէ ճշմարիտ է զոր լուար, եթէ սուտ. բայց մի՛ խռովեալ սրտիւ և վրէժխնդրութեան հոգ-

ւով, այլ եղբայրասիրական սիրով. Եթէ ճշմարիտ է՝ մեղ-
քանես, կամ զիրաւացի մասունս քո՛ յայտնիս, ապա զ-
զինաս և դու բժշկեսցիս և գաղափարեսցիս 'ի գաղտնիս
վշտացուցանելոյ զիրեարս. և եթէ ոչ է ճշմարիտ,
ահա մեծն մերձիցաւ։

Նայեց եթէ անծանօթ է քեզ և օտար, մի՛ բնաւ
ընդ այն վշտանար, և մի՛ զնա քամբասեր. զի չունիս
իրաւունս զամենեսեան հնազանդեցուցանելոյ քեզ,
և զամենեցուն լեզուն և զձեռս կապելոյ և արձակե-
լոյ ըստ կամաց քոց։ Ո՞չ փոյթ է քեզ վասն օտա-
րաց. օտարն որքան նեղահար լինիցի, ոչ սաստիկ
վիրաւորէ, զի նեւա 'ի հեռաստ ձգեալ. ...կար է զիս
հարկանել. ապա թէ ոչ՝ չէ հնար քեզ զերծ մնալ 'ի
զժդմութենէ և 'ի քամբասանաց։

ԺԳ. Նախանձոտք՝ որպիսի են այդ կանանց, զի քա-
մբասեն 'ի քամբասանս, որք և զժտութեան դրու-
նան յոլովմութիւն, և դադարին 'ի քամբասանաց,
վասն զի ոչ ումեք հաւատան, այլ 'ի չար կարծիս իւ-
րեանց կան հաստատուն. գուցէ զոր լուան և կար-
ծին, իցէ անհիմն և սուտ, բայց ո՞ կարէ զնոսա
ուղղել 'ի թիւր դատողութենէ մտաց։

Լաւ է ոչ ջանալ բանիւ 'ի հաւանութիւն ածել
զայնպիսիս, այլ արդեամբ գործոց. վասն զի զոր կար-
ծէին զումեքէ անառաքինի ինչ, յորժամ գործով զներհա-
կառակն նմին տեսանեն, յայնժամ ինքնին փոխեն զկար-
ծիս իւրեանց և ուղղին։ Որպէս բարբարոսքն 'ի
Մելիտինէ՝ իբրեւ տեսին զիժն կախեալ զձեռանէ
Պօղոսի, ասացին՝ թէ այրս այս սպանող է, բայց մինչ
տեսին թէ ոչ ինչ վնաս եղեւ նմա, շրջեալ զբանսն
ասեն՝ թէ աստուած ոմն է սա։ Գործ. ԻԸ. Զ։

Իսկ թէ այլազգ ինչ վարեսցի ընդ քեզ կանխաձայնու,
ոչ ինչ օգուտ, այլ առաւել գրգռէ զնոսա անխափանի
մնալ յայն, յոր միանգամ գահավիժեալ եղեն մտօք։

ԺԵ. Մանկութեանն քան զայլ ժամանակս յանձնեալ գիտակի 'ի մարդկէ, վասն զի յառաջ գայ 'ի պակասութենէ իրիք գործոյ կամ խօսից. Եւ որովհետեւ չիք մարդ առանց պակասութեան, է՛ որ 'ի գործս ունակի, եւ է՛ որ 'ի խօսս. Որդ՝ եթէ զամենայն սիրելեաց ուրուք 'ի մէջ անձնայ բամբասիցէ ոք, հարկ է՛ զամենայն մարդ բամբասել. եւ յայնժամ զբամբասողն մէջ դատեսցէ, զի եւ ինքն է մարդ պակասական.

Ապաքէն ներեա մարդկան պակասանաց, զի եւ դու գտցես ներումն քոց յանցանաց.

ԺԶ. Ով առաքինիս եւ անհնարին կրկին դառնութեան. հասարակաց եղբայրութիւնք եւ ազգաց՝ կամք [illegible] եւ միաբանութիւնք մեռանին եւ մեռանելոյն չարաչարութեան լեզուօք քան կամաց, մանաւանդ շահասիրելի բանի [illegible], քան այլոյ արհամարհելոյ.

Յանդուգն գործէ մահու կարգելոյ զերկու ի բերանոյ որովհետեւ թիւնս, հայրենեաց եւ ազատութեան ընբռնաւորաց, զի ոչ իւր մեռան նոցա. Եւ ունելով զի [illegible] բերանոյ զդեւն խռովութեան, մանաւանդ թէ ոչինչ իւր լինելով դեւ մարմնաւորեցին, այսպէս բամբասանօք զհետն սիրոյ որ եղեալ էր 'ի մէջ երկուց կողմանց փեսայութեան եւ հարսնութեան, իբր փոխանակօք եւ միջօք բանից եւ կործանեն, եւ զանհաշտելի թշնամութիւն 'ի մէջ արկանեն, մինչեւ անդ [illegible] առնել նոցա զանհնարինութիւնն եւ բաժանել. զի աներն բամբասանաց բուսոյց 'ի մէջ խօսեցելոց եւ ազգականաց նոցա եւ մերձաւորաց՝ չարաչար եւ դառն ատելութիւն.

Ո՞չ ապա կարիցէ թուել զպարտան որ յետ [illegible] 'ի վեր եղեւ. Կա՛ զի այդպիսի [illegible] եղեալ [illegible] 'ի հայրենեաց, է՛ որ 'ի կարգեալքս [illegible] նէ [illegible], եւ է՛ որ յաւ[illegible] [illegible]թեամբ [illegible]

[illegible] ։ Նշան և զի՞նչ [illegible] ոչ [illegible] մարդ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] մնացուր աչօք, որ հանդարտեցաւ նախա-
[illegible] [illegible] զուր և սուտ էր, այլ ո՛ր չահ
յայտնեսցէ ։ ըստ ամենայն որ խօսել 'ի նմանէ ։

Նաև թշուառութեանս ։ աղէ [illegible] առ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ; ոչ [illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible], [illegible]
[illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]
[illegible] չարախօսացն յուսացանել, և [illegible] [illegible]
իւր յայտնել ։ Իսկ զի տեսանէր [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] և հեծեծելով [illegible], [illegible]
[illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]
նոյն, և կամ յուսադրել երկրայ [illegible]
[illegible] ։

Իսկ զի՞նչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]
վասնորոյ ոչ այլ ոք քան զամենայն [illegible] ։ [illegible]
դառնացեալ և զիջեալ [illegible] է նորա 'ի [illegible]
բարեկանաց, կամ չարախօսել [illegible] նորա, զի մերձա-
մերձ 'ի մահ [illegible] ։

ԺԵ ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։
և կամ առ չահու ամենայն խօսքն զուր և սուտ ։ Այս
այս վերջին կարի յանձանց զանազան 'ի նորա, որք չարա-
խօսեն [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible] ։ Կ[illegible] [illegible]
[illegible] կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և
այսպիսիքս դատակից են [illegible] [illegible] [illegible]
մերոյ, որ վասն [illegible] [illegible] [illegible] ։

Նա և ամենք 'ի չարախօսից [illegible] [illegible] [illegible]

ուսանելոյ կամ դասելոյ , և զայս առնեն՝ որպէս զի զայլոց նշանն քանկեալ առ որդիս իւրեանց հաստատեսցեն ։ Այլ որպէս արարին ինքեանք այլոց , նոյնպէս արարցեն նոցա և այլք . քան որում անշառշառ մնիր է , թէ որով չափով չափէ ոք առ այլս , նովիմբ չափեսցի և առ ինքն ։

Այսուհետև ով ոք զայսպիսի անիրաւութիւնս գործէ , մտանէ զանձն և զուստն իւր վնասու և գատապարտութեան հոգւոց և մարմնոյ ։

ՁԶ . Նոյնս քանքառաւորք մարթ է ստուգապանել քամ առաջոտած , այսինքն՝ մեզր և ունայն զըցը , զի քանքս քամ՝ զուր և ունայն լոյ , և զի՞նչ մեզր պատգամ քան զնոսս քանքառաւորաց , որով պղպղանք ոք զայր ։ Իսկ քան յարմարաւորութեան՝ ստուգանել քանի առաջոտած , այսինքն՝ դըղդղաձայն խօսք . զի քանս քանի՝ նշանակէ քաղցրն և դըրդին , քանզի և ամենայն քանքառող դըղդէ և խառնեցուցանէ զայս , և արկանէ աղմուկ ։ Արդէ նաև ստուգապանել քան ծորանդ , այսինքն՝ խօսք մեղադրութեան և նախատանաց . զի քանքառող լեզուն զայլս յանցաւոր զնէ և մեղադրէ ։

Բայց քանզի ստապատիր քանքառաք ընդդէմ ճշմարտութեան գնեն , անկանին ՚ի մեջս անձանցնս , զի զայսպիսաւոր կոչէ վասն նախանձու և ատելութեան ։ Այսպիսեացն չարախօսք ՚ի քանքառաւորաց , և ուսցին խօսել զբարիս . զի քան անձինքն մեզայն հանդերձեալ են կրել զանձինսն ատանջանս ։

ՁԷ . Նաւել քարոզ Թուի ունայն քանքառել զենքեցուցանեն , եթէ փոքր ինչ արտս մարդկայնէն սխալանաց նշմարեսցեն ՚ի նոսա . բայց ոչ գիտեն՝ թէ գիւտական է այս դըրդութիւն ։

Զի որ մինտելով զկարգաւորս իւր քանքառէ , յայտ է թէ զինանէ զայլթակղել , որով անօրէն և փոքր

համարի զնա յաչս իւր, և զբան նորա արհամարհ և սնոտի. առաւել ևս այնորիկ ում հնազանդիցի, ում անսայցէ, յորմէ խրատիցի, որում խոստովան լինիցի:

Նա զինչ այնու հետև. օտարացեալ ինքն 'ի կար-գաւորաց, հեռի գնայ և 'ի սրբազան խորհրդոց եկեղեցւոյ: Նա հետզհետէ այնքան զօրանայ այս ախտ, մինչև տալ նմա զօրէնս արհամարհել զոր քարոզեն կարգաւորքն. և ահա այս է, զոր դիտէր դեւն չար՝ ձգել զբամբասողն 'ի վիհն կորստեան:

Ի. Ամենայն ընդհանուր բաղկանայ 'ի մասնաւո-րաց. զի իւրաքանչիւր մասնաւորք համանմանք մի-մեանց՝ գործեն զմի ընդհանուր 'ի տեսակս իւրեանց.

Արդ՝ ազգն է ընդհանուր, որոյ մասնաւորքն են անհատք. ուստի եթէ այսօր տեսեալ զանհատ ոք 'ի սխալանս ինչ՝ բամբասես, գուցէ 'ի վաղիւն և զմիւսն, և յայլում աւուր զայլ ոմն: Նա օր քան զօր յաճախես 'ի բամբասանս, մինչև դառնալ քեզ այն 'ի սովորոյթ, և հետզհետէ յերկրորդ բնութիւն, և այ-նուհետև լինել քեզ դատիչ, մանաւանդ թէ դահիճ ամենայն ուրեք. քանզի ոչ ոք է անսխալ 'ի մարդկանէ:

Այսպէս զամենայն մասնաւորսն դատելով բամբասես զընդհանուր ազգն քո. բայց դու ես 'ի ներքոյ նոյն ընդհանրութեան ազգին պարունակեալ գոլով, դու զքեզ բամբասես. ուրեմն սխալեալ դատիս և զքեզ: Այսպէս զգուշացիր 'ի բամբասելոյ զեղբարս քո, զի մի արժանի բամբասանաց լինիցիս և դու:

ԻԱ. Ի միոյ բամբասանաց երրեակ չարիք սովոր են ծնանիլ. մի՝ զի բամբասողն մեղանչէ մահու չափ, երկրորդ՝ զի լսողն լինի մեղսակից, երրորդ՝ զի բամ-բասեալն մեղանչէ նովին մեղօք, կամ յաւելու առ-նել զայլ ևս:

Վասն զի բամբասեալն լուեալ զի բամբասի յայլ-մէ, կամ զբամբասողն իւր սկսանի բամբասել, կամ

՚ի ցաւոց սրտին կատաղեալ որպէս արջ ներսահար՝ հանապազ սպառնայ նմա զմեծամեծ չարիս ; զի վրէժս անձնական : Եւ այսպէս հրդեհ չարին դառնայ զինքեան, բորբոքի որ քան զօր, եւ այրեալ տոչորէ զամենեսեան : Իսկ արդարեւ չիք մեծագոյն ՚ի չարիս՝ քան ըզբամբասանքն, եւ չիք այժմ յանձնեալ քան զնա ; եւ թէպէտ ամենեքին գիտեն՝ թէ ծանր մեղք են բամբասել զայլս, բայց տակաւին ՚ի նոյն կանխեն հանապազ :

ԻԲ. Ի թունալի նետից բամբասանաց՝ ոչ այլ ոք ՚ի մարդկանէ, բայց միայն մանկունք գտանին անխոց, եւ երջանիկ են յայսմ մասին . իսկ ամենայն չափահասք արք եւ կանայք ՚ի հոգի վիրաւորեալ երեքթեւեան սլաքօք նորա, խոցեալ գէշ թունալին յարիւն խերաց . եւ ոչ այսչափ միայն, այլ եւ յարիւն մեռելոց ննջեցելոց :

Բանսարկու է մարդ՝ որ կենդանի է մարմնով, բայց մեռեալ հոգւով, եւ բամբասէ զայն որ մեռեալ է մարմնով բայց կենդանի հոգւով : Ո՛վ աղետիցս, զի եթէ զկենդանիս միայն բամբասէր, ո՞ գիտէ՝ գուցէ յաւուր միում զղջացեալ ՚ի միտս, երթայր եւ ներումն խնդրէր ՚ի նմանէ . իսկ զմեռեալն զոր զրպարտութեամբ վատահամբաւեաց, ո՞ւր կարասցէ գտանել : Գտանէ այն՝ ՚ի գերեզմանի, յորժամ իջցէ եւս թաղել առ նմա . այլ սակայն ոչ այն յանցանքն ՚ի նմա, զի ՚ի հանդերձեալ աշխարհն չիք տամանավաճառառեւտրութեան մեղաց եւ թողութեան . զի անդ ոչ ոք կարէ մեղանչել ումեք, եւ ոչ կարէ ոք թողուլ զյանցանս ուրուք :

ԻԳ. Ո՛վ երբեւս յօժարիցի ոք ասել, թէ զի՞արդ ՚ի մեղս համարիցի բամբասանքն, մինչ զայն պատմեմ զոր այլք տեսին կամ արարին . մինչ թէ արդեւք ի՞նչ իցէն զճշմարիտն ասելոյ . ո՞չ ապաքէն ՚ի քարոզում մէ-

այլս գալոց անցելոց արձանագրեալ գտանելն գործք մարդկանն. է՝ որ բարւոք, և է՝ որ չարի ։

Նոյն և զայդ՝ որ զայս ասես. եթէ բարւոք է գործն, զոր պատմես, այն ոչ է բամբասանք՝ այլ գովեստ. զայս արժան է հաշուել և ոչ թշնամութեանց, որպէս զի գործողն փառաւորեսցի և լսողքն շահեսցին ։ Իսկ եթէ չար՝ արժան է և զայս ծածկել, զի մի գործողն վատահամբաւեսցի, և լսողքն գայթակղեսցին. զի բազում վատապատմելով՝ չարին ոչ լինի բարի, այլ աւելանայ եւս չար, և դու լինիս պատճառ չարեաց ։

Իսկ գործք որ պատմին 'ի գիրս, այն է կամ 'ի յօրինակ բարեաց՝ եթէ գործն է բարի, կամ 'ի զգուշութիւն լսողաց՝ եթէ գործն է չար ։ Արդ դու ևս եթէ առ 'ի զգուշութիւն լսողաց պատմես զի մի հետեւեսցին այլք, ոչ ասի այն բամբասանք, այլ խրատ զգուշութեան՝ առ 'ի խորշիլ 'ի չարէ. և յայնժամ գործն միայն լինի անդոսնելի, և գործողն ցաւակցութեան արժանի, զի մարդկօրէն գթեսցի ։

ԺԴ. Ոչ կարէ զանձն արդարացուցանել, որ առանց քաջ տեղեկութեան դատի զոք և բամբասէ ։ Այլս ոչ կարես միալ անսխալ բամբասող դու, որ ոչ գիտելով զմիտս գործողին, և ոչ դիտելով 'ի վախճան գործոյն՝ սկսանիս անդուռն բերանով դատել զգործն և զգործողն ։ Քանզի հնար է՝ զոր այժմ յանդգնութեամբ դատիս անգիտութեամբ, յետոյ զղջաս առեալ անմեղութեան նորա, զամենայն զլաս գիտութեամբ. և զոր յառաջագոյն կարծէիր մեղսապարտ, յետոյ երեւեսցի քեզ բարեպաշտապարտ ։

Բայց դու յայնժամ զի՞նչ համարձակեսցիս բանալ զբերան քո 'ի գովել, զոր փոքր մի յառաջ պախարակեցեր. հանգա՞ կամ պարտիս փոխել զբերանդ՝ կամ զմիտսդ. չէ հնար փոխել զբերանդ, զի մի լինիցիս ծա-

մինչ հեռաւորութիւնն ։

ԻԸ. Օրինակքն 'ի միաբանութենէ սուրբ գրոց և գիտութեանց յաճախ անկանին 'ի բամբասանս ։ քանզի ոչ գիտելով ինչ յօգտակարաց և 'ի հեղինակաց իմաստից խօսիլ, անխղճաբար բամբասանէն զամենայն. որ զի անգիտացեն զժամանակն ։

Իսկ թէ գայցէ 'ի նոսա իմաստուն և գրագէտ որ, և տեսցէ ինչ 'ի գրոց, վաղվաղակի ձանձրանան, և դատին զնա իբրև պշտաղկրատ և թեթևամիտ, և ամչկս առնեն, և յայլ խօսս շրջեալ զբանն՝ տանկանել նմա ։ Այլ են ոմանք զի յանդգնին ասել՝ թէ բաւական է զոր ինչ վարդապետեցեր . կաց փոքր մի զի և այլք խօսեսցին ։ Այլ չեն ինչ զարմանք, զի որք գողք են հեշտանեալ 'ի գարշ հոտոյ աղբեւաց՝ տաղտկան և խորշին յանուշահոտ բուրմանէ ծաղկանց ։

ԻԹ. Լեզու բամբասողին պապանձեալ կարկի մինչ համբերէ բամբասեալն. զի թէ իրաւամբ է ատեցեալն, ապաքէն հարկ է համբերել առանց մշտանջոյ ; զի զոր ինչ ասար՝ զայն լսէ. իսկ եթէ յանիրաւի, տակաւին ոչ է պարտ պայքարել և ընդդիմաբանել, այլ մանաւանդ ծիծաղել, կամ քաղցր և ողոք բանիւք զանմեղութիւն իւր ցուցանել ։ Լաւագոյն եւս է աղօթս առնել առ Աստուած վասն նորա. զի յայնժամ տեսեալ Աստուծոյ զհամբերութիւն բամբասելոյն՝ կամ շնորհօք իւրովք զգաստացուցանէ զբամբասողն, կամ արդարութեամբ իւրով պատժէ՝ եթէ յամառեալ մնայ 'ի նոյն չարիս ։

Լ. Չիք բան զայս իրաւացի բամբասանք, եթէ որ ընդ միոյ բամբասեսցէ զանձն իւր, որով և զերծանի 'ի չարաչար բամբասանաց ընկերին ։ Որ կարէ տեսանել զպակասութիւնս իւր, ոչ այնքան կարէ տեսանել զպակասութիւնս այլոց ։

ԼԱ. Հարուած գաւազանի ոչ այնքան ցաւեցու-

ցանէ զմարդ՝ որքան հարուած լեզուի. զի թէպէտ լեզուն չունի ոսկր, բայց խորտակէ զոսկր։

Որպէս հուր ծախէ զփայտ, նոյնպէս լեզու բամբասողին զանձինս անմեղին։ Ուստի զգուշանալի է 'ի խածանող չարաց քան 'ի ժանեաց կատաղի շանց։

ԼԲ. Եղջեւ պաշտեալ յայն առնս համարձակի խօսիլ զչարիս, զի չունի առ որով ամաչիցէ, և ոչ ունի կրն որով լուիցէ զբանս իւր. ոչ ամաչէ, զի եղիցէ և ոչ արտաքոյ 'ի բերանոյն ելանէ, զի տարապարտեցի, որ եթէ չէր պատպախի, պահիցէ ոչ ժտանէր յանձնարկել զլեզուս։

ԼԳ. Եթէ զամենայն զոր խօսի լեզուն՝ կատարեսցեն ձեռք, փութով խորտակին մատունք նորա. զի որովհետեւ լեզուն ոչ ունի ոսկր, բազում ինչ կարէ խօսիլ և մնալ անվնաս. բայց ձեռք՝ զի ոսկերօք է կազմեալ, եթէ արասցէ զամենայն՝ խորտակի չարաչար։

ԼԴ. Մարդիկ հրաւամբք յանդիմանեն և պատժեն զնոսա, որ միայն բանիւ խօսին զանտեղի՝ զԹիւր և զնենգաւոր զրոյցս, թէպէտ և մտօք չիցեն համաձայն ընդ բանսն. քանզի մարդ զարտաքինսն միայն կարէ գիտել, և ըստ այնմ դատի, և ուղիղ է դատաստան նորա. իսկ ըստ ներքին խորհրդոց և կամաց դատել Աստուծոյ է յատուկ, որ քննող է գաղտնեաց։ Ուստի պարտ է ամենայն ումեք զգոյշ ունել զլեզու իւր 'ի խօսելոյ զանարժանս, զի մի գտցի պարտաւոր դատաստանի՝ ըստ Տեառն վճռոյ. «'Ի բանից քոց արդարասցիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս։» Մատթ. ԺԲ. 37։

[illegible] զԹշնամութիւն [illegible] [illegible]. իսկ որ 'ի վեր [illegible] [illegible] են: Առակ. Ժ. 18:

«Որ [illegible] [illegible] իւր և [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible]: Եսայ. ԻԱ. 25:

[illegible] [illegible]. և 'ի [illegible] [illegible] [illegible]. զի [illegible] [illegible] ոչ [illegible]. և [illegible]: Իմաստ. Ա. 11.

«[illegible] են 'ի [illegible], [illegible] ոչ [illegible] 'ի [illegible]: Սիրաք. ԻԲ. 22.

«[illegible] [illegible] է, և [illegible] [illegible] [illegible]: Յակոբ. Գ. 5:

«Մի [illegible] [illegible]. որ [illegible] [illegible] [illegible]: Յակոբ. Գ. 11.

«Թէ զմիմեանս խածանիցէք և ուտիցէք, զգոյշ լերուք՝ [illegible] 'ի միմեանց [illegible]: Գաղատ. Ե. 13:

---

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Բազմապատիկ չարիք՝ որով վնասին մարդիկ, անխորհրդաբար յառաջ գան 'ի Թիւր կարծեաց. իսկ արդ՝ կարծիքն է երկբայական դատումն մտաց զանորոշ և զներընդունական իրաց և բանից, որք ոչ են աներկբայ ճշմարիտ, և ոչ գլխովին սուտ. ըստ որում զոր ինչ ըմբռնէ միտք, դատէ զայն ըստ իւր կարողութեան: Եթէ միտքն իցէ պայծառ լուսով գիտութեան և խոհեմութեան, ազատ 'ի պաշարմանէ, և զերծ յամբոխմանէ կրից, ոչ սխալի 'ի դատելն զիր ինչ. զի ոչ զհետ երԹայ երկբայական կարծեաց՝ որ բազում անգամ է սուտ, այլ հետևէ ի ստոյգ և բացայայտ ճանաչման իւրում, և ըստ պահանջելոյ պարագայիցն տեղւոյն՝ ժամանակին և անձին ուղղութեամբ դատէ:

Իսկ եթէ իցէ միայն զուգել 'ի լաւոյ զգօնութեան և խոհեմութեան, կամ պաշտպանել 'ի նախանձդաւութենէ, կամ վարատել 'ի մոլեկան ինչ կրից՝ յայնժամ կարծիքն ընթանի ուղղէս անխափան ճշմարտութիւն. առ այն հակի և միայն 'ի գտանելն 'ի բուն զհետ երթայ և կամքն 'ի սիրել կամ յատել:

Բ. Աննենգք և պարզամիտք առաւել 'ի բարի կողմն շրջեն զկարծիս իւրեանց զումէջէ 'ի դատելն. Իսկ նենգաւորք և խորամանկք 'ի չար կողմն հակեն. զի այս օրէնք է մարդկան՝ ճանաչել և կարծել զայլս իբրև զանձինս, և ըստ այնմ դատել զգանս և զգործս նոցա:

Վասն որոյ պարզամիտք փութով խաբին, զի ամենեցուն հաւատան, կարծելով թէ ամենեքին են պարզամիտք. իսկ խորամանկք հաւատան և ոչ ումեք, և երկոքին ծայրքն ես են մոլեկանք. Զի որպէս ոչ է արժան ամենեցուն հաւատալ. նոյնպէս ոչ է արժան զամենեսեան նենգաւոր կարծել. այլ պարտ է ուղղութեամբ դատել զնոսա՝ առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ.

Գ. Մեծանք առ ազնուութեան սրտալին 'ի դատելն, որք թերեւս ներողութեան են արժանի, բայց քաջումք են այնք որք առ անելութեան չարաչար զատին զայլս. Ոչ հայլին 'ի միտս գործողին, և ոչ յէութիւն գործոյն, այլ մոլեգնեալ 'ի կրից՝ ծնանին զչար կարծիս, յորոց յառաջ գան անխիղճ դատողութիւնք. Որք և զչեղչեալն իբրև եղեալ տեսանեն, զանկան առաւելուն, զփոքրն մեծացուցանեն, ըզխոտորութիւնն 'ի խոհականութիւն փոխարկեն, զանմեղ յանցաւորութիւն դարձուցանեն:

Բանզի զամենայն բարիս՝ զորս այլք առնեն, մարդիկ չար կարծեաց կարեն թիւրել. որով ոչ միայն զայլս խոտելեն, այլ և ինքեանք հանապազ խռո-

ռամենայն ամենեցուն։ Որպէս թէ [illegible] [illegible]
[illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] կամ [illegible] [illegible], [illegible] [illegible]
բարպարաւ մտրափար դառնել, և ոչ լինէր այնքան
զմտաւթիւն և երկայնամտութիւն ՚ի մէջ մեծերաց
կամ ազգատոհմի և կամ ընտանեաց։

Ո՜վ ի աւանիկ տեսանեմք հանապազօր, եթէ այր
զկինչէ խռմէ, կին զայնէ, եղբայր զեղբօրէ, բա-
րեկամ զբարեկամէ՝ ուրայն և մայր կարծեօք բողոք
բառնան ՚ի դատաստանս, յորոց սմանք անցեալ բա-
կապար մարդկութեան՝ անագորուն մաօք զհինեանս
մատնեն ՚ի զանազան վնասս հոգւոյ և մարմնոյ։

Դ. Զուարթաչար դաստիարակութիւնն ծնողաց ՚ի մանկար
[illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible], և [illegible]
[illegible] [illegible] և եղկութեանց։ Ոհասնին [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], որ ոչ [illegible]
[illegible] [illegible] և ՚ի [illegible] [illegible]։

Այլ չար և մոլար կարծիք [illegible] [illegible]
[illegible] և [illegible] [illegible], որ [illegible] [illegible]
[illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible]
[illegible]։

Ե. Հրամայեալ լինելով կամ [illegible] [illegible],
ոչ [illegible] [illegible] [illegible], այլ [illegible] [illegible]
[illegible] և [illegible]. և այսպէս [illegible] [illegible] [illegible]
՚ի դատաստութիւնս, և արհամարհէ [illegible]։

Զ. Նախանձոտն տեսեալ զարիս այլոց, [illegible]
[illegible] բորբոքեալ փառս ՚ի սրտէս զհնոց, և չարա-
չար կարծեօք դատաստան առնէ, թէ անարժան են
նոքա այնոցիկ բարեաց յորս վայելեն։

Է. Բարկացողն կուրացեալ ՚ի կրից [illegible]-
թեան, ոչ կարէ [illegible] լինել, և [illegible]

այնոցիկ՝ զոր լոկ կամ տեսանէ, այլ վաղվաղակի 'ի կարծիս լինի. Թէ այն ամենայն է հակառակ և զիրա- ռակար ճշգրտեան ։

Ը. Ծոյլն ոչ կամելով աշխատանիլ, կարծէ թէ այլ խնդրութիւնն արտաքնանալ զանկարութիւն անձին պ- նուցէ և զճէշ վաստակով։

Թ. Նախանձն զոր ինչ ունի, կարծէ թէ ոչ է բա- ւական 'ի պիտանութիւն, և զանձն և եւս ժողովել, որ- ունէր թէ ունիցի կենալ 'ի մշտնջենաւորս ։

Ժ. Ամբարտաւանն կարծէ թէ մարդիկ կեան զի կեն- րիցեն, և ոչ թէ ունին զի կեցցեն. նոյնպէս 'ի ժամա- նակին, զի հանճարի թէ կենաց իւր կարգեալ կայ ընդ զեղխութիւն որկորոյ, և թէ վարդապետ օրհնաց հու իւրոյ, եթէ տեսլոյ կամ պարոյ կերակուր ուտիցէ։

ԺԱ. Եղջերաւոն 'ի պարս հեշտութեան մարմնոյ կարծէ զտանելն զհանգիստ, և ոչ զգոյշ թշուառն թէ որքան յանձնէ 'ի ցանկութիւնս մարմնոյ, այնքան առաւել տառապի 'ի նմանէ ։

ԺԲ. Եւ և անմիտք այնքան տարապարտ և մոլորեալ որք ժամէ 'ի ժամ փոփոխեն զկարծիս իւրեանց, ըստ յաւէտ վարանելոյ յանձինն 'ի միտս ։ Որք եթէ բաղդում անգետք և կիրք պաշարեալք ժողովեալք 'ի միասին զկարծիս իւրեանց յառաջ բերցեն, որքան թուով մարդիկ՝ այնքան տարաձայն կարծիք երեւին 'ի մէջ. ոմն խուժ ասէ, և ոմն դուժ, և ոչ մին հա- ւանի կարծեաց միւսոյն ։

Իսկ յայսցիկ խառնակութ կարծեաց որպիսի՞ ցուցանիցաւոր չարիք ոչ գոյցեն յառաջ 'ի միտս նո- ցա, կամ հատապակութեան. փորձն ոչ է պակաս յամենայն ուրեք, զորս կարեն տեսանել ամենեքին որք ունին միտս ։

ԺԳ. Աղախնոյն տանջի առանց տանջողի, և փախչի առանց հալածչի. զի զոր չէ խօսեալ ոք՝ կար-

ծէ պատուհասել՝ եւ զոր չէ գործեալ՝ վարկանի [illegible] բնաւ, գիտեն որոյ միշտ հոգայ և տառապի. և ոչ տանի զհանգիստ. զամենայն որ համարի ինքեան աստեղող. զամենեսեան թշնամի, զամենեսին բանսարկու. որ նեղէ զատուածապաշտ կամակամ իւր. հանէ ի դատէ պատրուակս անուանէր՝ թէ են օրինաւ, բարեկամ և զամէս ինքեան.

ժԴ. Ամենադիւրական չարութիւնն է զկնորդայն գիտակ յայն իւր յանցանս, յորմէ և ինքն զատոդն ոչ է զերծ. և զինչ արդեօք շահեսցի, բայց եթէ բռնանաւորել զինքն կրկնապատիկ և եռապատիկ յանցանօք. Մի զի առանց խրատանց դատեսցի զեղջայր իւր, մինչ ինքն ոչ ունէր խրատականութիւն դատելոյ. Երկրորդ՝ զի արդարացոյց զանձն՝ առնելով ընդդէմ խղճին իւրոյ, որ է հակառակն ընդդէմ ճշմարտութեան. զի անսատելի ճշմարտութիւն համարելի է դատապարտեան մտացն խղճի. և որ ընդդէմ իւրոյ խղճին խօսի և գործէ, ընդդէմ ճշմարտութեան զինի և մաքառի. Երրորդ՝ զլուղն խաբէ, և լինի խարդախ կեղծաւոր և գայթակղեցուցիչ. զի այն որ լսէ՝ դացէ անեղեալ գոլով գործոց երկոցունց՝ բամբասողին և բամբասելոյն, գայթակղի 'ի միտս իւր և դատի, թէ զիարդ սա ինքն նոյն գոլով՝ զայլս բամբասէ.

Նպաքէն եթէ կամէր չայնպիսին անպարտ երեւիլ, պարտ և արժան էր նմա նախ՝ զյանցուցեալն անմեղադիր առնել թէ յակամայս գործեցաւ, և զաւակցութիւն ցուցանել թէ մարդ է սխալական. Երկրորդ՝ խոստովանել թէ և ինքն երբեմն զայնպիսի իւչ յանցեալ լիցէ և զղջացեալ, որով խակ և խակ շահէր զլուղն, և 'ի բարի կարծիս զինքենէ հաստատէր. և այսու արդարեւ արժանի գովութեան լինէր և վարձուց բարեաց.

ժԵ. Սէր և ատելութիւն կուրացուցանեն զաչս

հոգւոյն, և ոչ թողուլ տեսանել նմա զարդարն և զիրաւացին, և ուղղութեամբ դատաստանաց առնել զայն։ Ով ի սիրտն ոչ տեսանէ զարատ կամ զպակասութիւն ինչ յանձն սիրեցեալ, այլ ամենայն որ է 'ի նմա՝ համարի լինել բարի և վայելուչ։ Ով ատեցեալ ոչ նշմարէ բարի ինչ յանձն ատելի, այլ ամենայն որ 'ի նմա՝ դատի լինել չար և թիւր։

ԺԶ. Անձնասիրութիւնն թիւրէ զուղղութիւն դատաման մարդոյ. զի գիտելով 'զՆ՝ զոր պարտէր մարդիկ մեզ կարծեօք, եթէ խոհեմութեամբ և ջանասիրութեամբ իւրով ստացաւ զարդի ինչ հասարակաւութեան, ասէ՝ թէ Աստուած տայր մեզ զայն զաւակի և ոչ եթէ նա։

Իսկ եթէ յեղակարծ դիպուածով կշեռն եկեսցէ բարւոյն մասն ինչ, վաղվաղակի ասասցէ բաւական, թէ նա անզգուշութեամբ իւրով կամ կամակորութեամբ պատճառ եղեւ չարեաց. և ոչ բնաւ յօժարին ասել, թէ Աստուած ըստ անքննելի խորհրդոց իւրոց թոյլ ետ վնասս գալ առ մեզ զի զգաստասցուք։

ԺԵ. Եթէ զմիւր կարծիս բառնայցին մարդիկ 'ի մտաց իւրեանց. Թշնամութիւնք փոքունք ոչնչանային լինէր, կամ յոյժ սակաւ գտանէր. Քանզի բազումք 'ի մարդկանէ տարապարտ դատողութեամբ յարուցանեն զթշնամութիւնն 'ի վերայ միմեանց կամ մտացածին կարծեօք աճեցուցանեն. Յանդգնութիւն է և անմտութիւն առանց քաջ տեղեկութեան դատել զայլս և առնել վատահամբաւ։

ԺԸ. Չէ նա մարդ բանաւոր՝ միայն և հանճարոյ ընդունակ, այլ գազան չար և դժնդակ՝ որ սնոտի կարծեօք չարաչար դատի զընկերն և ատէ, և ջանայ և հնարի չարիս հասուցանել նմա, գուցէ տանջել զնա և 'ի մահ մատնել։ Կեանք նորա համարի ատան-

ըմպէ անձին իւրոյ, և տառապանք նորա հանդերձեալ և դժուարութիւն ։

Օրհնալի ինքն մինչ տեսանէ զնա 'ի լոյս, և 'ի դուռ հանճարոյ յօրժամ'նա ուրախանայ ։ Իսկ մեռանիլ նորա և 'ի հող դառնալ, Թշնամութիւնս զոր անձն իւր սորա ոչ մեռանի, զի ոչ երբէք դադարէ 'ի չար խախտելոյ զնմանէ ։

Այս գործ յաւտելի դիւայ, և որ զայս առնէ գեւ է մարդասպանութեան, մանաւանդ Թէ դժնդակագոյն քան զդեւս, զի նորա ոչ այնքան Թշնամաթեամբ բերին առ ընկերս իւրեանց, որքան սա առ եղբայր իւր և հանգչեր ։

ԺԹ. Ո՛րինչ քան զայս անիրաւ դատաստան, մինչ վասն որ յանցանաց դատի ոք զընկերն և բամբասէ, ունի և ինքն զնոյն յանցանս, զուցէ առաւել ևս. լուիցէ Տեառն որ ասէ. « Այեղծանաւոր հանհնախ զդերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցես հանել զշիւղ յականէ եղբօր քոյ ։ » Մատ. Զ. 12 ։

---

« Մի դատիք՝ զի մի դատիցիք․ զի որով դատաստանաւ դատիք՝ դատեսջիք․ » Մատ. Է. 1.

« Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ․ իւրում տեառն կայ կամ անկանի․ » Հռով. ԺԴ. 4 ։

« Ցոյց 'ի ներքս և 'ի բանս հակառակութեան. ուսոյց ընդդիմանս խաբեբայ ևս․ հպարտութիւնք, կարծիք չարեաց․ » Ա. Տիմ. Զ. 4 ։

« Մի բամբասէք զմիմեանս եղբարք․ որ բամբասէ զեղբայր իւր և դատի զեղբայր իւր, և զօրէնս դատի ։ » Յակ. Դ. 11 ։

# ԳԼՈՒԽ ԺԴ.

## ՄԱՐԴԱՀԱՃՈՅ

Ա. Կասկածելի է նուաղկութիւնն. յորժամ փարդ երեւի օգն. վտանգաւոր է հիւանդութիւնն յորժամ կարծի լինել անվնաս. մահաբեր լինի թոյնն յորժամ մատուցանի իբրեւ դեղ. այսպէս յուէս վնասակար եւ զգուշալի է թշնամին՝ որ կերպարանի իբրեւ զբարեկամ, եւ մարդելոյց շողոմութեամբ ուսայ զգայութիս որսոյ :

Զի եթէ յայտնի թշնամի էր, մարթ էր ընդդէմ կալ եւ մերժել, կամ խոյս տալ եւ զերծանիլ. բայց քանզի զթշնամութիւն իւր ծածկեալ ունի պատրուակաւ բարեկամութեան, բազում անգամ անպատրաստ գտեալ զմեզ՝ արկանէ յորոգայթ եւ յապականութիւն :

Նոյն կարեւոր է ամենայնի անմոռաց ունել զայս պատուէր զգուշալի, թէ մի ամենայն հոգւոյ հաւատայք :

Բ. Իշխանաւորն ոք որչափ իմաստուն իցէ, եւ բարեկարգ, տակաւին ունի զպակասութիւնս ինչ. զի է մարդ սխալական՝ ծնեալ 'ի մէջ անթիւ պատրաննաց մարդահաճոյից, որք շուրջ պատեն զնոսա, մանաւանդ եթէ սնեալ իցէ 'ի մէջ մեծափառութեան եւ ազատականութեան :

Գ. Մարդահաճոյ հացկատակք կամելով առ շնորհօք մեծամեծաց խօսել, ատեն եւ պղտորեն զճշմարտութիւնն. եւ այս է կրկնապատիկ չար, զի պատուն ոչ միայն անձանց վնասեն, այլ եւ այնոցիկ որոց հաճոյանալ կամին :

Դ. Դժբաղդ է իշխանն որ չէ բաւական անձամբ

անձին հասու լինել հակառակութեանց հպատակաց և որոշել զմէջս նոցա ։ Հաւատոյ ստութեանց օգտակնդիր շողոքորթաց, որք ծածկեալ զթոյնս իւրեանց ընդ կերպարանօք հաւատարմութեան՝ ՚ի վերայ երեսս ցուցանեն սիրել զիշխանն, և խօսին զճշմարտութիւն, բայց խորք ատեցող են նմին և հեռի ՚ի ճշմարտութենէ ։ զի ոչ եթէ զիշխանն սիրեն, այլ զօգուտն զոր անտի ունին ստանալ նովաւ ։

Ե. Լուծելի է վիճակ իշխանին, մինչ ինքն թուլացեալ ՚ի պատիր բանից մարդահաճոյից ընդ որոց կենցաղավարի, և ոչ գտանի առ նմա այր առաքինի, որ այգ արասցէ նմա զճշմարիտն. քանզի այք բարիք և իրաւախոհք ներհակաւոր դառնութեամբ չհաճոյից համոզչաց անկեալ են ՚ի վիշտս, և օտարացեալ ՚ի նմանէ ։

Զ. Մարդահաճոյք առաւել խաբեն զհպարտ իշխանն, և արհամարհեն զնա ՚ի վնասանց, զի ոչ խօսին զիրսն որպէս ինքեան գիտեն, այլ որպէս հաճոյ է կամաց իշխանին, վասն որոյ փոխեն և այլայլեն միշտ զճշմարիտն ; մանաւանդ զայն որ վերաբերի առ նոյն ինքն իշխանն ։

Է. Օգտակնդիր մարդահաճոյք բազում անգամ խաբեն նաև զիմաստուն իշխանն, զի ինքեանք անպատիժ ջանին պատել զնովաւ՝ շողոքորթեն վասն շահախնդրութեան իւրեանց. և բարեխոհք հեռի կացեալ սպասեն զի կոչեսցին ։ Իսկ իշխանք առաւել հաճին կենցաղավարել ընդ մարդահաճոյս՝ քան ընդ բարեմտաց. զի մարդահաճոյք երագունք են ուսանել զհնարս այլոց, և շուտափոյթք համոզել ՚ի գործ, թէ և իցէ ընդդէմ խղճի մտաց և արդարութեան ։

Ըստ անմիտ է որ հաւատայ շողոքորթաց. զի նաքա բազում անգամ գովեն զոք առ երեսս, բայց ոչ եթէ ինքեանք հաւատան, այլ զի զգաղտնիս սրտի

նորա զողայցին, և խաբեսցին յօգուտ անձանց խաբեանց. իսկ գովել զոք յերեսս՝ է ծաղր առնել զնա. և յիրաւի արժան է ծաղու և կատականաց, որ հաճի ընդունել զգովութիւն՝ զոր առանձ նմա հայթայթեն.

Ը. Շողոքորթք ոչ այնքան պատկառանաւ՝ որչափ զգուշանանաւոր՝ որպէս 'ի վարպետ խաբեանց, և իշխան որ եթէ ոչ 'ի բաց վարեսցէ զնոսա, և ոչ սիրեսցէ զճշմարտախօսն, ձեռօք իւրովք նիւթէ զկորուստ անձին իւրոյ։

Թ. Մարդահաճոյք անգութ են քան զգողս. զի նոքա զարտաքինն ինչս միայն գողանան, իսկ սոքա ըզներքինն խորհուրդս սրտին։

Ժ. Կեղծաւորք արժանի են ծանր պատժոց՝ քան ըզչարագործս. զի որ յայտնի չարագործք են, խորշին 'ի նոցանէ մարդիկ. իսկ կեղծաւորք և՛ չարք են և կերպարանին իբրև զբարիս, և այնու խաբեն զմարդիկ. վասն որոյ և ճշմարիտ առաքինիք ևս լինին երկբայելի։

ԺԱ. Որ առաւել պատուէ զոք քան զոր արժանաւոր էր յառաջագոյն, կամ խաբեալ է զնա, և կամ խաբել կամի։

ԺԲ. Մարդելոյզք սովոր են յաճախել 'ի գովեստ չարաց քան բարեաց. քանզի գիտեն եթէ երկնչիլ արժան է առաւել 'ի չարաց՝ քան 'ի բարեաց։

ԺԳ. Բազում նենգաւորք շողոքորթական քաղցրաբանութեամբ լինին սիրելի իբրև բարեբարոյք, և բազում առաքինիք խիստ և անուշաւ բանիւք իւրեանց լինին ատելի իբրև դաժանաբարոյք և անհնազանդարելիք։

ԺԴ. Որ ցանկայ սիրելի լինել ամենեցուն, ոչ կարէ մնալ առանց մեղութեանց, զի որ կամի ամենեցուն հաճոյանալ, ըստ ճանապարհի նոցա ստիպի յարմարել և ընդ նոցա գնալ. և զի բազում են մոլիք,

առնել և յինքն նմանիս նոցա՝ զի անկեալ ցի 'ի նոցանէ ։

ԺԱ. Նուաճել փառամոլաց որ է չարահնարութեան, և արժան է ամենեցուն հալել և զզուշանալ՝ զի մի զրուցէ դառնանձնեցի 'ի նմանէ ։ Փառամոլ զի չարահնարիս յուսթիւնն է բնաւորի 'ի չնամի, և մտանէ 'ի ներքին խորհուրդս, և եթէ առաջացէ որք նման՝ նենգէ և զոր կեղծէ յօրդորոյթ ։

ԺԲ. Խորշել արժան է 'ի խորամանկութենէ թշնամւոյն՝ քան 'ի կարողութենէ նորա, զի կարողութիւն առանց խորամանկի հնարից դժուարանայ յաղթել ։

---

* Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից ։ « Սաղմ. ԾԲ. 6 ։
* Նետ խոցոտիչք, լեզուք նոցա նենգաւոր, և բանք բերանոյ նոցա ընդ ընկերի իւրում խօսին զխաղաղութիւն, և 'ի սրտի իւրում ունին զթշնամութիւն ։ « Երեմ. Թ. 8 ։
* Մի առ ակն ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ ։ « Եփես. Զ. 6 ։
* Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի ։ « Գաղ. Ա. 10 ։

---

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### ՑԻՀՈՑ

Ա. Զի՞նչ առնել արժան է վասն յանդգնութեան լեզուի և բերանոյ՝ որ հաստատեցաւ 'ի բնութիւնս մարդոյ թարգման միայն առ ընկերն, զի զոր խորհի միտ՝ զնոյն խօսիցի լեզու և բերան, որք թէպէտ այլ և այլ են, բայց կարգեալ են 'ի մի պաշտօն ։

Երկոքեան յոյժ բարի և պիտանի են սոքա, յորժամ զարժանն խօսին, այսինքն՝ խրատեն զընկերս, ուսուցանեն զանգէտս, մխիթարեն զտրտմեալս,

կամ ատելեն առ Աստուած, որհնեն զնա, և գոհա-
նան զնմանէ. իսկ եթէ զանարժանն և զանպատեհն
բարբառեն, կարի վնասակար լինին և չար։

Բ. Զարհուրին ամենայն արարածք յորժամ ի
մտաւոր և յիմացական բնութենէ՝ որպիսի է մարդն,
յառաջ գայցէ հայհոյութիւն կամ անիծաբանու-
թիւն, կամ նզովք, կամ յիշոց, թէ վասն անձին
իւրոյ և թէ վասն այլոց։ Զի ոչ միայն է ընդդէմ
Աստուծոյ, այլ և ընդդէմ բանական բնութեան. զի
բնութիւնն իսկ խորշի՝ մինչ լսէ ի բերանն անկար-
գաբար, և կորուսանէ զօրէնս բնութեան։

Իսկ արդ՝ որպիսի՞ սարսափ և դողումն ոչ պաշա-
րէ զհայհոյիչն բարկասիրտ. գողդոջան ձեռք նորա,
ընդհարկանեն ծունկք, կայծէ սիրտն, շրջի աչքն,
գունաթափի երեսն, փրփրի բերանն, կապկապի լե-
զուն. և ինքն գլխովին 'ի մարդկային սահմանէ օտա-
րացեալ՝ 'ի կերպարանս գիշախանձ գազանաց փո-
խարկի. և զի՞նչ քան զայս թշուառագոյն կիրք՝ ո-
րով վարակին հայհոյիչքն բարկասիրտք։

Ո՞նդ է տեսանել հրէշ իմն այլանդակ՝ կամ ան-
զգայ ոք և անբան, զի խապառ կորուսանէ զխտ-
րողութիւն բարւոյ և չարի։ Ոչ զծնողսն ճանաչէ,
ոչ որդւոց խնայէ, ոչ զսիրելիս և զբարեկամս որոշէ,
այլ զամենեսեան առ հասարակ անարգէ և հայհոյէ,
մինչեւ յառաւել բորբոքմանէն յերկրի ունելով
զբերանն՝ լեզուաւ յերկինս անի. առ հոգեւորս՝ զի
մի ասացից և առ Աստուած, խեղագարեալ յանդգնի։

Ո՛վ աղէտիցս. լեզուք նոցա իբրեւ զսուր երկ-
սայրի մտանեն 'ի սիրտս իւրեանց, և 'ի վէրս մահա-
հարկանեն զհոգիս նոցա, բայց կարծեն յիմարքն
մտօք թէ զայլս վիրաւորեն. ապա կարի զգուշալի է
այս ախտ չար, զի ատելի առնէ Աստուծոյ և մարդկան։

Գ. Հայհոյութիւնն է բան անարգական և անի-

ծից ատայեալ ընդդէմ Աստուծոյ և աստուածայնոց։ Իսկ այս մեծ չար յառաջ գայ երբեմն յանհաւատութենէ. զի անհաւատք ոչ հնազանդեալ օրինաց և կարգադրութեանն Աստուծոյ և կանոնաց սուրբ եկեղեցւոյ և հարցն սրբոց, հակառակ զինքն դնէ և մաքառի ՚ի միտս, և կամ յայտնի յանդգնի ՚ի հայհոյել։

Դ. Իսկ երբեմն յառաջ գայ ՚ի հպարտութենէ. զի հպարտն անհաւան գոլով այլոց՝ խելագարեալ մոլեգնի և աստուածայնոց լինել անհաւան. և սկսանի զաստուածայնոց հետաքրքիր լինել՝ թէ որպէս մի Աստուած՝ և երեք անձինք, և թէ զիարդ ստեղծ զաշխարհս և զայս ՚ի նմա. կամ զինչ յառաջ քան զստեղծագործութիւնս, և զինչ յետոյ, և այլն.

Ե. Երբեմն յառաջ գայ ՚ի յանդգնութենէ. զի հաւանաւոր իմացումն մարդոյ զանհասանելին մտօք քննելով՝ տարակուսեալ սահի ՚ի թերահաւատութիւն։ Եւ քանզի զայս առ ամենեսին յայտնի առնել խիթայ՝ զի մի յանդիմանեսցի կամ պատժեսցի, և խոնարհութեամբ հնազանդիլ օրինացն Աստուծոյ չառնու յանձն, վարանի ՚ի խորհուրդս. ահա սուտ երկայրի՝ որ տանջէ զնա հանապազ առաւել քան զդահիճ անողորմ. և տայ սկսանի մոլորագար խօսիլ զԱստուծոյ և զաստուածայնոց։ Որ թէ և այսու դրականապէս ոչ լինիցի հայհոյիչ, այսինքն ոչ ասիցէ բան ինչ նախատանաց զԱստուծոյ և զաստուածայնոց, սակայն լինի բացասաբար՝ յորժամ առ այնս զոր Աստուած յայտնեաց և եկեղեցի սուրբ կանոնադրեաց, անհաւան լինելով այլայլէ կամ եղծանէ զնոսա։ Զայս ախտ բազումք ախտացան, և ախտանան պատճառաւ հպարտութեան և հետաքրքրութեան։

Զ. Երբեմն յառաջ գայ ՚ի տգիտութենէ. զի

գոլով անանեղծելի աստուածային օրինաց և սահմանադրութեանց, յանդգնի ագիտաբար զեր ի կարծիս դնդել՝ թէ իցէ ճշմարիտ, և զընդդէմն խօսելով կամ հաւատալով՝ լինի հայհոյիչ ։

Ե . Յորժամ եւս յառաջանայ ՚ի հերձուածողութենէ . որովհետեւ արգելուն աստուածային օրէնք զանասնաբար թաւալիլն ՚ի մարմնական հեշտութիւնս, և սա կամի անխտիր մոլել ՚ի նոյն ։

Վասն այսր բառնայ զօրէնս բարիս , և հաստատէ ՚ի միտս իւր զընդդէմն օրինաց . և յանդգնի հայհոյել , թէ չէք ոք դիտակ և քննիչ գործոց մարդկան, ոչ դատաստան և ոչ հատուցումն , որպէս զի անխտիր մարդ յարատեւեսցէ ՚ի պարշ և ՚ի մոլեկան հեշտութիւնս ։

Ը . Յորժամ յառաջ գայ ՚ի տրտմութենէ . զի սաշարեալ ոք ՚ի տրտմական կրից , և ոչ կարելով դատանել մխիթարութիւն , վարանի ՚ի միտս ։

Ուստի վասն զի առատ տրտմութեան թուլացուցիչ է և դանդաղ , պատճառէ զթանձրութիւն մտաց , մանաւանդ եթէ իցէ ախտակիրն անճաշակ յիմաստից սուրբ գրոց . զի եթէ իմաստուն ոք լինէր , յորդորէր վիշտս և անկանէր՝ ոչ մնայր անմխիթար . վասն որոյ իբր յանել շաւիղ արգելեալ սկսանի յուսահատիլ , յորմէ ճանապարհորդէ առ հայհոյութիւնն ասելով թէ ընդէր էած Աստուած զչարիքս զայսոսիկ ՚ի վերայ իմ ։

Թ . Յորժամ եւս յառաջ գայ ՚ի սաստիկ կսկծանաց՝ վասն մահուան սիրելեաց , թէ զաւակ իցէ , թէ ամուսին , կամ եղբայր , կամ ծնող . զի խօսի զհայհոյութիւնս՝ թէ ընդէր Աստուած ոչ պահեաց զայն ՚ի մահուանէ , արդեօք ո՞չ եւս զայլ ոք արժանի մեռանելոյ, և այլն ։ Յայս մոլորութիւն յաճախ զահավիժին անմիտ կանայք , մանաւանդ եթէ իցէ

զհետեւեալ որդեկցելովն՝ յառաջագոյ հրամանքս։

Այլ նախկին պարտ է զգուշել զայս անդրան կիրս. զի եւ ունի չէ ՚ի ձեռս ճար ազատութեան, առաջ հնազանդիլն ՚ի կամս հրամայողին՝ է եւս փրկութեան. եւ պարգեւադէ չէք այլ դեղ ՚ի բժշկել զայսպիսի ախտ՝ բայց ՚ի հնազանդութենէ. եւ յատուկ ածոյին կամացն հնազանդութենէ։

Բանզի զի՞նչ շահի յայնժամ հայհոյէս լեզուն, բայց եթէ յաւելուլ զցաւս ՚ի վերայ ցաւոց։ Տէր կենդանի մահու Աստուած է, յորժամ կամեցաւ՝ ետ, եւ երբ կամեցաւ՝ էառ. դու ով ոգւոցդ եւ ընդդէմ կամացն Աստուծոյ բարբառոյդ, զի՞նչ կարուսեր. զի որ բարձաւ ՚ի քէն, ոչ էր քո՝ այլ Տեառն. եթէ Տէրն էառ զիւրն, ընդէ՞ր տրտնջես եւ հայհոյես. ո՞չ ապաքէն կարէ նա յորժամ կամի՝ եւ զքեզ ՚ի կենաց բառնալ.

Ապաքէն ոչ է բնաւ պարտ ՚ի վերայ մեռելոց անյուսաբար ողբալ եւ կոծել իբրեւ զհեթանոսս, եւ զԱստուած բարկացուցանել անարժան բանիւք հայհոյութեամբ.

Ժ. Երրորդ եւս յառաջ գայ ՚ի կամակորութենէ. եւ այս չար եւս է, զի կամակորութիւնն ծնանի ՚ի հպարտութենէ եւ ՚ի տգիտութենէ, յերկուց չար ծնողաց՝ դուստր չարագոյն. Զի կամակորաց է յատուկ, զոր միանգամ ուսուցանեն բանիւ կամ գրով՝ ոչ յեւս նահանջել, այլ սնոտի փաստիւք ՚ի նոյն յամառել։

Վասն որոյ բազումք անկան ՚ի բազում աղանդս եւ հերձուածութիւնս, մանաւանդ թէ ՚ի հայհոյութիւնս ընդդէմ Աստուծոյ եւ կանոնաց սուրբ եկեղեցւոյ. որք եթէ բառնային զախտ կամակորութեան, փութով ծանուցէին զուղիղ եւ զողջամիտ ճշմարտութիւնն.

ԺԱ. Նաեւ ուրեք զի յառաջ գայ ՚ի բարկութե-

նէ . զի բարկացեալն երբեմն այնքան խելացնոր մո-
լեգնութեամբ կատաղի՝ մինչեւ անկանել ՚ի հայհո-
յութիւնս , և զանձկայելս և զանձհաւանս խորտակել
միայն բարբառովն ։

Նա թէպէտ այսպիսիք զկնի անցանելոյ բարկու-
թեան բոցոյ՝ ճանաչեն զվրիպակին զոր արարին և
զղջան , սակայն անուանին հայհոյիչք . զի մեղան մե-
ծապէս առ մարդիկ և առ Աստուած ։

ՃԲ. Ողորմելի և որքան անմխիթար ողբոց արժանի
են նոքա , որք գործեցուցանեն զբերանս յիշոց ան-
ուանեալ անմիջելի հայհոյութեամբ ։ Օրինակ է ,
զի ՚ի տեսանելն այնպիսի աղտեղութիւնս զորս խօ-
սին՝ ՚ի բաց խորշին , բայց բանիւ ՚ի նոյն բերին . ու-
ւմղ ամչութեան մնայց այնոցիկ որոց բերանք նոցա
լի են յիշոցօք ։

ՃԳ. Մարդիկ զոր ուտեն և զոր ըմպեն՝ քաջ ըն-
տրեն զնոսա , իսկ զայն զոր խօսին՝ որպէս ոչ կամին
ընտրել . զի այս է մարդավայելուչ , թէ զոր խօսի ոք՝
իցէ բարի , ընտիր , օգտակար և մարդկութեան
արժանի ։ Իսկ կերակրոց ընտրութիւնք ոչ այնչափ է
գործ բանականի՝ որքան զգայականի . զի անասունք՝
թռչունք և գազանք անգամ ունին խտրութիւն կե-
րակրոց առաւել քան զմարդիկ ։ Վասն զի մարդիկ
երբեմն յախտամոլս առ ամենայն ինչ խոնարհին ու-
տել , իսկ անբանք ոչ բնաւ բերին յայն ուտել՝ ան
որ բնութիւնն ոչ առաջնորդեաց նոցա ։

Արդ երբեմն որ զանվայելս բարբառի՝ որպիսի է յիշոյն ,
եղծանէ զօրէնս մարդկութեան , և առաւել քան զան-
բանս գտանի , մանաւանդ զի կամաւ ՚ի նոյն բերի .
վասն որոյ յամենայնի վասս և անարգ են յիշոցատուք ,
յորոց որպէս ՚ի թլուատոր քարբից պարտ է ՚ի բաց
կալ ։

ՃԴ. Հայհոյիչք և յիշոցատուք զինչ արդեօք

ձանձիր 'ի խօսելոյ զանազանաս. զայս ոչ է պարտ յայտ-
[illegible] թէ Պերիկլէս խակ հայհոյչաց. Աչք [illegible]
[illegible] այլ մոլութիւնք թէպէտ են չար և գարշ և
ատելի, բայց է 'ի նոսա՝ որ հեշտացուցանէ, է՝ որ
զերծ ինչ յաւելու յինքն, և է՝ որ զիմն բառնայ յայլ-
մէ, և այնու վրէժս առնու. իսկ յիշոցն և ոչ մի ինչ
զիմացանէ առնէ. Զի յիշոց տալով ոչ հեշտանայ մարդ,
ոչ զեր ինչ ստանայ, և ոչ յայլմէ զեր ինչ բառնայ,
[illegible] խռովութեան ինքն ըստ ինքեան տանջի. որքան
[illegible] կիրքն; այնքան սաստկանայ յիշոցն. և որ-
[illegible] յիշոցն, այնքան բորբոքի կիրքն։
Արդ սակայն զկայ առնուն տեղս, կամ երբ գաղա-
փին [illegible] յերեկոյանալ տունջեան, կամ յառաւ-
[illegible] գիշերայն, և կամ 'ի թմբկանալ և 'ի նուաղ-
մել որոնից իւրեանց։

ժԵ. [illegible] Ոչ [illegible] նկանէր յիշոց տալ, երանի թէ զուռ-
[illegible] նորա խակոյն հատանէր 'ի բերանն կարէլին՝ զի լուէր
թէ [illegible] խօսի։ Արդարեւ եթէ ինքն յիշոցատուն
[illegible] հայհոյութիւնն, վաղվաղակի առ ամօ-
թոյն հարկանէր զբերան իւր. Նա է բերան համբ
[illegible] քան բանախօս և անմաքուր։

ժԶ. Որ միանգամ յանձնէ 'ի գործ ինչ կամ 'ի
բանս, նովին գտանայ յունայնութիւն, և ունայնու-
թիւնն փոխի յերկրորդ բնութիւն. Աստի որ առնոր
է յիշոց տալ, ոչ կարէ յայնմանէ յետս կալ. այլ զոր
ինչ խօսի՝ խառնէ ընդ նմին զբանս պղծեղիս, կամ
զանպատշաճս և անվայել զբայցս, որ այն ինքն է յիշոց։
Նոյնպէս պարտ է մարդոյ բանաւորի զայնպի ի չար
սովորութիւնն տակաւ առ տակաւ մոռանալ, և ըզ-
[illegible] կշռել զբանս և զխօսս, զի մի վերստին
[illegible] անկանիցի։

ժԷ. Ի սակի յիշոցաց է և այն՝ որ 'ի քաղաքական
կենցաղավարութեան զանպարկեշտս խօսին. և թէ-

դեռ . մինչ տակաւին չէ՝ յիշեց ինչ առնել ․ այլ ինքն թէ զուարճախօսութիւն ինչ առնել , բայց անխոհեմութեանն լինին յիշատակաւ ։ Եւ այս ոչ փոքր չարիք զի զառաջնոցն յիշելով՝ պատասխանատուի և մեծին կեղծ խօսողին և կեղծ լսողին ։

Այս պարտ է հեռի կալ յայսպիսի անհամեստ խօսակցութենէ , զի մի՛ անզգուշաբար սահեսցին ի յիշատակութիւն ։

ԺԸ. Ծնողք վարպետք և ուսուցիչք ինչ և իցէ արհեստից , պարտին զնախահաս մանկունս խրատել և զգուշել , զի մի ընտելասցին ասել կամ լսել յիշոց . զի թարմ համակ նոցա դիւրագայթ է յայս ախտ ; և 'ի մանկական տիս 'ի նոյն սովորեալ՝ կամ ոչ երբէք կամ դժուարաւ մոռանան ։

Այս ոչ միայն է գործ արժանի վարձուց զայսպիսիս խրատել և յանդիմանել . այլ և մեծ աստուածպաշտութիւն . և եթէ ոք կարող գոլով զանց առնէ , ընդ նմին լինի մեղակից ։

ԺԹ. Մեծ ամբարշտութեան մնայ այնոց ծնողաց , որք զաւակաց իւրեանց նորոգ սկսելոց 'ի խօսել , մինչ հազիւ կարեն զբառս ինչ թոթովախօս լեզուաւ կակազել , ուսուցանեն նոցա յիշոց տալ ։ Անմեղ տղայն չունի կարողութիւն ընտրել զբարի և զչար , զոր ինչ լսէ՝ զայն ուսանի , ուստի մինչ զբառս ինչ անզգուշաբար բարբառի , անմիտ ծնողն բերանաբաց եղեալ ծիծաղի . և յորդորէ անդրէն երկրորդել զնոյն ։

Մինչ պատանեակս , դեռ մանուկն է կաթնակեր , ծնողքն առնեն զնա գազան գիշակեր . զինչ տայցէ լինել նոցա այնպիսի ողորմելի մանուկն 'ի վախճանի , բայց եթէ հայհոյիչ ։

Այս խնայեցէք , ով ծնողք , անձանց և զաւակաց ձերոց , և ուսուցէք նոցա 'ի մանկութենէ զբարիս խօսել , զի եղիցին բարեմարդիկ ։

Ժ. Պարտ է ամենայն մարդոյ՝ մանաւանդ որոց ուխտեալ է հայր, զաւակ ունել պիտանի, և չասել ինչ անպիտանեն զայսս. կամ յիշեալ աստուծոյ նախախնամութեան, մանկանց և երկրագործութեան. զի բազմութիւնք հասարակ նոցա բաւականութեան կարողի՛ց զոր ինչ ՚ի մեծածաւա-նից լերին և տեղեաց՝ զայն ուսանիցին, և այնմ յարմա-րել կենաց.

Նա այս օրէնք են մարդոյ, զի յերկրիք ցանկան նախանձիլ աշխատութեան, մանաւանդ թէ անցանել զնոքօք. այսպէս յորժամ փոքունք զանազանեն շատ ՚ի մեծաց ըստ կամ զկարենին, ՚ի հարկէ ուսանելին զնոսա, և յաւե-լուն և նկլեանք ՚ի վերայ.

Նա եթէ հայրն առանց աշխատորդի մտադրութեան ու չարն, այլս որդին աշխատողական ՚ի հօրէն ՚ի նորին չաղ՝ յորդանմնկարգութեան առաքինան ոչ վերածիդա-ցէ. արդարութեան չէք այնու հետեւ յայս բարեկարգու-թեան նորա. Քանզի՝ զկարգ կարգաւորեալ նա գործել պիտոյն՝ որ ուսեալ է ՚ի մանկութեան դպրոցս, բայց այնմ. «Եթէ փոփոխեսցէ հնդիկ զմորթ իւր, և ինձ զխայտուցս իւր, և դուք կարող լինիցիք գործել բա-րութիւս, ուսեալքդ զչարիս.» Երեմ. ԺԳ. 23.

Եւ պատճառ չարեաց է մոլեկան վարք և անխոհեմ գնացք մեծագունից.

ԺԱ. Նորահաս մանկունք ՚ի հասակակցաց եւս ու-սանին զչարիս և զյիշոցս, յորժամ ՚ի մի ժողովեալ ՚ի տան կամ ՚ի փողոցս՝ զեզերին խաղալ մանկաբար. Այսպէս արդ որ կամի զաւակին իւրում տանել զբարիս, մի թողցէ զնա խօսել կամ խաղալ ընդ չարս. և մի առանձին առաքեսցէ զնա յամենայն տեղիս, զի մի մաքրութիւն մնասցէ նորա բնաւորեսցի. զի հասարակ մանկութեան է հեշտ թողլ աղխտակ, յոր միանգամ դրոշմի ինչ, մնայ անել.

Մանկայն պարտ է և յայժ վայելուչ թերահաս մանկ-

կանխեց լինել ձայն և հոգևորական ծնողաց՝ վարժապետութեանց և ուսուցչաց իւրեանց, և մի ըստ անզգամութեանց լքանել ընդդէմ խրատուց նոցա, այլ թէ ոչ՝ ինքեանք լինին պատուհասի արժանի իւրեանց ։

ԻԲ. Մի՛ մոռասցէ զգլուխս այնպիսի ծնողաց՝ որք բանիւ երկաթոյ զանէծս թափեն ՚ի գլուխս որդւոցն իւրեանց. Զի՞նչ չարիս ոչ մաղթեն Աստուծոյ գալ ՚ի վերայ զաւակաց՝ մինչ բարկութեամբ բորբոքին. զի են որք խնդրեն հառաչմամբ սրտի զկեանս նոցա ՚ի լուծ ոյ աչաց. են որք մաղթեն գտանել ձեռաց՝ նոցին կամ թերանոյն. գտանին և ոմանք որք զայլ ևս մեծամեծ չարիս հայցեն, մինչև ըղձանալ և մահուան որդւոց իւրեանց. և զի՞նչ չար առաւել քան զայս ո՞չ ասպարէն այս է անձամբ զանձն անիծանելոյ

Գազանք և անասունք, և թռչունք նկատմամբ առ սոսա՝ գթածագոյնք ևս են ՚ի ծնունդս իւրեանց որք և բազում անգամ առ գործոց ձագուց ՚ի մահ մանեն. իսկ մարդիկ անագորոյնք՝ զոր երկանամբ ծնան, և աշխատանօք սնուցին, կամին ՚ի վայրկեան ժամանակի կորուսանել ։

Այն որդիք անհնազանդք բարկացուցանեն զծնողս սեպհական անիծիւք և չարամաղթութեամբ ոչ ուղղին անհնազանդք, այլ օրհնութեամբ և բարեմաղթութեամբ՝ խրատուք և յորդորանօք ։ Քանզի որդի անհնազանդ և կամակոր՝ է չար, և դու որ ծնող ես՝ մաղթես զչար ՚ի վերայ չարի, այսպէս կամիս առնել զնա ամենաչար. արդ՝ խնդրեա որդւոյդ զշնորհս և զուղղութիւն Աստուծոյ, որով չարն փոխարկեսցի ՚ի բարի ։

ԻԳ. Եթէ Աստուած զամենայն խնդիրս բարկացող մարդոյ կատարէր, բազումք ՚ի նոցանէ առ օրին անզգաստանալոյն. որք ՚ի զայրանալն իւրեանց կորնչին և ընդ անկարութեան զաւակաց, վաղվաղակի աղաչեն

զնոյն քաղաքաւ ։ և զօտարն ամփոփիւք զմեծ խնդրեն վասն նոցա ։ Են և ոմանք որք զժամանակաւորսն քաղցրեն՝ Թէ անձինս ստանել զնոքօք ։ և են որք զմահաբերս հրեշտակէն զանագանեն՝ Թէ. ոչ առնու զհոգին նոցա ։

Եւ Թէպէտ Աստուած վասն անպատ զԹշուառութեան խաչոյ ոչ լինի ձայնի նոցա, և ոչ կատարէ զայնմանիկ անմիտաց և անարժան խնդրուածս ։ բայց յորժամ զնա ծախեն ի նոյն, բազմիցս բառնայ զնոսա յայնկապանս 'ի պատուոյ ծնողաց նոցա ։

Եւ Թէպէտ զզեան յարձակալ և լան և կոծեն և 'ի Թուխս հանմակին, այլ որ շահ յորդոց ամանի ։ զի որ զի խաւարանց զնոյ անդ արձ 'ի տուն իւր յաւիտենից ։

Գուանելին և ոմանք յանմիտ ծնողաց, որք յանդգնեն եւս արտաքել զԱստուծոյ, զի երբեմն զորդիս իւրեանց 'ի կենաց ։ Մել հայհոյական բանիւք և անզգամբին անզգամութեան, մարդիկ 'ի փոխմանէ ըստ կամս իւրեանց կամիս փոփոխել և զկամս Աստուծոյ զորինքն է՝ զԱստուած 'ի կամս իւրեանց խոնարհեցուցանել ։

Ոմանք՝ միայն 'ի պահպանութիւն զաւակաց են կարօտեալ առնել զնոսա բարեմարդիկս, և ոչ եԹէ ազատանել կամ կեցուցանել ըստ կամս իւրեանց ։ զի մահ և կեանք 'ի ձեռին Աստուծոյ են ։ սոքա մեծամէն մեղանչեն մարդիկ, որք խնդրեն զմահ վասն նոցա՝ որոց ոչ են տեարք ։

Իսկ դու, ով ծնող, եԹէ անաստիճ իցէ զաւակդ, պարտաւորագիծ աչօք յաղօԹս կաց առ Աստուած՝ առաջ նմա շնորհ և զգաստութիւն ։ և որ ինչ վայելէ ընդ մարդկորէն առնել՝ եԹէ սաստ և եԹէ խրատ ։ այլ անձանձիր զի շահեսցիս զնա ։ Այլ եԹէ ոչ շահի և զգաստանայ, սրտառուչ պաղատանօք յանձնեա Աստուծոյ առնել որ կամի, զի գուցէ սանձիւ է ընդ 'ի պատժէ, որում պարտ իցէ հանդերձել ։ առաքել զի

[illegible] զմտաց [illegible] 'ի [illegible] կատարեալ զմիտս [illegible] և [illegible] նորա շնորհօք խորհուրդ տայէ նմա զգաստութիւն։

[illegible]

«Ի նոյն [illegible] զգեստ [illegible] և [illegible]» մերժեա 'ի քէն. Առակ. Դ. 24.

«Որ խօսի, 'ի բերան իւր՝ զանձն իւր շինէ. իսկ որ մարգարէանայ [illegible]» [illegible] Ա. Կոր. ԺԴ. 4.

«Փառք [illegible]» [illegible] Յովհ. [illegible]

---

# ԳԼՈՒԽ ԺԶ.

## ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Ա. ԶԱՐՀՈՒՐԵԼԵԱՑ զարհուրելի չար անուանել զմատնութիւնն ոչ է անդէպ, զի է հաւաքումն ամենայն սատանայի չարեաց. քանզի գտանի 'ի նմա ստախօսութիւն, սուտ վկայութիւն, նախանձ, բարկութիւն, ագահութիւն, թշնամութիւն, ատելութիւն, քինախնդրութիւն, եւս և ապաշնորհութիւն։

Եւ աչա այսքան դառն չարեաց 'ի թիւնից մօրէ հպարտութեան ծնանին. զի եթէ չէր հպարտ թէ և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Բ. [illegible] [illegible] ուսուցանէ. զայս օրինակ և առաքեալն դպա[illegible] նոյն

խնձնձրու՝ կարծէ թէ զայր մատնէ ՚ի տուգանս կամ ՚ի տանջանս կամ ՚ի մահ. բայց մատնեալն հատուցանելով տուգանաց՝ ըզհատոյց իւր կեցուցանէ, իսկ մատնիչն անդէն մատնի ՚ի կորուստ։ Սատանայ՝ անդ զի որ մատնէ զոք ՚ի չար ինչ, ՚ի նոյն չար անկանի և ինքն, քան այլոք։ Գուբն զոր փորեաց, ՚ի նոյն անկցի զոր գործեաց։

Գ. Որ վասն ոխակալութեան մատնէ՝ զի վրէժս առնիցէ ՚ի նմանէ, յորմէ կրեալ իցէ զինչ ինչ կամ զնաս, զդատաստանն Աստուծոյ առ ինքն յափշտակէ և կամակորութեամբ նորա քանդեալ յաւխարհէ. քանզի գրեալ է, թէ «Իմ է վրէժխնդրութիւն։» Հռովմ. ԺԲ. 19։ Եւ թէ «Զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում։» Յովհ. Ե. 22։

Արդ, ով մարդ, եթէ առնանես զդատաստան քո ձեռամբ բռնաւորաց, ոչ միայն ինչ Աստուծոյ դատել զայն որ մերձաւորն քեզ, բայց եթէ զքեզ զի անհամբեր եղեր, և ոչ յանձնեցեր Աստուծոյ դատաստանութեան, կամ ոչ հաւատայցեր տեսչութեանն Աստուծոյ։ Զի եթէ հաւատայիր թէ Աստուած գիտէ, և դատէ զգործս մարդկան, և հատուցանէ իւրաքանչիւրոց ըստ խորհրդոց ըստ բանից և ըստ գործոց՝ աստ և ՚ի հանդերձեալն, ոչ խնդրէիր զվրէժս, և ոչ մատնէիր զընկերն ՚ի ձեռս անյագ բռնաւորաց, և արկանէիր ՚ի տուգանս, այլ յանձն առնէիր Աստուծոյ՝ առնել զդատաստան որպէս և կամի։

Դ. Որ վասն արդար իրաւանց ինչ տանի զոք ՚ի դատաստան, զիրաւունս պահանջելով յերկրաւոր դատաւորէ կամ իշխանէ՝ որոց յանձնեալ է կշիռ արդարութեան ըստ կարգադրութեանն Աստուծոյ ՚ի վերայ երկրի, և անդ եթէ զպարտաւորեալ զդատելին՝ զընդդիմեալն իւրեւ զեղեալ բարութեամբ, յայնժամ առնէ զմարդկութիւն։ Զի արդարութիւնն պահանջէ՝

միայն ըստ կոչման եղելոյ ճշմարտութեանն փախչել. և
հնազանդել վճռոյ դատաստանին ։

Այս թէ որ ընդ հրաւիրաց փառաց քաղցրացեալ
զատութիւն՝ զի խաղաղ յաղթեսցէ հակառակորդին,
բարձ զամենայն կարաւանեն զխռովութիւն, և նորա
տաւորի ։

Ե. Ոչ դառնաբերկաշշեկ է և ծոյլ, չէ ինչ պաղատել
ընել նմա և մանկունս, որովհետև ոչ աշխարհի՝ ի վերայ
տակս ինչ, մանանէ զանմեղս՝ զի աղ նորա ցուցանելով։
Ոչ չէ մարդ բանական, այլ արտաքնագոյն գազան,
որ սպանանէ ընդունա. զերագոյն խոր՝ և տարեալ զա
րեան նորա ։ Ամենայն երանէ ՚ի բարձրագոյն
մանկունս հօրն շահի զատաւորին, և բարձր
զամ ձեռնտուութեան արձակի անարգութեան
ամենայն տուգանաց պարտաւոր ։ Ել զամենայն
ոչ ՚ի հարկաւոր պէտս իւր կայրէ ՚ի գործ ընել.
փառնէ յանառակութիւնս, որով կրկնի չարութեան
այժմ, մի՝ զի վասն արծաթոյ զերջայր իւր մանկունս
երկրորդ՝ զի առեալ դրամովք զպարկս գործեսցէ ։

Զ. Մանկունք յանձնականի մանկանն գերեալք և
զծանօթս քան զօտարս, զի բանք նոցա և գործք ծա
նօթ են սոցա ։ Մի՛ արտաքոյ. վարժեսցի գազանք
զիւրեանս պահել ընդ որս ընդերեանսն, բայց ասացին
թէ չայլ ոչ ունէ զիւր դրացին ։

Այս ընդ որոց դատի նա որ զհանապազորդ և զօր
դաւկից եղբայրն իւր՝ կամ զուստր եկեղեցին մանէ
քահանայից, յայտ է թէ զՅուդային ունի զբաժին,
զի որպէս նա զգլուխն եկեղեցւոյ զՏէրն մատնեաց,
սոյն օրինակ և սա զեկեղեցին և զքրիստոնեայս, զ
բոյլ և զՔրիստոս մատնէ ։

Ել զինչ շահեցաւ Յուդայ, բայց եթէ զկո
րուստ յաւիտենից. զի յարծաթոյն ոչ օգտեցաւ ,
և ՚ի կենաց պակասեցաւ ։ Նոյնպէս զինի կեղծաւորս

կեանք մեծամեծս, զի ընդ երջանկական արժանաւորութեան փոխ-րաւանել և զհոգին իւր ։

Է. Աստուածային շաղակրատն անդիտութեամբ գնդի և մեծամեծս. զի յայլ և յանձնական նկատմամբ 'ի խառն յայտնել զգաղափարս ինչ ուրեք ; որ և անկեալ 'ի ըմբռնս բանաւորաց՝ 'ի բաժնի արկանեն և առածեն ։ և անձն յիմար շառախօսն անզգուշութեամբ հեղով երբեք պարզամտաբար պնդուն զոր կարեաց մանուկն ։ Իմաստնոյն է առն բանաւորի զգուշանալ 'ի խօսս, զի մի ինչ իմ ինչ ընդունիցի ։

Ը. Աստուածաբանութիւն է և նոյն ճշմարտութեան աստուածաբանել մեծամեծս, որպէս զի նա զոր իմաստն նախահանեսցի ; կամ յիմարութեան անկեալ ծնանի ինչ կրեսցէ ։ Եւ այս պարծ է սրբութեան թիւն կենդանութեան ։ քանզի նախ սրբանալ 'ի սրբ-ութիւն մտաց ուրուք զոր ասէ, և ապա զնոսա նորա կատարելագործէ ։ և սակայն այս սրբութիւն ոչ է մարդ չար առաջի Աստուծոյ և մարդկան ըստ զարմանութիւնն իրական ։

Թ. Եւ նա որք վասն իշխանութեան մանուկն զանգարան ; զի յիմարանս կորզեսցեն զիշխանու-թիւն նորա . սակայն մեծամեծս խաբին, զի կամ իւ-րեանց ոչ հասանիցին իշխանութեանն որում ցանկային և կամ ոչ վայելեն յանդորրու յիշխանութեանն, զոր յափշտակեցին ։

Ժ. Եւ նա չարաչար մարմնութիւն է՝ զգայնոյն խորհուրդս որ հաւատացաւ ումեք իբրև հաւատա-րիմ խորհրդականի յայտնել այլոց, որով ոչ ամենայն մեռ և կործանեալ բարեկաց յառաջ եկին և յառաջ գան միշտ ։

ԺԱ. Մանկունք ոչ միայն յաղագս մանկանց են վասն և ամենայն ; այլ և այնոցիկ որոց մեռանին ։

Եւ թէպէտ ընտանեօք առ երեսս չարաչարութեան և

զամէն զմտածմունս, բայց 'ի միում զատանն անունք. և միա՛ որպէս և են իսկ. զի որ այլոց չար կամի, ինքն ոչ է մարդ բարի. սակայն և ինքեանք բանաւորք ընդունական յանձն մատնողէ, զի մի և զինքեանս այլոց մատնեսցեն ։

ԺԲ. Մատնիչ համարի և այն, որ մինչ տեսանէ զեղբայրն իւր 'ի յանցանս ինչ՝ անխոհեմութեամբ հրապարակէ, և արկանէ զնա 'ի լեզուս հասարակաց. Նա եթէ կամի զերծուցանել զնա յորոգայթէ մեղաց՝ զոր ինքն չէ բաւական հանել, ծանուսցէ 'ի ծածուկ հոգևոր առաջնորդին կամ խոստովանահօր. և կամ միայն 'ի խոհեմ և խորհրդապահ բարեկամաց. որպէս զի խրատեսցեն կամ յանդիմանեսցեն 'ի նոցանէ՝ ըստ աստուածային յանցաւորն, և ինքն վարձուց պարգևաւորեսցի. զի որ դարձուսցէ զմեղաւոր 'ի չար ճանապարհէ, փրկեսցէ զհոգի իւր 'ի մահուանէ. Յակ. Ե. Ի.

---

«Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ մնասցէ. և որ մեղ զնէ տարապարտուց՝ ոչ ապրեսցի ։» Առակ. ԺԹ. 5.

«Կերակրողին կոյծականաց, և փայտ հրոյ. և այր բանսարկու 'ի յուզել խռովութիւն ։» Առակ. ԻԶ. 21.

«Ի բաց ընկեցէք զսուտութիւն. խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք ։» Եփես. Դ. 25.

---

# ԳԼՈՒԽ ԺԷ.

## ԽՌՈՎՈՒԹԻՒՆ

Ա. ԲԱԶՈՒՄ վնասակար չարիք գործին 'ի չարաբարոյից, որոց լինին վրէժխնդիր ոչ միայն զաւաւորք և բանաւորք՝ այլ և լռողք. որպիսի են շնութիւն, գողութիւն, սպանութիւն, և այլն. Նու է

ժամ իւրաքանչիւր յոյժ ազգի, քաղաքի և ժողովրդեան, մեծաց և փոքունց, արանց և կանանց, յաճախեալ ի մարդիկ, և ոչ որ լինի վրէժխնդիր։ Երկարէ. նմանի այն ախտ մաշաբերական ախտի, որ ի ներքուստ հիւծեալ մաշէ, և ոչ որ իմանայ ի մօտաւորաց իւրայոց [illegible]։

[illegible] ոչ այն իցէ արդեօք։ Ահա նա է զոր խռովութեան մարդկան առ միմեանս, որ վասն կարգի կատարելոյ զայն արդէն առ բազումս իբր հաստատեալ իբր առաքինութիւն, ոչ փոյթ իմն է ումեք բառնալ զնա ի միջոյ։

Զի վասնզի հեշտիւ դատելի մարդ, դժուարէ ոչ բնաւ զոր ոչ իցէ ընդ ումեք խռովեալ. ով թշնամութիւնս [illegible] խռովեալ, և խռովեցուցանէ [illegible] վասն [illegible] զհանդարտութիւն, և [illegible] [illegible] ի միտս անձանց ձերոց։

Բ. Խռովութիւնն սովորաբար լինի ի մէջ սիրելեաց և ծանօթից՝ քան ի մէջ օտարաց և անծանօթից. զի օտարն և անծանօթ ոք ի գործել զչար ինչ, թէպէտ և բազում տանէ զնա և զգործս նորա. այլ ոչ այս խռովութեան պահէ ընդ նմա, զի ոչ առ իւրեանս վերաբերի այն, այլ միայն ճանաչէ զանօրէնն և զզուշանայ ի նմանէ։

Իսկ ի մէջ սիրելեաց և ծանօթից վասն այնր լինի խռովութիւն, զի խօսք կամ գործք նոցա հակառակ կամաց նոցա, ըստ այնմ. «Եթէ թշնամին իմ նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելին իմ մեծաբանեալ էր ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք ի նմանէ. իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։» Սաղմ. ԾԴ. 13. 14։ Եւ ահա յայսմ աղբերէ բղխի խռովութիւնն։

Նախ պարտ է քննել զպատճառն խռովութեան, եթէ իրաւամբ իցէ արդեօք՝ թէ յանիրաւի

արդ՝ եթէ իրաւունս ունի մին 'ի վերայ միւսոյն, ոչ է արժան խռովիլ, այլ դատաստանաւ արդարութեան խնդրել, և յայնժամ ոչ առնի խռովութիւն՝ այլ արդարութիւն. իսկ եթէ չունի իրաւունս, ահա ընդդիմոյր խռովի և 'ի դուրս առանձի.

Գ. Եթէ մարդիկ ճանաչէին զունայնութիւն մարդոյ հաստատեալ 'ի սնապարծութեան և 'ի դիւրաբեկ մեծամեծս, ոչ երբեք խռովէին ընդ միմեանս՝ այլ ներէին միմեանց. զի և խնդրեմք զոլով 'ի նոյն բնութենէ, զի հարկէ սխալին երբեմն՝ չասացից թէ բազում անգամ.

Նայս զարմանք այս է, զի ամենեքեան կամիմք թէ այլք լինիցին կատարեալք, և խնդրեմք ոչ ինչ հոգալ զանձանց կատարելութենէ. Արդ՝ թէ բազում է լինել այր կատարեալ և անսխալ, ընդէ՞ր դու ոչ ջանաս լինել. ապա յայտ է, թէ ոչ նա՝ այլ դու ինքն դատաւոր անիրաւ:

Նաև զի եթէ նա արար զպակասութիւն ինչ, և դու ծանեար զայն, մի խռովիր, այլ քո կատարելութեամբ ուղղեա զպակասութիւնս նորա, կամ յաղթեա նմա՝ մնալով անխռով, զոր եթէ [illegible] կարես առնել. ապա 'ի նմանէ խռովիս դու, և խռովեցուցանես զընկերդ:

Դ. Իմն երևս, զի սա 'ի զբաղանելն 'ի մեծագոյն վնասու է՝ բանադատ առնել զը ընդ ինչ վնասակար լինաց խնդիր, ընդ որ խռովի բարկացեալն. բայց որ ամբարտ զայն՝ ոչ կարէր չառնել. հայեցեալ 'ի մեծագոյն վնասն՝ որ հարկաւ ունէր յառաջ գալ անտի. Նայս արարեալ էր խոհեմական բարկացեալն յաւելուածոյ մեծն՝ զանձն աստուածապաշտ խռովիլ.

Ե. Հաշտարար աստուածաշնորհեալ 'ի խռովիլ. զի յաերեւն՝ ոչ հաւանեսցին, և հանդիպեսցի յաղթեն ոչ ստանան, վասն որոյ զարգանալ խաղաղութեան յառաջեալ՝ վաղ առնելին և վերջ առնելին զաւազակն.

[illegible] են և ամենքը որք կարեն [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Է. Խոնարհութիւնն լինի 'ի հաւասարէ առ հաւասարս. իսկ 'ի մեծէ առ փոքրն և 'ի փոքուէ առ մեծըն՝ ոչ լինի տիրապէս, զի նիւթ խոնարհութեանն գտանի 'ի հակառակութեան կանոնց, որք կարեն փոփոխակի ընդդէմ կալ միմեանց։

Որդ՝ եթէ մեծն հակառակի և անարդար գտանի առ փոքրն, առ ի բռնաւորութիւն կամ զրկողութիւն. և եթէ փոքրն առնէ զնոյն, առ ի յանդգնութիւն կամ խարդախութիւն. այս միայն առ հաւասարս լինի խոնարհութիւն։

Ը. Խոնարհին պատճառի 'ի տկարութենէ և 'ի փոքրոգութենէ. զի զօրեղն յայտնապէս վիճէ, և վասն իւր յաղթել կարենի, և յաղթէ հակառակին թէ իրաւամբ և թէ անիրաւութեամբ։ Իսկ տկարն ոչ կարացեալ երբէք ընդդէմ զինուլ խոնարհի միշտ յաղթելեացն [illegible] առ յամենեսին գտանգանէ, [illegible] յաշխարհս 'ի լինելոյ փոքրոգի։

Թ. Այր խորախորհուրդ [illegible] [illegible] [illegible] [illegible] միշտ 'ի [illegible] կալ 'ի [illegible] [illegible], յորժամ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] և այս ոչ է [illegible] [illegible] կամ խոնարհութիւն՝ [illegible] [illegible].

Ժ. [illegible] միշտ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] խոհականկից լինել և սեղանակից. ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] թեան արհամարհի. [illegible] [illegible] [illegible] [illegible]

էր բարի ։ Ո՛չ ի մարդն քաղցրութեան իւրումէ զգա-
րի և արժանի՛ գովութեան , այլ այն Թէպէտ կամիք 'ի կործել
խոնարհ զոր՝ զմիտս և զանձն բնաւ . յորժամ արժանի՛ է խոր-
հիլ և Հեռանալ ի բարեաց 'ի պատճառս չարեաց .

Ժ . Մեծամեծ խոնարհութեանցն քաղցրացեալ անձամբ
պատճառ է՝ 'ի չնչին իրաց , արդ եւ մեծամեծ երկեւելոյ
ի փորձառութեանց կեանս . Այլ որ կամի մտանել ընդ
ամենեսին Հաշտ և անխռով , պարտական լինի մինչեւ
ցհոգի վիրաւորս՝ զի մի ծանրեսցի խոնարհութեան իւր
'ի միջի .

ԺԱ . Եթէ արդեօք այնքան անհանգիստ և խստա-
սիրտ ոք , որ մերձաւորաց խռովեալ ընդ ամենեցուն՝ ոչ կա-
րէք կամեսցի ներել և Հաշտիլ , մանաւանդ ընդ այ-
նոսիկ՝ որ խոնարհեալ աղաչէ , միջնորդս 'ի մէջ արկա-
նէ , և խնդրէ զխաղաղութիւն .

Արդարեւ ով ոք և իցէ այն որ Համեցեալ Հաշ-
տիլ՝ կարօտանայ զայրացն և զպատիւ իւր՝ առաւել
եւս զՀոգի իւր . զի զ'ի յատուած բարեկացուցանէ , որ
կամի զխոնարհութիւն ամենեցուն .

Այլ եթէ պնդիցէ այնպիսին՝ եթէ իցէ տէր
անձին և յօժարութեան իւրոյ , յայնժամ առաւել
եւս պարտ էր արագ ողջունել զՀաշտութիւն , զի
իբրեւ այր քաջ զյաղթանակն փորձուց կայեսցէ 'ի
գլուխ . Այլ ոչ կամեցողին Հաշտիլ՝ ցուցանէ թէ չէ
տէր անձին , այլ ծառայ և անզօր 'ի նուաճել զկիրս իւր .

ԺԲ . Են ոմանք զժնեայ ոխակալք , որ 'ի խռովիլ
ընդ ումեք այնքան յամառին , մինչեւ ժամ պարա-
պոյ խնդրել վրէժս առնուլ . Եւ այս է ախտ դիւա-
կան . և ախտացեալքն ոմանք կարի անողորմ են , և
անարժան աստուածային ողորմութեան . պատժեսցե-
ան անողորմին անողորմ դատաստան ընկալցի է . Տես .
Յակ . Բ . 13 . Վասն զի որքան և յանիրաւի վշտա-
ցեալ իցէ ոք յումեքէ , պարտ է նմա ողորմել և նե-

բնել իբրեւ մարդկային տկար բնութեան մխծանելւ-լոյ, եւ ոչ յերկնաւորաւն օրհնել 'ի մեզ.

Աւասիկ ախտակալն նման է խանձառուելոյ 'ի հուր. զի որպէս խանձառուեալն փշաւն այրեցածին ոչ կարօտանայ, այսպէս եւ ախտակալն զխութ ատելութեանն ոչ հանէ 'ի սրտէ, որով խիր անշիջանելի հրով տոչորի իւրն՝ եւ տոչորէ զայն ընդ որ ախտայ. վասն որոյ ախտակալն միշտ է անհանգիստ եւ խռովեալ.

ԺԳ. Ներել ընկերաց անիրաւութեանց՝ է նշան արիական ոգւոյ. զի որ խռովի ընդ ուրեք, հակառակ-հերունել թէ յայտնեմանէ ուրի ընկերաց յանիրաւութի դիւրաւ լինի: Նա որ անփոյթ լինի եւ ներէ, ցուցանէ զինքն կարող եւ արի, զի կարաց յաղթել թշնամւոյն, եւ մնայ անդորրամիտ եւ անխռով:

ԺԴ. Քրիստոնեայ խռովաէր՝ որ զխաս քինու ծրարեալ 'ի սրտի առէ զերդայն իւր, զանձն իւր դատապարտէ՝ յորժամ զտէրունականն աղօթսն առէ: Հարկ է մեզ կամ սիրել զթշնամիս մեր, կամ ատել զանձինս մեր: Ոչ է արժան ատել զոք, բայց միայն զդեւս: Դատապարտելոց միայն է ատել զմիմեանս:

ԺԵ. Ներէ մեզ Աստուած, եթէ ներեմք այլոց: Չէք ունելու յայտնի նշան դատապարտութեան, որպէս ոչ ներելն, ըստ այնմ. «Եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր:» Մատթ. Զ. 15.

---

«Որ կալցէ կռիւս յերեսս բարեկամի իւրոյ, պատուհասեսցէ հանդերձ զաւակօք իւրովք:» Առակ. ԻԹ. 5.

«Եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն . . . երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուսցես զպատարագն քո:» Մատթ. Ե. 24.

«Մի զոք հայհոյել. անկռիւս լինել. հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել:» Տիտ. Գ. 2.

# ԳԼՈՒԽ ԺԸ

## ՍՏՈՒԹԻՒՆ

Ա. ԱՂԲԻՒՐ ամենայն չարեաց կոչել զստութիւն ոչ է անդէպ, որովհետեւ բառնայ զճշմարտութիւն՝ որ է աղբիւր ամենայն բարեաց։ Նա թէպէտ ստութիւնն չունի էութիւն, զի է պակասութիւն ճշմարտութեան, բայց զմարդն՝ որ ունի էութիւն բնականապէս, փոխարկէ յոչ էութիւն բարոյապէս. քանզի ամենայն ոք ոչ ինչ համարի զստասացն.

Այս որ զայլ ինչ խօսի քան զոր 'ի միտս ունի՝ է խաբեբայ դաւաճան և կեղծաւոր, զի զատանն իւրեւ զճշմարիտ կեղծէ, զի խաբեսցէ և դաւաճանեսցէ. վասն որոյ կորուսանէ զպարզ և զազատական իւր, և լինի անարգ և արհամարհ յաչս ամենեցուն.

Բ. Ընդդէմ մարդկութեան է ստել խօսել, որովհետեւ հակառակի ճանաչման մտաց խօսքն. այս որ գիտէ զուղիղն և այլայլէ ստութեամբ, կեղծէ զիւր բնութիւնն, և զանձն իւր խաբէ. Ատի ընդ բնութեան մաքառի, և ընդդէմ զինի մտացն ճշմարտութեան։ Նա արդարեւ չէք չար առնել քան զայս, բայց չէք յաւէտ յանձնաւեալ քան զայն առ մարդիկ։

Գ. Թէպէտ յամենայնի արժանի անարգանաց են ստասացք, բայց յորժամ դատաւորք, դիտողք, մեծատունք և իշխանք ստեն, այնչափ առաւելու անարգանք նոցա, մինչեւ լինել նոցա հրէշ ինչ ալանդական և զարհուրելի, և ատդնաց փառանդի 'ի մէջ աշխարհի; որպէս թէ արեգակն խաւարաւ պատեսցի։

Քանզի մինչ հասարակութիւնն ստանայ 'ի ստասաց իշխանաւորաց՝ դժնէ առ դատաւորս, առ

գիտունս, առ իշխանս, և առ մեծատունս՝ գտա-
նել 'ի նոսա զարդարութիւն ճշմարտութեան. իսկ
եթէ նոքին ստութեան պաշտօնեայ լինիցին, առ որս
արդեօք զրկեալքն բողոքեսցեն պահանջել զիրա-
ւունս և զդատաստան։

[illegible] Այս կարգի իրաւանց բարեմիտ իմաստից առեալ
[illegible] մեծատունն ստացուածոց. վասն զի աղքատն
[illegible] անկանի և անգէտն յանդգնութեամբ մատնե-
[illegible] ստել, իսկ որ փարթամն է և գիտունն՝ յայնժամ
[illegible] ձեռնարկել յախորժելին մարդկանցն [illegible]
[illegible] ամենեքեան. հետևի կայ 'ի ստու-
թենէ, մանաւանդ իշխանք և դատաւորք և գիտունք,
[illegible] յառաջ նախատանաց լինիցի յարգ և պատիւ
[illegible]։

[illegible] Որ ոչ կամի անկանիլ 'ի ստութիւն, ապա-
ւինեսցի, զի ճշմարտութիւնն մի է և ստութիւ-
նքն բազում. այս շատախօսք որք և բազմաբանք ոչ
կարեն [illegible] միալ 'ի ստութենէ։

[illegible] Է մարդ՝ որ խստութիւն և պարծանս վայե-
լչականս ստութեամբ ծառայեցուցանել 'ի հանդիսի բազ-
մութեան, բայց ոչ գիտէ թէ այնու առաւել երևե-
լի է քան զայլս 'ի խոնհեմագունից և [illegible]։

Այս բարի է սակաւ և պարզ բանիւք առաջի
[illegible]ել զճշմարիտն, քան ունայնաբանութեամբ յա-
ճախել 'ի խօսս, և ստասաց երևիլ և պարսաւիլ։

[illegible] [illegible] ստութեամբ խաբել զպարզա-
միտսն 'ի [illegible] վաճառս, պատուել չար է քան
[illegible]ութիւնն։ Ո՛վ ամենայն որ զգու-
շանալ [illegible]; իսկ ստաբանն զչարութիւնն
[illegible] ճշմարտութեան կերպարանաւ՝ երևի ան-
[illegible], և անզգամ քան զառաջինն կեղծաւորէ և
[illegible]ցանէ զոր ոք և 'ի ձեռս բերցէ։

[illegible] [illegible] պատիր գողոց և աւազակաց ամենեցուն

յայտնի գոլով․ բազումք յետոյ հաւաստեաւ յայտնեսցի ստու-
թե․ բայց վասն զի ստախօսն պատիր բանիւք ներքոյ
բազում ցեալ զանձն՝ բազում անգամ միոյ, երկրորդական
առ ժամս ; վասն որոյ և բազումք ՚ի մերկ կողմն [illegible]
ձախսեն առ այն ; և համարձակ յանդուգն [illegible]

Բայց անձնային ստախօս բան ստացումեալ [illegible]
զոր իրաւանց․ ՚ի վախճանի կէս զգուշացի [illegible]
թէպէտ ոչ ամենեցուն բացայայտ երեւի, որոյ [illegible]
վաղուց ոչ զգան բազումք թէ խղճէ այն ՚ի պատմա-
ռքս ստութեան ։

Նոյն բան ծանիցեն այնպիսիք, զի չեք չար որ
ոչ ընդ իւր կրեսցէ զկշիռ վրէժխնդրութեան եւ-
պատմոյ եթէ ՚ի մարդկանէ և եթէ յԱստուծոյ․ զի
պատիժն է ծանրութիւն յանցանաց, և որպէս ոչ
գոյ անձնոց ծանրութեան մարմին, նոյնպէս ոչ գոյ
չար ինչ որ մնասցէ անպատիժ ։

Է․ Պարտին ծնողք զզաւակունս իւրեանց և
վարժապետք զաշակերտս հաստատել ՚ի մանկութե-
նէ ՚ի ճշմարտութեան, և առնել երեւեցուցանել
նոցա զստութիւնն․ զի որ միանգամ ՚ի թարմ հասա-
կի ոգայութեան ունիցի սովոր, անկարծիք ՚ի մե-
ծութեանն լինի ծայրագոյն ստաւոր և ծայրագոյն
չար ։ Ո՛ ՚ի ունակացեալ սովորութիւնն դառնայ յերկ-
րորդ բնութիւն, և ընդ անձն հանդերձ ածէ [illegible]
ունակութիւնքն եթէ բարի և եթէ չար ։ [illegible]
որով իւիք պարտաւոր մանկանց [illegible] ; [illegible]
տաղի և ՚ի մեծանալ [illegible] ։

Ը․ Ի մարդ որ սուտ ոչ միայն ստախօսութիւն կոչի,
այլ վասն որոյ զպատիւ և զհանդէս յանձնի [illegible]
սա է չնաշխարհիկ [illegible], որ ՚ի գիշերի [illegible]
պէս հեղինակ արծաթի [illegible]
ցուցանէ ։

Նոյն [illegible] ՚ի մարդկանէ [illegible]

որ զայն փութալն զէն հեղուլ արծաթի կարծիցէ ։ Այսպէս դու, ով տնտեսդ և մատակարարդ, մի կարծեր թէ մեծացուցես ոչ խնայման զառատութիւն քո, կարող քան զինուն արտաքսել զու զզաւազն 'ի սատարանացն ։

Ամեն որոց փափաքանաց պատուոյ և համբաւոյ չքի կամեիր, տառանս զանազան և զանազանութիւն զոր այն կամիս, զօսցէ և զպատիւ խնչ եթէ ունիս՝ զայն եւս կորուսանես ։

Նոյա որ ցանկայ ճշմարիտ պատուոյ և բարի համբաւոյ, յամենայնի լինիցի ուղղախօս . քանզի ճշմարտախօսից՝ նոյն իսկ ճշմարտութիւնն է փառք և պատիւ և զարդ անկողոպտելի ։

Թ. Միշտ և յամենայնի խօսել ճշմարտն, բայց տաւակել յայնժամ՝ յորժամ լուռ ու չնորհալի կենաց լսեն ; և ոչ համառականին զբաղմունքս նորա՝ մինչ մեծամեծս բարբառոյ զանձնէ խուռն 'ի մէջ բազմութեան ։

Սակայն լռութիւն նոցա և եւս տեղի տայ սուտ բանին առ անմեղներ արշաւել յասպարէզ անպատժան պարծանաց ստութեան, մինչեւ ինքնին զլորել 'ի վիհս խայտառակութեան . որովհետեւ 'ի բազում բանս իւր յայտնի լինին ստութիւնք նորա . զի որ 'ի սկզբան կարի երրորդ ճամարտակէ, 'ի մէջն թուլնայ, և 'ի վախճանի խայտառ լքանի ։

Նոյա պարտ է ճշմարտախօս լինել միշտ, առաւել եւս 'ի հանդիսի բազմութեան, և այն՝ կարճ և համառօտ բանիւ, զի մի տաղտկացին լսողք ։

Ժ. Աղօթութիւնն առաւել թագաւորէ 'ի տղէտս և 'ի մոլիս, քանզի տղէտն սուտ, զի զուգեղութիւն իւրոյ տգիտութեան ծածկեսցէ, և որպէս զի այնու խնայութիւն համբաւեսցի, իսկ այս է՝ զհեղն տուժով զեղերեսել . և մոլին սուտ և ճոխաբանէ, զի բարի անուն թուեսցի ։ Նայց պարտ էր նոցա 'ի մեա պահել

զիմաստութիւն զայն տուած, թէ այնպիսին խոնարհեալ՝ զուարթ են յառաքինութենէ.

Ահա սոքա և նմանիք սոցա կամեցող զազնուութիւնս խորհրդոց ծածկել ստութեամբ, և եւս զարշելի առնեն զանձինս։ Այսպէս յամենայնի ամենայն իրաց խորշելի է ի ստութենէ.

ԺԱ. Որ միանգամ ստէ ի բանս իւր, ստիպի միշտ ստել, որով խաբէ ստորանայ ի ճշմարտութենէ, և լինի ստութեան շտեմարան։ Քանզի առ ի ծածկել զնախկին ստութիւնն՝ ջանայ հնարել զայլ ստութ մի խորամանկեալ, և ի պատրուակել զերկրորդն՝ երրորդ է զստան, նոյնպէս աշխատի զայլս և զայն քօղարկել. և համապատասխան դիմէ ի միջոց ստոյ առ միւս ստութ, մինչև լինել նմա խաբս առաւօտեան. վասն այս ջանալի է ի սկզբան անդ չտալ երբէք ստել.

ԺԲ. Ի յետին անարգութիւն անկանի ստախօսն երբեմն ստէ զայնմանէ՝ որոյ ճշմարտութիւնն յայտնեալ լուեալ է ունկնդրին. սակայն ոչ ինչ զգուշացեալ՝ ստէ և եւս ընդ ի նմանէ, զի քաջ հասու լինի սրտի առաւութեան նորա։ Աստի երբեմն պարզամիտ ձևացեալ՝ սխալանի զայլ ինչ առարկայ առաջարկել, զի դրդեսցէ զամենայն տարապ սրտի նորա։

Իսկ և ստողն յիմարեալ՝ խնդայ ի միտս թէ խաբեաց, վասն որոյ գուն գործէ յաւելուլ զստ ի վերայ ստոյն՝ առ ի հաստատել զբան իւր։

Աճէ խայտառակութեան թշուառ ստախօսին, և պատրուակեալ հնարից նորամիտ ունկնդրին. մին գողացոյց զգողունին յանգէտս, և կարծէ թէ առ ինքն ունի դեռ. և միւսն գողացեալ զգաղտնիս նորա, բայց ոչ է յայտ թէ ոյք գող։

Ամօթ է տեսանել երկոցունց սոցա զարմանալի հնարս յեցուածս առ միմեանս, և խնդրամտութիւն չհնազանդ ծուպատիրս. զի ոմն յաղթահարեալ խորամանկեաւ,

[illegible] [illegible] [illegible] ամենօրին և զպարտաւորութիւնն [illegible]
մին յաղթեաց և էառ զյաղթանակն, բայց սակայն
[illegible] [illegible] յաղթեաց և ընկճեաց։

Վասն զի եթէ յանէծ [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
նէ համապատասխանութիւնն, ո այլ եւս նմա [illegible]
բանից նորա. [illegible] բարութը [illegible] որ [illegible] մեծ
ստանալոյն զայն միայն շնչի., զի յորժամ [illegible]
[illegible], ոչ որ համառօտ նմա։

ԾԴ. Բարութը է մարդոյ ՚ի մեզ [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible]։

Մարդ [illegible] [illegible] մեծութեամբ [illegible]
[illegible] [illegible], կամ չահեցեալ ինչ. բայց այն [illegible]
է չար [illegible] [illegible], [illegible] ՚ի հարկէ [illegible]
[illegible] [illegible] [illegible], և զառ ընդ [illegible]
[illegible]. և [illegible] ոչ կարէս զատանել [illegible]
նութիւն ՚ի մարդկանէ։

Արդ են բարի է ուղիղն խօսել, և զմարդիկ ՚ի
կարեկցութիւն բերել ածել, բան սահել [illegible] անձ-
նեցուն լինել. զի այս օրէն է մարդկան, օգնական լի-
նել ուղղախօսին, և ձեռնտուութեան արձակել զպատախօսն։

ԾԴ. Այլ է արժան յառաջ [illegible] խորհել սուտ-
ութիւն, զի [illegible] արդար չունի փոխ յանիրաւ խա-
բէութիւն. և որ անիրաւութեամբ համարէ զինչ
ոչ այլ ինչ շահի յայնմանէ՝ բայց եթէ լինել անի-
րաւ. իսկ անիրաւութեամբ ժողովեալ ինչքն՝ հող-
մով փոխձեռութեան [illegible], որպէս [illegible] բաշխ[illegible] է
տեսանել։

Ապա եթէ ասիցէ ոք, անհնար է առանց ստութեան առեւտրութիւնս առնել, յայտ սխալի. զի այնու կամի զամենեսեան ծառայ ստութեան գրել, և զճշմարտութիւնն յաշխարհէ տարագրել. սակայն առեւտրութիւնն ուղղախօսութեամբ առնել արդիւնաւոր է և յաջող՝ քան ստութեամբ և խաբէութեամբ. Զի որ միանգամ ճշմարտախօս համբաւի, ամենեքեան ցանկան ընդ նմա առեւտրութիւնս առնել, որով առաւել շահի և փարթամանայ, և մնան ինչք նորա առ յետնորդս իւր ՚ի ժառանգութիւն անկողոպուտ, զորոյ փորձն քաջ ճանաչեն արդարաբան վաճառականք և արհեստաւորք։

Նա զի՝ նոքին իսկ ստաբանք յանկանին իւրեանց ՚ի վաճառս, հարկաւորք ՚ի խղճէ միոյ՝ վկայեն անշուշտ թէ վասն այնորիկ հասանեն յայս յետին չքաւորութիւնս, և կամ տագնապ դառնութեան զմերօք պաշարեալ, զի ստութեամբ ժողովեցաք զինչս, և այն ինչքն կորեան, և մեք մնացաք պարտապան հատուցման առաջի Աստուծոյ և մարդկան։

Ապաքէն եթէ կամի ոք յարատեւել ՚ի բարօրութեան, և տեսանել զվաստակոց յաջողութիւն, մի երբէք խօսեսցի ստ ՚ի գնել և ՚ի վաճառել. այլ եղիցի բան նորա՝ այոն այո, և ոչն ոչ, ըստ Տեառն պատուիրանի։ Արդարեւ դիւրաւ կատարէր այս, եթէ ամենեքեան յայս միտս համաձայնէին։

ԺԵ. Զինչ ստախօսն միայն անպատիժ, ՚ի մարդկանէ, յայնժամ առաւել երկիցէ՝ զի ունի պատժել յԱստուծոյ. ըստ որում ստութիւնն է ընդդէմ ճշմարտութեան. և որ ընդդէմ է ճշմարտութեան, է ընդդէմ Աստուծոյ, զի Աստուած է ճշմարտութիւն։

Ապա ծանիցեն ստաբանք թէ՝ քանի չար է ստութիւնն, և զգուշասցին։

«Պիղծ են առաջի Տեառն շրթունք սուտք, իսկ որ առնէ զհաւատս՝ ընդունելի է նմա։» Առակ. ԺԲ. 22։

«Չար բիծ 'ի մարդ ստութիւն։ Այլ է գողութիւն, և այլ է ստութիւն, և երկոքեան զկորուստ ժառանգեսցեն։» Սիրաք. Ի. 26 ։ 27։

«Ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա, յորժամ խօսիցի՝ ստեա՛ յիւրոց անտի խօսի, զի սուտ է և հայր նորա։» Յովհ. Ը. 44։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

### ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ա. Է չար ինչ՝ որ միայն գործողին է չար, որպէս տրտմութիւն, արտասուք, յուսահատութիւն, ձանձրոյթ, ծուլութիւն, դատարկութիւն, և այլն։ Ո՛ր իսկ երբեմն ցեց գոյանան յանձն մարդոյ, և տապալմնեն զնա աղքն աղքի վնասուք. և թէ անցցեն 'ի վնաս այլոց, այն է պատահաբար. և անուղղակի. որպէս 'ի մեռանիլ ուրուք 'ի տրտմութենէ, վնասին ըստ խիղճ ընտանիք նորա մնալով անխնամ։

Եւ է չար՝ որ ոչ միայն գործողին է չար, այլ նաև այլոց. զի ուղղակի առ այլս հասանի չարութեան նորա ներգործութիւն, որպէս սպանութիւն, գողութիւն, շնութիւն, խաբէութիւն, և այլն։ Յորոց անկի է և սուտ վկայութիւնն. զի ոչ միայն սուտ վկայն վնասի, այլ և նա՝ վասն որոյ է վկայութիւնն։

Աստի յայտնապէս կրկնապատկին ոճրագործութեան եղերունք. զի սուտ վկայն կամաւ զանձն մատնէ 'ի չարիս, և զայլս բռնի քարշէ 'ի վնաս. այսպէս կրկին պատժոյ արժանի է նա, մի՝ վասն իւր անձին, երկրորդ՝ վասն այլոց որոց վնասեաց։ Նա զի՝ ոչ է անգէտ՝ թէ և ընկալցի զբազմապատիկ պատիժս, զի օրինակաւ իւրով եղեւ առաջնորդ այլոց՝ յանդգնիլ

Դ. նոյն մեծամեծացն զայս առնէ՝ վկայից [illegible]

Բ. Սուտ վկայութիւն և ոչ ճշմարտութեան [illegible] չարա-
նման [illegible] զոր ընդդէմ յանձն [illegible], որ [illegible]
և առաջին։ Իսկ եթէ սուտ վկայութեամբ մատնեսցէ
այլոց, մատնելով զընկերն 'ի տուգանս, կամ 'ի տան-
ջանս, կամ 'ի մահ, և կամ համբաւ չար զոր մերձ
յանիրաւի հաշակեսցէ, ոչ կարէ զթողութիւն զը-
տանել չափիլ, բայց միայն նա խնդրէ սուտ վկայն,
յորժամ կրեսցէ զպատիժ պատուհասի, որպէս և 'ի
հանդերձեալն՝ ըստ արդար դատաստանութեանն Աս-
տուծոյ։

Գ. Վկայութիւնն սահմանեցաւ վասն արդարու-
թեան. զի յորժամ դատաւորն լուեալ երկուց կող-
մանց՝ զդատախազին և զամբաստանելոյն, որք միայնակ
պնդեն հաւաստել զիրաւունս իւրեանց, պարտաւորի տա-
րակուսանօք որոշել զարդարն և զիրաւացին. յանձն
առնէ վկայից հաւատարմութեան. ահա կշիռն ար-
դարութեան եանց 'ի ձեռս վկայից։

Արդ՝ եթէ վկայքն թիւրեսցեն զմիտս կշռոյն, և
ստութեամբ վկայեսցեն 'ի դատաստանի, յանցանեն
զօրինաց արդարութեան և լինին պարտապան. զի Մովսէս
որպէս 'ի հրամայականս խրատուածս [illegible]
վկայն, զերեսուն 'ի թիկունս [illegible]
[illegible]. և կարգ խրատեալ, զի որ [illegible]
[illegible], արժանի է զի դարձցին [illegible]
թիկունս նորա։

Դ. Որ վասն կաշառաց վկայէ [illegible]
միայն փախստական [illegible] ընդ [illegible]
մեծամեծ զարդարութիւնն 'ի ծածկութեան [illegible]

Նա բանիւ դատաւորաց [illegible]
տեն, եթէ վկայն է սուտ, [illegible]
[illegible] և [illegible]
'ի դատաստանի, եղեալ արժանի [illegible]

տանելեն այն ելքս ։ Թէ ապացուցանել [illegible] է
ելոյ ։ այլ պահելոյ զնա ամենայն իսկ ։ Այլ յարուցանէ
զզգուշութիւն, զի նա ուղիղ մնացեալ ։ առաքինութեանն
ըստ օրինաց՝ պարտ էր նմա լինել միայնին. իսկ այդ՝ որ
այլ միայնաց միոյն՝ նոյնպէս դատեալ և նա ։

Արդարութիւն որ անմեղ է, և քաղ զխոհէ իւրաքանչիւրոց զիւրն բաշխել, մատնեցաւ ի ձեռն սոսա միոյն, և անկաւ ՚ի ծառայութիւն. որ յաղթենայն ուրեք պարզերեւ փայլէր, առանձին զամօթի կարբան, զի դատի յայտնեալ՝ որում ոչ ծերանչելոց ։

Տեսե՞ր արդեօք որպէս մատնիչ արդարութեան են սոսա միայնք. բայց մի անձնկալքն մեծ անդամին, և խնդրել զանձնայն դատաւորս, վասն զի արդարութիւնն միջարկել եղեալ ՚ի սահմանեալ դատաստանաց, զիտէ առ անսահմանեղծ դատաւորն Աստուած՝ խնդրել զիրաւունս ։ Յայնժամ Աստուած որ ոչ է կարօտ միոյից, ուղղապէս դատէ, և զոսա միայն չարաչար պատժէ, և որ զրկեցան՝ առէր լինի իւրոց իրաւանց ։ Արդարէն երկիցեն սոսա միայնք Աստուծոյ, և դարձցին յանիրաւութենէ ։

Ծ. Ոչ միայն սիրոյ բարեկամութեան միայն [illegible] [illegible]թեան, եղծանէ զօրէնս բնութեան, և ընդդէմ զնայէ առատաձայնին օրինաց. զի օրէնք բնութեանն ուսուցանէ՝ նախ զանձն պահպանել ՚ի չարէ, [illegible] ըստ ձեռնհաս զօրոյ չարեաց և զընկերին պահպանել, և օրէնք առատաձայնին պատուիրեն, սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձն քո ։ Իսկ որ վասն սիրոյ ընկերին [illegible] [illegible] ՚ի դատաստանի, զինքն [illegible] [illegible] չարիս, որով ցուցանէ առաւել սիրել զընկերն՝ քան զանձն իւր. և այս է ընդդէմ օրինաց բնութեան և Աստուծոյ ։

Աղքատութեան [illegible] սիրել զընկերն, և կամիլ նմա [illegible], և արդեանց կատարել, բայց [illegible] [illegible]

մանաւանդ՝ զի մի՛ զանձն իւր պատուժեսցէ, կամ ընդդէմ Աստուծոյ գործեսցէ ինչ. Այս Թշնամիք անձանց և հակառակ Աստուծոյ են, որք 'ի սէր մարդոյ չարաչար մեղանչեն սուտ վկայ լինելով.

Զ. Որ վասն Թշնամութեան իրիք սուտ վկայէ զումեքէ՝ առ 'ի վնասել և յաղթել նմա, փոխանակ նորա ինքն վնասի և յաղթի. Քանզի համարեա Թէ զԹշնամին զրկեաց յիրաւանց, կամ արկ 'ի նեղութիւնս և 'ի տուգանս. սակայն այս ամենայն կիրք և վնասք մարմնաւորք և առօրեայք՝ սակաւ վնասացուցանեն զվնասեալն. զի կամ մոռացեալ լինին անդամբ ժամանակի, և կամ վերջանան մահուամբ. Իսկ սուտ վկային վնասն դառն է և դժնդակ, զի հոգեւոր է և յաւերժական.

Ապաքէն դու, ո՛վ սուտ վկայ, որովհետեւ առաւել քեզ վնասակարորդ գտար քան Թէ Թշնամւոյդ, ուրեմն յաղԹեցար՝ քան Թէ յաղԹեցեր. հապա՛ դադարեաց 'ի չարեացդ. զի մի՛ առաջի Աստուծոյ և մարդկան պատժապարտ լիցիս յաւիտեան.

Է. Ոչ փոքր հանճարոյ և նրբամտութեան պէտս ունի գնալն 'ի սուտ վկայութիւն. զի ոչ է գործ տգիտաց և յիմարաց՝ ըստ ամենայն հարցմանց դատաւորին պատշաճաւոր պատասխանի գտանել: Բայց յաղԹեալ 'ի ճշմարտուԹենէ բազումք հնարագործք պատժին 'ի Թի, կամ յաքսոր, կամ 'ի գան, և կամ յայլ հարուածս, և տակաւին ոչ զգաստանան.

Ո՛հ կամակորուԹեան նոցա և անզգամ լրբուԹեանն. զի եԹէ ապուշ ոմանք էին՝ ոչ յանդգնէին յայս ոճիր, իսկ սոքա այրք ճարպիկ և գործունեայք, ընդէ՞ր զնոյն պանծալի ձիրս բնուԹեան 'ի բարին ոչ 'ի գործ դնեն, և ոչ վաստակին ձեռօք, զի զարդար վաստակս իւրեանց կերիցեն զուարԹերես և առանց մեղաց.

Ո՛վ Քրիստոնեայ ամենայն, մինչեւ յերբ դեգերեալ կաս ի զզուելի սովորութեան վասն անուան երդման թեթեւ խօսս, ցնծացուցանելով զսատանայ, եւ զպարծանս քո կորուսանես. զի ոչ որ չարագոյն մեղաց ամենայնի [illegible]

---

(1) Հաւատա սուտ եմ ընդունելիքն ՍՎ հաւատացեալ ընդ [illegible] Եփր. Իգ. Ժ. [illegible]

(2) « Բորբոքէ ստութեան վկայ անիրաւ, եւ արկանէ դատաստանս ի մէջ եղբարց » Առակ. Զ. 19.

(3) Վկայ սուտ՝ անպատիժ ոչ լիցի. եւ որ բորբոքէ զանիրաւութիւն՝ կորիցէ ». Առակ. ԺԹ. 9.

---

## ԳԼՈՒԽ Ի.

### ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄՆ

Ծ. ԱՄԵՆԱՅՆ ստախօս է անիրաւ, բայց որ երդնու սուտ՝ է անիրաւ եւ ամբարիշտ. զի յորժամ տեսանէ թէ ստախօսութիւնն ոչ ինչ վնասէ, յաւելու ի վերայ եւ զերդումն, որպէս զի մարդիկ բռնեալ զերդումն յանուն Աստուծոյ, հաւատասցեն բանիցն ստասացելոյ:

Մի՛ անարգանելի աղտեղիցս. ստախօսութիւնն բաւ մեղք է չար. եւ յորժամ կցէ ի վերայ իւր զանուանս սուրբ անուանն Աստուծոյ, ծանրանայ չարութիւն նորա, եւ լինի ամենաչար: Զի այս ոչ եթէ յանուանէ Աստուծոյ՝ այլ յիւրմէ անօրէնութենէ, ի կըրելն զորանձնեալն անուանն ահեղ ճշմարտութեան ի վերայ իւր. որպէս բժշկեալ աւելի վտանգեալ ստախօսն ի պայծառութենէ լուսոյ:

Նշանակէ՛ն ի վերայ սուտ զանուանն Աստուծոյ ի վկայ կոչել, է մեծ ամբարշտութիւն. նմին իրի որ

երդնու սուտ, քանզի 'ի գործն անկանի՝ ըմբռնի և զամէն բարիքս.

Բ. Ամբարշտիկ միտք ոչ կարեն զհեշտարար ինչ հաւատալ առնել բարեաց՝ զխնդիր առ Աստուած, որ է կատարելն ճշմարտութիւն և աղբիւր ճշմարտութեանց, զի նոքա հաւատարմագոյն արարածն. Աւան որոց որ երդնուն յանուն Աստուծոյ, զԱստուած վկայ կոչեն ճշմարտութեան իւրեանց. իսկ որ սուտ երդնուն՝ զհեղգերգեալն ճշմարտութեան զԱստուած՝ սուտ վկայ կացուցանէ. և զինչ մեծ ամբարշտութիւն քան զայս.

Գ. Պարտին ծնողք՝ վարժապետք և ամենայն արհեստից ուսուցիչք զմատաղ մանկունս և զերիտասարդս խորշեցուցանել 'ի սուտ խօսութենէ, մանաւանդ 'ի սուտ երդմանէ.

Զի որ միանգամ 'ի չար ախտ ինչ սովորի 'ի մանկութեան անդ, բազում աշխատութեամբ հազիւ զերծանի յայնմանէ 'ի մեծութեանն. Եւ յայժ դըժուարաւ կարէ ազատիլ 'ի ստութենէ և 'ի յերդմանէ, զի ունի գործի զլեզուն, որ է դիւրաշարժ և ամենայն ուրեք պատրաստական. Այլ ազգաւ բազում արթնութեամբ պարտին զգուշանալ ծնողք և դաստիարակք նորաթիթ մանկանց, զի մի՛ սովորեսցին նոքա 'ի ստութիւն և յերդումն.

Զի եթէ որ զերկրաւոր թագաւորս կոչէ 'ի վըկայութիւն վասն չնչին ինչ իրաց, արժանի լինի զատապարտութեան, ապա որքան առաւել որ զերկնաւոր Թագաւորն կոչէ սուտ վկայութեան 'ի վկայութիւն բանից իւրոց. զի ամենայն որ երդնու, կոչէ զԱստուած 'ի վկայութիւն.

Դ. Նախ Թշուառութեանս. են ոմանք որք զերդումն այնքան սիրեն, մինչեւ 'ի խօսիլ ընդ միմեանս զանունն Աստուծոյ յիշեն անխտիր. Եւ զայս առնեն ոչ 'ի պահանջմանէ հարկին, այլ 'ի չար սովո-

բութենէ. զի որ ուսեալ է երդնուլ, ընդ ում և խօսիցի, զինչ և խօսիցի՝ առանց երդման ոչ խօսի։

Կարի յաճախեալ է այս վնասակար սովորութիւն 'ի մէջ ռամկաց և տգիտաց, վասն որոյ անարգ և արհամարհ են յաչս իմաստնոց և բարեմտաց, զի ոչ ոք հաւատայ նոցա։

Ե. Են ոմանք որք 'ի խաղս և 'ի ծաղրաբանութիւնս և 'ի գինեբրբուս վայրապար երդնուն, անխիղճ մտօք յիշելով զահարկու անունն Աստուծոյ։

Արդարեւ չարաչար 'ի հոգի խոցանին՝ և ոչ իմանան. մերկանան 'ի շնորհաց՝ և ոչ արտմին. ընդ դիւաց ընկերանան՝ և ոչ զարհուրին. վա՜յ անզգայ յիմարութեան երդմնահարաց՝ զի կորնչին և ոչ զգան։

Զ. Են մարդիկ որք սովոր են երդնուլ առ հաւատալեան, որպէս 'ի սրբութիւն, 'ի խաչ, յեկեղեցի և յանուն սրբոց. և կամ չարիս մաղթելով նոցա կարդան անձանց, և կամ վկայ կոչեն զստեղծուածս ինչ, զորս Աստուած պարգեւեաց 'ի վայելս մարդկան. և ահա սոքին և որ սոյին են սակի երդմնահարութիւնք՝ են մեղք և անօրէնութիւնք։ Բայց այս է զարմանք, թէ զիա՞րդ մարդիկ ոչ յանդիմանեն զնոսա։

Մի՞ գուցէ վասն առ ամենեսին հասարակ գոլոյ այսոցիկ անկարգութեանց, ոչ համարձակին սաստել միմեանց, զի մի և ինքեանք արժանի յանդիմանութեան գտանիցին, կամ անձամբ զանձինս դատապարտեսցեն։ Եւ կարի քաջ յիրաւի. զի հազիւ արդէն գտանի մարդ՝ որ ազատ լիցի յայսցանէ։ Եւ զի՞նչ դարման առ այս՝ քան խրատել զկրտսերս, և զգուշանալ անձանց, զի մի սայթաքեսցին յայսպիսի վտանգս։

Է. Գտանիցի՞ ոք անմիտ առաւել քան զայն՝ որ 'ի բարկանալ իւրում, կամ ընդ խաղս ինչ, անխո-

հեմ խոստմամբ երդման ընդ Աստուծոյ կամ յաստուածա-ծայինս, և անձին չար մաղթէ՝ եթէ ոչ կատարիցէ։

Այլ յիմարութեամբ, անձամբ անձին զաւեր լի-նի, և ոչ ճանաչէ։ Որպէս եթէ ոք խոստանայ զինչ ինչ բարձրուցանել զպատուիրանս իւր, յայտ առնելով զաս 'ի նմանէ միայն, անդէն փաղփաղակի զերդումն ա-ռանչարկէ։

Մինչ բան զայս առաւել խելագարութիւն. անձնայն որ միջնորդեն 'ի նեղութեան է, խոստանայ և երդնու՝ զի տայցէ, իսկ առ խոստանայ և եր-դնու՝ զի փառաւորեսցէ. առ 'ի կատարել զերդմունս իւր՝ բուռն հարկանէ զայնպիսի գործոց, որոց կա-տարումն ոչ է 'ի ձեռս իւր, և անդրադարձնել ելք նոցա։

Նոյն դիւրին է զգուշանալ յերդմանէ, զի մի առ-վարեալ 'ի նոյն անխոհեմութեան երդնուցու կա-տարել զայն, յորմէ ունի կրել զվնաս բան հոգւոյ և բան մարմնոյ։

---

«Մի երդնուցուք սուտ յանուն իմ, և մի պղծիցէք զանուն սրբու-թեան Աստուծոյ ձերոյ։» Ղեւտ. ԺԹ. 12.

«Եւ զերդումն սուտ մի սիրէք. զի զայն ամենայն ատեցի ասէ Տէր ամենակալ։» Զաքար. Ը. 17.

«Զբերան քո մի ընդելացուսցես յերդումն՝ զի կործանումն մեծ է 'ի նմանէ։» Սիրաք. ԻԳ. 9.

---

## ԳԼՈՒԽ ԻԱ.

### ԿԱԽԱՐԴՔ

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆ է հաւատարմու-թեամբ ծառայել Աստուծոյ 'ի յօժար կամս. և այս ծառայութիւն կատարի հնազանդութեամբ առ

պաշտամանցն. պատուիրանին. որք 'ի սուրբ գիրս
[illegible] Հրաման օրէնք. [illegible]

Ա. Եթէ որ զդիւթէ [illegible] սուրբ գրոց տանէ. Համբերեա-
լէ [illegible] պատուիրանաց. և որ հակառակի
սատանայական պատուիրանաց, կործանէ զաստ-
ուածպաշտութիւնն. և որ կործանանէ զաստուածա-
պաշտութիւնն, հարկաւ հետեւի նմա լինել սա-
տանայական. խորհուրդք գիրք ամենայն իրք սրբե-
լոյ զկախարդութիւնն. ուրեմն կախարդք ընդդէմ
[illegible] աստուածպաշտութեան զօրութեան
[illegible] լինին անիծեալ :

[illegible] Թէպէտ են անպատուեալ, զի ոչ
[illegible] զԱստուած, այլև ոչ զդեւս
պաշտեն, ընդ որում դեւ. ապա կախարդք փառ-
ճար են քան զկռապաշտս, զի գիտեն զԱստուած, և
ոչ կենան՝ այլ զդեւս խոնարհ արկանեն և պաշտօն մա-
տուցանեն, զդեւս կարդան և առ նոսա ապաւինին :

Գ. Որ բարեկամանայ ընդ ատելիս ումեք, է ա-
տելի նմին. իսկ կախարդք բարեկամանան ընդ ատե-
լեաց Աստուծոյ՝ որ են դեւք. ուրեմն կախարդք են
ատելի Աստուծոյ :

Արդ հետեւութեամբ լինին Աստուծոյ ատելի՝
որ գնան առ կախարդս. որովհետեւ ակն ունին բարե-
կամութիւն ինչ գտանել 'ի կախարդական դիւագոր-
ծութենէ, ապա թէ ոչ՝ ոչ երբէք երթային առ նա :

Դ. Դեւք առաւել փոյթ են ձգել զմարդիկ 'ի
կախարդական գործս՝ քան յայլ չարիս. զի թէպէտ
յայլ ամենայն գործս չարութեան կամք դիւին կա-
տարի, այլ ոչ պաշտի. իսկ 'ի կախարդութեան պաշ-
տի դեւն որպէս հեղինակ գործոյն. վասն որոյ այլ
մեղանչումն առնէ զմարդն չարագործ, իսկ սա՝ դիւապաշտ :

Ե. Նշանակէ ամենայն իրօք արժանի դատապարտու-
թեան [illegible] կախարդքն և հետեւողք նոցա :

Ե. Աւելորդ են դնել խմբերկուց յիշատակս ի սմանէ եկեալ խաբէութեանց․ որպէս թէ երկրաչափութիւն յայտնեցաւ․ մինչ ոչ եղեւ վարդապետ մարդկան․ ճշմարտութեան դիւթութիւն եղեւ․ այլ խաբէութեանց ի կարգաւորութիւնս մտանելով առաքինեացն մարդկան, զի յամառեալ մոլորութեամբ կորուսին և շարժեցին․

Արդարեւ որ ի բնական է և ճշմարտութեան կարգաւորեալ, զի մարդ աշխարհի խելք համարելով յոյժ ի բնութենէ․ և որ յայտ է ի նկարագրէ, զբնութեան նիւթ է նմին ճշմարտութեան խաբէութեան կախարդութեան որք ինչ չարաչարեն ունելով դիւաց․ և կերպք և ոտս և խորհրդածութեանց [illegible]

Զ. Մեծագոյն ամբարշտութիւն կարծեն թէ գտանել զայն ճառեսն զոր խաբեբայութեանն ի մարդիկ բազում կոչեն զդիւս․

Նման կախարդութեան արուեստ նոյն․ զի եւ առանց թագաւորութեանն Աստուծոյ ոչ կարէին զոր առնէին, յաւուր․ առնել և հրամանաւ ի բազում ազգաց ճառագայթ յառաջ, և կարօտին զերդոյ և մտաւորութեան բժշկաց․ բայց եթէ ամենևին իցէ գիտու-թեան, այլ ո է յայտնեալ զԱստուած աղաչել, և ընդ սմա քահանայս ունիլ որպէս զի բժշկեսցի։

Եւ որովհետեւ Քրիստոս փրկիչն մեր կարեւոր զզօրութիւն դիւաց, վասն որոյ ոչ կարէ գտանել զայն ի մարդկանէ, այլ որ պատիւ Աստուած․ և այս վասն յանցանաց իւրոց մարդոյ․ և կամ վասն պատճառաց ինչ որ ծածկեալ է ի միտս և անզգուշաց․ այս թէ ոչ զերծեալ նոյն մարդիկ չարաչար տանջէին․ Ահա բժշկութեան որ ի շնորհս իցէ, ոչ եղեւ զերծ զդեւն մերժեալ ի նոյն, ըստ այնմ․ «Նա եւս ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամենայն զօրութիւն թշնամւոյն» Ղուկ․ Ժ․ 19։

Է. Բազում անգամ պատահի հիւանդութիւն

յառաքինութեանց արժան, կամ ՚ի մարդկանէ, կամ ՚ի մեղանչելոյ, կամ ՚ի սատանայէ. Տե՛ս և յայլ բազմաց գիրս պատմութեանց. ուստի և զբանիցն հիւանդք, անձկութիւն զզուանաց մարմնոյն, տարաժամին, Հիւանդ, չարեաց թուականն, ծանօթաց, պատուիրանին, և այլն.

Այլս և որ ասցին նմանեն արտաքս և ատելութիւնք ընդութեան և խառնակութեանց. կարծեացն յեղյեղեալն գեղեցկոյ, երանականութեան, աղանդաւորութեան և անհնարինութեան. Այլ անձինք և թևականութք ՚ի պատուհասին այսպիսեաց ախտից՝ զիմեն նա: կախարդական հնարս. ՚ի ձեռն ատեալէն զհիւանդ դիւս հալածանս, ՚ի ձեռն մահուն զբաղմունս զբանից, և ոչ շահին ինչ բայց եթէ զդատապարտութիւն.

Ը. Հիւանդութիւնն պատահի կամ յԱստուծոյ վասն մեղաց, կամ յինքեան մարդոյ վասն անխոհեմութեան. ընութեան խորոյ, կամ վասն անկարգութեան: երկրորդն ևս. կարծեմն նախ առաւածագին ողնականութեան, երկրորդ՝ բժշկական դեղօրէից. Այս նախ գիտելի է առ Աստուած չերմեռանդն աղօթիւք և ողորմութեամբ, և յետոյ առ բժիշկս. է և հիւանդութիւն իբր բնական՝ որ առ բնական մահուն առաջնորդէ, դեւք անհաղորդ են յայսպիսեաց, ոչ կարեն զօրութեամբ ինչ ընծայել կամ զինաս.

Սակայն ախտաժամիւք ոմանք զայս անհնարին գիտաց զգուշութեան առաջի, թողեալ զբնական դեղօրայս՝ և յայս եթէ Աստուած զզօրութիւն փրկութեան յանձնեալ, և զօրութք անեծաւորան և զկախարդութս, զնոսն առ Նորա անձն և որք ասէին՝ զօգնութիւն հայցել ՚ի նոցանէ. Եւ Աբրահամ մայր է մահացու մեղք և անհաւատութիւն, զի մոռացեալ զապաւէնն կենաց զԱստուածն՝ և զորս Աստուծոյ են կարգեալ, գիմեն առ անօրէնն Աստուծոյ առ դևս, և առ դիւթս պաշտօնեայս նոցա.

Թ. Գրաւեալն և ոմանք զի ասեն, թէ առանձինն ոչ բժշկական դեղորէիւք՝ և ոչ սուրբ աւետարանական բժշկեսցի հիւանդն մեր. զինչ արասցուք, թողու-ցուք զնա անխնամ. անկեալն ՚ի ծով բուռն հար-կանէ զօձից:

Ահա յիմար, քեզ հարկ է միայն աղաչել զԱստուած տալ նմա զառողջութիւն: Իսկ եթէ նա կամեցեալ է՝ զի և եւս մնասցէ ՚ի նոյն հիւանդութեան, ընդ-վայր է տառապիլն քո, և ընդ վայր մեղանչելն՝ դիմե-լով առ կախարդս. դուցէ բարկացուցեալ զԱստուած կամ յերկարաձգէ դառնոյ հիւանդութիւնն և կամ մահաբեր:

Ժ. Ընդ կախարդս դասապարտին նոքա՝ որք այլ և այլ դիւթական գործողութեամբ խմբեն զայլս զանձինս, բանիւքով կամ պարսով և կամ այլ իրք, որպէս թէ զծածուկ ինչ գիտելոց իցեն: Այս ամե-նայն դիւթական հմայութիւնք՝ են դիւաց պատրա-նական ուսումն, որովք զմարդիկ մոլորեցուցանեն:

Այսպիսի ոմանք են բազումք ՚ի չար արուեստից, որք դիւաց բնակարան եղեալ՝ զդիւական աղանդս ուսուցանեն այլոց, և բազում չարեաց լինին պատ-ճառք: Ոչ թէ զչար ինչ կարեն առնել ումեք կամ զբարի, այլ զի առ իւր խաբէութեան լինին ՚ի մէջ մարդկան, և զանձինս ՚ի դատապարտութիւն ածեն ընդ ինքեանս. որպէս որ հաւատայ բանից նոցա: Եւ ընդունի զդիւթական խաբէութիւնսն, մատնի ընդ նոսա ՚ի կորուստ յաւիտենից:

ԺԱ. Դիւթական ինչ է և նուսխայն, զոր և կա-չեն համայլ: ուստի որ կրէ զայն ՚ի վերայ իւր՝ մի և իցէ գրով գրեալ, ընդ կախարդական փաթեթէ հա-մարի, և մեղանչէ գրողն և պահողն. զի այնպիսի դիւթական յուռութք ընդդէմ է սուրբ հաւա-տոյս մերոյ:

... [illegible] մի [illegible] · և 'ի հետ [illegible] [illegible] · [illegible] ։ » Ղևտ․ ԺԹ․ 31 ։

« [illegible] և զԵրէն [illegible] [illegible] [illegible] [illegible] · վասն [illegible] [illegible] · [illegible] դիւթութեանց՝ և [illegible] [illegible] ։ » [illegible] ․ ԺԲ․ 3 ․

# ԳԼՈՒԽ ԻԲ.

## ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ա․ Որպէս խարիսխն յալէկոծութեան պահու պրծուցանէ զնաւն 'ի խորտակմանէ, նոյնպէս և յոյսն 'ի ժամանակս նեղութեան փրկէ զմարդն 'ի վտանգէ ։ Իսկ եթէ խզեսցի առասան յուսոյն, անդէն անկանի մարդն 'ի յորձանս յուսահատութեան․ զի նոյն է խարիսխն 'ի նաւին, և յոյսն 'ի մարդն ։ Ուստի ջանալի է յամենայն նեղութիւնս՝ որք կարեն պատահել ընթացս կենաց, ունել զյոյս անվրդով, զի նովաւ միայն է հնար դիմակալել ամենայն դժուարութեանց 'ի վերայ եկելոց ։

Բ․ Աստուած ոչ տայ զփորձութիւն ինչ առաւել քան զկար մարդոյ․ իսկ յուսահատն մեղադրիչ լինի Աստուծոյ, թէ անզօր քան զկար իւր թողեալ զայ փորձութեան, վասն որոյ չարաչար մեղանչէ ։

Գ․ Յուսահատութիւն յառաջ գայ յանհաւատութենէ գթութեանն Աստուծոյ․ զի յուսահատեալն ոչ ճանաչէ զԱստուած ներող և ողորմած, և կամ պակաս համարի զողորմութիւնն Աստուծոյ քան զմեղս յանցանս իւր՝ ըստ Կայենի, ըստ ասելն, « Մեծ է պատիժն իմ քան զթողուլն զիս ։ » Ծնն․ Դ․ 13․ արդ աղաղակ անմարմնոյ լինի թշուառութեան ։

Դ․ Տգէտք շուտ տարփոյթ են 'ի յուսահատել, զի

ոչ կարեն ՚ի հեզանութիւն փոխանակել զերկրաւորական
թեան, կամ միաբանութիւն ինչ յաստուածութեան։

Ե. Արդարամիտք առ մարմնոյն յաստուածութէ չգիտէ
և թէ զմտաւորութիւն, որով առաւել ...
բացուցանելն զերկին փառաւորելոյ զօ-կեան, իջուցեալն
յառաջով Քրիստոսի հանգերձեալն. կամ թէ թե-
թեւեր նոցա միջոն, կամ փոխանակ ...
վճառեց։ ...

Զ. Մարմնաւորական և հեշտութեան խոկալն անկա-
նեն ՚ի յփառաւորութիւն՝ ենէ հանդիսին փառաց
դաւանութեան. զի ասելով զօրով նոցա յանձնեալն
հանդիսա և հեշտութիւն սպասելով, զոյգն փառաց
բերկրանեն պատերազմ յայտն, և կամ եթէ երկնաւորան-
ընդ ել Ճանապարհի առ փոքր մի զմտաւորութեանն
խոկոյն կարեն յանդիմանեն ... առաջի

Է. Հոգեւորք յաստուածութիւն չգիտաւոր ... միաբանեալ
տանի նոցա վտանգ ինչ ընդդէմ սրբոցն և փառք
ծնունդ իւրեանց. քանզի չկամին նոքա խոնարհիլ առ
աստուածային կարգադրութեան, որ ըստ արժանեացն
չափով արդարութեան պատուիրան է և հաստատեալ է
իւ բարեկամութեան դհատուցման գործոյ։ ...

Ը. Նախախնամք գիւրամէտ են ՚ի յուսադրեալ
թիւն. զի յանիշատակ ՚ի հեռոյ ոչ նկատեն զհետ
Ճան գործոյն. այլ ՚ի պատահել ...
անդ էին գլուխն ՚ի խորս յաստուածաբանութեան ...

Թ. Պատասխանատուական դեր ընդդէմ յաստուածաբանու-
թեան է հաստատուն ՚ի միտս, թէ որքէնք ...
այս է, ոչ ուսմամբ միայն անկիրթ. կամ թէ ...
յառաւել զմեղանս մեղսն անկիրթ, բայց ...
համբերեցին. կամ թէ արդար իրաւամբ ...
հեցաւ այս ինքեան ընդ գործոյ իւրոց ... թէ
ունիս են այս պատերազմ ՚ի հաստուածաբանութ ...
զոր սորվեցաւ է ՚ի կեանս իւրում։ կամ թէ ...

զուամ փորձոյ լեալ արժանի, իսկ միրով առնել և համբերէ նեղութեան։ Կամ թէ՝ յառաջատեսանանելով է այս փորձութիւն կամ գայ, որում պարտ է համբերել։ Կամ թէ՝ համբերելովն բազում քաջի արժանի առնուն, և յաւելուն վարձք իւր։ և յաւաճանեսցին շարագրոյ զօրութեանն։ և յաւելուն պսակք իւր։ Կամ թէ՝ Հնար է և եւս ծանրագոյն փորձ լինել։ Մանաւանդ թէ յինչ և իցէ փորձ՝ պարտ է աղօթիւք դիմել առ Աստուած՝ զի մի յաղթեսցէ, կամ համբերել կարասցէ։ Զի յամենայն այսպիսի քարոզմաս մտածութեանս յուսադրելով փառաբանելոյն՝ ոչ անկանի ՚ի յուսահատութիւն։

Ժ. Եթէ ոչ կամիս յուսահատիլ, մի յօժարեր զսոսա որոց քո այնմ, որ իցէ անհամբերիր ՚ի կրել զնե փորձս, կամ անարի վտանգիւ, կամ անտանելեաց վիճակի դիւրաբեկութիւն եկեղեցւոյ, կամ չէ քնոյ ան-կեալ ՚ի սատանայն։

Բանից այնպիսեաց անդէտ և անփորձ զօրէն թէ-ութեան և տկարութեան փորձանաւորաց և զգուշութեանց՝ այլ ընդ այլս խօսին, և առաւել զայլս զուցանեն զնէրս յուսահատական բանիւք՝ քան թէ բժշկեն։ Զի ոչ գիտեն համոզել զոք ՚ի համբերել, կամ յաղթաբանական քաղցրութեամբ թեթևացուցանել զծանրութիւն կրիցն կամ ցաւոց։ վասն զի որք ոչ են փորձ առեալ նեղութեան և վշտաց, զհետոյ կարասցեն փորձանաւորաց լինել օգնական։

ԺԱ. Մի եւս՝ ոչ է յուսալի լսել զմխիթարութիւն յայնմանէ՝ որ իցէ կարծամիտ, կամ զայրացկոտ, կամ ՚ի բազում խօս զբաղեալ, կամ անձնասէր, կամ կրկին ախտից ինչ պաշարեալ, կամ մարդահաճ։

Վասն զի կարծամիտն ինքնին զլորի ՚ի յուսահատութիւն, զայրացկոտն ոչ կարէ զբաղեալ լինել. զբաղեալն միտք ոչ կարէ պարզ և մեկին տեսանել

զամենայն պարապմունս կրթեն. անձնանուէրք միայն զեւս
օգտաւէտ մասամբ. պաշտպանեալ աղանդիւք՝ զօրով. Միաբա-
նութեան միոյն՝ անխզապահանել զօրաւորութիւն ընդդէմ. Մարդ-
դասուցն անձնիւթ է. ղեկոց այլոց, և աստուածոց կամք
զմիտս նոցա քան զօգուտ.

Սպասաւորք և նմանիք նոցա յանձին կարեն ամր-
յաստուածել առնել քան միաբանել. վասն որոյ չէ
արժան նեղելոց՝ յայտնել նոցա զգործս իւրեանց.

ԺԲ. Յուսահատութիւն հեղինակն է, տագնապէ. որ
Հանդոյն զհամարձակ ձգել ՚ի յուսահատութեան. զի այսպէս
չէ վնասել յանկարծ կարգաւորեն յաւաճնեալ.

Բանիցն եթէ ոչ յայտ միտք անկանին. Հնազ է
զդժնդակն յետս զառնալ և զաւանելն Թագաւորին,
յաւագոյն յայտնութեան Աստուծոյ. կամ որ յաւաղաց
հասակ՝ ընդդէմ զնոյն աստուածային առաքինութեանն.
վասն որոյ յանկարծութեան մեծաց միջոց կարգեալ զգեստ
՚Ի միւսն կողմն մինչ անձնանէ զետեղ որք ՚ի նեղութիւնս իւրեանց
անդէնն արկանէ ՚ի միտս նորա աղօթս ապաշխարութեան՝
աստիճան մխածմունքն՝ որք չեղեն խոր. և ոչ երբէք կարեն
լինել. զի զերծ հնազանդութեան և կարեկից՝ կարծեցեալ ցանկու-
ծանօթութեան և անհնարինս՝ առ ՚ի յետ ծառայել և ընդմէջ
զմիտս փորձանաց նոցա. զի յառաջադրել պարապել.

Սերտն արարող է ամենայնի՝ որք կենդանութեան
յաշխարհի, արթուն ձեռս զգաստ միտս. և չարա-
թելագրութեան զերծին, պարզամիտ ՚Աստուածոյ. և
ապաքէն արդեան նեղութեանց.

ԺԳ. Նա և ամենք՝ որք փախստեամբ միաբանութեան
զմխիթարեալն՝ ՚ի վերայ ասպարիսաց արկանեն
անհեթեթ քանիցս դժուարութեանց, մինչեւ յա-
ռաջատար առնել զինուորս, աղաղակեալ ձայնիւ մտադրել
կամ ապերասան, կամ թշնամի, կամ չարախնդաց և
կամ ՚ի դիւաց շարժեալ:

Զի անդէն ոչ կարելով զմխիթարական բանս ա-

մել՝ զմեղս կամակորն՝ խաւսի ։ Թշնամիքն Հակառակորդաց մանկացուցա-
ցանեն զպարապանաւորաց մեղացս՝ զի պատուեալ փառաւորեցաւ ։
Հայրապետացն կամի՝ զի ասէ յաւանդաւանեալք կոչե-
ցին ; և խնդրն ու բանաւորցն . Հաշտեալն 'ի դիւաց՝ բնու-
թագցն դժուարութեամբ պաշտաւորէ զմիտս մարդկանացն-
լոյս, զի լսելով թշնամութեան այլ 'ի յաւ. այն պատուութենէ ։

Նոքա ոչ է արժան ամենեցունց ու մեր տանել զցաւս ,
զի բացցուք Տեր բժշկել մեղանչականացն . այլ զմխիթարութեամբ
պարտ է յարգանել զպատարագութեան Թիւ, նա կամ զմխիթարս ,
զի փոխէ փառացն՝ բարեկամ՝ յաւիտեան և երկնաւորն
Յ՝աստուածոյ, որպէս զի սրբութեամբ զդատել 'ի մեղաց-
նէ զանկարելութեան և անփոփոխն ։

Ժա . Եղիցի զեղ ընդ քեզ Հայրապետաց ծով ուսմունք ,
խոստովանեալ՝ անձ զխորհուրդ բանին առ ներ փոխադրեցին ,
զի ոչ հասարակ յայտնեսցէ ու զնոյն պատճառաւորաց առ Տէր
Տէրն Յիսուսի ապաշխարութեան զոր . բանիւք խրատեսցէ
զնոյն առ մեր ։ Հայրն ասաց զոր դիտէ՝ զդա նմա ։
Վասն այսր 'ի Թիւ կողմն զգեստ զամենայն անմահութեան
զմեղաւորութեանն յաւագել առնել դրեալ ։ այլ կարող
առնել՝ առ որ ոչ խաւսք կերպարան մեծութեան . այս կամ
մեր Հայրապետաց , զի ընկերացն զու ըստ պատասխանատուն ։

ԺԲ . Եւ զհնազանդս ոչ կարէ կատարողացն յորում մե-
ղանչել և յարմարութեան պատարագացն և իւր , է ծանուցի խե-
լամտաց . բանիւք նա է խոնարհ և կատարեալ , որ յամենե-
նայն դատաստանաց և փոփոխմանց այսր նենգաւորս
Հնարս գտանէ 'ի կատարելութիւն անձին իւրոյ , և
ոչ երբեք յաւանդելով քաղաքէ Ա. Սիոնի ։

---

[1] Եղիցի զանձս Տեառն ամէն կամէք սրբութեան նորա , և մի նե-
ղեղէք զձեզ մեղաւորացն յայնմ . Բթ. 3 .

[2] Օրհնեալ լիցի մարդն որ յուսայ 'ի Տէր ։ և եղիցի Տէր յոյս նորա ։ Երեմ . ԺԷ . 7 .

[3] Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ . զի սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս մեր 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ որ տուաւ մեզ ։ Հռովմ. Ե. 3 .

Ս

# ՀԱՐԳԱՒՈՐ ՄԻՋՆՈՐԴՔ ՓՐԿՈՒԹԵԱՆ

# ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԷԻ

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Ապաշխարութիւն մարդս կարգեալ է ոչ միայն առ վախճան բնական, այլ և առ վախճան գերբնական։ Ի բնական վախճանէն պարտաւորի ուղղել զմիտս և զկամս, և բարեկարգել զներքին բաղձանս ըստ պատշաճի կրից, և զարտաքին գործողութիւնս ըստ յարմարն գործ 'ի կեանս, նկատմամբ եղբարակցաց. ենթակայանալով օրէնքաց մարմնոյ ։ և այս լինի շնորհիւ բարոյական առաքինութեանց, այսինքն արդարութեան, զգաստութեան, խոհեմութեան և բարեխառնութեանց.

Ի գերբնական վախճանէն պարտաւորի ուղղել զմիտս և զկամս և զներգործութիւնս Տեառն, նշանամամբ յաւիտենական երջանկութեան, իբրեւ վախճան Հոգւոյ. և այս լինի երիւք աստուածաբանական առաքինութեամբք. այսինքն՝ հաւատով, յուսով և սիրով։

Բայց քանզի մարդս 'ի մեղանչելն անկեալ զարդարութեան, դիւրաւ հակ է 'ի մոլորութիւնս և յանկարգութիւնս, որով խոտորի նախ 'ի բնականէն վախճանէ իւրմէ, և ապա 'ի գերբնականէն, որ է Աստուած.

ներն 'ի չարիս , ամէն իրի սահմանեաց Տէրն մեր զաւուրս խորհուրդն ապաշխարութեան , զի անկեալքն 'ի մեղս՝ հանդերձելոյն յուսով , և ողորմութեամբ շնորհացն Քրիստոսի՝ ժամանեսցեն յերջանկութիւն և 'ի փառս յաւիտենից կենաց .

Ուստի պատշաճ դատեցաւ խօսել աստանօր դուն ինչ 'ի վերայ ապաշխարութեան , այսինքն՝ զղջման , խոստովանութեան , և վճարման , զի մի՛ ոք 'ի հաւատացելոց մեղուցելոց վհատեալ 'ի հնարից փրկութեան հոգւոյ՝ անյոյս կորիցէ ; այլ առցէ զանձկալ և զառողջարար սպեղանիս և բժշկեսցի :

Բ. Արդ՝ մեղանչելն է դարձուցանել զմիտս և ըզկամս 'ի ծայրագոյն բարւոյն առ ստեղծուածս , որ է ատել կամ արհամարհել զԱստուած , և սիրել զստեղծուածս . զի եթէ ոք նախ ոչ հանցէ զսէրն Աստուծոյ 'ի մտաց , և յարեսցի կամօք 'ի սէր արարածոց , ոչ կարէ մահու չափ մեղանչել :

Իսկ ապաշխարութիւն է լալ ողբալ և աշխարել զհամ մեղացն՝ զորս արար ուղղութեամբ մտաց և թելադրութեամբ կամաց , վասն որոյ նախ պարտ է ապաշխարողին մտօք վերստին դառնալ առ Աստուած , և կամօք յարիլ 'ի սէր Աստուծոյ ; այս է՝ զկորուսեալ սէրն կրկին զգաստել . և այս լինի նախ զղջմամբ .

Զղջումն զգեղումն է սրտին , և յետս նահանջելն յայնմանէ՝ ընդ որում յառաջ միացեալ էր յօժարութեամբ և սիրով միտք և կամք մարդոյն : Այս զղջումն՝ որ պարտի լինել 'ի սէր բարին զանձնայն մարդոյն յուսով ; է նախկին առաքինեան ապաշխարութեան , որով առնէ ոք զմեղս հաստատ յառաջիկութեամբ՝ զի մի այլ ևս մեղիցէ . այլ և յօժար կամօք յանձն առնու կրել զպատիժս 'ի հատուցումն անարգանացն , որով անարգեաց և վշտացոյց զԱստուած , միայն թէ հաշտեսցի Աստուած ընդ նմա :

Գ. Նոյն յանդուգն մեղանչողին որ արհամարհեաց զՄիա-ծնեալ և որդւոց զաւետարանն . ընդ որ ապաշխարողք Աստուծոյ, և Աստուած ասէր խրատելով. վասն զայս կարգի վերակացուք տաճարին խոստովանութեանցն դատաւոր 'ի մէջի, որպէս զի հեղինակութեամբ և կերպեցաւ զմէծն որ 'ի մէջ Աստուծոյ և մեղաւորին՝ բացորոշեցաւ, ըստ այնմ. « Որք յուդայց՝ (խոստովանահայրք), դատ ապարանքն ընդ ձեզ և ընդ ազգի ձերոյ Եսայ. Ե. 5 :

Դ. Նմին իրի զղջացողն հարկաւոր 'ի խորհեն՝ իւրոյ յատակնականէ կամ յորդորմանէ աղօթարութեան, այլ յատենան խոստովանութեան, ուր 'ի կողմանէ Աստուծոյ իբրեւ դատաւորաց որպէս տեառնաւորացն տնտեսականէ զմեղաւորէն, և խնդրէ զնորա մաք 'ի դատաւորէն :

Իսկ դատաւորն՝ այսինքն խոստովանահայրն. որ անդերձակ է օրինաց արդարութեան, բաց չափաւ յանձնացն զնէ վճարումն 'ի վերայ պարտաւորին, որ զղջացեալ խոստովանի զմեղս իւր, և ճանաչելով ըստ արարմա իւր՝ յանձն առնու յօժար կամօք զոր պատուիրէ խոստովանահայրն, զի ազատեսցի 'ի պարտականութենէ մեղաց, և հաշտեսցի ընդ Աստուծոյ :

Նոյն պատուիրեաւ Աստուած զդատն յանձն նորա խոստովանահօրն, յանձնակել նորա 'ի յերկրի զդատաւորն 'ի կապանաց մեղաց՝ ըստ կանոնաց սուրբ եկեղեցւոյ, արձակէ և Թագաւոր նոցա և ինքն Աստուած 'ի յերկինս, ըստ այնմ. « Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա . և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի :» Յովհ. Ի. 23 :

Ե. Վասն զի որ յատենի խորհրդական խոստովանութեան կատարեալ զղջմամբ զանգատէ և ամբաստանէ զանձնէ իւրմէ, և յառաջադրէ այլ եւս ոչ մեղանչել, և յանձն առնու զվճարումն, և արձակի

Զ․ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Դ․ [illegible] [illegible] յամենայն [illegible] [illegible] բարութեան՝ առ 'ի մէջ [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible], զի [illegible] յամենայն [illegible] [illegible] [illegible] Աստուծոյ՝ զոր [illegible] [illegible]։ [illegible]։

[illegible] Աստուած շնորհաց 'ի մեղաւորս [illegible] [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] Հոգւի իմ 'ի մարդկանդ յայդ մինչ [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Յովհ․ Ի․ Ե։ [illegible] [illegible] [illegible] [illegible], բայց այնմ [illegible] [illegible] 'ի նոսա՝ և ասէ, առէք Հոգի սուրբ․ եթէ ուրուք թողուցուք, թողեալ լիցի նոցա։ Յովհ․ Ի․ 22․ 23․ Այս ինչ խորհուրդ է 'ի մէջ ամենայն [illegible] թեան քաղաքական օրինաց և եկեղեցական օրինաց․ զի 'ի քաղաքական օրէնս՝ մինչ յանցաւորն խոստովանի զյանցանսն իւր, ոչ ազատի զմնէ 'ի մահուանէ որ պատժոց։ Իսկ յեկեղեցական օրէնս՝ յորժամ խորհրդաւոր խոստովանի առաջի խոստովանահօրն, ներման 'ի յաւիտենական պատժոց։

Է․ Դարձեալ՝ 'ի քաղաքական օրէնս յանցաւորն եթէ ոչ խոստովանի զոր արար, և վկայիւք ոչ յայտնի յանցանքն, ոչ պատժի 'ի դատապարտութենէ։ Իսկ յեկեղեցական օրէնս՝ որ է աստուածային, եթէ յանցաւորն ոչ խոստովանի զոր արար, այլ յայտնի է Աստուծոյ՝ զի է ամենատես. և ոչ է պիտոյ վկայ, զի բաւական է խիղճ խղճի մտաց։

[illegible]
[illegible]
[illegible]
մահու, որով պատժին յանցաւորքն ՚ի չարիս ։

Ը. [illegible] խորհրդոց [illegible] ոչ որ չափաւոր [illegible] [illegible] մեղաց, [illegible] [illegible] Նա [illegible] [illegible] ։

[illegible] ՚ի դիւաց, կամ ՚ի դեռ [illegible], կամ [illegible] Թոյ, անփոյթ առնեն զկատարելութիւնէ ընդ [illegible] մահմեռնակս. կամ [illegible] ոչ խորտակլէսնին, և կամ [illegible] և [illegible] մեղաց [illegible] ։

[illegible] ՚ի [illegible] Թիւն. այլ [illegible] [illegible] մահու [illegible] [illegible]. «Այս դու [illegible] [illegible] ։

[illegible] զանձն [illegible] ՚ի [illegible] [illegible] ։

Թէ. [illegible] ՚ի [illegible] Հօրէն ։ Այսմ որոյ մեծամեծ գործք առաքինութեան [illegible] [illegible] [illegible], ոչ համարին [illegible] կամ [illegible]

եւ ոչ միջասահմանին՝ ի խորհրդոյ առաքինութեան . այլ ոչ մերձաւոր՝ ի մասն հեղինակութեան եւ իմաստութեան նմանողացս . եւ ոչ մասն հասարակութեան հաւաքակելոյ .

Արդ մի իմաստութիւն կոչեցեալ ՝ի հոգւոյն է բանաւորական ՝ի մերոյ հնազանդեցելոցն . որ եւ հնազանդեցուցին անմեղութեամբ զանձինս իւրեանց կանոնադիր եկեղեցւոյ՝ որ ՝ի Քրիստոսէ օրինադրեցաւ . առ որս սահմանայն զոր հրամայէ եկեղեցին ՝ի ձեռն առաջնորդաց իւրոց . որով կատարի ՝ի նոսա խորհրդոյն առաքինութեան ; յորում է լծակցութիւն մեղաց եւ փրկութիւն հոգւոց .

Ժ . Որպէս եղեւ բարձրացեալ խոստովանութիւն, բանական եւ իմաստութիւն խոստովանութեան եկեղեցւոյ բանին եւս գործ հնազանդութեան , վասն զի ոչ եւս մնայ խորհուրդ առաքինութեան ; այլ միայն ոչ թողութիւն մեղաց . Որպէս ՝ի բանին կատարեն մեղնին ՝ի բոլորէ իմէքէ՝ եղծանի բազում . զի խոստովանութիւն է եռակի՝ մասն խորհրդոյ առաքինութեան . այս ՝ի բանին խոստովանութեան ; եւ զի՝ նի էութիւն խորհրդոյ առաքինութեան . Որպէս զխորհուրդն առաքինութեան սահմանեցաք . Մկրտութեան . այս որ եղծանէ զայն , է հոգեւորական Մկրտութեան . եւ մասանց դժոխոց .

ԺԱ . Միաբանութիւն Թէպէտ եւ կամաւորականին կեցեալ ; բայց առաջ է ընդ ընդդէմ ապաշխարութեան խոստովանութեան , որ է զատուցիչ մեղաց , ուստի հնազանդ ոչ յետոյ մէ օրինադրեցի : Բանըն զոր ինչ ասացեալ առանց եւ կրել զոր ըստ կրկեան , եւ ըստ հաճոյից կամաց իւրոց հեշտալի թուի նմա , նմին իրի ոչ է ՝ի համարի միաբանութեան . այս այն է միաբանութիւն առաքինութեան, զոր պատուիրէ խոստովանահայրն ՝ի խորհրդական խոստովանութեան :

ԺԲ. Դարձեալ՝ ոչ ոք կարէ լինել խառն ինքեան ըմբռնել և դատաւոր. զի եթէ մեղաւորն անձամբ անձին տայցէ զպատիժ վճարման. նոյն լինի ըմբռնել և դատաւոր ինքեան, որ է ընդդէմ։

ԺԳ. Դարձեալ՝ վճարումն է գործ արդարութեան. ուստի պարտ է զի ըստ արժանւոյն վճարեսցէ մեղաց զԱս-տուած, այսինքն զգործ սիրոյ յաւելցանել՝ զի հաշ-տեսցի Աստուած։

Իսկ եթէ ըստ ինքեան ապաշխարեսցէ ոք զգործ սիրոյ, առաքինութիւն մեծագործութեան որ ոչ կարէ արժանի լինել ըստ բաւականին հատուցանել զպարտս իւ-րոյ թէ ոչ. բայց անկանի կամ ի յուսահատութիւն, և կամ յանհնարութիւն. Վասն որոյ պարտ է խոստովա-նել, եթէ այսպիսի ապաշխարութիւն Աստուծոյ հաշ-տեցուցանել։

ԺԴ. Դարձեալ՝ մեծութիւն կամ ծանրութիւն իւրի իմիք չէ հնար չափել կամ կշռել ինքեամբ, բայց եթէ բաղդատութեամբ այլոյ իրի։

Զի որպէս ոչ կարէ ասել մի և նոյն իր նմա-նամբ ինքեան նման կամ աննման ; այլ վերաբերու-թեամբ առ այլս, այսպէս և ոչ նոյն իր առանց բաղ-դատութեան ընդ այլոյ՝ չափի կամ կշռի լինել մեծ կամ ծանր։

Իսկ որ անձամբ անձին դնէ կանոն բաւականու-թեան կամ վճարման, ինքն զինքն չափէ և դատի պարտաւոր կամ անպարտ, որ է ընդդէմ։

Այսպէս պարտ է զմեղսն խոստովանել լինել քա-հանայից՝ ըստ կանոնաց եկեղեցւոյ, որ իբրեւ դատա-ւոր խնդրեսցէ դարմանել զպատիժն, ոչ թողութեամբ կամ այլ երկրպագական արդարութեամբ, բայց թէ-ութեամբ անձին, աղօթիւ և ժամանակին ապաշխարելով։

ԺԵ. Այն մեղք որ ընդդէմ են քաղաքական օրի-նաց, և են մեղք որ ընդդէմ են աստուածային օրի-

[illegible] ՚ի Պետրոսէ որք և իշխանք [illegible] [illegible]
ընդդէմ [illegible] [illegible] , եթէ [illegible] [illegible] և
[illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible]
թիւն , զողորմութիւն , զխոնարհութիւն , [illegible]
և այլն .

Եւ [illegible] [illegible] մեղք ընդդէմ են [illegible]
[illegible] , [illegible] [illegible] [illegible]
թեան վերաբերին , իշխանք աշխարհի դատաւորք [illegible]
[illegible] [illegible] մեղք որ ընդդէմ են աստուածայնոյն
[illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] , թէ և [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] և իշխանք [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] . որպիսի է հակառակ [illegible] ընդ-
դէմ սրբազանութեան խորհրդոց եկեղեցւոյ ; այսպէս
են անպաշտութիւն , հաղորդութիւն , և [illegible] և
[illegible] մեղաց , և գործունէութեան [illegible]
և այլն . զի այսպիսի մեղք առ կրօնն վերաբերին ; և
յիշխանութենէ եկեղեցւոյ ունին զատանել կամ պատ-
ժել .

Բայց եթէ եկեղեցին թողուցու զնոսա մնալ ան-
պատիժ , Աստուած ինքնին լինի վրէժխնդիր , որով
հետև ամենայն չար է պատժելի՝ վաղ կամ անագան
[illegible] վասն ոչ պահպանելն ազգի ազգի [illegible] ՚ի վե-
րջէ [illegible] մեղաց .

Օ ի եթէ [illegible] որք [illegible] [illegible]
[illegible] [illegible] , և յանձն առնոյր [illegible] [illegible]
[illegible] դատաւոր ՚ի վերայ [illegible] [illegible] ընդդէմ
[illegible] [illegible] [illegible] [illegible] , ոչ
յանձնանէին [illegible] ՚ի վերայ երկրի ; [illegible] [illegible] . «Խրատ-
եսցէ զքեզ ապստամբութիւն քո , և չարիք քո
յանդիմանեսցեն զքեզ . և ծանիցես և տեսցես , թէ չար
և դառն է քեզ թողուլ զիս : » Երեմ . Բ . 19 . Եւ

[illegible]

[illegible]

[illegible] որով ոչ միայն [illegible] 'ի [illegible] [illegible]

[illegible]

[illegible] Զ շարին [illegible] ասէ Աստուած [illegible] եմ որ առնեմ զխաղաղութիւն՝ և հաստատեմ [illegible] [illegible] 'ի [illegible] չեկն [illegible] [illegible] [illegible] Աստուած [illegible] [illegible] [illegible] [illegible] ողորմութեան։

Այլ եթէ Մարդիկ բնաւ ոչ մեղանչէին, և կամ 'ի մեղանչելն խղճին զզուելով խոստովանէին զյանցանս իւրեանց և ապաշխարէին, զչարն պատժոյ ոչ կրէին։

Զի Աստուած ոչ առ ատելութեան պատժէ զմարդիկ յաստի կեանս, այլ վասն սիրոյ և ողորմութեան, զի զգաստասցեն դարձցին 'ի մեղաց և կեցցեն։

Այս եթէ առաւել ոչ լինիցի վրէժխնդիր մեղաւորաց ժամանակաւոր պատժովք, անշուշտ [illegible] վրէժխնդիր լինի 'ի հանդերձեալն յաւիտենական պատժովք՝ ըստ պահանջման աստուածային արդար դատողութեան։ Բանզի եթէ ոք յաստի կեանս զո-

զօրութեանցն Աստուծոյ արհամարհեն․ յայտ է թէ յարդարութենէն Աստուծոյ ոչ երկնչին․ անիրաւութեանն 'ի հանդերձեալ դատաստանի զերկիւղ յարդարութենէն նոցա, և զգութն 'ի յարդարութենէն ։

Բայց Աստուած՝ վասն այն և տրամադրեալ, հանդերձեալ հրաւիրէ զմարդիկ 'ի գիտութիւն ճշմարտութեան․ եթէ մարդկային ակնարկութեամբ առաջնորդեալ անկանին ազգն 'ի մեզ․ կարգեալ է զխորհուրդն ապաշխարութեան՝ յանձնել նախ 'ի գործոց մեղաց․ ըստ այն նոյն․ Անօրէնն եթէ դարձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր արար, և պահեսցէ զամենայն պատուիրանս իմ, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կենդանի կեցցէ, և մի մեռցի ։ Եզեկ․ ԺԸ․ ԻԱ․

ԺԵ․ Այլք ընդդէմ խօսին 'ի խորհրդոյ խոստովանութեան․ զայս ասելով եթէ զի կամ ոչ կարեմք պատասխանել 'ի մեղաց, և կամ ոչ հաւատամք զարժանաւորութեան խորհրդոյն ։ Որք՝ եթէ ոչ կամին առ զարդարելով՝ են խեղդեալք, զի ոչ ճանաչեն զչափն և զբաշխումն անձանց, որպէս յառաջ է խեղդեալք, Իսկ եթէ ոչ հաւատան՝ են անհաւատ․ զի անհաւատութիւն է ոչ հաւատալ արժանաւորութեան խորհրդոց, որք կարգեալ են յԱստուծոյ անմիջաբար կամ միջնորդ ։

---

" Այր կամ կին, որ ոչ արարեալ յամենայն մարդկեղէն մեղաց . . . և յանցանելովն անձին այն, խոստովան լիցի զմեղս իւր զոր արար, և հատուսցէ ըստ յանցանացն զգլուխն ։ » Թուոց․ Ե․ Զ․

" Ասացի թէ պատմեցից յանձնէն զմեղս իմ, և դու թողեր զամբարշտութիւն սրտի իմոյ ։ » Սաղմ․ ԼԱ․ Ե ։

" Խոստովանեսջիք ընդ միմեանս զմեղս, և աղօթս արարէք 'ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք ։ » Յակ․ Ե․ Ժ ։

## ԳԼՈՒԽ Բ.

### ԱՂՕԹՔ

Ա. Եւ քանզի խորհուրդն ապաշխարութեան ունի զերիս մասունս, զզղջումն և զխոստովանութիւն՝ իբրեւ կացուցիչս խորհրդոյ, և զհատուցումն՝ իբրեւ ամբողջացուցիչ, այլ մեք պարտ վարկանիմք առնել առանձին կարճ ՚ի կարճոյ զամբողջացուցիչ մասնէ նորա, որ է աղօթք, պահք, և ողորմութիւն, ընդ որով գրեթէ այլ ամենայն բարեգործութիւնք կարեն պարունակիլ. որովք ապաշխարողն սրբեալ՝ յարատոյ մեղաց՝ արժանաւոր շնորհացն Աստուծոյ յառնէ. և որ արդէն իցէ ՚ի շնորհս՝ ընդունի զաճումն շնորհաց, և ժամանէ ՚ի հանդերձեալն երանական փառաց։

Բ. Նախաքէն մարդն մինչ վրիպեալ յուղղութենէ լուսոյ բանին՝ թողու զճշմարիտ բարին իւր որ է Աստուած, և դառնայ առ ստեղծուածս, ասի մեղանչել. որ է վտանգել զանձն, կորուսանել զԱստուած, ոչ ճանաչել զկարգ և զպատիւ իւր, մեծ չարի պատահիլ։ Իսկ զայս ամենայն չարիս գործէ մարդն կամ զօրութեամբ հոգւոյն, կամ յօրդորմամբ մարմնոյն, և կամ պատճառաւ ընչից։

Գ. Արդ՝ հոգին է իբր՝ ներքին բարի, մարմինն իբր միջին, և ինչք իբր արտաքինք. զի հոգի առաւել է քան զմարմին և մարմին քան զինչս։ Ապա որ պատքիւք բարեացս չարաչար վարի և մեղանչէ ընդդէմ Աստուծոյ, պարտ է և սոքօք ապաշխարել և հաշտիլ ընդ Աստուծոյ. և ամենայն առաքինութիւնք զորս կարեն գործել մարդիք՝ են արդիւնք բարեացս այսոցիկ. այսինքն հոգւոյ, մարմնոյ և ընչից. Զի կամ մերա-

բերբին առ հոգին, որպիսի է աղօթքն. կամ առ մարմինն, որպիսի է պահքն. և կամ առ ինչս, որպիսի է ողորմութիւնն, յորս կայանայ վճարումն ապաշխարութեան, կամ որ նոյն է՝ բաւականութիւնն։

Բանզի մարդ աղօթիւք ընծայէ Աստուծոյ զհոգւոյ բարիսն, պահօք՝ զմարմնոյ բարիսն, և ողորմութեամբ՝ զարտաքին բարիսն։ Առաջնովն յաղթէ սատանայի, երկրորդիւն՝ մարմնոյ, երրորդիւն՝ աշխարհի, զի ըստ Յովհաննու. «Ամենայն ինչ որ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս։» Ա. Յովհ. Բ. 16։

Եւ այս երեքին չարիքս են՝ որք զմարդն օտարացուցանեն յԱստուծոյ, այսինքն՝ ամբարտաւանութիւն բարձրանալ՝ կամ կամապաշտութիւն, անկարգ ցանկութիւն զգայական հեշտութեան, և անյագ սէր ընչից։

Դեղ առաջնոյն՝ է աղօթքն, որով մարդն զմիտս և զկամս իւր ուղղելով՝ հպատակէ աստուածային օրինաց. որով խորտակի եղջիւրն՝ ամբարտաւանութեան և կամապաշտութեան։

Դեղ երկրորդին՝ է պահքն, որով ճնշէ զմարմինն և նուաճէ զկատաղութիւն զգայական կրից և ցանկութեան։

Դեղ երրորդին՝ է ողորմութիւնն, որով յաղթէ սիրոյ մեծութեան և ընչից, և ամենայն իրաց աշխարհիս։

Դ. Արդ ասելի է նախ վասն աղօթից, որ է պտուղ և նուէր հոգւոյ առ Աստուած, զոր խանդահամիտ երկիւղածութեամբ մատուցանելով առ Աստուած, յայտ առնեմք զգերագոյն տէրութիւն նորա՝ զոր ունի ի վերայ մեր։ Զի որով է նա գերազանցն, նախկին նախ պարտ է ծառայել Աստուծոյ՝ իբրեւ արարչապետի բնութեան։ Իսկ մարդն հոգ-

ւոյլ է գերազանց, զի հոգին անձին [illegible] մեծա
և զանձնիշխան կամս ․ որովք առաջնորդի [illegible],
և նմանի Աստուծոյ ․ այլ նմա պարտ է . հոգ տանել
ծառայել Աստուծոյ աղօթանուէր մաղթանօք ։

Իսկ քանզի էութիւն մարդոյ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
որոյ և ոչ արժանի վարձուց [illegible] ։

Ուստի որ փափագի ընդունել զպարգևս Աստուծոյ, պարտի մտօք և կամօք գուն գործել առ ի հաճոյս առնել նմա, և լինել արժանի վարձուց ։

Ե․ Որ գործս մտաց պատկանի՝ խոկալ զԱստուծոյ, խօսակից լինել ընդ նմա, փառաւորել, գովել և օրհնել զնա, խնդրել ի նմանէ զշնորհս և յուսալ ի նմա ։ Որ գործս կամաց պատկանի՝ սիրել զԱստուած, և ի նշան սիրելութեան յուցանել [illegible] սիրոյ ։

Քանզի մտօքն [illegible] սրբելոյն զԱստուած, յառաջադրէ կամօք զեր սիրեալն [illegible], և երկրպագէ ի միասին ընդ յարգութեամբ [illegible] նուիրէ Աստուծոյ [illegible] սիրոյ ․ [illegible] զաղօթս փառաւորութեան իւր [illegible] [illegible], զի նոյնս միայն [illegible] [illegible] ձայնս առ Աստուած յայտնի առնել ․ և [illegible] մատուցանել [illegible] [illegible] թեան ։

Զ․ Այս աղօթքն է առաջին պատուոյ և [illegible] նմին ծնունդ [illegible] թեան ․ և [illegible] ուրուք է զօրաւոր և բարձրահաւաճ, [illegible] [illegible] աղօթից նորա ի բարձունս [illegible] առ Աստուած ։

Եւ թէպէտ ամենայն առաքինական գործոց առթիւք և արժանաւոր է օրհնել, այլ աղօթքն է 'ի նոսա պայծառ նախկին ծագումն մեծապատիւ, և առաւել պատուոյ երախտագէտ։

Եւ արդարեւ ոչ որ կարէ անդադար կացուցանել զմիտս, եթէ ոչ առաջին զաղօթիւք. զի յամենայն ժամու, և յամենայն տեղիս յորում մնասցի և կայ որ, թէ առանց և թէ նիրհելով. կարէ 'ի միտս ածել զԱստուած, փառաւորել զնա, գովել և օրհնել. և այս իսկ է աղօթել։

Գ. Աղօթքն կարէ բազում ինչ կարէ 'ի մտաւորս լեալ բաժանել, այսինքն՝ 'ի փառաւորութիւն, 'ի գովութիւն, յօրհնութիւն, 'ի գոհութիւն, և 'ի խնդրուածս։

Փառաւորութիւն կամ փառաբանութիւն է փառաբանել զԱստուծոյ, զի նա միայն է Տէր աստուածութեանց, թագաւոր փառաց, և արժանի ամենայն փառաւորութեան. զի է անհուն կատարելութիւն, անհաս իմաստութիւն, անչափ մեծութիւն, ամենազօր, և բովանդակութիւն ամենայն կատարելութեանց։

Գովութիւն՝ է հռչակել զմեծութիւն և զբարերարութիւնս Աստուծոյ. զի է արժանի ամենայն գովութեան. և այսպէս ոչ որ ամենեքեան բաւականք կարէ գովել զԱստուած, այլ միայն զնա ամենայն զօրութեամբ իւրով յայտ առնէ 'ի լինելն գովել զնա։

Օրհնութիւն է հրաւիրել այլոց զանչափ զօրութիւն, զանհուն ողորմութիւնն, զանբաւ բարերարութիւնն Աստուծոյ, զոր ձրի առնէ և առնէ հանապազ առ մեզ, զի օրհնելն՝ յայտնել և հռչակել խոստանի. ուստի օրհնութիւնն մեր առ Աստուած՝ է գոհութիւն նորա։

Գոհութիւն՝ է շնորհակալ և գոհացող լինել բարերարութեանց՝ զոր ընկալեալ ունիմք յԱստուծոյ.

[illegible] զ[illegible]թեան նորա, որ զկատարածութիւնս մեր [illegible] միշտ յառաջատութենէ [illegible]:

[illegible] խնդրուածք, պաղատանք, աղաչանք և հաշ-ուանք [illegible] առ Աստուած [illegible] թագաւորութեան [illegible] մեր, և Աստուծոյ [illegible]:

[illegible]

[illegible] ծոյ՝ որ է արարիչ մեր և բարերարն [illegible]

[illegible]

[illegible] ուրախութեան [illegible] և [illegible] [illegible] և եթէ յոյս [illegible] [illegible] է [illegible] նա, և բայց ՚ի նմանէ ոչ գոյ մեզ յոյս և [illegible]։

Թ. Ի սկզբան աղօթից պարտ է զմիտսն ամփոփել առ ինքն, և զգուշանալ զգայարանաց [illegible] [illegible] [illegible], և [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] տարած յանձն [illegible] [illegible]

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Ժ. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Հրղարար կարգեցին։

[illegible] Եթէ [illegible] բանք աղօթից բազում են յոյժ, այլ ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Գրիգորի Նազիանզացւոյն։ Սա է և այսպէս՝ Հաւատով խոստովանիմ. [illegible] ՚ի սուրբ Շնորհալւոյն, զոր եթէ այր և կին [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Սրբանալ և [illegible]։

Իսկ եթէ որ ոչ կարասցէ հասու [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], մի [illegible] [illegible], այլ [illegible] [illegible] [illegible] և [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] և [illegible]

պատրաստութեամբ [illegible] քան [illegible] [illegible] և բոլոր-
[illegible] [illegible] [illegible], [illegible]
[illegible]։

ԾԶ. Առանձնական աղօթքն յորում ժամանակի
և իցէ՞ ընդունելի Աստուծոյ, ամենայն առաւել ընդու-
նելի են ժամանակին գիշերայինն կամ առաւօտեան։
Ո՛վ իմ Տէր քաղցր ընդ առաւօտն մերձ [illegible] որ ի
քնոյ, պարտ է կալ յաղօթս առ Աստուած, և զո-
հանալ [illegible] պարգևութեան [illegible], որ խաղա-
ղութեամբ հանգոյց ի ժամ առաւօտուն. և խնդրել
յԱստուծոյ [illegible], որ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible]։

ԾԷ. Երեկոյին և յերեկոյեան պարտ է աղօթել առ Ա-
ստուած, և շնորհս [illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] Աստուածածնին և [illegible]
[illegible] և [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible], [illegible]
[illegible] [illegible] [illegible] ի [illegible] [illegible] [illegible]
[illegible] այլ և [illegible] և [illegible] և [illegible]
աղօթելոյ։

ԾԸ. Աղօթքն [illegible] [illegible] [illegible] [illegible]
առ Աստուած. [illegible] պարտ է յաղօթելն, [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] ի բարի կամեցողութիւնս։

ԾԹ. [illegible] [illegible] [illegible] ընթեռնուլ
զի աղօթից. [illegible] [illegible] [illegible] և [illegible].
[illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible]
[illegible] [illegible] աղօթս։

Կ. [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible] աղօթեն. [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

գոյ ՚ի գեղեցկութեան [illegible] զոր [illegible] աստուածպաշտու-
թեանն, օգնէ զօրութեամբ աղօթից, և արգելանէ
ւորէ զպարգևս շնորհաց ։

ԺԶ. Աղօթքն է խորհուրդ դեսպան կամ փոխանորդ
հրեշտակ և միջնորդ ՚ի մարդկանէ առ Աստուած, որ
յոյժ ընդունելի է և զօրաւոր, յորժամ [illegible]
համբերութեամբ [illegible] ։

Վասն որոյ աղօթքն որ յեկեղեցին լինին բազմու-
թեամբ ժողովրդոց, առաւել ընդունելի է քան
զառանձնականն և յոյժ օգտակար. քանզի զօրաւոր
լինի, զի աղօթք [illegible] է եկեղեցին, [illegible] և կամի
[illegible] ՚ի [illegible]. Նաև [illegible] միա-
ցեալ, երկնային փառաբանչացն բերեն [illegible]։
Սոյնպէս պատուիրեն Հայաստանեայցն [illegible] դի-
տել յեկեղեցին ՚ի ժամերգութիւնս հանապազ,
ոչ միայն յաւուրս տէրունականս և ՚ի հանդիսական-
սն, այլ և եթէ հնար իցէ յամենայն աւուր.
[illegible] բարեպաշտ [illegible] ժամու [illegible]
յեկեղեցւոյ ՚ի կանոնաւոր ժամերգութեան. [illegible]
[illegible], [illegible] յորժամ [illegible]
խորհրդոց [illegible] ։

ԺԷ. Առանձնական աղօթքն է յոյժ օգտակար.
բայց հարկ է նախ զհրապարակականն կատարել յե-
կեղեցին, և ապա զառանձնականն։ Իսկ եթէ ոք առ
կիրս ծուլութեան ոչ գնայցէ յեկեղեցին, և առանձ-
նական աղօթիւք համարեսցէ արդարանալ ՚ի պարտաւո-
րութենէ, մեծ աղէտս խորէ. քանզի եթէ զոյ եկեղեցին, և ինքն
կարէ գնալ անդ, զանց առնելով մեղանչէ։

ԺԸ. Երրորդն է մտաւոր աղօթից, և աղօթքն
մտաւոր հոգւոյ. այսպէս որպէս զմտածութիւնս [illegible]
պարտ է յամենայն ժամու և զհոգին [illegible]
[illegible] թէ ոչ՝ նուազի, կամ հեռանայ, և կամ
մեռանի. զի առանց աղօթից ոչ կարէ հոգին կեալ.

ի ձեռն հոգւոյն Աստուծոյ. և շնորհք Աստուծոյ տուեալ աղօթից ոչ մնան 'ի հոգին.

Վասն որոյ զգուշ յաղօթս տատանմանց մտածմանց զգուշանալ, շնորհքն Աստուծոյ հեռանայ 'ի մեզանէ, մինչ չես անձկանայ, զի մեծամեծ մեղս, որ է մահ հոգւոյ:

ԺԶ. Աղօթք մաքուր հարկաւոր խնդրեն զմիտս խոնարհ 'ի Տեառն. եթէ աստուածայինք են և բարի. և եթէ անխառնակութիւն և ջերմ. ապա ստանայ զմիտս և զհոգ-ւոյն մտաց 'ի Տեառն, զի զաստուածային զօր ճանաչէ, և 'ի բազում յամենայնի. այսպիսի անմահա-կան աղօթք երկնաքաղաքացի առնէ զմարդն, և հրեշ-տակաց նմանակիցս, և Աստուած ասացեալ զնա մերոյ՝ լսել ձայնի:

ԺԷ. Աղօթողն պարտ է զինքն ճանաչել առաջի Աս-տուծոյ, և զգուշանալ 'ի զանազանս խորհրդոց և խօսից:

Զի աղօթողութիւն առ՝ խորհրդոց դրդող լինել յա-ղօթելն. խոնարհութիւն առ՝ 'ի յուշ ածել զանձնա-հայեացն հոգւոյ և զմարմնոյն. զուարթութիւն առ՝ ցնծել զմիտսն, և լինել հեզ և անդորր. բժշկութիւն առ՝ մտածելն զանօրէնս և զինքն խոնարհելն լինել:

ԺԸ. Աղօթքն սրբութեամբ ջերմեռանդն սրտիւ՝ խո-նարհ հոգւով և մաքուր մտօք, ոչ միայն 'ի զանա-զանս փորձանաց կենդանութեան ազատէ, այլ և զշնորհն Աստուծոյ անձկութեամբ 'ի հոգին. որով կարողանայ մարդն որ լաւ, որ է յաւիտենական երկնային արքայութեան, և հասանել 'ի ծայրն կատարելութեան:

ԺԹ. Աղօթքն այնքան հարկաւոր է 'ի փրկութիւն, մինչ զի առանց աղօթից ոչ որ չափահաս կարէ փրկ-ուիլ. Որովհետև ամենայն բարեգործութիւնք մեր 'ի շնորհացն Աստուծոյ առաջնորդեն մեզ զփրկու-թիւն և զյաւիտենական բարիս. իսկ շնորհք Աստուծոյ ոչ տան առանց աղօթից. եթէ աղօթիւք և խնդրուա

[illegible] այնմ. Պահպանեսցէք՝ և առաջի [illegible] գեցէք՝ և զաղօթս . Մատթ. Է. 7. [illegible] աղօթիւք [illegible] Աստուծոյ, ըստ այնմ. «Ոչ [illegible] յաղօթս [illegible] [illegible] [illegible] Աստուծոյ [illegible] [illegible] Աստուծոյ [illegible]

Ղ. ԻԴ. Աղօթս նախ խնդրելի է զարքայութիւնն Աստուծոյ միայն վասն իւր, իսկ զայլ ինչ ժամանակաւոր բարութեանս. զի զայն՝ որ ոչ իցէ կարգեալ ի վերայ հանդերձեալ երջանիկ արքայութեան, կամ ոչ [illegible] մեծանայն, չէ արժան հայցել յԱստուծոյ.

Վասն որոյ եթէ աղ խնդրէ զկեանս, կամ զառողջութիւն, կամ զհաւատ, կամ զինչս, պարտ է զայն խնդրել ի մտի նորա ծառայել Աստուծոյ, իբր զի խնդրէ զկեանս՝ զի պատշաճապէս, զառողջութիւնն՝ զի մի մոլորեալ 'ի մեղս անկցի, զհաւատ՝ զի զնա ծառայ Աստուծոյ արասցէ, զինչս՝ զի աղքատաց և կարօտելոց բաշխեսցէ.

Սակայն մեք պարտիմք խնդրել զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և զայլս ամենայն՝ որոց կարօտիմք որքան եմք 'ի մարմնի, Աստուած ինքնին տայ զնոսա. զի նա գիտէ զպէտս և զկարիս մեր՝ առաւել քան զոր խնդրեմք և խորհիմք.

ԻԴ. Խնդրելի է յաղօթս, զի կամքն Աստուծոյ կատարեսցի 'ի մեզ, և ոչ եթէ կամքն մեր, ըստ այնմ. «Ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու կամիս» Մատթ. ԻԶ. 36. Նա յայտ է հաստատելոյ կատարելութիւն աղօթից և երջանկութիւն մարդոյ. զի վասն այնր աղօթեմք, զի հաճոյ լիցուք Աստուծոյ.

և [illegible] յորժամ կամիցի Աստուծոյ կատարել 'ի մեզ [illegible] կամիցի Աստուծոյ [illegible] և երկրպագութիւն [illegible]

ԻԵ. Խնդրելի է յաղօթս, զի տացէ մեզ Աստուած [illegible] զի սրբեսցէ [illegible] ոչ [illegible] և [illegible] ոչ [illegible] զաղօթս.

Ոչ երկարութիւն բանից առնէ զաղօթսն ընդունելի, այլ ջերմեռանդութիւն սրտի. զի Աստուած ոչ 'ի բանականութիւն աղօթից հայի՝ այլ յայտնականութեան սրտի.

Ոմանք [illegible] զաղօթս [illegible] 'ի [illegible] այլ [illegible] 'ի [illegible], [illegible] զոր [illegible]. [illegible] Աստուած [illegible] ութիւն [illegible], [illegible] ոչ [illegible].

ԻԶ. Աղօթքն ընծայեցէ նախ զշնորհս և զ[illegible]. զի թէ ոչ [illegible] Աստուծոյ [illegible]. [illegible] ութիւն [illegible], ոչ [illegible] 'ի [illegible] հայցմանց.

Խնդրեսցուք և զայլս. զի թէ ոչ [illegible] զԱստուած [illegible] և [illegible], ոչ [illegible] ընդ Աստուծոյ [illegible] աղօթից. և [illegible] զԱս[illegible] և [illegible], զի [illegible] ութեան. [illegible] զի [illegible] և [illegible] զԱստուծոյ, [illegible].

«Մեղք ձեր արգելեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Աստուծոյ, և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի ողորմեսցի.» (Եսայ. ԾԹ. 2.) Աստ[illegible] յաղօթս խնդրել մեզ [illegible] թողութիւն, զի [illegible] ընդ Աստուծոյ [illegible] 'ի մեղս.

ԻԵ. [illegible] աղօթքն [illegible] թեան ն. [illegible] և [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] հրեշտակաց [illegible].

ԻԶ. Աղօթքն [illegible] մարդոյ. 'ի նախնեաց [illegible] հրեշտակաց [illegible] հրեշտակաց [illegible] [illegible] [illegible] և աղօթեսցուք.

ԻԷ. Պահեսջի՛ք 'ի զգաստութեան կերակրոց, և առաւել զզգաստու-
թեանն [illegible] պարկե-
շտութիւնք, բայց պատուաշահին մարդոյ՝ [illegible]
[illegible] [illegible], իսկ աղօթիւք [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] հրեշտակաց.

ԻԸ. Եղբայրք, որ առ Աստուած կարեւոր է ամե-
նայնի և իւրաքանչիւր մարդոյ. որովհետեւ ամենայն
մարդիկ ըստ կարեաց անկեալ, ոչ կարեն յամենայն
ժամու աղօթել մտօք, վասն որոյ կարօտին օգնակա-
նութեան ամենայնաւորի աղօթից, որ միջնորդու-
թեամբ աղօթից կարեն ունել ձեռնտուութիւն.

Սա անդադար աղօթել է անձուոցն, զի չունիմք ա-
կն 'ի տեսանել զթշուառութիւն մեր, և ոչ ունկն
'ի լսել զաղաղակս մեր, և ոչ զօրութիւն ինչ առ 'ի
գտանել մեզ օգնական.

Սա գեղո կարգաւն է խոնարհութեան, մանաւանդ
[illegible] թէ մեծ ամբարշտութիւն, զի դնեն [illegible]
[illegible] մարդկան և առաւել Աստուծոյ.

Իսկ առ հրեշտակս կամ առ սուրբս աղօթել
թէ և իցէ կարեւոր՝ բայց ոչ հարկաւոր, զի և նոքա
առանց հրամանին Աստուծոյ ոչ կարեն օգնել:

Ապաքէն պարտ է յամենայնի առ Աստուած աղօ-
թել, զգոյշ և զգաստութեամբ մեր առաջի նորա
սփռել, զի նա է մեր բարերար և խնամածու [illegible].

ւել քան զհեզս՝ քանզի զմեզ ...

Սկզբնէն որ ոչ աղօթեն՝ միայն զսուրբ յաղթահարութիւ-
թիւնս և ՚ի խնամոցն Աստուծոյ զի եթէ աղօթէ ոչ
կայ կարող ամենեցուն զաղօթութիւն իւր, վասնզի
որ պահէ զմարդ ՚ի չարէն Սատանայ. և եթէ մեղա-
նաց որ խղճէ և ոչ կարէ յաղթել՝ ՚ի մեղաց փութայ ա-
ղօթիւ, զի աղօթիւք աղաչելով ՚ի չարէն զերծանի։

Զօրագնեալքն Սատանայ են խաբեալք՝ [illegible]
ծառայեալ յանչափութիւն, այլ որպէս ազատք են անձք ՚ի մեղս
յեղեալ զմիտս, այսպէս ազատ են աղօթիւք յաղթել նմա
փախչելով զօրութեամբ Աստուծոյ. զի աղօթքն է անձ
մեղաց և անձին հարկաց.

ԻԹ. Մեղանչելն ՚ի սատանայական խորհրդոց հեռա-
ցուցանէ, հաստատէ թէ առ Աստուծոյ զօրու-
թեամբ աղօթելով, և զօրաւորութիւն նորա խորտա-
կեն. զի բնութիւն հարկաւ զիւրն առ Աստուծոյ
յարմարեալ իւր, որպէս թէ ոչ իմն մերձ է նմա որ
աղօթեն՝ զոր բնաւորութեամբն առնել. առակելն զնոյն բնութեան
նորա յաղթահարել ոչ ձեռնէ. Եւ անկանելութեամբ
սէ. քաջ Աստուած պահապանէ մեզ անձանց, և խնամէ
զնոսա յաղթութեամբ, որպէս ասէ. «Մերձ է Տէր առ
ամենեսեան զխնդրուածս իւրեանց. ձայնի աղաչանաց
որ կարդան առ նա ։ Սաղմ. ՃԽԶ. 6»

Ապա որ ոչ աղօթէ առ Աստուած, փոխանակ այն
քան զանձնամբ է, անհաւատ խնամոցն Աստուծոյ, անխե-
լամիտ և ապաշնորհ առ բարերարն իւր. զի զպարգևն
առնու և մոռանայ, և զտուողին բարեաց ոչ ճանաչէ և
ոչ փառաւորէ.

Լ. Եւ որ է մեղքն եթէ ոչ խոկալ զԱստուած. համ-
ր է՝ եթէ ոչ աղօթէ, խուլ է՝ եթէ ոչ լսէ պատուի-
րանացն Աստուծոյ, մեռեալ է՝ եթէ ոչ սիրէ զԱս-
տուած. Թշնամի է Աստուծոյ՝ եթէ սիրէ զայն զոր
ատէ Աստուած. ամբարշտութիւն է խնդրել յԱս-

տուածոյ զայն ինչ զոր ոչ կամի Աստուածն։

ԼԷ. Վերջին [illegible] զաղօթս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

ԼԸ. Աղօթաւն թէ պէտս և ձայնէ, [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և բարեպաշտութեամբ. Աստուածոյ առ [illegible] և [illegible] [illegible] առ Խոսս։

ԼԹ. Աղօթքս պարտ է խնամարկութեամբ [illegible] տարբերել զբանս, և ՚ի միտ առնուլ [illegible] [illegible] առ Աստուած [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] յաղօթից [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի միտս, [illegible] [illegible] յաղօթից, կամ անպատուել արարչին։

Արդ սակս որ յաղօթելն զգայ զձանձրութիւն [illegible] [illegible] [illegible], ծանիցէ թէ այն է [illegible] [illegible], և մի երբեք թողցէ յաղօթիցն, այլ զօրանալ [illegible] ՚ի Քրիստոս [illegible] ՚ի [illegible] և Աստուած որ մերձ է առ այնոսիկ որ [illegible] [illegible] [illegible] [illegible] յօժարութիւն, և [illegible] [illegible] [illegible] և չքանան։

Խ. Յաղօթս պարտ է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible]

և [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

ԼԶ. [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible] ոչ է [illegible] [illegible] և [illegible] [illegible]
թէ ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և
[illegible] [illegible] [illegible]:

ԼԷ. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
ցեն, և զոր տանուն անկորուստ պահեսցեն, [illegible]
[illegible] են [illegible] [illegible] [illegible] [illegible]
անհնարին թեանք [illegible]:

[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible]
[illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible]
կի ճորհէ, զի մի կարծմունս թեանք վհատեսցեն [illegible]
[illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]:

ԼԸ. [illegible] [illegible] և [illegible] է [illegible]
[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible]
[illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
նեն, կամ անապատ կատարեն զնոսա, զի փորձել զնա
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]
'ի [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible], զի [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] և
թէ ոչ [illegible] [illegible] [illegible], [illegible]

[illegible] [illegible] [illegible] և յաստուածահաճոյս [illegible] զի [illegible] Աստուծոյ երբեմն [illegible] և երբեմն [illegible] [illegible] կամաւորն [illegible] ծառայից [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] որ [illegible] մարդկան [illegible]։

[illegible] է [illegible] յանձն [illegible], [illegible] [illegible] ի [illegible], ՚ի յան- [illegible] ի [illegible] Աղօթքն ՚ի յաղօթողութեան է իբրև կերպ [illegible] [illegible] ի [illegible] իբրև առաջնորդութիւն [illegible]։ Այն [illegible] է ցուցանել յաղօթս, զի [illegible] [illegible] զկեանս մեր։

Ժ. [illegible] աղօթից առնելն է առաջի [illegible]տուած, զի մի թողցէ զմեզ ՚ի կամս անձանց մերոց [illegible] [illegible] զմեզ ՚ի մեղաց. [illegible] մեզ [illegible] մեռանիլ [illegible] [illegible]։

[illegible] Յիսուսի [illegible] հաճոյական է մեռանիլ [illegible] մեզ զԱստուած [illegible], և ՚ի յամ [illegible] [illegible] ՚ի դժոխս. այս ոչ է զմեզ անձին [illegible] այլ [illegible] [illegible] թէ [illegible] յօժար է մահու մեռանիլ քան ՚ի մեղս [illegible]կանիլ։

Այսպիսի խնդիր յառաջ դայ ՚ի պատուիրէ Քրիստոնէութեանս սիրոյն Աստուծոյ, որ յաղթէ մահու, [illegible] այսմ. «Հզօր է իբրև զմահ սէր» Երգ. Ը. Զ. Այսպիսի մաղթանօք Աստուած առաջի ՚ի [illegible] [illegible] յօրինել և [illegible]թեան մե[illegible]։

[illegible] Յաղթեսցուք [illegible] [illegible]՝ կատար[illegible] [illegible], եթէ [illegible] [illegible] և եթէ [illegible]՝ զորս խնդրէ ՚ի յԱստուծոյ. [illegible] որ [illegible] է [illegible]՝ ջանք և [illegible]

թեան առաքինութեան յիւրաքանչիւր ժամանակի, որպէս է մարդոյ զանից առնել զնորհս ։ Այսպէս որ աղօթէ և խնդրէ զԱստ-Աստուածոյ, հաճոյ է և յիւր խորհուրդ զանգէտ զօրհնութիւն և կարէ, զի ընծայեցի զբարեպաշտութիւն խնդրուածոց կատարէ.

ԽԸ. Աղօթքն կատարեալ են յորժամ առ ընդունելու-թեան ստորադասութիւն շնորհաց և պատճառ կատարելութեան խնդրուածոյ. Այսպէս է որ աղօթիւքն առաքինի. վասն զանմահն զշնորհս և զխնդրելին յապաւէն ամբողջութեամբ զոր օրհնել և խնդրել է. համաձայնեալ առաքելութեան կամացն։

Այն է որ առանց զշնորհսն՝ այլ ոչ խնդրեսցէ, յորժամ ժամ աղօթելն է բառ օրինակ՝ այլ խնդրելն անդիմանելի։ Այն է որ ոչ զշնորհս առանց. և ոչ պահանջէ, այլ ժամ աղօթելոյն է ի մեծահաճոյս մեզ. [illegible] և խնդրելին կայ վայելչութեան, վասն զի անպատմելութեան խնդրելին ապաշխարութեան զբարեպաշտութեան խնդրեալն։

Այն է որ առանց խնդրելին՝ բայց ոչ զշնորհս, բայց զի զհաւատացելոյն առաքելութեան կամացն խնդրել թախանձանօք, և ոչ յանձնել ի կամս Աստուծոյ, այլ զտուանս. վասն այսր Աստուած բարեխօսէ, կարօտ ընդ զխնդրելին՝ զի ի ներքս ապաւինեալ և զաստուածայինս։ Աստուծոյ խնդրելոյ խնդրելոյն յանդգնութեան, զոր և Աստուած են զօրավարք, բայց միջնորդ են, զի կայ ի բարեխօսն նոցա էին, բայց կենդանութեան Աստուածոյ ել՝ զի միայն նոցա. ո Թեսաղ. ԺԱ. 55 ։ Խնդրելին և Թագաւոր. և են նոցա զԱստուած, բայց այն երկրպագ նոցա ի պատմել. ո Ա. Թեսաղ. Ը. Դ ։ Աւետրանն պարտ է մեզ աղօթելոյ խնդրել յԱստուծոյ, որ ինչ ոչ մեզ Թուի, այլ զխնդրուածս խնդրոյն յանձնել բա-րեյօժարութեան Աստուծոյ ։

ԽԹ. Աղօթքս է և յաղօթս որոց պատարագաց, զի է որ առանց զխորհուրդն և զշնորհս խորհրդոյն միանգամայն, մինչ աղօթեն առ Հայցողի ։

Այն է որ զխնդրուածս միայն առնել՝ [illegible]

[illegible]

[illegible] բարեխօսութեան նորա ։ [illegible]

[illegible]. [illegible] բարիք առ Աստուած [illegible] կերպիւ [illegible]. այլ ոչ [illegible] նորա՝ յետոյ [illegible] 'ի հրամայողականն և [illegible] նախկին աղօթից, զի աղօթիւք [illegible] գործութիւնք ։

[illegible]. Եթէ որ 'ի ժամ յաղօթութեան [illegible] Աստուծոյ, [illegible] և [illegible] Աստուած [illegible]

[illegible] և [illegible] Աստուածոյ [illegible] [illegible] Աստուածն [illegible] [illegible]

ԽԵ. [illegible] [illegible]

[illegible] [illegible]

[illegible] [illegible]

ԽԷ. [illegible] և [illegible]

[illegible] զԱստուած [illegible] և [illegible] [illegible]

Ծ. Աստուած երբեմն յառաջագոյն մեզ պատրաստ ընդհանրապէս, բայց թողու խնդրել աղօթիւք յԱստուծոյ 'ի ժամանակի զոր պատրաստիցէ առնել, և կամի անձամբ 'ի ժողովականն երևեցուցանել և գիտելով զգործադրութեան նորա, թէ մեք և մերք և որպէս ապաժամ եմք 'ի գործ դնել.

Այլոյն ինչ նոյն պարտ է աղաչել զԱստուած՝ զի թէ առաջնորդեսցէ մեզ որպէս և կամի, բաց ա-ներել. "Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ." Սաղմ. ՃԽԲ. 9։ Եւ թէ՝ "Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից." Սաղմ. ՃԽԲ. 8։

Եւ երկրորդ՝ զխնդրել առ խնամօղն բարեհաճոյս և խոստովանաբար, որք հաճոյքն իւր Թագաւորն աստուածայինն կամաց. խոնարհութեամբ հայցանել 'ի նոյն նմա, և ուսանիլ զերկրպագել հնազանդութեան բարերարին, որպէս առաքեալ Պօղոսի. "Մուտ 'ի քաղաքդ. և անդ ասասցի քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել." Գործ. Թ. 6.

Զի թէպէտ Աստուած եղեալ Պօղոսի ցուցանէ ընդհանրապէս, այլ եթող 'ի մասնաւորսն զպատմելն յԱնանիայ առաքելոյ զառաջնորդութիւն նորա:

Երրորդն առ որ և խնդրէ, կարօտի օգնականութեան աստուածահաճոյ աղօթից, և առատութեան խորհրդոյ և խրատուց առաջնորդաց. որպէս զի կարասցէ զնոյն անայթագ զճանապարհն բռնելոյ, զոր յառաջադրեալ է Աստուած 'ի յաւիտենից. զի բաց աստուածաբանից՝ նախասահմանութիւնն կատարի աղօթիւք ընդ յառաջադրութեանն Աստուծոյ:

Բանզի զբարեգործութիւն իւր Աստուած այնպէս կամի և սահմանէ, զի աղօթիւք և միջնորդութեամբ ուրուք տացէ մեզ. որպէս յայտնութեամբ հրեշտակին Աստուծոյ զառաքեալն ասէր Պօղոս՝ չլինել վնաս անձին ումեք. Գործ. ԻԷ. 22: Եւ մինչ նաւավարքն փախչել կամէին, ասէ ցհարիւրապետն և զօրականսն.

«Եթէ ոչ դորա միայն 'ի նաւին՝ դուք ապրել ոչ կարէք։» Գործ. ԻԷ. 31։ Յայս բան սուրբ առաքելոյն ոչ երկմտեաց ընդ ումեքն, այլ հաստատեաց ըստ նոյն՝ գործադրութեամբ կարգի իրացն. զի թէպէտ Աստուած շնորհեաց Պօղոսի զամենեսեան որ էին 'ի նաւի անդ, այլ ոչ առանց ստորութեան նաւաստեաց։

ԾԱ. Ամենայն արարածական բնութիւնք քարոզեն մարդկան զերիս զայսոսիկ բանս. ընկալ, հատո, և երկիր. այս է՝ ընկալ յԱստուծոյ զբարիս, հատո զպարտս գոհութեան, և երկիր յապերախտութենէ։

Արդ որ խցեալ զանձին հոգւոյն առ ձայնս բնութեան՝ աղօթիւք ոչ խնդրէ յԱստուծոյ զբարիս, կամ ոչ գոհացող լինի վասն ընկալեալ բարեացն, կամ ոչ երկնչի յապերախտութենէն Աստուծոյ՝ որ գտանի զանշնորհակալսն, արժանապէս պատժի յԱստուծոյ՝ իբրեւ ծառայ չար և վատթար։

---

«Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։ Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս նորա։» Սաղմ. ԺԷ. 7. 8.

«Երիս ժամս յաւուր գնէր ծունր և կայր յաղօթս» Դան. Զ. 10.

«Զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուք։» Մատթ. ԻԱ. 22.

«Իբրեւ եհաս 'ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօթս կացէք չմտանել 'ի փորձութիւն։» Ղուկ. ԻԲ. 40։

«Մեք աղօթից և պաշտաման բանին հպատակ լիցուք» Գործ. Զ. 4.

«Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից [illegible] կացէք։» Հռովմ. ԺԲ. 12.

«Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն որ կարողն էր ապրեցուցանել զնա, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լուեալ լինէր առ լաւութեանն։» Եբր. Ե. 7.

«Զոր ինչ հայցիցեմք ըստ կամաց նորա, լսէ մեզ։» Ա. Յոհ. Ե. 14.

# ԳԼՈՒԽ Գ.

## ՊԱՀՔ

Ա. Յետ խօսելոյ մեր զաղօթից՝ ոչ բնաւ բերէ առնել ինչ և զպահոց, առ որ պիտոյն միջին բարիք. այսինքն՝ առողջութիւն մարմնոյ և զօրութիւն անձին, որովք լինի ծառայութիւն և պահեցողութիւն. Զի որ առողջ է և զօրաւոր, կարէ նա պահել կամ ժուժկալել ՚ի պարարտ և ՚ի հեշտալի կերակրոց և ըմպելեաց, առ ՚ի ճնշել զմարմինն և մահացուցանել զախտաւոր կիրս և զանկարգ ցանկութիւնս զգայական բաղձմանց, որպէս զի կարասցէ մաքրացուցանել զանդամս մարմնոյ իւրոյ ՚ի ծառայութիւն Աստուծոյ. որպիսի է սպասաւորել հիւանդաց, յայց ելանել բանտարգելոց, թաղել զանտերունչ մեռեալս, գնալ յուխտ ՚ի սրբազան տեղիս, և եւս համբերել վշտաց և ճգանց, մինչեւ տալ զմարմինն ՚ի գան ՚ի բանդ և ՚ի մահ վասն սիրոյն Աստուծոյ. որօք և նմանեօք սոցին նուաճեալ հնազանդի մարմինն կամաց հոգւոյն.

Զի որպէս ՚ի զօրանալն մարմնոյ կերակրովք՝ տկարանայ հոգին, նոյնպէս և ՚ի տկարանալն մարմնոյ պահեցողութեամբ՝ զօրանայ հոգին, ըստ այնմ. «Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ.» Բ. Կորն. ԺԲ. 10. Ուրեմն պարտ է ճնշել զմարմինն ծոմով պահեցողութբ և ժուժկալութեամբ, զի հլու հնազանդութեամբ ծառայեսցէ Աստուծոյ մինչեւ իսպառ.

Բ. Հարկ ՚ի վերայ կայ ամենեցուն ամբողջ պահել զկանոնական պահեցողութիւնս, զոր կարգեաց սուրբ եկեղեցին. Իսկ եթէ ոք զպահս իւրեւ առելորդ և անօգուտ ճգունս վարկուցեալ դայթակղեսցի, և զայլս դայթակղեցուսցէ, մեծապէս մեղանչէ,

զի դատին զուրբ հարս՝ որք հոգւով աղքատ կան. զարդարեսցին զկանոնս եկեղեցւոյ ։

Գ. Առաքինի պահեցողութեամբ հաստատեսցէ ըստ պատշաճի իւր զոր ունի Աստուծոյ վասն մարմնոյ իւրոյ, և կատարէ զզգած արդարութեան. Քանզի Աստուած իբրեւ գերագոյն տէր՝ զոր ինչ եմ մեզ ըստ բարւոյ՝ խնդրէ 'ի նոցանէ զառաքինութիւն, որ է նշան տէրութեան նորա. զի տէրութիւնք երկրին կատարածք պահանջեն զհաւատ կամ զհարկ 'ի հպատակաց իւրեանց, և որք զկայցին հաստատութեամբ առաքինեամբ հաւատարիմ ։

Վասն որոյ պարտ է զհաւատ կամ զհարկ մարմնոյն որ է պահեցողութիւն՝ մատուցանել Աստուծոյ, որ է Տէր մեր և բարերար, ըստ այնմ. «Ոչինչ ունիս զոր ոչ լիցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրեւ զչառեալ ։» Ա. Կորն. Դ. 7.

Դ. Պահեցողութեամբ կատարի և զօրն սիրոյ. զի մինչ կամակոր յօժարութիւն ձգէ զմեզ զմարմինն, ցուցանէ յանձին իւրում զկատարեալ սէրն Աստուծոյ. և այս քննի նախ պահօք, ապա այլովք ծառայութեամբ մարմնոյ ։

Ե. Պահքն ոչ միայն անկ է ճաշակելեաց, այլ լեզուին բերանոյն՝ հեռի լինել 'ի պարապոր խօսակցութեանց, այլ և ամենայն զգայութեանց ։

Քանզի վախճան պահոցն՝ է մաքրութիւն մտաց և սրբութիւն սրտի, զորս և կարեն բծանօթել անտեղութիւնն աչաց, լրջութիւնն ականջաց, հնազանդութիւնն ոտից, և զգացումն շօշափելեաց, նոյնպէս իւրի հարկ է և 'ի վերայ նոցա զօրէնս պահոց կարգել՝ ըստ խորհրդականութեան ստացիճանի. Վասն զի անօգուտ իմն է միայն բերանով պահել, և այլովք զգայութեամբ անզգոյշ լինել 'ի պատճառս մեղաց։ Սիրելի պահելի է ոչ միայն 'ի պատճառս մեղանչողաց, այլ և յամենայն առթէ մեղաց ։

Զ. Դատարկն և անմիտք՝ որք պահեն զպահս զանց

անվարձ երանեան. որպէս ժլատն պահէ՝ զի մի՛ ծախեսցի դրամն, կեղծաւորն պահէ՝ զի գովեսցի ՚ի մարդկանէ, տկարն պահէ՝ զի մի՛ մարմինն վտանգեսցի, աղքատն պահէ՝ զի ոչ ունի կերակուր։ Այսպիսիք պահեն վասն անձանց իւրեանց և ոչ վասն Աստուծոյ. այլ սակայն պահքն պարտ է լինել տիրապէս միայն ՚ի փառս Աստուծոյ։

Է. Պահեցողութիւնն ոչ միայն հարկաւոր է հոգւոյ, այլ և մարմնոյն է օգտակար և պիտանի, զոր և բժիշկք պատուիրեն պահել պահս վասն առողջութեան անձին։ Այն որ տրտունջ բառնայ քրիստոնէական պահոց սուրբ եկեղեցւոյ, և անձնատուր լինի զեղխութեամբ ՚ի կերակուրս և յըմպելիս, ոչ միայն վնասէ հոգւոյն՝ նկուն առնելով բանաւորութեան կրից, այլ և մարմնոյն՝ ենթարկելով զանազան ախտից և հիւանդութեանց։ Տես զաստուածային և ՚ի վերայ որկրամոլութեան (Հփ. Բ. յերես 64)։

«Ես ՚ի նեղել նոցա քուրձ զգենոյի. խոնարհ առնէի պահօք զանձն իմ. և աղօթք իմ ՚ի ծոց իմ դարձցին։» Սաղմ. ԼԴ. 13։

«Դարձարուք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք, լալով, և կոծելով։» Յովէլ. Բ. 12։

«Յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմերեսք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահեցեն։» Մատթ. Զ. 16։

## ԳԼՈՒԽ Դ.

### ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Ա. ԶԿՆԻ աղօթից և պահոց խօսելի է և վասն գործոյ ողորմութեան, որ լինի արտաքին և առաջական բարեօք, այսինքն ընչիւք, այս է՝ կերակրել ըզքաղցեալս, զգեցուցանել զմերկս, վաճառուր լի-

նել օտարաց. ազատել զգերեալս, ձեռնտու լինել կարօտելոց, որովք հատուցանէ մարդն զպարտս, զոր պարտի Աստուծոյ յընչից իւրոց։

Բ. Իսկ թէպէտ գործ ողորմութեան հայի առ մարդ կարօտեալ, սակայն վախճանական դիտաւորութեամբ առ Աստուած գոլով ուղղեալ, իբրեւ իւրոյ ինքեան համարի Աստուած. ըստ որում դիտաւորութեան վախճանին՝ առաջին է 'ի պատճառս գործոց, ըստ այնմ. «Որովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։» Մատթ. ԻԵ. 40։

Գ. Դիւրաւ բերին մարդիկ 'ի գործ ողորմութեան՝ քան աղօթից եւ պահոց. քանզի ծիգն եւ աշխատութիւն պիտոյ 'ի վանել զձանձրոյթ եւ զտաղտկութիւն անձին 'ի յաղօթելն, եւ զսպել զըղձանս համադամ կերակրոց 'ի պահելն. իսկ ողորմութիւնն ոչ խնդրէ աշխատութիւն, այլ միայն կամեցողութիւն առ 'ի բառնալ զկարօտութիւն ընկերին։

Նա զի՝ աղօթք եւ պահք են նուէր հոգւոյն եւ մարմնոյն, որք են բուն եւ էական մասունք մարդոյ, իսկ ողորմութիւնն է նուէր ընչից՝ որք արտաքոյ են մարդոյ։ Սակայն այր ողորմած ընդ արտաքին ինչս պարտ է եւ զսիրտ եւ զկամս իւր մատուցանել. զի յայնժամ է ողորմութիւնն ընդունելի, յորժամ ձեռամբ սրտին բաշխի։

Քանզի ոչ հաճի Աստուած ընդ ողորմութիւնն, եթէ ձեռն տայ եւ սիրտն զլանայ. զի Աստուած ոչ 'ի ձեռս հայի՝ այլ 'ի սիրտ տուողին։

Աւասիկ ողորմութիւնն յայնժամ բարձրագոյն պարծի առ դատաստանաւ, յորժամ յարակից է նմին միտք զուարթ եւ կամք յօժար, ըստ այնմ. «Զուարթ տուրս զուարթատուս սիրէ Աստուած։» Բ. Կորն. Թ. 7։

Դ. Ի գործ ողորմութեան շարժի մարդ, ոչ միայն 'ի սիրոյն Աստուծոյ՝ այլ եւ 'ի բնութենէ իւրմէ.

զԹշնամիս՝ որպէս խոստացեալ է բարերարդ, բնականա-
կան բերէ փրկութիւն ընկերին. խոկ 'ի գործ ածելով
և պահեցողութեամբ անձնական շահերն միայն 'ի սէր
քոյն Աստուծոյ, և ոչ երբէք 'ի բնութենէ ։

Քանզի ամենայն որ 'ի բնութենէ իւրմէ սիրէ և
Թողու զհանգիստ և զգիւղութիւն անձին. խոկ առ
'ի կամ յաղօԹս, և 'ի հեշտալի կերակրոց հրաժարիլ՝
ոչ բերէ բնութեամբ ։

Այս միայն 'ի սիրոյն Աստուծոյ շարժի մարդ-առ-
նուլ անձնէ զանձն իւր աղօթիւք և պահօք ։

Ե. Զայն տուրս արժան է կոչել ողորմութիւն,
որ 'ի սէր Աստուծոյ լինին կարօտելոց յարդարավաստա-
կելոց՝ ըստ չափու կարօտութեան, զոր արդարութիւն
անխտրութեամբ, անպարծանս և 'ի ծածուկ ։

Զ. Որպէս զթութեան շարժի բան ընդ այն և բան
կարեաց. զի եթէ որ ոչ ունիցի զողորմութիւն քնքոյ՝
լիաձեռն կարկառել ձեռս կարօտելոց, այնպիսի
ինչ տացէ, որչափ միանգամ կարող գտանի, ա սոսի
անէ Տէրն մեր. «Որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն ա-
շակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս
իւր.» Մատթ. Ժ. 42 ։

Է. Ի քաղաքական ատենի պատժեն դատաւորք
զգողս և զյափշտակողս, այլ ոչ զագահս և զանգու-
թս. խոկ Աստուած ոչ միայն զգողս և զյափշտակո-
ղս պատուհասէ, այլ և զագահս և զանգութս ։

Քանզի ագահն զբարիս հասարակաց ամփոփեալ
բաղձանօք ժողովեալ՝ ընդ սրտի իւրում անխնայա-
հեւտ առնէ. և անգթութեամբ զողորմութիւնն ասա-
րագրեալ յաշխարհէ՝ զմարդիկ 'ի կարօտութեան
սպանանէ. ապա իրաւամբ պատուհասեալ կրկին
վաղ կամ անագան՝ յաստուածային արդարութենէ ։

Ը. Ոչ զերծանին 'ի դատաստանաց և նոքա, որք

Թէպէտ ողորմած են առ աղքատս , սակայն բանսարկուք մատուցանեն երգեցողաց և խաղալկաց զարծաթ և զոսկի 'ի գինեբրուս և 'ի խնճոյս։ Բանին զխնամատոր բարիսն՝ որ պարգևեալ է նոցա յաստուածոյ 'ի սատարումն հոգևորաց բարեկարգ մատակարարութեանց , յանդգնեն և 'ի վնասակար կիրս չարաչար 'ի գործ դնեն , ըստ այնմ . « Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց » Մատթ. ԺԵ. 26։

Եւս առաւել ևս պատժոց արժանի դատելին նոքա՝ որք անողորմ են առ աղքատս , և առատաձեռն 'ի սնափառական խաղս և 'ի զեղխութիւնս ։

Ը. Մեղաւորքն 'ի չարիս մի՛ յուսասցին լոկ ողորմածութեամբ և այլովք համանիւ փրկութեան։ Բանզի յանդգնութիւն է յուսալով յարդիւնս ողորմութեան՝ անխտիղծ մեղանչել , կամ ոչ դառնալ 'ի մեղաց։ զի ողորմութիւնն ոչ է կաշառ թիւրիչ իրաւանց , կամ խափանիչ արդարութեանն Աստուծոյ։

Այո՛ ողորմութիւնն քաւէ զմեղս , և զնջուցանէ զպատժումն Աստուծոյ , սակայն ենթադրէ ունել զկատարեալ զզջումն և զխոստովանութիւն , պահանջէ ևս զաղօթս և զպահեցողութիւն ։

Վասն զի Աստուած ոչ միայն է ողորմած՝ այլ և արդար . զի որ ասացն թէ՝ տուք զողորմութիւն և ամենայն ինչ սուրբ է ձեր , և թէ՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ , նոյնն ասաց . « Եթէ ոչ ապաշխարիցէք ամենեքեան նոյնպէս կորնչիցէք . » Ղուկ. ԺԳ. 3։

Ուրեմն պարտ է տալ զողորմութիւն կարօտելոց , այլ ոչ երբէք զանց առնել զկատարեալ զզջմամբ և զխոստովանութեամբ , զաղօթիւք և զպահեցողութեամբ։

Զի թէպէտ մի միայն չար բաւական է կորուսանել զհոգի մարդոյ յաւիտեան , բայց չէ բաւական մի միայն բարեգործութիւն հաստուցանել զնա 'ի

փրկութիւն. զի ըստ առածին իմաստասիրաց, բա-
րին առնել լինի յամբողջ պատճառէ ; իսկ չարն՝
մինչ և իցէ պակասութենէ.

Այսպէս ծնանի կենդանին զուգընթացութեամբ բազում
պատճառաց, բայց կարէ մեռանիլ 'ի միոյ պատճառէ.

Ժ. Ընկերգործութենէ ողորմութեան աւելորդ
թուի ճոխապայծառ ճառել. որովհետև կարէ իւրա-
քանչիւր ոք յանձին իւրում փորձել զօգուտն նորին

Քանզի և բազում մեղաւորք պատճառաւ ողոր-
մութեան՝ զորս եառուն աղքատաց և տնանկ Ա-
ծոյ սպասաւորաց, առօթիւք և խնդրուածովք նոցա
արժանացան աստուածային ողորմութեան և շնոր-
հաց, դարձան 'ի մեղաց իւրեանց և արդարացան.

Բազումք եւս 'ի տառապանաց և 'ի փշտաց ապ-
րեալք և ողորմութեամբ զերծան. Հիւանդք գտին
զառողջութիւն, փորձանաւորք զելս, անկեալքն 'ի
ձախողութիւն՝ զյաջողուածս բարեաց. Եւ ոչ միայն
այսչափ, այլ և մեռեալք ընկալան զկենդանութիւն,
որպէս բարեպաշտուհին Տաբիթա՝ վասն աղաչանացն
այրեաց որոց առնէր ողորմութիւն, կենդանացաւ 'ի
մեռելութենէ 'ի ձեռն սրբոյն Պետրոսի. Գործ. Թ. 41.

---

"Զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր. և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց." Դան. Դ. 24.

"Եղերուք գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է." Ղուկ. Զ. 36.

"Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս." Մատթ. ԻԵ. 35.

---

## ԳԼՈՒԽ Ե.

### ԱՂՕԹՔ, ՊԱՀՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Ե. ԵՐՐԵԱԿ ազգ են բարեգործութեանց, որք
կարեւորք են քրիստոնէին առ 'ի փրկիլ 'ի մեղաց, և

հասանել յաւիտենից կենաց, այս է աղօթք՝ պահք և ողորմութիւն.

Երրեակ ազգ են և թշնամիք, որք ջանան արգելուլ զմարդ 'ի բարեգործութենէ, և զրկել 'ի յաւէրժ կենդանութենէ, այսինքն է՝ սատանայ, մարմին և աշխարհ։

Սատանայ՝ ներքին թշնամի, որ դրդէ զմարդիկ ազգի ազգի խաբէութիւնս. հնարիւք յետս կասել յաղօթից։ Քանզի արկանէ 'ի միտս աղօթողին զաղտեղի խորհուրդս, անհաւատութիւնս, զաշխարհային հոգս, և կամ ցրուէ և պղտորէ զմիտս նորա մտածութեամբ կամ տրտմութեամբ, կամ թերահաւատութեամբ, այլովքն հանդերձ։

Մարմին՝ կցորդակից թշնամի, որ անդադար բռնադատէ զհոգին կատարել զհաճոյս իւր՝ քան զկամս Աստուծոյ, խորշեցուցանէ 'ի պահոց պատուիրանեալ զտկարութիւն իւր, կամակից լինելով առնէ զհոգին՝ խճողել զորովայնն հանապազօր փափուկ կերակրովք։

Աշխարհ՝ արտաքին թշնամի, որ հրապուրէ մարդ 'ի վայելչութեամբն զերկրաւորս և եթ խորհել. առաջի առնէ զմեծութիւն, զփառս, զզօսանս փափկութեան։ Ջանայ ամփոփել զձեռս ողորմածաց յաղքատաց և 'ի կարօտելոց, որպէս զի ձեռս ընչից վայելեսցեն 'ի կեանս կենցաղոյս, և մի՛ իւիք պակաս գտանիցին։

Եւ յայտնի մշտամարտ թշնամեաց առաւել քան զայլս միաւորն նոքա՝ որք նորաշնչեալ են և յորդորդուն 'ի բարեգործութեան ճանապարհին։ Իսկ մինչ յարատեւեն 'ի գործս բարիս, լինին ազատաքայլ և անսայթաք. և իբրեւ քաջ զօրական առ սոյն հարեալ զզօրութիւն թշնամւոյն՝ զյաղթանակն առնին քաջութեան։

Եւ որովհետեւ ամենայն ինչ յանկատարութենէ 'ի կատարելութիւն դիմէ, և ամենայն գործ 'ի բա-

կարգաւ մինչ ի դժուարինս, բայց հետզհետէ գործի վայելչաբար և դիւրութեամբ, այսպէս մի՛ մեծամեծս-ցին հոգւոյ՝ որք չեն ունակացեալ ՚ի բարեգործու-թեան՝ յանկարծ ընդ առաջ երեւի դժուարութեան ինքնակամ թերութիւն ՚ի գործել խորհրդոց զբարիս՝ այլ զանազանեն յարատեւել ՚ի նմին, մինչեւ ընտել նո-ցա այն ՚ի սովորոյթ ։

Օգնէ և յարահետ արս է անաւանել. զի զառա-ջինն բազում դժուարութիւնս կրեն, և բազում վարժութեամբս գործեն համբակքն, իսկ յորժամ ան-ձանձիր՝ աշխատասիրութեամբ հմտանան արհեստին, այնուհետեւ գործեն դիւրութեամբ և անվրէպ ։

Բ. Համարուած երբեմն զյօժարութիւն կամաց մարդոյ ։ որ հաստատեալ է ՚ի գործել զբարի ինչ, ընդունի ՚ի տեղի գործոյ. որպէս զյօժարութիւնն Աբրահամու ՚ի պատարագել զԻսահակ զորդին իւր՝ ընկալաւ. Համարուած իբրեւ զգործ կատարեալ. Ծն. ԻԲ ։ Այսպէս և զյօժարութիւնն իւղաբեր կանանց որք կամէին օծանել զմարմինն Տեառն Յիսուսի, ընկալաւ իբրեւ զգործ լցեալ ։

Այսպէս ՚ի տեղի գործոյ ընդունի աստուած զբա-րեյօժարութիւն հիւանդաց՝ որք փափագին աղօթել ժողովրդեամբ, և չքաւորաց՝ որք կամին տալ ողոր-մութիւն կարօտելոց, և տկարաց՝ որք բաղձան պա-հել զպահս ։

Բայց և երբեմն ընդ յօժարութեան կամաց խնդրէ և զգործն. որպէս զհաստատուն կամս որդ-ւոցն Զեբեդեայ առ ՚ի ըմպել զբաժակն մահու ոչ բաւական համարեցաւ Տէրն, այլ կամեցաւ զի իրօք եւս ըմպեսցեն, որպէս և արբին իսկ, մինն վկայա-կան արեամբ և միւսն մշտաչարչար ճգնութեամբ ։

Որ ոք կարէ գործով կատարել զաղօթս՝ զեր-կրպագութիւնս, զպահս և զողորմութիւնս, մի՛ զանց

տանիցէ. յուսալով թէ իցէ բաւական միայն յօժա-րութիւնն կամաց: Այլ նա՝ որ ոչ կարէ գործով կա-տարել, մի՛ վհատեսցի թէ զրկեցաւ 'ի վարձուց. զի Աստուած իբրեւ զգործ արժանի վարձուց ընդու-նի երբեմն զպատրաստութիւն և զյօժարութիւնն բարեմիտ կամաց՝ յորժամ է հաստատուն:

Գ. Կատարելութիւն մարդոյ կայանայ 'ի սիրելն զԱստուած. և նշան սիրոյն Աստուծոյ են գործք բա-րիք, որք վերաբերին կամ առ Աստուած, կամ առ ինքն, կամ առ ընկերն: Որ Աստուած վերաբերին՝ աղօթք, զի ունի առարկայ զԱստուած. առ ինքն վերաբերի պահքն, զի ունի առարկայ զմարմինն, առ ընկերն վերաբերի ողորմութիւնն, զի ունի ա-ռարկայ զողորմութիւնն մարդոյ:

Բայց որովհետեւ աղօթք, պահք և ողորմու-թիւնք իբրեւ մասունք խորհրդոյ ապաշխարութեան՝ են առաքինութիւնք կրօնի, երեքին եւս փոխմանա-կաւ վերաբերին առ Աստուած, և ունին զզօրու-թիւն իւրեանց՝ 'ի գործունէութենէ աստուածա-յին շնորհաց:

Վասն որոյ այր արդար զգուշանայ յարատոյ մե-ղաց, զի մի՛ աղտեղասցի և զրկեսցի 'ի շնորհաց. և բնաւորեալն մեղօք՝ ապաշխարէ, զի արդեաւ արդա-րասցի, և շնորհաց ընդունակ լիցի: Մին վարի իբ-րեւ պաշտպանողական զինուք, և միւսն՝ իբրեւ վա-նողականաւ:

Զէնքս այսորիկ են գործողութիւնք աղօթից՝ պահոց և ողորմութեան, որովք շնորհքն Աստուծոյ եթէ իցէ յումեք՝ անկորուստ պահի, և թէ կորու-սեալ իցէ՝ վերստին գտանի:

Այլ թէպէտ երեքին սոքա 'ի միոյ յանկանէ սիրոյն Աստուծոյ յառաջ գան, որպէս ջերմութիւն և լոյս և անդրադարձ շառաւիղ 'ի միոյ արեգականէ, այլ

զանազանին յինքեանս, զի ունին զայլ և այլ առաւ-կայս ; բայց երեքեանն 'ի միասին զմի պսակ երանութեան հիւսեն 'ի գլուխ գործողին իւրեանց ։

Խոկ. արդ՝ որ աղօթէ առ Աստուած՝ ճանաչէ զինքն առաջի Աստուծոյ, և զԱստուած ներկայ ինքեան, վասն որոյ ոչ կարէ խորհիլ 'ի գործել զչար ինչ, այլ մանաւանդ ցանկայ հաճոյ լինել նմա, և յանձնէ զանձն իւր և զիւրսն ամենայն 'ի կամս Աստուծոյ, և յամենայնի ամենայն ուրեք խնդրէ զփառս Աստուծոյ, և խոնարհ միտք հնազանդի հրամանաց նորա ։ Այս ամենայն և որ սոյլն սակի են՝ համարին գործ աղօթից, որք սկզբնաբար ներգործին 'ի մտաց, այլ կատարին սպասահարկութեամբ մարմնոյ ։

Եւ յայսցանէ հարկաւ հետեւի ճնշել զմարմին պահօք, զսպել զզգայարանս, մեռուցանել զանկարգ կիրս ախտաւոր բաղձանաց հեշտութեան, համբերել ամենայն վշտաց և ձախողակի պատահարաց, մինչեւ կորուսանել զմարմին, յորում գտանի ճշմարիտ՝կեանք հոգւոյն, ըստ այնմ. „Որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա ։„ Մատթ. ԺԶ. 25 ։

Եւ սոքա և նմանք սոյլն գործք առաքինութեան վերաբերին առ պահեցողութիւնն, զի 'ի մարմնի և մարմնով գործին, այլ ոչ առանց սատարութեան հոգւոյ և մտաց ։

Յետ որոյ հետեւին և գործք ողորմութեան, այսինքն է՝ ջամբել զինչ առ 'ի բառնալ կամ թեթեւացուցանել զկարօտութիւնս կարօտելոյն. առ որ պիտոյն ջանք և աշխատութիւն մարմնոյ 'ի ստացուածոյից, և խոհական խորհրդածութիւն հոգւոյ 'ի կշռել զկարողութիւն անձին և զպէտս կարօտելոյն, որպէս զի արժանապէս և վայելչաբար լինիցի տուրն ։ Առ գործս ողորմութեան վերաբերին ներողութիւն, խրատ, ուսուցանողութիւն, կարեկցութիւն, մխի-

թարութիւն ,. և նմանք սոցին ․

Նոյ այսոքիւք կատարին ամենայն գործք վճարման մեղաց զկնի զղջման և խորհրդական խոստովանութեան, զոր կանոնադրէ խոստովանահայրն ըստ թէութեան անձին և ժամանակին, իբրև դեղ և սպեղանի ամենայն հիւանդութեան և վիրաց հոգւոյ․ որք ունելով զներգործութիւնս իւրեանց 'ի զօրութենէ չարչարանացն Քրիստոսի, արդիւնաւորեն ըզշնորհս աստ և զփառս 'ի հանդերձեալն ։

Դ․ Յայտնի պարունակեալ կան աւետարանական ինն երանութիւնքն․ վասն զի հոգւով աղքատ, հեզ, և սուրբ սրտիւք՝ են աղօթասէրք ։ Սգաւոր, քաղցեալ, ծարաւի, հալածեալ և նախատեալ վասն արդարութեան՝ են պահեցողք ։ Ողորմած և խաղաղարար՝ են նպաստամատոյցքն ընչիւք կամ բանիւ ։

Որք որ զայսոսիկ առնեն սիրոյն Աստուծոյ, նոցա է երկնից արքայութիւնն․ նոքա մխիթարին, ժառանգեն զերկիր, յագենան, զողորմութիւն գտանեն․ նոքա զԱստուած տեսանեն, որդիք Աստուծոյ կոչին, ցնծան և ուրախանան յերկինս, զի վարձք նոցա բազում են աստ և 'ի հանդերձեալն ըստ անսուտ խոստմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ․ Մատթ․ Ե․ 12 ։

Ե․ Զգերազանցութենէ և զհարկաւորութենէ աղօթից պահոց և ողորմութեան՝ ոչ միայն նախնի իմաստասէրք և հարք և վարդապետք գրեն, և ըզմարդիկ 'ի նոյն յորդորեն, այլ և Աստուածաշունչ գիրք հին և նորոյ կտակարանաց ամենայն ուրեք իբրև փողով բարբառոյ հռչակ հարկանեն ։

Աստի հերքեցալն սակաւուք ասացեալքս աստանօր, ընդ այլոց բազմաց հոգեշահ խրատաբանութեանց, որք են իբրև կարեւոր զարդ հոգւոյ և մարմնոյ՝ առ 'ի մտանել համարձակ յառագաստն

լուսոյ երկնաւոր փեսային, իբրեւ կոյս մի տուրք և Հարսն անարատ գեղեցկայք պճնութեամբ 'ի վայելել դրախտ անմահականն ։

---

« Բարի են աղօթք՝ պահօք և ողորմութեամբք և արդարութեամբք ։ » Տովբ. ԺԲ. 8.

« Այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք ։ » Մատթ. ԺԷ. 20 ։

« Ոչ մեկնէր 'ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զցայգ և զցերեկ ։ » Ղուկ. Բ. 37.

« Աղօթք քո և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ ։ » Գործ. Ժ. 4 ։

---

## ԳԼՈՒԽ Ջ.

Հաւանական նշանք ինչ կամ յատկութիւնք ընտրելոցն Աստուծոյ, որք ժառանգելոց են զփրկութիւն:

Ա. Ոչ որ կարէ յատուկ կեանս հաստատել ըզփրկութիւն իւր՝ առանց մասնաւոր յայտնութեան Աստուծոյ. բայց և ոչ որ պարտի յուսահատիլ ըզփրկութենէ իւրմէ, այլ մեծաւ յուսով և երկիւղիւ ջանալ առ 'ի հաստատել փրկութեան, ըստ այնմ. Ա՛հիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք ։ Փիլիպ. Բ. 12 ։

Այսպէս նշանակեն Աստուածաշունչ մատեանք, սուրբ հարք և աստուածաբանք. առհասարակ սուրբ գիրք 'ի մէջ մատուցանեն զնշանս ինչ անօթոյն ողորմութեան, այսինքն ընտրելոյն Աստուծոյ, որով որոշին յանօթոյն բարկութեան, այսինքն յանարգելոց ։

Ստոյգ լինի է, թէ նա փրկի՝ որ գնայ ըստ ճանապարհ փրկութեան, և նա կորնչի՝ որ գնայ ըստ ճանապարհ կորստեան ։ Ուստի կարէ ամենայն ոք՝ որ

միտս ունի, հաւատարմութեամբ զատել զանձն. թէ եկն յընտրելոց անտի, ուր եղեւ ձեռնադրութիւն՝ յորում զատանի:

Իսկ այս զատումն ոչ այնքան մարմնական է, որքան հոգեւորական, որպէս ապացուցութեամբ հոգւոյն Քրիստոսի մարմնի լինել, ըստ առաքելոյն. «Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ»: Հռովմ. Ը. 16:

---

Նշանք ընտրելոց զորս ի մէջ բերեն աստուածաբանք ի սուրբ գրոց, գլխաւորքն են տասն, եւ են այսք :

Ա. Որ ունի զհաւատս ուղիղ եւ զյոյս աներկբայ, եւ սիրէ զԱստուած եւ զընկերն, երկնչի յԱստուծոյ, եւ պահէ զամենայն հրամանս նորա, նախանձաւոր լինի փառացն Աստուծոյ, եւ ջանայ զաղ փրկութեան ընկերին:

Բ. Որ յամենայն գործս ունի իւր միայն վախճան զպարզութիւն Աստուծոյ, ոչ ցանկայ անկարգ բաղձանօք մեծութեան, փառաց եւ պատուոյ եւ ամենայն իրաց աշխարհի:

Գ. Որ անտրտունջ համբերէ ամենայն վշտաց եւ փորձութեան վասն Քրիստոսի, եւ յանձնէ զանձն եւ զիւրսն ամենայն աստուածային տնօրէնութեան, եւ հաւանայնի կամացն Աստուծոյ յամենայն իրս:

Դ. Որ հեզ է եւ խոնարհամիտ, ամենեցուն կամի զբարիս, եւ ոչ ումեք խորհի չար առնել. ների թշնամեաց, եւ աղօթէ վասն փրկութեան նոցա:

Ե. Որ յամենայն ժամանակս ըստ կարեաց իւրոց տայ զողորմութիւնս կարօտելոց, խնամ տանի հի-

ւանդայ , ազնէ փորձանաւորաց , ուսուցանէ զտգէ- տս , և խրատէ զանխրատս :

Զ. Որ համարի զինքն մեղաւոր քան զամենայն մարդիկ . ընկճեալ ոգւով զղջայ 'ի մեղաց , յաճախ խոստովանի և ապաշխարէ , և արժանաւորս մատչի 'ի հաղորդութիւն կենարար խորհրդոյ մարմնոյ և արեան Տեառն :

Է. Որ յամենայնի զգուշանայ 'ի մահացու մեղաց և որքան հնար իցէ՝ 'ի ներելի յանցանաց . հեռանայ 'ի պատճառէ մեղաց , և պահէ զզգայարանս իւր յամենայն անպատշաճից . փախչի 'ի հեշտութենէ և 'ի փափկութենէ , և ճնշէ զմարմինն պահօք և ժուժ- կալութեամբ :

Ը. Որ յօժարամիտ է յունկնդրութիւն հոգեշահ խրատուց և ուրախութեամբ սրտի լսէ զպատգամս Աստուծոյ , և ջանայ կատարել :

Թ. Որ ջերմեռանդութեամբ տեսանէ զաւուրս Պա- տարագի . անձանձիր կատարէ զհանապազորդական աղօթս իւր . ապաւինի 'ի սուրբ Աստուածածինն , և զնա բարեխօս ունի առ Աստուած :

Ժ. Որ խոկայ միշտ զմահ իւր և զդատաստանն Աստուծոյ , զփառս արքայութեան և զտանջանս դժոխոց :

# ՎԵՐՋԱԲԱՆ

ԿԵՆԴԱՆԻՔ հոմա՛յն դիմեն անխափան
Ի յանցնիւր վախճան՝ առ որ կարգեցան.
Զի ըստ յատկութեան իւրեանց կազմութեան
Փորձեն անվրէպ՝ ազդմամբ բնութեան:
Սակայն հասանիլ մարդոյ առ վախճան,
Ընտրութեան իւրում եղեւ ապաստան.
Զի 'ոչ հաստեցաւ սոսկ զգայական,
Հարկաւ բնութեան տանել զամենայն:
Ո՛չ տածէ երկիր յըզգայունս համայն՝
Տէր և Թշուառ քան զազգս մարդկան,
Այս կարօտի վարժից կրթութեան,
Ճանաչել ընտրել՝ զոր ինչ է պատկան:
Ուստի պարտ վարկայ ըստ իմ պաշտաման՝
Կազմել յօրինել ըզսոյն ԲԱՆԳԱՐԱՆ.
Ո՛ր ազգի ազգի վաճառք պատուական,
Կարեւոր խրատք՝ վաճառքին արժան:
Հապա, գանձեցէք 'ի մտաց ամէն,
Զոր ձեզ նուիրեմ սիրով հայրական.
Որով լինիջիք նախ մարդ բանական,
Առնուլ ճանաչմամբ մտաց տեսութեան:
Ապա լինիջիք մարդ բարոյական,
Առնուլ սկզբամբ օրինաց բնութեան.
Յետ որոյ եղեալ մարդ քաղաքական,
Գտջիք ձեզ օգուտ 'ի կենակցութեան:
Հուսկ ապա կրթեալ յածպաշտութեան,
Ի ծայրն հասջիք կատարելութեան.
Եւ աշխատ եղեալ վասն երջանկութեան,
Վայելեսջիք յայն՝ այժմ յապառնայն:

# ՑԱՆԿ

## ԳԼԽՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ


ԳԼՈՒԽ — ԵՐԵՍ

Ա. Չարութիւն

Բ. Հպարտութիւն . . . . . . . . . . . 7

Գ. Ծուլութիւն . . . . . . . . . . . 14

Դ. Նախանձ . . . . . . . . . . . 22

Ե. Ապերախտութիւն . . . . . . . . . . . 31

Զ. Բարկութիւն . . . . . . . . . . . 37

Է. Ագահութիւն . . . . . . . . . . . 39

Ը. Անգործութիւն . . . . . . . . . . . 48

Թ. Երկրամոլութիւն . . . . . . . . . . . 53

Ժ. Արբեցութիւն . . . . . . . . . . . 64

ԺԱ. Բղջախոհութիւն . . . . . . . . . . . 65

ԺԲ. Բամբասանք . . . . . . . . . . . 69

ԺԳ. Դատողութիւն . . . . . . . . . . . 75

ԺԴ. Մարդահաճոյ . . . . . . . . . . . 92

ԺԵ. Յիշոց . . . . . . . . . . . 99

ԺԶ. Մատնութիւն . . . . . . . . . . . 102

ԺԷ. Խռովութիւն . . . . . . . . . . . 113

ԺԸ. Ստութիւն . . . . . . . . . . . 117

ԺԹ. Սուտ վկայութիւն . . . . . . . . . . . 123

Ի. Սուտ երդումն . . . . . . . . . . . 130

ԻԱ. Կախարդք . . . . . . . . . . . 134

ԻԲ. Յուսահատութիւն . . . . . . . . . . . 137

Ա. Ապաշխարութիւն . . . . . . . . . . . 142

Բ. Աղօթք . . . . . . . . . . . 147

Գ. Պահք . . . . . . . . . . . 157

Դ. Ողորմութիւն . . . . . . . . . . . 178

. . . . . . . . . . . 180

Ե. Աղօթք, Պահք եւ Ողորմութիւն . . . . . 184

Զ. Հասարակաց նշանք ընտրելոցն աստուծոյ . 190